

Գիրքը լուսապատճենահանվել է
"Համահայկական Էլ. Գրադարան"

կայքի՝ www.freebooks.do.am

կողմից և ներկայացվում է իր
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է
օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: www.freebooks.do.am

Library

ՊՆԻՔ ԱՌԻՅՆՈՒԹԱ ԿԱՐՈՂ ԵՔ ՁՅԲ ՆՈՐԿՈՒՄՆԵՆ ՈՒՆԵՆԱԼ, ՀԱՅԱՍՏԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՏԵՐՆ
ԼՈՒՄՄԱՍՅԱՑՔԵՆԱԶԱՆՆԵՐԻ ԳՐՔԵՐ:

ԹԿՈՅՔՆ ԳՐՔԵՐԻ ՄՏԵՂԾՈՒՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ
ԻՄԱՆԱԼ "ՀԱՄԱՀԱՅՐԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅՔԻ ԳՐԱԿՈՐՄԱՆ" ԿՈՅՔԻՑ՝

www.freebooks.am

ԸՆԴՈՂՆԱԿԱԼ ԵՒՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՂ ԿՈՅՔԻՑ:
ՑԱՆԿԱԿՈՒՄ ԵՒՔ ՀԱՃԵՐԻ ԸՆԹԵՐՑԱԼՈՒԹՅՈՒՆ:



ԳՐԵՔ ՄԵՁ՝ freebooks@rambler.ru



**ԱԶԱՏ ՍՅՈՒՆԻՔ
ԱՐՆՈՏ ԳԻՐՔ**



www.freebooks.do.am

www.freebooks.am

ՀՏԴ 32 001:31:93/99
ԳՄԴ 66 + 60 5 + 63 3 (0)
Ա 550

Կազմող և խմբագիր Ավագ Հարությունյան

Ա - 550 Ազատ Սյունիք. Արմոտ Գիրք. Կազմող և խմբագիր Ավագ Հարությունյան՝ Երևան «Հայրենիք» Ակումբ 2007 136 էջ 7 թերթ նկար:

«Ազատ Սյունիք»-ը և «Արմոտ գիրք» ը արդեն վաղուց դարձել են հազվագյուտ և անգտանելի Սինչդեռ, դրանց կարևորությունն ակնհայտ է իսկ վերատպությունը՝ հրամայական:

Գ Եժդեհի առաջնորդած Լեռնա-Հայաստանի հերոսամարտից նկատի ունենալով հենց արդիական հնչեղությունը, այսօր հարկավոր է դասեր քաղել, անհրաժեշտ հետևություններ կատարել:

Գիրքը նախատեսված է Հայրենատիրությունը որպես կյանքի ուղենիշ որդեգրած Առաջնորդապաշտ հայորդիների համար

ISBN 99930 4 498 9

ԳՄԴ 66 + 60 5 + 63 3 (0)

© «Հայրենիք» Ակումբ

ԱՌԱՋԱԲԱՆ

1918-21թթ Սյունյաց Աշխարհը (Զանգեզուր, Լեռնա-Յայաս և Անգնած էր աշխարհաքաղաքական կործանարար ընթացքին հանդիման: Այդ ամենին դիմակայելու համար անհրաժեշտ էր համարվել կարող ղեկավարի չուրջ: Հրամայաբար զգացվում էր Սյունիքի ամառանոցի անհատի անհետաձգելի պահանջ, քանզի Սյունիքը սպառնալից և վտանգահարույց էր: Հենց այսպիսի պայմանում Սյունիքն ունեցավ իր ամառանոցին՝ ի դեմս Գարեգին Նժդեհի՝ իսկ ինչպիսի՞ն էր Սյունիքում տիրող իրադրությունը: Փաստոտ քերականություն չկային կանոնավոր զորամասեր և զինտեխնիկա չէին, որևէ կազմակերպչական աշխատանք կատարված չէր: Միակ լիարժեք ուժը գյուղացիությունն էր ում շրջանում էլ հենց Նժդեհը ծեռ լիցեց ժողովրդական վաշտերի կազմակերպումը: Մինչդեռ դժվարությունները բազմաթիվ էին:

Ավելին ժողովրդական աշխարհագորի կազմակերպման և հեռագա գործունեության ընթացքում Նժդեհը մարտականից զատ ու չէր հավորապես՝ շեշտը դնում էր պայքարի գաղափարա-հոգեփոխիչ շրջների վրա: Հենց այս փաստը ՀՀ բանակում առկա չէր, ինչն էլ 1920թ. բուրբական արշավի ժամանակ անպատրաստվածության համեմակն պատճառներից մեկն էր:

Այսպիսով, ի մեծ տարբերություն նախորդ գործիչների, Նժդեհը Սյունիքում հանդես եկավ ո՛չ միայն որպես ռազմական հրամանատար, այլև՝ *գաղափարահաղորդ ղեկավար ու անդուլ կազմակերպիչ* ունի խոսք, նման նմիրվածությունն առարկայաբար պետք է տար իր ղեկնաչափ արդյունքը, քանզի Սյունիքում. *«Ձինվորը, ամբողջ ժողովուրդը սիրելի ու հարգելի է իր ղեկավարներին, որովհետև տեսել է, որ նույն չարքաշ ու պարզ կյանքով են ապրել վերջիններս: Հրամանատարության վարժատրությունն ձեռք է գուտ բարոյական՝ ժողովրդի և շինվորության սեր: Ոչ մի ավելորդ պաշտոն, որը կապված չէ եղել տրեմության և ստեղծագործ աշխատանքի հետ, ոչ մի պաշտոնյա, որը չի վայելել ժողովրդի վստահությունը: Քաղաքական խիստ խաղաձևող հոսանքներ չեն եղել: Կովի հրամանը ընդունվում էր որպես քեֆի ու խրախճանքի հրաման, շարժվում էին մի շտեմսված խանդավառությամբ: Կովի դուրս գալ հաղթել էր նշանակում»* հետագայում գրում էր Նժդեհը

Ինչևէ, արդեն 1920թ. հունիսին Զանգեզուրից հեռացան պետական պաշտոնյաները և գրեթե բոլոր դաշնակցական գործիչները:

1920թ. հունիսի վերջին Գորիսում գումարվեց Ազգային խորհրդի և բոլոր պատասխանատու գործիչների ընդհանուր ժողով որի օրակարգում բուլշևիկների դեմ պայքարի խնդիրն էր: Ժամանակակցի վկայությամբ, *«համարյա բոլորը խուսափողական տրամադրություն ունեին չցանկանալով բախվել խորհրդային զինուժի հետ»:* Բուլշևիկ

ները միաժամաբար համարվում էին հավատակից գաղափարակիրներ: Այդ վճռական պահին կրավորական էր նաև Դրոյի դիրքորոշումը: Եվ միայն Նժդեհին էր որ արձատական բեկում մտցրեց այդ հանդուրժողական մթնոլորտում. *«Կարծես Դավիթ Բեկը վերակենդանացել էր. Կրակ էր ժայթքում իր բերնից և համակ վճռականություն»*: Նա հատկապես շեշտեց. *«Հայրենիքը ո՛չ ոք իրավունք չունի առանց կռվի գիջելու խորհուրդներին, որոնց միացած է Ադրբեջանը: Սուտ են նրանց շռայլած բոլոր խոստումները»*: Իբրև *«գորավար և քաղաքական ղեկավար»*, Նժդեհը միանգամայն ճիշտ ըմբռնեց իրադրությունը: Այսպիսով, ներկաներից *«ոչ ոք ունեցավ այն դրական կեցվածքը, վճռականությունը և հստակ պատկերացումը, ինչ որ ունեցավ Նժդեհը»*:¹

Սակայն, Դրոյի անհեռատես առաջարկով որոշվեց ամբողջ կազմով հեռանալ Ջանգեզուրից և թողնել, որ *«ժողովուրդը ճաշակե մեծամասնականների համն ու հոտը՝ թեկուզ ժամանակավոր»*:²

Ահա՛, այսպե՛ս, ո՛չ ավել, ո՛չ պակաս: Դիցու՛ք, Դրոն իր զինուժով նահանջեց դեպի Վայոց Ձոր, իսկ Նժդեհի վաշտերն ամրացան Խուստուկի լեռան շրջանում: Օգտվելով ստեղծված իրադրությունից բուշևիկները հուլիսի 3-ին գրավեցին Գորիսը, ապա՝ Սիսիանը: Եվ միայն օգոստոսի 2-ին վերադառնալով՝ Դրոն ազատագրեց Գորիսը: Բայց մինչ այդ, հեղկոմն արդեն գնդակահարել էր Վահան Խորենուն և Արշակ Շիրինյանին: Ի դեպ Դրոյի հաջողությունը երկար չտևեց. բոլշևիկները օգոստոսի 7-ին վերագրավեցին Գորիսն ու Սիսիանը: Տեղին է նշել, որ 1920թ. օգոստոսին Դրոն իր տրամադրության ներքո ուներ 1300 զինվոր, Նժդեհը՝ 300, իսկ Պեղոս Տեր-Ղավթյանը (Սիսիան) 120: Այս թվերն արդեն ինքնին վկայում են ամեն ինչի մասին:

Այսուհանդերձ, Դրոյի զորամասի նահանջն ապահովեցին Նժդեհի վաշտերը: Կռվի ժամանակ Նժդեհը վիրավորվեց, և թեև Դրոն նրան առաջարկեց բուժվելու համար գնալ Երևան, սակայն Նժդեհը նախընտրեց *«մնալ ժողովրդի հետ ու մեռնել, քան թե վտանգի այդ ծանր օրերին լքել նրան»*: Ավելին, նահանջելիս Դրոն Երևան տարավ ղափանցիների ունեցած երկու թնդանոթները և թույլատրեց Կապարզող թի թնդանոթային դասակին ևս գնալ իր զորամասի հետ: Ինչ խոսք, Երևանում այդ թնդանոթները հավանաբար ավելի անհրաժեշտ էին: Առանց այդ էլ՝ Նժդեհն ու սյունեցիները զինված՝ *վճռական մենակի քարոյականով* ապավինել էին զուտ սեփական ուժերին: Էլ ի՞նչ կարիք կար նրանց որևէ ձևով օգնել:

Այս ամենից զատ, ՀՀ ներկայացուցիչները 1920թ. օգոստոսի 10 ին Խորհրդային Ռուսաստանի հետ համաձայնագիր կնքեցին: Ըստ դրա ՀՀ զինվորական նախարար Ռուբենը Դրոյի միջոցով Նժդեհին հրամայեց որպեսզի նա «հավաքի իր զորամասերը նույնպես բոլոր

¹ Աւօ, Նժդեհ, Բեյրութ, 1966 էջ 489-492

² Աւօ Նժդեհ էջ 485-486:

Ձանկացողներին ու նախազգուշական միջոցներ ծեռք առնելով անց-
 ըր մեր տարածքը (ՀՀ), բերելով իր հետ *ամբողջ գեները*»։ Այս գրու-
 թան առթիվ Նժդեհը նշում էր. «խոստովանում եմ, որ կյանքիս մեջ
 ոչինչ է ինձ այնպես հանկարծակի բերել, ինչպես այդ գրությունը։
 Հայաստանի գին. նախարարը ... նման վերաբերմունքով ո՛չ թե միայն
 Ձանգեզուրն էր հանձնում կարմիրներին, այլև՝ Արարատյան Հայաս-
 տանը»¹։ Իսկ թե ո՞ւմ հույսին էր թողնվելու ռազմավարական նշանա-
 լություն ունեցող Սյունիքի ինքնապաշտպանության գործը՝ արդեն
 «պարևոր» չէր։ «Մեծ» քաղաքականության խնդիր կար՝ Սյունիքով
 զբաղվելու ժամանակ ՀՀ ղեկավարությունը չուներ։

Համաձայնագրի նկատմամբ Դրոն և Նժդեհը ունեին միանգա-
 ճայն հակադիր դիրքորոշում. եթե Դրոն հակված էր անխոս կատարե-
 լու հրամանը և անմիջապես վերադառնալ Երևան, ապա Նժդեհն
 շփոթուսի 13-ի գրությամբ կտրականապես հրաժարվեց։ Ավելի կոնկ-
 ռետ՝ իր խոսքերով. «*չկատարելով հրամանը՝ փրկեցի Հայրենիքը*»²։

Հատկանշական է, որ Ձանգեզուրում տեղակայված կարմիր բա-
 նակի հրամանատարությունը լավ գիտակցում էր, որ իր դիրքերը չեն
 ամրապնդվի այնքան ժամանակ, քանի դեռ կռվում է Ղափանի հայու-
 թյունը։ Երբ օր-օրի սպասվում էին լայնածավալ մարտեր Դենիկինին
 ռադթած կարմիր հրամանատար Կուրիշկոյի և Նժդեհի զինուժեղի
 միջև՝ Երևանում աշխույժ դիվանագիտական աշխատանք էր տար-
 վում միջպետական պայմանագրի նախագիծը վերջնական տեսքի
 բերելու համար։ 1920թ. հոկտեմբերի 28-ի պայմանագրի նախազօով
 Ռուսաստանը և Ադրբեջանը ճանաչում էին Նախիջևանի և Ձանգեզու-
 ռի անցումը ՀՀ-ին, իսկ ՀՀ կառավարությունը պարտավորվեց հրա-
 ժարվել Ղարաբաղից։ Սին հույսեր, և, սովորականի պես, հայկական
 իրավանց «ճանաչում» ... մեռյալ թղթի վրա։ Նժդեհի խոսքերով.
 «Հանուն իր քաղաքական «կորրեկտության» Երևանը վճռել էր ծեռք
 քաշել Ձանգեզուրից։ Այսպես, Երևանը մեզ մեր բախտին էր թողել,
 լքել, առանց գիտակցելու, որ դրանով արագացնում է և իր անկումը»։

Իսկ մինչ այդ, 1920թ. օգոստոսի 25-ին, Ղափանի Կավարտ
 գյուղի եկեղեցում Կապարգողթի հայությունը ուխտեց «Պատմական
 մեծ հերոս Դավիթ Բեկի և Մխիթար սպարապետի անունով՝ հավա-
 տարին մնալ հայրենի երկրի ազատության, հրամանատար Նժդեհին
 և կռվել մինչև վերջին շունչը»։ Հենց այդ ժողովում Նժդեհին կոչեցին
 Սպարապետ³։

¹ Գևորգյան Վ., Լեռնահայաստանի հերոսամարտը, Երևան, 1991, էջ
 68

² «Հայրենիք», Բոստոն, 1923, թիվ 12, էջ 96-98:

³ Նժդեհ Գ., էջեր Լեռնահայաստանի գոյամարտին, «Հայրենիք», 1924,
 թիվ 3, էջ 134:

Արժևորելով պահի ոգեղենությունն ու հերոսականը, նույն օրը Նժդեհը վաշտերին ուղղեց ցեղային բարոյականով լեցուն ռազմա շունչ յոթ պատվիրաններ:

Պայքարի վճռականությամբ Տաթևի համագումարը 1920թ. դեկտեմբերի 25 ին վճռեց. «Ձանգեզուրը հայտարարել ժամանակավոր ինքնավար մնալով անկախ մինչև քաղաքական հնարավորություն կունենա միանալու իր մայր երկրի՝ Հայաստանի հետ»: Համագումարը նաև միաձայն որոշեց հրավիրել Նժդեհին որպես «Սյունյաց Ապարապետ և իր բախտը հանձնել նրան»:¹

1921թ. փետրվարի 21-ին Գորիսի եկեղեցում Նժդեհի մեջքին կապեցին օժված գոտի և հանձնեցին Հայկական եռագույն: Դրանով Նժդեհին հանձնվեց Սյունիքի *«քաղաքական բախտը պատվի և նամուսի պաշտպանությունը»*:

Երևանում, Հեղկոմի անկումից հետո 1921թ. փետրվարի 20-ին Վրացյանը Նժդեհին գրում էր. «Եթե այդտեղ առանձին անհրաժեշտություն չկա շատ լավ կլիներ, որ Նժդեհը իր մի քանի հարյուր զանգեզուրցի-դարաբաղցի մարտիկներով անցներ Երևան՝ *ժողովուրդի բարոյական թափը ամրացնելու* համար: Կկամենայի որ Նժդեհն այստեղ պաշտոն ստանձներ»:

Երբ ժամանակին Սյունիքն էր օգնության նման դիմումներ հղում ՀՀ ղեկավարությունը և նույն Վրացյանը անտարբերությամբ էին վերաբերվում ու սոսկական դիտորդի դեր ստանձնում: Ավելին Վրացյանի տրամաբանությամբ Նժդեհը պետք է իր վաշտերով թողներ մարտնչող Սյունիքը և անցներ Երևան: Փաստորեն, անգամ ՀՀ անկման ողբերգականը չէր սթափեցրել քաղաքական կարճատեսներին

Ի պատասխան՝ Նժդեհը տեղահանեց Դարալագյազի և Չանախչիի միջև ընկած թրջական գյուղերը և Երևանի հետ կապը ապահովագրեց: Իրադրությունը, սակայն, կտրուկ փոխվեց 1921թ. ապրիլի 2 ին Երևանի անկումից հետո: Այդ առթիվ, ապրիլի 15-ին Նժդեհը կոչ ուղղեց Գեմվազի զորքին և ժողովուրդին՝ փրկելու *«հայ ժողովուրդի սիրտն ու ուղեղը՝ նրա մտավորականությունը»*: Սի ուշագրավ փաստի մասին ևս: Վրացյանը ապրիլի 4-ին Ռուբենին գրել էր. *«Մեր քանակի մնացորդները, մեր ամբողջ մտավորականությունը, մեր շատերի ընտանիքները կարող են փրկվել միայն Լեռնա-Հայաստան ապաստանելով»*:²

Այսինքն, Վրացյանը փրկության այլընտրանք չունեիր: Փակ էր նաև դեպի Քեմալի մոտ տանող ուղին: Հետևաբար, ապրիլի 21-ին ճարահատյալ, նա Հայաստանի «բոլոր ռազմուժերը և զույքերը» հանձնեց Սյունյաց Ապարապետին:³

¹ Գևորգյան Վ., Լեռնահայաստանի հերոսամարտը, էջ 123-125:

² Գևորգյան Վ., Լեռնահայաստանի հերոսամարտը էջ 150-153:

³ Հ Յ Դ Կենտրոնական Արխիվ:

Բնականաբար, երևանից նահանջող գաղթականությունն որոշակիորեն պետք է հուսալքեր Սյունիքի ուժերին, իսկ դրա առաջն առնելու համար անհրաժեշտ էր ոգևորիչ մի նոր քայլ: Այս նկատառումներից ելնելով, 1921թ. ապրիլի 27-ին, Տաթևի երկրորդ համագումարը ընթացավոր Սյունիքը հռչակեց Լեռնա-Հայաստան: Վարչապետ ընտրեց Նժդեհը՝ միաժամանակ ստանալով զորավարի աստիճան և պարտավորվելով «խուսառուսյան արժիվ» երկաթե շքանշանով:¹

1921թ. մայիսի 28-ին Գորիսում հանդիսավոր նշվեց անկախության տարեդարձը: Այս առթիվ, ուշագրավ է ականատեսի վկայությունը «Մարդ ականա կիիշեր Ավարայրի դաշտի հերոսամարտը, սպա ապետ Վարդան Չորավարին ու վերջինիս կհամեմատեր մեր նորադույն պատմության պատիվը փրկող սպարապետ Նժդեհի հետ: Եթե առաջինը կմղեր կրոնական կռիվ, երկրորդը կմղեր գերազանցորեն քաղաքական կռիվ, հանուն հայ ժողովրդի ազատության և անկախության, հանուն իսկական հեղափոխության»:

Սյուս կողմից, Երևանից նահանջած նախկին ԳԳ և Հայրենիքի իրկության կոմիտեի ղեկավարությունն այլևս չէր կարող «բավարարվել» երկրորդական դերերով: Նրանք Լեռնա-Հայաստանում էլ էին ուզում «գործել»: Նրանց նախկին վախը և Սյունիքին ապավինելու ձգտումը միանգամայն փարատվել էր փրկվել էին Չեկայի ճիրաններից, բայց և միաժամանակ՝ շատ շուտ մոռանալով փրկիչներին: Եվ արդեն հունիսի 11-ին «Երևանցիների» կուսակցական ճնշմամբ Լեռնա-Հայաստանը հայտարարվեց ... Հայաստան: Դեռ ամերիկացի Վիլսոնի գծած թղթն քարտեզից ոչինչ դուրս չեկավ, զոնե առայժմ բավարարվեն այդ փոքրով: Դեռ լավ է, որ սյունցիները կռվել պահպանել էին այդ հողակտորը՝ թե չէ ինչո՞ւ էին զբաղվելու իրենք Նժդեհը Վրացյանին իրավացիորեն բողոքում էր այդ որոշման դեմ ավելացնելով, որ նման քայլը ծայրահեղորեն բացասաբար է ընդունվում Սյունիքի ժողովրդի կողմից:²

Բնականաբար, վարչապետ դարձավ Վրացյանը, իսկ փոխվարչապետ Արշակ Գովհաննիսյանը: Նժդեհին «վստահեցին» զինվորական նախարարի պաշտոնը: Նա ախր միայն կռվելուց էր գլուխ հանում: Իսկ այ, օրինակ, փոխվարչապետը՝ հակառակ ռազմի դաշտում սյունեցու տարած հաղթանակների՝ 50 միլիոն ռուբլով Մինքենդի 3000 թուրք ջոկվորների թույլատրեց Ջանգեզուր ներգաղթել: Ինչ խոսք, Պարսկաստան և ապա Եվրոպա հեռանալուց առաջ չէր խանգարի մի մեծ կլոր գումար վաստակել:

Սրանից գատ, Վայոց Ձորի ճակատում կանգնած ԳԳ նախկին բանակի զորամասերի համար սովորական երևույթ էր դարձել անկռիվ հանձնվելը ինչը բացասաբար էր ազդում սյունցիների մար

¹ Գևորգյան Վ., Լեռնահայաստանի հերոսամարտը էջ 155-158

² Գ Գ Կենտրոնական Արխիվ

տունակության և բարոյա-հոգեբանական տրամադրվածության վրա Այդ առթիվ, խորհրդային ռազմական հետախուզությունը միանշանակ նշում էր, որ «մինչ Երևանի գաղթականների գալը Զանգեզուրո մ գյուղացիների տրամադրությունը մարտունակ էր, բայց նրանց գալուց հետո այն ընկել է»: Այսուհանդերձ, համեմատելով երկու ուժերի բարոյա-հոգեբանական վիճակը, նշվում էր, որ Զանգեզուրի գյուղացիների տրամադրությունը «գերբարձր է՝ *Նժդեհի օգտին*»: Կարմիրները հատկապես շեշտում էին Նժդեհի դեմ մղվող պայքարի կարևորությունը: Ավելին, վերջինս համարվում էր դեռևս մարտնչող «*վերջին գեներալը*», իսկ Ազատ Սյունիքի հերոսամարտի ապագան միանշանակ կապում էին Նժդեհի անձի հետ:

Նժդեհը 1921թ. հունիսի 26-ին ԲԲ կառավարությանը և Վրացյա մին ուղղեց հետևյալ բնորոշիչ գրությունը «Քանի դեռ ինքնավար Լեռնա-Յայաստան կա խորհրդային Արարատյան Յայաստանն իրեն ապահով զգալ չէ կարող: Այսպես է մտածել ու գործի անցել Երևանի հեղկոմը: Քանի դեռ ինքնավար Լեռնա Յայաստան կա՝ Նախիջևանն ու Շարուրը չեն կարող կցվել Ադրբեջանին, Յայկական Ղարաբաղը չի ադրբեջանանա՝ ըմբռնել է մուսուլմանությունը»:¹

Զանգեզուրյան հերոսամարտն ուներ նաև «միջազգային» կողմ. Այսինքն, բացառապես Նժդեհի առաջնորդած պայքարի շնորհիվ Ռուսաստանի կոմկուսի ղեկավարությունը՝ անսալով ԲՍԽՂ բողոքներին ստիպված համաձայնվեց Ռիգայում բանակցել Բ.Յ.Դ. Արտասահմանի Պատասխանատու Մարմնի ներկայացուցիչների հետ: Միայն Նժդեհի Արաքսն անցնելուց հետո բոլշևիկները դադարեցրին ճարահատյալ բանակցությունները. «Ռիգայի բանագնացները կկորցնեն կարևոր այդ գեները (Սյունիքի կռիվը), որու համար գլխավորաբար խորհուրդները պիտի բանակցեն Բ.Յ.Դ. հետ»:²

Իսկ հեռանալուց առաջ Նժդեհը սյունեցիներին հայտարարեց որ ինքն ընդմիշտ չի հեռանում Լեռնա-Յայաստանից, որ պիտի վերադառնա՝ եթե Երևանի փոխարեն Բաքուն լինի Սյունիքի հողի վրա ուղք դնողը: Այսինքն, իր իսկ խոսքերով. «*Սրտի անհուն կսկիծով, հակառակ իմ անհատական կամքի և ձգտումների, անխուսափելի հանգամանքներից ստիպված թողեցի Լեռնա-Յայաստանը*»:³

Այսպիսով, Սյունիքը Նժդեհի առաջնորդությամբ մաքառեց առանց շունչ իսկ առնելու: Գրեթե համատարած ռազմա-քաղաքական շրջափակման պայմաններում շատ ու շատ թշնամիներ եկան-անցան իրադարձությունները հարափոփոխ ելևէջումներ ունեցան: Սյունյաց լեռներից *անդին* գրեթե ոչ ոք էր անհանգիստ ու մտահոգ երկրամասի

¹ Գևորգյան Վ., Լեռնահայաստանի հերոսամարտը էջ 169-170:

² Քիւրքեյան Յ., Ուրուագիծ Բ Ե Դ Պատմութեան 1919-1924 հնգամ եակ, Աթէնք, 1988, էջ 63:

³ Բ. Յ. Դ. Կենտրոնական Արխիվ

ապատագրով: Այն բոլորի կողմից անտարբերության մթնոլորտում ազգության էր մատնվել:

ՀՀ ռազմա-քաղաքական և կուսակցական ղեկավարությունը նշև վերջ էլ *ընդհանուր առմամբ* ինքնահոսի էր ծգել Սյունիքի պաշտպանությունը և ո՛չ միայն իրական նկատելի օգնություն չէր ցուցաբերում, այլև՝ երբեմն, արգելակում էր

1918-21թթ Ձանգեզուրում եղել են մի շարք գործիչներ թե ռուսից և թե՛ դրսից: Եվ հենց այդ տեսանկյունից կարևոր է դիտարկել կարևորել, թե ո՞րն է Ձանգեզուրում գործած ռազմա-քաղաքական գործիչների ողջ շարքում Նժդեհի տեղը և դերը: Վերջապես, որո՞նք են այն էական տարբերակիչ առանձնահատկությունները որոնք նրան ապակապես առանձնացնում են այդ շարքում:

Ամենևին նպատակ չհետապնդելով ստվերելու մյուսներին արև է շեշտել, որ որպես կանոն, նրանց գործունեությունը գերազանցապես կրում էր անցողիկ և ժամանակավոր բնույթ: Նրանք Սյունիք էին գնում լուկ որպես պաշտոն կատարողներ և որպես այդպիսին՝ հեռու մնում ժողովրդից, նրա հոգսերից, դժվարություններից, պայքարից: Եվ ամենակարևորը՝ իրենց գործողություններին նրանք երբեք չգեղեն, հուսահատին ցնցելու և վերափոխելու բնույթ չէին հաղորդում: Պարզապես նման գործիչները լավագույն հատկանիշներով անդերծ, սոսկական պաշտոնյայից կամ զինվորականից անդին չէին անցնում:

Ի՞նչ է Նժդեհը: Ինչպիսի՞ն էր նա որպես զինվորական, ռազմագետ և ազգային-քաղաքական գործիչ: Նրա էության բնորոշիչ հատկանիշներից են անձնագոհ նվիրվածությունը, գաղափարական վերությունը և ոգու անաղարտությունը, իսկ որպես զորավար՝ իր ռազմական կազմակերպչական անդուլ ջանքերով օրն ի բուն մտահոգ էր միմիայն մեկ գերխնդրով՝ Սյունիքի ինքնապաշտպանությամբ

Պայքարելով Սյունիքում և նրա համար՝ Նժդեհը միշտ տեսադաշտում ռազմավարական տեսանկյունից նկատի է ունեցել ՀՀ և հայրենի հավաքական շահը: Այսինքն երբեք որևէ դժվարության հանդեպ չընկրկելով նա Սյունիքը ոչ մի դեպքում չի հակադրել ՀՀ-ին: Նժդեհը թուր սյունեցիներին համախմբելով դարձրեց մի հավաքական ամրակուռ բռունցք, որն առաջին հերթին և գերազանցապես ուղղված էր ՀՀ ի թշնամիների դեմ:

1919-21թթ. Նժդեհը միշտ հավատարիմ մնաց յուր բախտն ու ապագան նրան ապավինած սյունեցուն, չլքեց նրան, համահավասար կիսեց և մի կտոր չոր հացը և խրամատը՝ անգամ մերժելով Երևան վերադառնալու մասին ՀՀ ղեկավարության պարտվողական հրամանները: Նա վայելեց ու արժանացավ Սյունեցու հարգանքին, պատվին, սիրուն և անսասան վստահությանը: Այս ամենի արդյունքում ցեղային կանչին զորավիգ Նժդեհն օրինաչափորեն դարձավ Լեռնա-Ղախատանի Առաջնորդը Հենց այդ պարագայի շնորհիվ էլ Ազատ Սյունիքը

պայքարեց, գոյատևեց և հարատևեց միաժամանակ հավաստելով ու ապացուցելով հայ ցեղի և ՀՀ գոյության իրավունքը

Ըստ այդմ, Նժդեհի ամենագլխավոր տարբերակիչ առանձնահատկությունն էր ժողովրդի առաջնորդ լինելը որին ի գորու չեղավ տիրապետել ժամանակի և ոչ մի գործիչ

Խորապես համոզված լինելով և միանշանակ ընդունելով, որ Լեռնա-Հայաստանի գոյամարտի արժանի գնահատականի առհավատչյան ՀՀ և նրա կազմում՝ Սյունիքի գոյությունն է ավելորդ չենք համարում կատարել մի շարք դիտարկումներ՝

Լեռնա-Հայաստանի պայքարը ժողովրդական էր և համազգային կռիվը չէր մղվում *«այս կամ այն կուսակցության կամ դասակարգի դրոշի տակ»* (Գ. Նժդեհ): Ուղղակի, նա հայ ցեղի մարտական ոգու վճռական կանչն էր՝ ուղղված թրքո-բոլշևիզմի հայատյաց ոտնձգությունների դեմ:

Սյունիքը 1919-21թթ իր անկոտորում վիճականության և Նժդեհի առաջնորդության շնորհիվ ռազմի դաշտում տվել է ընդամենը 28 նահատակ: Այդ այն դեպքում, երբ թրքո-բոլշևիկ թշնամին կորցրել է 15 հազար սպանված 7 հազար գերի, 200 գնդացի, 7 թնդանոթ, 10 հազար հրացան: Եվ ամենակարևորն, այդ ժամանակահատվածում մաքրվել-հայացվել են 200 թրքաբնակ գյուղեր:¹ Թվեր, որոնք գուցե անհավանական և չափազանցված թվան ցեղի ուժերի հնարավորությունների անսպառության նկատմամբ թերահավատներին:

Եթե Նժդեհի առաջնորդությամբ Սյունիքի հայությունը հերոսաբար չկռվեր, ապա ՀՀ անվտանգ գոյությունը մեծապես հարցականի տակ կլիներ ազերի-բոլշևիկ թշնամական աքցանում: Իսկ հետագայում Ռուսաստանը Սյունիքը կգիջեր Բաքվին: Այդ ամենից հետո կվտանգվեր Խորհրդային Հայաստանի՝ առանձին հանրապետություն լինելու հանգամանքը: Լավագույն դեպքում նա պարզապես ինքնավար միավորի կարգավիճակով կընդգրկվեր Այսրկովկասը երկու մասի բաժանած Վրաստանի և Ադրբեջանի Խորհրդային հանրապետությունների սահմաններում: Այսպիսով, հերոսական Սյունիքը փրկեց և ապահովագրեց հայկական պետական միավորի պահպանման հնարավորությունը ինչպես Խորհրդային այնպես էլ ներկա և ապագա ժամանակների համար

Փրկվեց ժամանակի հայ մտավորականության սերունդը «որը չէ ստեղծվում ամիսների և տարիների ընթացքում, որի կորուստը մահացու հարված պիտի հասցներ հայ ժողովրդին»:² Իսկ եթե վերիի շենք այն ցավալի փաստը, որ Եղեռնի արդյունքում արևմտահայությունը գրեթե զրկվել էր մտավորական ներուժից, ապա վերոնշյալն ավելի է կարևորվում: Եվ հենց Սյունիքի շնորհիվ փրկված մտավորա

¹ Գևորգյան Վ Լեռնահայաստանի հերոսամարտը էջ177

² «Հայրենիք» Բոստոն, 1923 թ. 8 էջ 80:

...ությունը, սկսած 1920-ական թվերից, Սփյուռքում եական մղում
...-ից հայ մշակույթի վերագարթնումին:

Ազատ Սյունիքն ու Նժդեհը փրկիչն եղան ՀՀ նախկին քաղաքա-
...-նստակցական ղեկավարության, որոնք սյունեցու զորեղ բազու-
...-չգոյության դեպքում պետք է արժանանային Չեկայի բանտում
...-ցնահարված Համազասպի եղբրական ճակատագրին: Այս պարա-
...-ն ապագայի տեսանկյունից դիտարկելու դեպքում, բացահայտ է,
...-առանց այդ գործիչների՝ սփյուռքահայ հասարակական-քաղաքա-
...-ն կյանքն, առաջին հերթին և գլխավորապես՝ Հ. Յ. Ղ. գործունեու-
...-նը, ամենևին համապատասխան դաշտ չէին ունենա: Իսկ ավելի
...-մփոփիչ. *«Սյունիքի հերոսականի շնորհիվ փրկված են նաև Հայաս-
...-տանի մտավորականությունը, Հ. Յ. Ղաշնակցությունը, հայ հեղափո-
...-ռական և մարտական տարրերը»*¹:

Իսկ այս ամենը, առարկայաբար, շնորհիվ միայն Լեռնա-Հայաս-
...-տանի ղեկավար Նժդեհի և Սյունեցու հերոսականի: Այս առումով,
...-անգամայն օրինաչափ է Հայկ Ասատրյանի գնահատականը. *«Ցեղի
...-զու տարերքն էր, որ Նժդեհին Ջանգեզուրում դարձրեց հզոր
...-անհատականություն»*:

Մինչդեռ, ՀՀ-ն կռվի հարկավոր ոգի չցուցաբերելով, ցավալիո-
...-ւեն, տեղի տվեց: Եվ, այդ պարագայում, տեղատվության գլխավոր
...-նաքաբաժինն ընկնում է նրանց ղեկավարելու կոչվածների ուսերին:
Հայն ամենուրեք նույնն է, սակայն ցեղահաղորդ ղեկավարման դեպ-
...-քում նա անճանաչելիորեն ոգեփոխվում է, քանզի շարժվում է իր ցեղի
...-անհաղթելիության հրամայականով: Կյանքի օրենքն է այդ. *«Միևնույն
...-ժողովուրդը, քանակը՝ նայած իր ղեկավարներին, կարող է և՛ հրա-
...-շագործություններ կատարել և՛ խայտառակորեն ծունկի գալ հակա-
...-ռակորդի առաջ»*:

Եվ օրինաչափ է, որ միմիայն Գարեգին Նժդեհի՝ *Կատարյալ
...-Ղեկավարի*, սուրն էր ի գորու Սյունիքի հայությանն առաջնորդել
...-որաչքի, քանզի առարկայաբար և հրամայաբար այդ էր վտանգալից
...-ժամանակի պահանջն ու կարիքը: Փրկելով Սյունիքը՝ Նժդեհն այն
...-բացառիկն էր, որ ի գորու եղավ ընկալել Հայ Ցեղի անասհմանափակ
...-կարելիությունների ներուժը:

Լեռնա-Հայաստանում Գարեգին Նժդեհը հիրավի ապացուցեց,
...-որ *Իսկական Առաջնորդը* հայտնվում է վտանգի ժամանակ:

¹ Նժդեհ Գ., Ինքնակենսագրություն:

Հատկանշական է շեշտել այն կարևոր հանգամանքը, որ անգամ օրհասական և ճակատագրական հերոսամարտի պայմաններում՝ Գ. Նժդեհը խորապես գիտակցելով պայքարի գաղափարա-քարոզչական նշանակությունը նախաձեռնեց այս գրքույկների հրատարակությունը՝ հետագա սերունդներին հնարավորություն ընձեռելով իրադարձություններին ժանոթանալ և համապատասխան հետևություններ անել՝ հիմք ընդունելով ակնատես ժամանակակցի տեսակետը:

«Ազատ Սյունիք» ը տպագրվել է Ինքնավար Սյունիքի Խորհրդարանի, իսկ «Արևոտ գիրք»-ը Լեռնա-Հայաստանի կառավարության հրատարակությամբ: Երկուսն էլ տպագրվել են 1921թ. Գորիսի «Սասուն» տպարանում: Առաջինի կազմողը Տիգրան Սազանդարյանն է իսկ երկրորդինը՝ Ասլան Շահնազարյանը: Երկու գրքույկներն էլ խմբագրել է Գ. Նժդեհը:

Այս գրքույկներում միանգամայն անաչառ և բավականին հարուստ փաստերի համատեքստում ներկայացվում է Սյունեցու անկուտրում պայքարը թուրք-բուլշևիկյան նվաճողական նկրտումների դեմ:

«Ազատ Սյունիք»-ը և «Արևոտ գիրք»-ը արդեն վաղուց դարձել են հազվագյուտ և անգտանելի: Մինչդեռ, դրանց կարևորությունն ակնհայտ է, իսկ վերատպությունը՝ հրամայական:

Գ. Նժդեհի առաջնորդած Լեռնա-Հայաստանի հերոսամարտից նկատի ունենալով հենց արդիական հնչեղությունը, այսօր հարկավոր է դասեր քաղել անհրաժեշտ հետևություններ կատարել:

«Հայրենիք» Ակունք

Ա Ջ Ա Տ Ս Յ ՈՒ Ն Ի Ք

ՍԵՎ ԷՋԵՐ ԵՎ ՓԱՍՏԵՐ ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ

ՀՆԳԱՄՍՅԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Սոցիալիզմի անունից խոսող և քարոզող շատ կուսակցություններ կան, որոնք այս կամ այն ուղղությամբ առաջ են տանում իրանց դրոշը և մարդկության հոգուն և սրտին տիրել կամենում:

Եվ ամեն կուսակցություն իր սրտից ելած խոսքի և ազատության համապատասխան գործունեություն պետք է ունենա ժողովրդի մեջ հմայք և սեր ծեռք բերելու համար:

Սակայն այն բոլոր փրօւն և գեղեցիկ բառերով շարահյուսած լոզունգները, որ պատմական Սյունիքի հայ ազգաբնակչությունը դժբախտություն ունեցավ լսելու բոլշևիկյան կառավարության հինգ ամսվա տիրապետության ընթացքում նրա հոետորների, երդվյալ կոմունիստների և աշխատավոր գյուղացիության շահերի ջերմ պաշտպան հանդիսացող գործիչների բերանից՝ միանգամայն հակապատկերն էին առանց դասակարգերի խտրության թալանվող հասարակության նկատմամբ գործադրված բռնություններին կեղեքումներին սպանություններին և կործանարար իրացումներին:

Այդ իսկ նպատակով, լույս է տեսնում «Ազատ Սյունիք» ը, մի ավելորդ անգամ ևս գալու և ցույց տալու քաղաքակիրթ աշխարհին այն վնասակար, այն բռնազբոսիկ և ոչ մի կրիտիկայի՝ չդիմացող քաղաքականությունն ու գործելակերպը, որ ունի բոլշևիկյան կառավարությունը և որ Ձանգեզուրը իր կաշվի վրա փորձեց ու զգաց:

«Ազատ Սյունիք»-ի եջերում շատ համառոտակի և անպաճույճ կերպով գետեղված են այն բոլոր, ճշգրիտ և կատարված դեպքերն ու փաստերը, որ բոլշևիկյան կառավարությունը գործադրել է Ձանգեզուրում և որի ճնշման ու ազդեցության տակ ազատասեր զանգեզուրցու համբերության բաժակը լցվելով, իր լավագույն զավակների արյան գնով ծեռք բերած ազատությունը վերագնահատելով, նահատակների և մարտիրոսների շիրիմների աստ անպարտ չմնալու համար նա՝ ընթրստ զանգեզուրցին, ապստամբության գոռոզ դրոշը պարզեց և անկոչ հյուրերին դուրս քշեց իր սահմաններից:

«Ազատ Սյունիք»-ը թող լինի այն ծով արցունքների, այն օվկիանոս վշտերի, այն լեռնացած ու սեպացած վրեժների մի կաթիլն ու բեկորը, որ իր կրծքից, իր հոգու խորքից հանում, դնում է համաշխարհային դատի սեղանին. հայ մանուկը, հայ ծերունին, լլկված կույսն ու հարսը և մեր այն լավագույն զավակները, որոնք գլխատվեցին մութ գիշերներին ու իրենց վրեժի կրակոտ խոսքը, ցատումն ու բողոքի զայրույթը ասեն. թող կորչի անունը կարմիր, գործը սև խոսքը քաղցր սիրտը թույն բոլշևիզմը մարդկության անեծքը:

S U ²

¹ Զննադատություն – ռուսերեն: «Հայրենիք» Ակումբ

² Տիգրան Սազանդարյան: «Հայրենիք» Ակումբ:

ԻՆՔՆԱՎԱՐ ԱՅՈՒՆԻՔԻ ՀԻՄՆԸ

Մեր սարեր անառիկ և հայարտ,
Մեր որդիք կորովի և անպարտ.
Խոր ձորեր Սյունիքի ահավոր,
Շիրիմ են թշնամու դարավոր:

Թշնամին հազարով միշտ մեր դեմ,
Կուրծք կրծքի մենք կանգնած նրա դեմ,
Չենք դողում, չենք սարսում մենք մահից,
Մեր մահը թեթև թիթեռի թևից:

Ինքնավար Սյունիքին ցանկանք,
Միշտ լինել թշնամու սպառնանք,
Շատ ապրի մեզ համար այսուհետ,
Քաջ հերոս Նժդեհ Սպարապետ:

S. U.

ԲՈՒՆԵՎԻԿՆԵՐԸ ԶԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ

Համաշխարհային մեծ պատերազմի ալիքները հասնելով Կովկաս պատմական հպարտություններով հարուստ Այրանիքը ևս հանդիպեց այդ ալիքների կործանարար զարկերին:

Հայ սերունդի դարավոր թշնամի և դահիճ տաճկական հորդաները Բաքուն գրավելուց հետո՝ իրանց ընթացքը ուղղեցին դեպի Ղարաբաղ-Ձանգեզուր: Հազարավոր զորամասեր տեղական ավազակների հետ միացած, Արագի ափով առաջացան և գրավեցին Ղարաբաղ-Ձանգեզուրի Վերդեն՝ Ղարաղշլաղը, կոտորեցին, ավերեցին և փլատակների վերածեցին արծիվների բունը: Ապա շրջապատեցին Լեռնային Ղարաբաղը և 1916թ. սեպտեմբերի 24-ին գրավեցին Ղարաբաղի սիրտը Շուշին ու ենթարկեցին ադրբեջանյան կառավարության:

Տաճկական հորդաները՝ հղփացած իրանց հաղթություններով մոտեցան Ձանգեզուրի սահմաններին ուր այդ ժամանակ բախտի բերմամբ գտնվում էր մեր ազգային հերոս Անդրանիկը իր զորամասերով: Տեսնելով Ձանգեզուրի ազգաբնակչության վճռական որոշումը և տաճկական զորքին դիմադրելու ցանկությունը՝ Անդրանիկը գլուխ է կանգնում բոլոր կովող ուժերի և դիմադրում այն բոլոր գրոհներին որոնք ուղղվում էին թշնամու կողմից և պահպանում է հայ ժողովրդի կյանքը, Ձանգեզուրի ինքնուրույնությունը:

Քաջ գիտակցելով, որ Ձանգեզուրը առանց Ղարաբաղի կյանք ունենալ չի կարող, Անդրանիկը արշավանք է ձեռնարկում դեպի Ղարաբաղ, ուր մոտավորապես 300 հազար հայություն տառապում էր տաճկական փաշաների ծեղքին, սակայն կես ճանապարհին այդ առաջխաղացումը անգլիացիների միջամտության շնորհիվ դադարեցնում է:

Տաճկական զորամասերը այնուհետև սկսում են մի շարք ուղղությամբ հարձակումներ կատարել Ձանգեզուրի դեմ որոնք բոլորն էլ ետ են մղվում մեծամեծ կորուստներով, մինչև որ ազգաբնակչության բուռն ցանկությամբ Հայաստանի Հանրապետությունը ուղարկում է իր ներկայացուցիչը՝ Ա. Շահնազյանին, 1919թ. մարտի 12-ին:

Նույն թվի մարտի 25-ին գեներալ-մայոր Անդրանիկը անգլիական կառավարության կարգադրությամբ թողնում է Ձանգեզուրը և իր զորամասով հեռանում, իր պահած, պահպանած ու փայփայած զավառը թողնելով Հանրապետության ներկայացուցչի խնամքին:

Անդրանիկի հեռանալուց հետո ևս մի շարք փորձեր են կատարվում Ձանգեզուրը Ադրբեջանին հպատակեցնելու նպատակով, բայց այդ բոլորը մնում են լոկ փորձեր և հայ ազգաբնակչությունը վերագնահատելով հպարտ մահը ստրուկ կյանքից՝ բոլոր դիմումներին պատասխանում է ազատ հպարտ ու երկրին հատուկ վճռական

երպով շեշտում, որ իր դիակների վրայով միայն թշնամին կարող է առաջանալ և տիրել Ձանգեզուրը:

Նույն թիվ ապրիլի 7-ից տեղի են ունենում մի շարք բողոք-տոհմոցներ և հսկայական ցույցեր այն բոլոր ուսնձգությունների դեմ, որոնք կանենում էին բռնի կերպով Ձանգեզուրը հպատակեցնել Ադրբեջանին:

Պատմության թողնելով այդ քաղաքական դավերը, կասենք միայն, որ հերոս ժողովուրդը իր հատուկ դերը սրբությանը կատարեց Ապաշտպանեց իր երկիրը անձնուրաց կերպով:

Հասավ ամառը. մինչ հայ աշխատավոր գյուղացիությունը ըսկանում է իր եռուն աշխատանքը՝ տաճկական զորամասերը Ղափանի մի շարք գյուղերի դեմ հարձակումներ են սկսում: Ղարաբաթա, Ուժանիս, Աբարակ և Մոզես գյուղերը թեև դատարկվում են թշնամու գերազանց լծերի ճնշման տակ, հեռանում, սակայն կռվող երիտասարդությունը անվեհերությամբ հետ է մղում բոլոր ագրեսիվ հարձակումները և դեմ պրտում թշնամուն, մեծամեծ կորուստներ պատճառելով նրան:

Արևմուտքից՝ Նախիջևանի կողմից, ևս դեպի Ձանգեզուր են արժվում թուրքական ուժեր, որոնք գրավելով Նորս, Գյումրի, Գժա-րոն և Մազրա հայկական գյուղերը՝ ավերելով, թալանելով ու կոտորե-լով ժողովրդին՝ մոտենում և կանգ են առնում Ձանգեզուրի սահմա-նում:

Մի շարք ապարդյուն փորձերից հետո՝ տաճկական զորամա-սերը ստիպում են Ադրբեջանի կառավարությանը մեծ ուժով ընկճել Ձանգեզուրի գոռոզությունը և կռվով հպատակեցնել ազատասեր և շնքոստ ժողովրդին:

Ադրբեջանական 16 հազարանոց բանակը Քեչալ-դաղից շրջա-կատում է Գորիս քաղաքը, Խոզնավար, Խնածախ, Տեղ, Արավուս, Բորենձոր և Խնձորեսկ գյուղերը, իսկ հարավից՝ ամբողջ Ղափանը: Արքի է ելնում զանգեզուրցին, լարում իր բոլոր ուժերը և մի սիրտ, մի հոգի դարձած օղակում վտանգի, բոլոր շրջանները և պողպատի պես լարձք դեմ տալիս թշնամու բոլոր հարձակումներին և դուրս շարտում իր սահմաններից: Ավերվում և թալանվում են մի շարք գյուղեր, սա-լայն Ձանգեզուրը իր տարած այդ մեծ հաղթանակով ցույց է տալիս թշնամայն աշխարհին, որ ինքը կանենում է ապրել ազատ և անկախ ու լքվել Մայր Հայաստանին՝ որպես նրա անբաժան մի երկրամաս:

Ադրբեջանական մի զորամաս, որ գտնվում էր Արագի ափին, շեղական թրքության հետ միասին դեկտեմբերի 25-ին հարձակվում են Ներքին և Վերին Ագուլիսների վրա, ավերում, թալանում ու մինչև լեռջին շունչը սրի քաշում մի գիշերվա ընթացքում ամբողջ հայ ազ-նաբնակությանը: Այդ Բարդուղիմեոսյան գիշերը անմոռաց պիտի մնա հայության սրտում և տաճիկ սպա Էդիֆ բեյի անունը լսելիս՝ վրեժի և անտելության կնճիռը պիտի ունենա ամեն մի հայ մարդ:

գալիս է 1920 թիվը. Ջանգեզուրի հայությունը նոր տարում և ստիպված է լինում գիշեր և ցերեկ հսկել իր սահմանները թրքության մի շարք ոտնձգությունների դեմ և ինչպես միշտ այս անգամ ևս քաջաբար պաշտպանում իր երկրի սահմանները:

Այդ ժամանակամիջոցում բոլշևիկները գրավում են քաջուն և ադրբեջանյան կառավարությունը կերպարանափոխվում է սովետականի: Սովալուկ և մերկ բոլշևիկները սննդյան տեղ գտնելով հարուստ Ադրբեջանը՝ իրանց ծառայությունն են մատուցանում, և որպես սովետական Ադրբեջանի զորամասեր՝ առաջ շարժվում ու գրավում Ղարաբաղը:

Բոլշևիկների փքուն և գեղեցիկ լոգունները հառնում են և Ջանգեզուր չէ, որ հայը հավատացող է, չէ՞ որ հայը անբողջ 4-5 տարի է ռուսական արդյունաբերության ռուսական շաքարի Բաքվի նավթի և վերջապես ռուս մարդու դեմքի կարոտ է:

Հայ տականքներ որոնց համար գոյություն չունի ազգ կրոն ընտանեկան սրբություն և ինքնուրույնության ծգտում, ի մի հավաքված, Ջանգեզուրի զանազան գյուղերում, գաղտնի կերպով իրանց հատուկ դերն էին կատարում և գեղեզման փորում թէ Հայաստանի Հանրապետության և թե հայ ժողովրդի համար: Եվ իրանց դիվային սև աշխատանքները մինչ այն աստիճան առաջ են տանում, որ որոշում են ինչ գնով ուզում է լինի ծախել Ջանգեզուրը և ենթարկել սովետական Ադրբեջանին:

Ապիկար և բախտախնդիր այդ տականքները գյուղերում սկսում են ծածուկ կերպով քարոզել բոլշևիկների բերելիք արքայության խաղաղ կյանքի և այն բոլոր բարիքների մասին, որին ինչպես ծարավի և կարոտ է Ռուսաստանը, նույնպես և Ջանգեզուրը, ու խաբեբայությանը մի շարք գյուղերում կեղծ համախոսականները կազմելով ներս են հրավիրում սովետական վարձկան զորամասերը:

Եվ Ղարաբաղյանների դավադիր, ոճրագործ և սառը արար մունքները իրանց նպատակին են հասնում ու հուլիսի 5-ին Ջաբուղի ձորից Տեղ գյուղը հրավիրվում սովետական զորամասը: Երեք տարի իր երկրի, օջախի և պատվի պաշտպան հայը հոգնած դիրքապահությունից և զենքի ծանրությունից՝ գրկաբաց կերպով դիմավորում է իր ռուս կարծեցյալ եղբորը:

Առաջին դիմավորումը տեղի է ունենում սահմանի վրա գտնվող Տեղ գյուղում:

Հայկական զորամասերը հիմնարկությունների մի շարք պաշտոնյաներ և անհատներ, որոնք սովետական զորամասերի ներկայությունը տանել և ապրել չէին կարող՝ Ջանգեզուրը թողնում և հեռանում են դեպի Երևան: Եվ կարծես թե առանց հետին մի ակնարկ ձգելու իր վերջին տարիների ունեցած փոթորկալի կյանքի վրա խաբված Ջանգեզուրը դիմավորում է սովետական զորամասերին և արյունով ձեռք բերած հարազատ Հայաստանի հանրապետական կարգերը մոռա

ընկերակազմում «ընկերական» սիրուն բառերով արտահայտվող ռուսական վերաբերման գիրկը ու Քորեա լեռան ստորոտում կանգնած խորաբուսական բերանբաց սպասում իր վերջնական խաղաղ և անդորր վայրին:

Հասնելով Գորիս քաղաքը՝ բուլշևիկները առաջ են շարժվում լեռան ու հետամտում հեռացող գորամասերին և գաղթողներին, ու շուտով հասնում Բազարչայ, իսկ Բռնակոթի վրայով կապ հաստատում Նախաշահանի թրքության ու Տաճկաստանի հետ և ստեղծում մի կամուրջ Նախաշահանի և Բաքվի միջև, որով անց ու դարձ են անում, մինչև Բաքվի «արևելյան ժողովուրդների համագումարին» մասնակցեցնելով Ենվեր-Խալիլները և Նուրի փաշաները շատ շատերի հետ մասնաճյուղով:

Սիսիանը գրավելուց հետո բուլշևիկները քանիցս հարձակումներ են ձեռնարկում և դեպի Ղափան, սակայն տեղական ժողովուրդը չհամաձայնությամբ՝ Նժդեհի, որը հայկական գորամասերը հեռանալուց հետո քաղաքի կառավարման բուռն ցանկությամբ վերադարձել էր Ղափան, չհամաձայնում է իր սահմանները և հետ մղում բուլշևիկների բոլոր ջանքերը ու մեծամեծ կորուստներ պատճառում նրանց:

Երկար դիմադրությունից հետո Ղափանը ևս ընկնում է գերազանց ուժերի ճնշման տակ, իսկ կռվող երիտասարդությունը՝ հրամանատարի հետ միասին ապաստանում են Գենվազում, Խուստուփի լեռան բարձր կատարը բռնում:

Իսկ այդ ընթացքում ինչ էր կատարվում գավառի ներսում, բուլշևիկների թիկունքում աննկարագրելի, չտեսնված, Լենկ-Թեմուրի, Արաբ-Մուրադի, Չինգիզ խանների տարածած սարսափը նսեմացնող մի դժոխք պատկերանում մարդու առաջ:

Հացի, մսի, շորի և այլ պարենի կարոտ, ապրելու տենչով բռնկված 8-10 հազարանոց քաղցած բանակ, իսկ դիմացը՝ Ջանգեզուրի լեռայն չարքաշ գյուղացիություն:

Վերցրու, խլիր, գրավիր ինչ որ կտեսնես, փորփիր, քրքիր և քոտիր ինչ որ կարող ես և առանց որևէ ամոթի թալանիր և ուտելիք և խաղաղության ու ամեն ինչ:

Ահա՛, բուլշևիկների գործունեության իսկական պատկերը Ջանգեզուրում:

Սի քանի շաբաթ միայն Ղափանը մնաց բուլշևիկների տիրապետության տակ, քամվեց ու թալանվեց հայ ժողովուրդը և շնորհիվ Խուստուփի բարձրությունները ապավինած կռվողների՝ վերագրաբաց կրկին հրամանատար Նժդեհը:

Ահա այդ ժամանակ բուլշևիկները դիմեցին մի այլ փորձի: Նոքա տեսնելով ռուս զորքի թուլությունը, տեսնելով իրանց տված հսկայական զոհերը՝ Բաքվից բերել տվին Ռուսաստանում գերի մնացած թաճկական ասկյարներից կազմած մոտ հազար հոգուց բաղկացած մի զորամաս:

Երկրի իսկական պատկերը դառնում է կատարյալ դժոխք, բոլ շեփկների գործած բռնությունների, ալան-թալանի վրա ավելանում է տաճիկ ասկյարներին հատուկ բարբարոսությունները և հայ գյուղացին այդ ժամանակ միայն զգում է, որ իր գոյությունը ծաղրում են, իր կյանքը վտանգված է, իր ընտանեկան սրբությունը ոտնահարված է:

Չանուն հաղթության ասկյարները լիազորված էին ամեն տեսակ գործողության համար և չկար մեկը, որ վստահանար ծայն հաներ բողոք բարձրացներ կատարվող քստմեելի դեպքերի համար: Պապանձված ու փականք էր դրված մարդկանց մտածողությանը, զգացմունքին և մարդկային արժանապատվությունը հասնում է գրոյի:

Եթե որևէ անհատ էլ տեսնում, չափում էր գործադրված գազանությունների անօրինակությունը, տեղորի ազդեցության տակ՝ նա միայն իրեն տանջում, իրան վնասում իր ներսում իր սրտում քանելով դառնության բաժակը:

Անհրաժեշտ է քաղաքակիրթ աշխարհին համառոտակի կերպով ներկայացնել կատարված բարբարոսություններից մի քանի նմուշներ, որ պարզ լինի թե բոլշևիկական 5 ամսվա տիրապետությունը Ձանգեզուրում ինչ կերպ է առաջ տարվել:

Ահավասիկ, տվյալներ, որոնք արձանագրված են Ձանգեզուրի գյուղացիական ժամանակավոր կորիորդի 1920թ. նոյեմբերի 30 ի նիստում:

[ՏՎՅԱԼՆԵՐ ԵՎ ՓԱՍՏԵՐ]¹

Հինգ ամսվա ընթացքում բուլշևիկների Ձանգեզուրում կատա ուած սխրագործություններից բերում ենք հետևյալ աղաղակող փաս տերը, որոնք գետեղված են բուն Ձանգեզուրի Գյուղացիական ժամա նակավոր խորհրդի 1920թ. նոյեմբերի 30-ի արձանագրության մեջ

1920թ. օգոստոսի 2-ին Հայաստանի Հանրապետության Պար չամենտի անդամներ, գրական գործիչներ և աշխատավոր գյուղացի ության շահերի պաշտպան Վ. Խորենուն և Ա. Շիրինյանին առանց որևէ քննության գլխատում են սխիանցիներ Մ Աղամյանի և Ջ Տեր Ղազարյանի հետ միասին:

Նույն ամսի 3-ին Գորիսից դեպի Շուշի են տարվում 17 բան- տարկյալներ Ջ. Տեր-Ղավթյան, Գ Մալինցյան Պ. Փարսյան, եղբայր ներ Դ. և Գ Տեր-Մկրտչյաններ, Ա Դադայան և մի շարք գյուղացի երի- տասարդներ և Ավդալլարում գնդակահարվում, որոնցից Կոռընձոր գյուղի Գրիգոր քահանան դիակների միջից 11 վերջով փախչում և հրաշքով ազատվում է:

Հոկտեմբերի 16-ի գիշերը, Գորիսի բանտում, ցարական ռեժիմի ճամանակ 10 տարով բանտերում շղթաներ մաշած Սաքոն գազանա լար սպանվում է իր 12 ընկերներ Հ. Մալինցյանի, Ա. Միրաքյանի, Ա Տեր-Մկրտչյանի, Փ Մելիք-Փարսադանյանի, Հ Շալունցի և ռաշպար գյուղացիների հետ միասին:

Արծվանիկ գյուղում 252 թղ գնդի վոյեներով² Իվանովը հրամա- լում է մասնակիցներից մինչև 80-90 տարեկան ծերունիներին անգամ չըսնայել և կոտորել: Հրամանը կատարվելուց հետո 11-րդ զորաբա- նակի կոմիսար Ղարազյոզյանը³ Նարիմանովին ուղղած զեկուցման մեջ խղճի խայթ զգալով շեշտում է, որ նման դեպքերը նսեմացնում և արկաբեկում են սովետական կառավարությանը

Բացի մասսայական սպանությունները հրանց մտած բոլոր յուղերում սովետական զորամասերը կատարել են մի շարք անհա- ռական սպանություններ և բռնություններ Այսպես իրինակ Տեղ գյու- ղ, որը գտնվում է ճանապարհի վրա իր կրած մի շարք կեղեքումնե-

¹ Վերնագիրն ըստ բովանդակության: «Հայրենիք» Ակումբ.

² Ձինվորական կոմիսար – ռուսերեն: «Հայրենիք» Ակումբ:

³ Արմենակ Մկրտիչի Ղարազյոզյանը ծնվել է 1890թ. Խնձորեսկում: Երա հրամանով գնդակահարվել են Վահան Խորենին և Արշակ Շիրին- յանը: Սյունիքում ապագային գործունեությունից հետո 1921-23թթ. լողել է ՀԽՍՀ ժողտնտիստրիի նախագահ, 1923-28թթ.՝ ԼՂԻՄ ժողկոմ- ստորիի և Կենտգործկոմի նախագահ, 1928-30թթ.՝ Ադրբեջանի Ջրային տնտեսության պետ, 1930-34թթ.՝ ԽՍՀՄ Ջրային տնտեսության պետ, 1934-37թթ.՝ Ադրբեջանի Բանբակի տրեստի պետ 1937թ գնդակա հարվել է: «Հայրենիք» Ակումբ

րից և բռնագրավումներից ազատվելու համար խնդրագրով դիմել ևր «բանվորա-գյուղացիական տեսչության» Ձանգեզուրի գավառական ռեկոմիճ¹ և Գորիսի գարնիզոնի² պետիճ՝ իրանց մի այլ շրջան տեղափոխել և գյուղը ազատել իր ծանր և անելանելի վիճակից՝

Գորիս քաղաքից տարել են մոտ 2000 գորգեր, 1000 հատ կար պետներ, կարի մեքենաներ, պահարաններ և այլն:

Ցածր տների երկրորդ հարկերում անգամ ծիաներ են կապել Փչացրել և ավերակ են դարձրել 100 տուն

Վառել են տների, որոնց թվում գիմնագիոնի հատակի առաստաղի և պատուհանների փեղկերը և դռները տասնյակ տներ են փլվել և ավերվել:

Սոցիալիզացիայի փոխարեն բուլշևիկները իրանց մտած գյուղերը սիֆիլիզացիայի են ենթարկել, հղիացած են 14-ից 15 տարեկան աղջիկներ, որոնք բուլշևիկների հեռանալուց հետո սոսկալի տան ջանքների ենթարկվելով՝ աշխատել են ազատվել այդ անպատվու թյունից և այժմ իրանց սև օրն են անիծում

Հին Գորիս եայջի, Չափնի և Չեյվա գյուղերի եկեղեցիներում ծիաներ են կապել և ապականել եկեղեցիները:

Սպասվելիք ապստամբության իբրև պատանդներ հարյուրավոր մարդկանց բանտ են ձգել և ամիսներ շարունակ ահ ու սարսափի տակ պահել նոցա

Թալանի նպատակով, կես գիշերները, խուզարկության անվան տակ, տասնյակ տներ են մտել և գրավել ոսկի, արծաթ, կանանց արդ ու զարդ, կերպասեղեն և այլ իրեր:

Հուլիս և օգոստոս ամիսներում միմիայն բուն Ձանգեզուրի շրջանից Բաքու են տարել 20 հազար փութ ցորեն և ալյուր, առանց մտածելու, որ գյուղացիությունը ինքը տառապում է սովի ճիրաններում:

Քաղաքում և գյուղերում բռնի կերպով վերցրել են կանանց գլխի և օրիորդների կրծքի զարդեր - արծաթ և ոսկի. տաճիկ ասկյարները իրանց ձիերի կրծքերը զարդարել էին այդ գրաված դրամներով:

Իրանց փախստի ժամանակ, նոյեմբերի լույս 21 ի գիշերը, քշել են մոտ 300 եզ, ձի և ջորի ու իրանց արողը³ փոխադրել դեպի Շուշի մինչև այժմ այդ անասունների և քշող մարդկանց տեղն անգամ անհայտ էր:

¹ Հեղափոխական կոմիտե - ռուսերեն «Հայրենիք» Ակունք

² Կայազոր - ռուսերեն: «Հայրենիք» Ակունք:

³ Գունակ, սայլախումբ - ռուսերեն: «Հայրենիք» Ակունք

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Բուլշևիկների կողմից Ձանգեզուրի գյուղացիության հասցրած վնասների և ալան-թալանի առթիվ գյուղերից ստացված մի շարք փաստականներից, ստորև գետեղում ենք Կոռընձոր և Տեղ գյուղերի վնասված հասախոսականների համառոտակի բովանդակությունը:

Կոռընձոր գյուղի 1920թ. դեկտեմբերի 7-ի 207 ստորագրությամբ ստացված համախոսականի մեջ գրված է:

«1920թ. հուլիսի 5-ին բուլշևիկները հանկարծ շրջապատեցին Կոռընձոր գյուղը և սկսեցին 11 գնդացիներից կրակել. տղամարդիկ շտապը ահաբեկված դես ու դեն փախան, ով ընկնում էր բուլշևիկների ձեռքը, առանց որևէ պատճառի, հրացանազարկ էին անում, ապա սկսեցին զինաթափել գյուղացունց: Ա. Ղարագոզյան և Մ. Մաշուր-Սաշառավելով Ադրբեջանից, սովետական զորքերին ներս հրավիրեցին Ձանգեզուր: Բուլշևիկները սկզբնական շրջանում աշխատում էին առանձին գյուղացիներին, որ իրանք եկել են ազատելու նրանց անազիտներից և առատ կերպով զանազան բարիքներ էին խոստատում: Այդ բոլորից հետո նրանք սկսեցին ցույց տալ իրանց իսկական նպատակները՝ բռնությունները: Մարդիկ էին ծերբակալում, ուղարկում Կոռընձորի բանտը և ապա սպանում, առանց որևէ քննության ու մեղադրանքի:

Ապա սկսեցին ալան-թալանի ենթարկել գյուղը. ծի, կով, եզ, ոչ-մարդավանակ, այծ, ցորեն, գարի և ուրիշ ուտելիքներ չմնաց, սիստեմատիկ կերպով բոլորը խլեցին գյուղացիներից և տարան՝ չգիտենք ուր:

Խուզարկեցին տները և տարան վերմակներ, մահճակալներ, շաքարյա շորեր և այլն:

Այս ամենը նորա կատարում էին առանց խտրության՝ բոլոր խառնուրդ նկատմամբ: Տուժում էր ավելի մեծ չափով աղքատ դասակարգը, որի նրանից խլում էին միակ ավանակը կամ լժկանը:

Պակասը լրացնելու համար հանկարծ բերին և տաճկական աս-ճառներին, որոնք իրանց գազանային ինստինքտները գործադրեցին Կոռընձոր և աղջիկների ու գեղեցիկ կանանց նկատմամբ, մի սրբապղծություն, մի արատ, որը չէր կարող տանել հայ ժողովուրդը, և մենք հասցրած մեր ականջները, կուրացրած մեր աչքերը՝ ապրում էինք անտառներում, այգիներում, տեսնել չէինք ուզում այդ բարբարոսությունները, լսել չէինք ցանկանում կանանց ճիչն ու աղաղակը, որոնց կոչվում էին ցույց տալ իրանց անուսիների տեղը:

Ղանակը ոսկորին էր հասել, այլևս մեր ժողովուրդը համբերել չէր կարող և ընդառաջ գնալով ընդհանուրիս ցանկություններին ու տեսնելով ապստամբ Ղափանին ու Սիսիանին, մենք ևս բարձրացանք ապստամբի ազատարար դրոշակը և նոյեմբերի 21-ին դուրս

քշեցինք բուշեհիկներին և բարբարոս ասկյարներին մեր երկրից, երգվելով, որ այսուհետև մենք պատրաստ ենք մեռնելու և թույլ չտալու մի բուշեհիկ անգամ ոտք դնելու մեր երկիրը, թալանելու և հափշտակելու մեր ունեցվածքը ու պղծելու մեր պապենական օջախն ու սրբությունները:

Ստորև բերում ենք գյուղից տարած մթերքների, անասունների և պատճառած վնասների ցուցակը:

Անվանում	Չատ կամ փուօ
լծկան եգեր	80
կովեր	42
աճանակներ	75
ոչխարներ	230
ծիեր	12
հաց, ցորեն և ալյուր	718
գարի	538
կորեկ	545
ծավար	156
կովի յուղ	13 փ. 28 գ.
պանիր	35 փ. 30 գ.
պուլիմպերիալ	28
արծաթի դրամ	1.975
նիկոլյան թղթադրամ	8.875
արծաթի հրեր - հին գներով	5.700.000
բրդեղեն կտորներ	250
տղամարդկանց հագուստ	187
կանանց արդ ու գարդ, ոսկու և արծաթի, հին գներով	857.435
կանանց շորեր	947.631
աբրեշումի և չթե կտորներ	97.657
խոտ	8.560
դարձան	1.753

Վերոհիշյալ ցուցակը հաստատում են՝ Կոռընծոյի հասարակության կոմիսար – ստորագրություն և կնիք:

* * *

Տեղ գյուղացիների 1920թ. դեկտեմբերի 9 ին կազմած համախոս ակաճաններից բերում ենք հետևյալը. ստորագրած են 351 անձինք:

«Տեղ գյուղի ժողովուրդս, այսօր հավաքվելով պատմական խորհրդի, օրակարգի նյութն էր մեծն Ռուսաստանի մնացորդ, կաշառ մած բուլշևիկների հասցրած վնասը, որոնք կարմիր բանակի անվան լակ եկել էին մեզ չքավոր ժողովրդիս փրկելու, հաց չիթ, շաքար թեյ, նավթ և երկրագործական մեքենաներ ու այլ մթերք տալու:

Կարմիր բանակը եկել էր մեզ հավասարեցնելու և իբրև հարաժատ եղբայրներ և ընկերներ՝ միատեսակ ապրեցնելու: Մեր կայք ու գույքը անձեռնմխելի պետք է լիներ, խոսքի, մամուլի ազատություն էինք սպասում:

Սակայն ինչ գարմանք. ոտք դրին մեր գյուղը թե ոչ սկսեցին հետզհետե թալանել մեզ, բառիս իսկական նշանակությամբ: Կարմիր բանակի համար արքայադուրի և ունևորի մեջ խտրություն չկա. ամենա չքավորից անգամ տարան նրա ունեցած վերջին եզը կովը և կամ ավանակը:

Ջորամասերը ապրում էին գյուղի ամենալավ տներում և քանդում տների փայտեղեն մասերը ու վառում, իբրև հիշատակ թողնելով քարե չոր պատերը:

Առանց որևէ պատճառի ձերբակալում էին գյուղի երիտասարդ-ներին, բանտ ձգում և ապա դեպի Շուշի տանում ու ճանապարհին չտոտորում:

Իսկ երբ տաճիկ ասկյարներին առաջ քաշեցին և մեզ մեր պատ-ճական թշնամու ձեռքով կանեցան հոգեպես և բարոյապես սպանել, այն ժամանակ միայն մենք զգացինք, որ եկած զորքերը ոչ թե կարմիր եղբայրներ են մեզ համար արքայություն բերող, այլ սև չարագործ-ներ, որոնք եկել են մեզ թալանելու, քայքայելու և ֆիզիկապես յայանելու:

Անկարող լինելով տանել բոլոր զրկանքները, կեղեքումները և բռնությունները՝ որոշեցինք մեր կյանքի գնով և ապստամբությամբ ձեռք բերել մեր ազատությունը և իբրև մի մարդ, մի հոգի, մենք ազատ ձախը ստրուկ կյանքից բարձր համարելով՝ դուրս վրնդեցինք այդ գառնազգեստ գայլերին մեր երկրի սահմաններից դուրս:

Եվ վայ նոցա եթե երբևիցե կրկին փորձ կանեն մտնել մեր ազատ երկիրը, մենք մանուկից սկսած մինչև 100 տարեկան ծերունի-ները պատրաստ ենք հրացանով, բահով, քլունգով և փայտեղով անգամ դիմադրելու սև սիրտ, սև գործ, սև հոգի ունեցող այդ կարմիր բանակ կոչվածներին և մինչև մեր արյան վերջին կաթիլը պաշտպա-նելու «Ազատ Ձանգեզուրը»:

Բուլշևիկների տիրապետության ժամանակ Տեղ գյուղը հետևյալ վնասներն է կրել:

Ցուցակ

Տեղ գյուղի հասած վնասների սովետական իշխանության
ժամանակամիջոցում:

Կազմված է 8-ին դեկտեմբերի 1920թ

N ըստ կարգի	Անասունների և իրերի անունները	Անասունների և իրերի քիվը և քաշը
1	Ձիեր	75 հատ
2	Ավանակներ	237
3	Ջորիներ	13
4	Լծկան եզներ	312
5	Կովեր	115
6	Պաներ 1 2 տարեկան	86
7	Ոչխարներ	784
8	Այծեր	183
9	Խոզեր	125
10	Հավեր	2765
11	Յուղ	83 փ 20գ
12	Պանիր	220 փ
13	Չեթ	45 փ
14	Մեղր	9 փ 25գ
15	Բաքմազ	217 փ
16	Նավթ	13 փ
17	Չորացրած թուֆ	150 փ
18	Կարտոֆիլ	1355 փ
19	Ցորեն եւ այլուր	2460 փ
20	Գարի	1355 փ
21	Հաճար	1250 փ
22	Կորեկ	3465 փ
23	Չավար	675 փ
24	Ոսպ	180 փ
25	Հաց	1255 փ
26	Ցորենի խուրձեր ծիաներին տված և փչացրած	2500 հ
27	Գարու	3000 հ
28	Հաճարի	1100 հ
29	Կորեկի	550 հ
30	Խոտ	15000 փ
31	Պարման	17000 փ

32	Գործեր	93 h
33	Կարպետներ	215 h
34	Ջվալներ	220 գ.
35	Խուրջիներ	161 h
36	Քանդիղներ	330 h.
37	Անկողիներ	280 ձ.
38	Հագուստ տղամարդու բրդից	230 ձ
39	Հագուստ կանանց բրդից	340 ձ.
40	Մետաքսի կտորներ կանանց շորացու	180 ա.
41	Բրդե կտորներ կանանց շորացու	90 ա
42	Ժամացույցներ ոսկի	13 h
43	Ժամացույցներ արծաթի	63 h

Խլած են ոսկե և արծաթի ժամացույցներ մատանիներ կանաց գլխի փողեր, գոտիներ նիկայան թղթադրամներ, Կովկասյան բռներ տավարի կաշիներ, քահանայի շուրջառացու, կտոր, դանակ պատա ռաբադ, կարի մեքենաներ և այլն և այլն:

Վառել են 7 սենյակներից բաղկացած գյուղի երկդասյան դպրոցը 80 նստարաններ, 1500 ընտիր գրքեր, աթոռներ, սեղաններ և այլն:

Քանգած և ավերված են գյուղի ժողովրդական տունը, նախկին փոստի շենքը և 15-20 տուն ուր զորք էր ապրում՝ կատարյալ փլատակների է վերածված

ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՈՒՇԵՎԻԿՆԵՐԻ ԱՐՏԱՔՍՈՒՄԸ ՋԱՆԳԵԶՈՒՐԻՑ

Կատարվեց այն, ինչ անխուսափելի էր տեղի ունեցավ այն ինչ իրերի բնական և տրամաբանական ընթացքով պիտի լիներ:

Ազատասեր Ջանգեզուրը, Ղափանը Սիսիանը Գողթանն ու գեներալը, որ դարերի ընթացքում ամենաթանկ գնով պահել էին իրենց հայրենիքն ու ազգային արժանապատվությունը, կանգ չառնելով մեծամեծ գոհերի առաջ, անգամ չվիատվելով այն ժամանակ, երբ Լենկ-Թեմուրներն ու Չինգիզ-խաները արյան բաղնիքի էին վերածել իրենց չքնաղ ու հպարտ հայրենիքը, բնականաբար նոքա այս անգամ էլ չէին կարող հանդուրժել աղբբեջանյան-բուլչևիկյան հորդաներին, որոնք եկել էին սոցիալապես սպանելու, մեռցնելու հայ գեղջուկին, խլելու վերջին պատառը որբի և որբևայրու ձեռքից, որոնք առանց այն էլ տնտեսապես բնությունից ծեծված, հագիվ մի կերպ քարշ էին տալիս իրենց թշվառ գոյությունը:

Բուլչևիկները իրենց մեղրածոր լոգունգներով երկնքի արքայությունը խոստացան հայ գյուղացի աշխատավորության և դորա փոխարեն խլեցին նրանից նրա վերջին լծկան եզը ավերեցին ու տարան այն բուլոը, ինչ որ տարիների ընթացքում հայ աշխատավորը իր կորաքամակ մեջքով ու կոշտացած ձեռներով տնտեսել էր: Ահաբեկ ման սոսկունի տակ յուրացրին հայ գեղջուկի կթան կովն ու ոչխարը, լծկան եզն ու գոմշուկը, նրա վերջին գրաստը նրա մերկությունը ծածկող հագուստը, արյուն քրտինքով և կյանքի գնով շախտերում¹ ու նավթահանքերում սև օրվա համար հավաքած նորա արցունքոտ կոպեկները, նորա երեխաների վերջին պատառը:

Այս բոլորը կատարվում էր օրը ցերեկով, հանուն սոցիալիզմի հանուն աշխատավոր հայ գյուղացու շահերի, որպիսի խաբեություն, որպիսի պատրանք, որպիսի սրբապղծություն սոցիալիզմի...

Ազգերի համերաշխություն քարոզելով, բուլչևիզմը զինաթափ արեց երկրագործ հայ շինականին և մահացու զենքը տալով հայի դարավոր, պատմական ու հոգեբանորեն հակառակորդ թաթարի ձեռքը բնաջնջել էր ուզում ազատատենչ Սյունիքի հայությունը: Այն, ինչ որ չկարողացավ անել իր կազմակերպված բանակով, ուղիղ մեկ տարի սրանից առաջ պանիսլամիստական Աղբբեջանը՝ բուլչևիկները ցանկացան իրագործել և շնորհիվ հավիտենականապես հայության և հայ աշխատավորության նողկանքին ու զզվանքին արժանի դարա գյոգյանների և բակունցների հայադրուժ գործունեության բացվեցին ազատ Սյունիքի պողպատյա դռները և ներս հրավիրվեցին կազմա կերպված մարդասպաններն ու ավազակները՝ բուլչևիկները:

¹ Հանքեր – ռուսերեն «Հայրենիք» Ակունք

ժողովուրդների եղբայրություն քարոզելով բուլշևիկներն իրենք ֆին կազմակերպում հարևան ժողովուրդների միջև Բարդուղիմեոսյան սև ու արյունոտ գիշերները... Հայք թուրքի դեմ թուրքը հայի դեմ եղբայրը եղբոր դեմ, որդին հոր դեմ՝ ահա սրանք էին բուլշևիկների մեղրածոր լողունգների բովանդակությունը, նրանց քարոզած ժողովուրդների եղբայրության այլանդակ եությունը նրանց իդեալների կվինտ-եսենցիան:

Բուլշևիկների օրով թագավորում էր համատարած սոսկումն ու սարսափը, համատարած արյունոտ և դաժան տեռորը... Մարդիկ ոչ ճրայն չէին կարողանում ազատ խոսել այլև նոքա չէին կարողանում ազատ մտածել:

Պոլիտ-ատդելներն¹ ու Չեկաները² պողպատյա շղթա էին դրել մարդկային ազատ մտածողության պրպտող և միշտ վերջը սլացող հոգու և զգացումի վրա. մարդը դարձել էր մի կենդանի դիակ նա իրավունք չունեի տեսնել, դիտել, զգալ, մտածել ապրել... Անհատը իր բովանդակ հոգեկան եությանը կաշկանդված էր մեռել էր ձեռներեցության ոգին մարդկանց մեջ, գոյություն չունեի անհատ. չկար հասարակական իրավակարգ և անբողջություն, տեռորի սարսափը մեռցրել էր հասարակական գիտակցությունը ... չկար ոչինչ:

Համատարած այս սոսկումի մեջ թագավորում էր միայն քմա հաճույքը, որը բոխում էր այս կամ այն բուլշևիկի հիվանդոտ ուղեղից. տիրականորեն միայն իշխում էին հասարակության տականքները՝ բուլշևիկ կոչվածները, երեկվա սրիկաները, մարդասպանները, գողերը, որոնք ընդունակ են միայն անաշխատ կյանքի ուրիշի աշխատանքով ուրիշի արյուն քրտինքով ապրելու ...

Փրփրոտ բերաններով խոսում էին ամբիոններից մարդը մարդուն շահագործելու դեմ, բայց անխիղճ կերպով շահագործում էին ուրիշի աշխատանքը, յուրացնում էին բանվորի կոշտացած ձեռների աշխատանքի արդյունքը:

Փքուն ճառերով խոսում և խոստանում էին մարդկանց երջան կություն տալու, բայց խոստումների տակ թաքնված անեծքն ու դժոխքն էին բաժին հանում մարդկանց

Հեղափոխականի ազնիվ խոսքերով հավատացնում էին միա միտներին որ իրենք եկել են հավասարություն բերելու բոլորի համար, բայց անխնա թալանում էին բոլորին՝ առանց դասակարգի խտրության, հափշտակում էին այն ամենը ինչ տեսնում էին, ինչ իրանց պետք էր: Հանում սոցիալիզմի ավարում էին տավար, ոչխար հագուստ փող հաց, յուղ պանիր մեղր կանանց արդ ու զարդ և

¹ Կարմիր բանակի հատուկ Քաղաքական բաժին – ռուսերեն «Հայրենիք» Ակումբ.

² Խորհրդային հատուկ ժառանգություն Արտակարգ հանձնաժողով – ռուսերեն: «Հայրենիք» Ակումբ:

այլն ու միակ բանը որ կոմունիստները իրենց 5 ամսվա դաժան տիրապետության ընթացքում իրենց խոստումները կատարեցին այդ այն էր, որ ունևորներին կողոպտեցին, թալանեցին և հավասարեցին չունևորներին, իսկ չունևորներին մատնեցին սովի և մահի ճիրաններին: Որպիսի գոեհիկ հասկացողություն հավասարության մասին որպիսի սպանիչ սոցիալիզմ:

Եջերի սղության պատճառով բոլշևիկյան եղեռնի մանրամասը չենք կարող տալ այս փոքրիկ բրոշյուրում¹, սակայն վստահ, որ ժամանակին անաչառ և անկաչառ պատմաբանը կասի բոլորը, կպատմի բովանդակ սոսկումները, որից ապագա սերունդը կարդալիս պիտի սարսափի և իր անեծքի հուժկու խոսքն ասի այն չարագործներին որոնք իրենց սև գործունեությամբ անարգեցին ու սրբապղծեցին սոցիալիզմը, արատավորեցին ու թաղեցին բանվորի սրբազան դատը ..

Վիրավոր, հռչոտված Սյունիքը լողում էր համատարած սև սուզի մեջ և լուռ ու մունջ, սրտի անհուն կսկիծով մղկտում հայրենասեր Արշակի², մեղրաշուրթ Վահանի³ և տասը երկար ու ծիգ տարիներ Սիբիրի բանտերում տանջված անմեծան Սաքոյի⁴ և բազմաթիվ ընկերների եղերական մահը: Հարյուրավոր «անմեղ մեղավորների» հայտնի ու անհայտ շիրիմները վրեժ և հատուցում էին պահանջում դառնազգեստ գայլերից ու նոցա սրտաճմլիկ և արդար բողոքը հանգիստ քուն ու դադար չէր տալիս այն ազնիվ, գաղափարական հայրենասերներին, որոնց վիճակված էր կենդանի մնալ և լուռ ու մունջ վկա լինել Բարդուղիմեոսյան արնոտ գիշերներին ...

Հարգանք ձեզ, հարգանք ձեր հայտնի ու անհայտ շիրիմներին հարգանք, որ մոթազերծ եղաք բոլշևիկյան սպանդանոցում՝ հանուն աշխատավորության, հանուն ազգային արժանապատվության հանուն հայրենասիրության. հարգանք ձեզ

Հայ մատաղ կույրերի բռնաբարումը «կարմիր ասկյարների» և ռուս բոլշևիկների ձեռքով արդար վրեժի և զայրույթի տակ ապան էր լցնում և սև լլկանքի ճիչն ու աղաղակը սրբազան վրեժխնդրության սրբազան հնոցն էր բորբոքում:

Դանակը ոսկրին էր հասել, համբերության բաժակը լցվեր էր և նա պիտի թափվեր խեղդելով իր մեջ այն բոլոր կարմիր կոչված սև չարագործներին, որոնք հայարտ Սյունիքի սիրտն էին խոցուտել պատիվն արատավորել... Ամոթն ու խիղճը: Ադրբեջանյան շեֆերին ծախված հայ «կարմիր» սրիկաները իրենց վերջին ճիգն էին թափում իրենց սև գոյությունն ապահովելու և մի քանի օրով ևս երկարացնելու բոլշևիկյան դաժան տիրապետությունը, բայց արդեն ուշ էր:

¹ Գրքույկ – ռուսերեն: «Հայրենիք» Ակումբ:

² Նկատի ունի Արշակ Շիրինյանին: «Հայրենիք» Ակումբ

³ Նկատի ունի Վահան Խորենուն: «Հայրենիք» Ակումբ:

⁴ Նկատի ունի Համբարձում Սարգսյանին: «Հայրենիք» Ակումբ

ժողովուրդը շատ լավ էր ճանաչել ու հասկացել նրանց, շատ լավ էր թափանցել նրանց սիրտն ու հոգին: Այլևս չէր մնացել մի հատիկ մարդ, որ լսած չլիներ նրանց «քաղցր խոսքը» և տեսած չլիներ այդ «քաղցր խոսքի» տակ թաքնված սև գործը:

Բռնության, ստի, կեղծիքի վրա հիմնած տան հիմքերը խախտվել էին և նա պիտի շառաչելով խորտակվեր իր տակն առնելով բոլոր չարագործներին

* * *

Վիրավոր Սյունիքը սթափվել էր իր լեթարգիական խոր քնից ու ժաց աչքերով տեսնում էր, որ քաղաքական պոռնիկ և կարմիր շառլա տանները իրեն խաբել, անդունդի ծայրին են կանգնեցրել:

Բոլշևիկյան 5 ամսվա տիրապետությունը իր սոսկումններով երևեկվա լռակյաց սյունեցուն դարձրել էր բողոքող, քննադատող: Անկարելի էր այլևս հանդուրժել այն բոլորը, ինչ տեսել, զգացել և փորձել էր իր սեփական կաշու վրա:

Թող կորչեն խաբեբա սրիկաները գոռում էին երեկվա հնազանդ, հլու հպատակները:

- Մահ կամ ազատություն, հաղթականորեն շեշտում էր շղթայված Սյունիքի ազատատենչ երիտասարդը:

- Մենք խաբված ենք, մենք մոլորված ամոթահար, բայց հանդուրժած շեշտով,- կրկնում էին երեկվա խաբված միամիտները, որոնք շոլշևիկների հետ ձեռք ձեռքի տված դեռ երեկ եռանդով աշխատում էին:

Ապստամբություն,- միաբերան գոռում էին բոլորը և կին և տղամարդ, և ծեր, և երեխա՛, և հարուստ և բանվոր՝

Հրաշքը կատարված էր .

Ապստամբության ազատարար սրբազան շեփորը առաջին անգամ հնչում է Դավիթ Բեկի, Թորոս իշխանի հայրենիքից՝ Ղափանից դրտեղ ժողովուրդը գրեթե անզեն ու անկազմակերպ, դուրս է գալիս ազատամարտի, իրենից թվով տասնապատիկ գերազանց և կազմակերպված բանակի դեմ:

Բարեբախտաբար հենց այդ ժամանակ Ղափանում էր գտնվում թալկանների հերոսական կռիվների սիրահար Նժդեհը, որին ժողովուրդը խնդրում է անցնել ապստամբության գլուխը, որին ժողովուրդը հանձնում է իր արյունոտ, արդար դատը, լկված ու բռնաբարված քույրերի վրիժառության սրբազան ճիչը:

Նժդեհը, որին վիճակված էր ամենածանր և անհուսալի պայմաններում ապստամբ Սյունիքի ազատարարը լինել, չի ընկճվում, չի ղուսահատվում, ամեն ինչ կորած չի համարում, որպես շատերն էին մտածում: Նա համառորեն գիշեր ու ցերեկ մտածման առարկա է դարձնում միայն մի բան՝ արդարացնել իր վրա տածած ժողովրդի հույ-

սերն ու սպառնալիքները փրկել ժողովրդին բուշևիկյան սպանդանոցից

Ինչպես ամեն տեղ, այստեղ ևս փոքրոգիները կացությունն համարելով անելանելի՝ թողնում, հեռանում են Նժդեհից, համարելով ամեն ինչ կորած բայց եղան և գտնվեցին փոքրաթիվ ընկերներ պատիվ նրանց, որոնք խորապես համոզված լինելով իրենց մղած պայքարի արդարության մեջ և ավելի քան համոզված լինելով, որ ապստամբության գլուխն անցել է մեկը, որը իր անձն էր ռազմունակ և խիզախ ջանքերով հաջողությամբ ոգի պատկում ազատության գործը այդ փոքրաթիվ ընկերները երդվում են ազատության սեղանի առաջ ողջակիզվել հանուն արդարության ազատության, հայրենիքի և ազգային արժանապատվության սուրբ գործին: Նոքա վճռում են մեռնել միասին և ապրել միասին իրենց սիրելի ավագ ընկերոջ Նժդեհի հետ:

Մեծ չէր այս խումբը. վշտի և տառապանքի օրերին նրանք 20-30 հոգի էին, երբ դեպի հայրենիքը ունեցած պարտքի և գիտակցության ծանր խաչը ուսերին առած բարձրանում էին Սյունիքի Գողգոթան հպարտ Խուստուկի ծյունապատ կատարը:

Քաղցն ու ցուրտը, վիշտն ու տանջանքն էր այս խմբի անբաժան ընկերը և ամեն անգամ, երբ նոքա լսում էին իրենց խիզախ հրամանատարի ոգեշունչ խոսքերը՝ մոռանում էին և վիշտ և տանջանք և դառնություն և ամեն ինչ: Նոքա իրենց երջանիկ էին զգում Խուստուկի ժայռերում և այրերում: Ազատության ուխտավորների այս խումբը սակայն երկար չի մնում այստեղ, իջնում, անցնում է Արևիքի շրջանը (Գենվագ) և այստեղից արդեն նոքա ո՛չ մեկ ուժ չի կարողանում տեղահան անել, հեռացնել:

Արևիքի ամբողջ հայությունը որպես մի մարդ հավաքվում է Նժդեհի ապստամբ դրոշի տակ և սկսվում է այնուհետև հերոսաճարտը..

Արևիքին էր վերապահված լինել ազատության Բեթլեհենը, ուր պիտի ծնվեր ու զարգանար Սյունիքի ազատությունը: Քառասուն և հինգ օր շարունակ տեղի են ունենում ճակատագրական կռիվներ մեկը մյուսից խիզախ, մեկը մյուսից հանդուգն.

Երկարատև այդ կռիվները թուլացնում, հալեցնում են թշնամու թվով տասնապատիկ գերազանց բանակը և «կարմիրները» ջարդված, ամոթահար կրնկակոխ փախչում Ղափան թողնելով ապստամբներին առատ ու ռազմավար:

Չերոսամարտը ավելի ուժգին և ըմբոստ շարունակվում է Ղափանում: Բախտի անիվը արդեն թեքվել էր՝ երեկվա թվով հսկա և գերազանցորեն լավ սպառազինված «կարմիրների» բանակը հարձակողականից անցնում է պաշտպանողականի:

Ստվարանում, մեծանում են ապստամբական խմբերը գալիս միանում են ապստամբներին երեկվա լքվածները, որոնք ամեն ինչ

պորած էին համարում և որ ամենագլխավորն է թշնամուց խլված է այնքան զենք և ռազմամթերք որ անգամ երեխաներն ու ծերունիներն չեն զինվում:

Մեկը մյուսին հաջորդող ապստամբների հաղթությամբ պսակ չած հերոսամարտը թուլացնում, ընկճում է թշնամուն, դարձնում սրան անմարտունակ: Ապստամբների փայլուն այս հաղթանակները գրավական էին *վաղվա արշալույսին*: Չոզեպես ուրախ էր ամբողջ Ղափանը, այս ուրախությանը սակայն դեռ ամբողջապես մասնակից չէր Նժդեհը: Նրա սիրտը տոչորվում էր, երբ ամեն անգամ Սիսիանից ու Ջանգեգուրից ստանում էր մեկը մյուսից սարսռեցուցիչ սև լուրեր և նա մտածում էր ապստամբություն սկսել նաև Սիսյանում ու ընդհամուր գրոհով շարտել թշնամուն մինչև Ջաբուղ-Ավդալլարը:

Նժդեհը ոչ միայն տաղանդավոր կռվող է ու ղեկավար նա անզուգական է նաև որպես կազմակերպող:

Կարմիր բանակի պարտությունը կատաղեցրել, գազազեցել էր «կարմիրների» պետերին որոնք նստած խորը թիկունքում, համառում էին իրենց տիրապետության վերջին օրերը և այդ խայտառակ պարտության վրեժը լուծում էին ոչ միայն անզեն ժողովրդից, որոնք ռոպե առ ռոպե սպասում էին Նժդեհին, այլև իրենց սովալլուկ, հաշմանդամ զինվորներից: Կարմիր զինվորներից 20 հոգի հրացանագարկ են լինում Գորիսի բանտում և 70 հոգի էլ Գորիսից տարվում հրացանագարկ լինում Ղարաղշլաղի ձորում, միայն այն պատճառով որ նոքա հանդգնել են հազուստ ու ոտնաման պահանջել և այնպես ձնալ ֆրոնտ

Չանգամանքների ներդաշնակ և հաջող դասավորումը *ավետում էր Սյունիքի ազատության արշալույսը*: Նժդեհի խոհուն և հեռատես որահանգները պարարտ հող են գտնում: Սիսիանում, ուր այդ ժամանակ գտնվում էր տեղակալ (պարուչիկ) Պողոս Տեր-Ղավթյանը, որը սիրված էր ամբողջ Սիսիանի ժողովրդի և երիտասարդության կողմից որբն խիզախ և անվախ խմբապետի:

Այստեղ Սիսիանում ևս կատարվեց նույն հրաշքը, ինչ որ Ղափանում: Ապստամբությունը բռնկված էր և ժամ առ ժամ լայնանում ու մեծանում էր ապստամբական շրջանը:

Ամբողջ ապստամբության շրջանում ամենից ուշագրավն ու կարևորն այն էր, որ ամեն տեղ ապստամբության *ատաքին կարապետները հանդիսանում էին «կոմունիստական ռևոլյուցիոն ու յաչեյկաները»*,¹ և այդպիսով ամենուրեք, սրի ու հրի վրա հիմնված այդ կուսակցությունը պարունակում էր իր մեջ իր իսկ գոյության ժխտումը: Ընդհանրապես այդ ժխտման, շնորհիվ Արևիքի և Ղափանի փայլուն հաղթանակների «կարմիր բանակը» բարոյալքվել, ռազմունակության ուժը

¹ Բջիջ – կոմկուսի սկզբնական կառույց «Չայրենիք» Ակունք

կորցրել էր: Այստեղ ևս նա զարնվելով Սիսիանի ապստամբ ժայռերին ջարդ ու փշուր եղավ, հալվեցավ, հանգավ...

Պատմության անիվը շուռ էր եկել, երեկվա ծեծողը այսօր ծեծում է երեկվա հլու հպատակը այսօր թելադրում է իր հաղթական կամքը

Փայլուն ազատամարտի անգուգական հերոսի Նժդեհի վերջ նագիրը-ուկտիմատունը, ուղղված կարմիր բանակին՝ *մաքրել ամբողջ Ձանգեզուրը*, ավելի ևս կատաղեցնում է «կարմիր պետերին» և սոքա վճռում են ինչ գնով էլ լինի հաղթել Սյունիքի անհաղթին և մաքրել ամբողջ Սյունիքը ապստամբներից:

Սկսվում է «կարմիրների» տենդային աշխատանքը և ռազմական ուժերի կենտրոնացումը:

Տեղական հայ կարմիր սրիկաների ստիպմամբ կազմակերպվում է կոմունիստական ջոկատ զուտ հայ կոմունիստներից, որոնք իբր տեղացիներ, իբր թե խոշոր ծառայություն պիտի մատուցեին կարմիրների հաղթության գործին: Երազած խոշոր ջոկատը բարե բախտաբար չէ անցնում 100-ից և նոցա սպառնալիքները մնում են իբր երազ, իբր պատրանք:

Ենչտ այդ ժամանակ, երբ «կարմիրները» քշված սղմված էին Գորիսի պատերին Գորիս հասավ Կուրոչկինը՝ 1400 ձիավորներով և 28-րդ դիվիզիայի 83-րդ ամբողջ բրիգադան որոնք տեղում գտնվող զորամասերի և վերջերս եկած 1200 տաճկական «կարմիր ասկյարների» հետ մի պատկառելի զինվորական ուժ էին ներկայացնում:

Բոլորը ահ ու սարսափով սպասում էին իրերի բնական ելքին Նորից բորբոջվում, նորից սկսվում է անհավասար կռիվը կռիվ բոլոր ճակատներից, կռիվ միաժամանակ և ամբողջ թափով:

Տաթևի սիգապանց լեռներն ու ձորերը, Ինջաբելը, Եայջին, Երիցաթունը, Ղարաքիլիսան և ճակատից անհաղթ Ղափանը գերազանցորեն դառնում են կռվի թատերաբեմ, ուր վճռվում է մեկի կամ մյուսի բախտը

Տասներկու օրվա վերջին արյունահեղ կռիվները վերջնականապես ամրապնդում են ապստամբների անպարտելիությունը:

«Կարմիրները» հաղթված ու ջարդված՝ գլխկոր փախչում են Գորիս, իսկ բուլշևիկների «անհաղթ» հորջորջվող Կուրոչկինի ձիավոր դիվիզիան կորցնելով իր ուժերի ուղիղ կեսը, առանց ետ նայելու փախչում է մինչև Շուշի:

Բնած չէր այդ ժամանակ և Բուն Ձանգեզուրը

Սուրհանդակները ամենայն օր նորանոր լուրեր էին բերում կռվի դաշտից և Նժդեհի ու սիսիանցիների փառապանծ հաղթություններից

Ահաբեկված, բայց ազատության անհազ ծարավից պապակված զանգեզուրցին այդ ժամանակ կատարում էր լուռ, անմռունչ իր սրբազան գործը: Նա հյուսում, շինում էր անխոս ու գաղտնի *ապստամբության փառահեղ տաճարը* և պատրաստ էր ամբողջովին *ողջ-*

*«Կիզվել ազատության արյունոտ ճանապարհին քան շարունակել
քրատային անպատիվ կյանքը:*

Նոյեմբեր 20-ՅՆ է, մի աննոռանալի և խորհրդավոր օր Բուն
Ձանգեզուրի ազատագրության արյունոտ պատմության համար:

«Կարմիր պետերը» փսփսուկով էին հայտնում իրար իրենց
վերջնական խայտառակ պարտությունը, այլևս ոչ մի կասկած որ
վաղը, մյուս օրը ձիթենու ճյուղերով զանգեզուրցին պիտի տոներ իր
քանաբարված ազատության, լլկված նամուսի, ոտնահարված ազգա-
րն արժանապատվության Մեծ Տոնը:

Նոյեմբեր 20-ի, լույս 21 ի գիշերվա խորհրդավոր միության մեջ
դարբնվեց Ձանգեզուրի ազատության վեհ գործը և առավոտյան
արդեն լսվում էր ծերերի և մանուկների բերաններից օրհնության և
ցնծության խոսքը:

*ԲՈՆՈՒԹՅԱՆ, ՄՏԻ ԵՎ ԿԵՂԾԻՔԻ ՎՐԱ ՅԻՄՆՎԱԾ ԲՈՒՇԵՎԻԿՅԱՆ
ԴԱԺԱՆ ՇԵՆՔԸ ԸՍՈՍՉԵԼՈՎ ՎԱՅՐ ԷՐ ԳԼՈՐՎԵԼ*

ԴժՈՒՔԸ ՈՒ ԱՆԵԾՔԸ ՏԱՊԱԼՎԱԾ ԷՐ

Նոյեմբեր 22-ին առավոտյան ժամը 12-ին, ամբողջ Գորիսի և
չրջանի ժողովուրդը, ապստամբ զինվորությունը «Մեր հայրենիք
ազատ անկախ» երգելով, հայ եկեղեցու քաղցր դողանցների տակ
աղ ու հացով դիմավորեց *ՅՈՒՐ ՄԻՐԵԼԻ ԱԶԱՏԱՐԱՐԱՐԻՆ - ՆԺԴԵՅԻՆ*
և նորա հաղթական մուտքը շնորհավորեց: Հազարավոր շրթունքներ
օրհնության մրմունջն էին թրթուվում բոլորի երեսին փայլում էր
ազատության ժպիտը...

ԱՅՈՒՆԻՔԸ ԱԶԱՏ ԷՐ ՈՒ ԱՆՎԱՍԽ...

Բուլշևիկներին Ձանգեզուրից դուրս վճռելուց հետո ընտրվում է
անմիջապես բուն Ձանգեզուրի համար *Գյուղացիական ժամանակա-
վոր* խորհուրդ, բաղկացած 7 հոգուց, որին և հանձնվում է ապստամբ
երկրի բախտը, մինչև պատմական Տաթևի վանքի համազանգեզուր-
յան համագումարը:

Գ. Խաչատրյան
1921թ. հունվար 20
Գորիս

ՀԱՄԱՁԱՆԳԵԶՈՒՅԱԼ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1920թ դեկտեմբերի 25-ին, Ձանգեզուրի հայ ժողովրդի ցանկությամբ, պատմական Տաթևի վանքում, կայացավ համազանգեզուրյան համագումարը, ուր ներկա էին Ձանգեզուրի բոլոր շրջանների գյուղօրայքից ընտրված 100 պատգամավորները, Ձանգեզուր-Գողթանի Սպարապետ Նժդեհը, Ձանգեզուրի բոլոր շրջանային խորհրդների 15 ներկայացուցիչները, ընդհամենը 118 հոգի:

Կեսօրվա ժամը 2-ին ժողովը բացում է Բուն Ձանգեզուրի Գյուղացիական ժամանակավոր խորհրդի նախագահ Տ Մելիք-Հուսեյինյանը և առաջարկում է ընտրել համագումարի դիվան: Չայների մեծամասնությամբ ընտրվում են. Նախագահ՝ Գեղեոն Տեր-Մինասյան փոխնախագահներ՝ Եգոր Հարությունյան և Տիգրան Մելիք-Հուսեյինյան, քարտուղարներ՝ Մամվել Մաշուրյան և Նիկալա Դորունց: Նախագահը նիստը բաց հայտատարելուց հետո՝ համառոտ կերպով բացատրում և համագումարի պատմական նշանակության, նրա կատարելիք դերի մասին և առաջարկում է անցնել օրակարգի հետևյալ հարցերի քննությանը

ՕՐԱԿԱՐԳ

1 Ձեկուցում Հայաստանի քաղաքական անց ու դարձի մասին և համագումարի բռնելիք դիրքը,

2. Ձեկուցումներ բոլոր շրջանային խորհուրդների գործունեության մասին

3. Ինքնավար Սյունիքի կառավարության ձևը (конституция)

4. Իշխանության կազմակերպումը

Ա. Սպարապետի հրավիրումը

Բ. Ինքնավար Սյունիքի պարլամենտի դիվանի ընտրությունը

Գ. Ինքնավար Սյունիքի վերահսկիչ մարմնի ընտրությունը,

5. Իշխանության կենտրոնատեղի որոշումը

6 «Արտաքին քաղաքականություն»,

Փոխհարաբերություն

Ա. Հայաստանի Հանրապետության հետ

Բ. Ադրբեջանի հանրապետության հետ

Գ. Պարսկաստանի կառավարության հետ

Դ. Հարևան թուրքերի հետ

7. Ինքնապաշտպանության հարց

8. Պարենավորում

9. Պետական ծառայողների ռոճիկների նորմաների որոշում,
10. Մասնավոր և խոշոր սեփականությունների պետականացումը

- Ա. Վանքապատկան և եկեղեցական
- Բ. Խաների, բեկերի և մելիքների
- Գ Արդյունաբերության
- 11. Ընթացիկ հարցեր
- Ա. Որբանոցի,
- Բ Ջուլհականոցի
- Գ Նախկին կառավարություններից զանազան անձնավորությունների մոտ մնացած գումարների պահանջման հարց
- Դ Ղրամների գործադրությունը

ՈՐՈՇԵՑԻՆ

1. Սի շարք ներկայացուցիչների երկար ու բազմակողմանի արտահայտություններից հետո համագումարը բուռն ժափահարություններով և ուռաներով ընդունում է միաձայն հետևյալ բանաձևը. Չանգեզուրի մի բուռն տականքների և ազգությանների հրավիրանոք, առանց ազգաբնակչության կամքն ու ցանկությունը հարցնելու, Չանգեզուր յտան սովետական գործառնները, որոնք իրենց 5 ամսվա տիրապետության ընթացքում տնտեսապես քայքայեցին Չանգեզուրի աշխարհավոր գյուղացիությունը.

Սովետական հրամանատարությունը հենց առաջին քայլից զավառիս գյուղացիության նկատմամբ սկսեց իր ավերիչ, քայքայիչ քաղաքականությունը, որի առաջ նսեմանում են պատմական Լենկ Ձենուրյան և արևելքի բարբարոսների արշավանքներն ու գործելապետարը: Հայ աղքատ գյուղացիության տնտեսապես քայքայված շրջանում նա որոնում էր բուրժուական տարրեր և կապիտալիստների դեմ մղելիք քաղաքականությունը գործադրում աղքատ անօգնական գյուղացիների ու այրի կանանց դեմ: Նա խլեց մեր վերջին պատառ հացը, տարավ մեր աղքատ գյուղացու միակ եզը, կովը, ձին ու ավաճակը, գրավեց նրա անասունների կերը և թողեց մերկ ու գուրկ ամենինչից: Սովետական հրամանատարությունը մոռացած իր ժողովրդասիրական մի շարք փքուն լոզունգները՝ ավերեց, հողին հավասարեց ղեց մեր գյուղերը և իր գրավածների հանդեպ մեզ չտվավ մի թել անգամ: Նա անկարող եղավ ամբողջ Չանգեզուրին տալ մի գրվանքա նավթ անգամ, չնայելով մեզ նավթ, մանուֆակտուրա և այլ մթերքներ տալու խոստումներին:

Այս բոլորից հետո մենք համոզվեցինք, որ սովածների այդ բանակը եկել էր միմիայն հափշտակելու մեր կայքն ու գույքը, թալանելու մեզ և իսպառ ոչնչացնելու: Սովետական կառավարությունը իրեն հատուկ արյան բաղանիքներ սարքեց մեր գիտակից երիտասարդների

նկատմամբ և տասնյակներով կոտորեց նրանց, չխնայելով մեր գրական վաստակավոր գործիչներ Խորենուն, Շիրինյանին և տարիներ շարունակ բանտերում տառապած Աաքոներին հոշոտելուց: Առանց բնության և որոշ մեղադրանքների մեր ռաշպար գյուղական երիտասարդներից տասնյակներով գլխատվեցան ու փոսերը թափվեցան և վերջում իր հայակործան հաղթանակը կամենալով առաջ տանել՝ մեր գավառը մտցրեց 1000-ով տաճկական ասկյարներ որոնք իրենց «հայու Աստված» էին անվանում:

Սովետական կառավարությունը մոռանալով տաճկական դարավոր հայաջինջ քաղաքականությունը հայ ժողովրդի նկատմամբ՝ դեպի հայ գյուղերը ուղղեց տաճկական ասկյարներին, որոնք Քարահունջ, Խոտ, Շինուհայր, Հալիծոր, Եայջի, Ջեյվա և ուրիշ գյուղերում իրենց բարբարոս և գազանային ինստինքտները գործ դրեցին հայ կնոջ և կույս աղջիկների վրա՝ նրանց պատիվը ոտնատակ տալով: Կոխտեցին, ցեխի հավասարեցրին պապենական ամեն տեսակի սրբություն, եկեղեցի, ընտանեկան պատիվ և պատկառանք

Սովետական կառավարությունը իր ալան-թալանը, իր ճնշումները, իր բռնությունները կատարյալ կերպով առաջ տանելու համար հարյուրավոր անմեղ մարդկանց բանտ ծագեց ու խեղդեց:

Զանգեզուրի աշխատավոր գյուղացիությունն այլևս չկարողանալով տանել նման բարբարոսությունները՝ որոշեց դուրս վճռել սովետական Ռուսաստանի զորքերին և նրա դիմակի տակ թաքնված Ադրբեջանյան վարձկաններին որոնք ավերեցին իր երկիրը և ազատել իր օջախն ու պատիվը:

Տարվա հոկտեմբերի 10-ից սկսած զանգեզուրցին ապստամբական որոշ պարզեց և իր սիստեմատիկ հարձակումներով նոյեմբերի 21-ին դուրս քշեց իր սահմաններից անկոչ այն զորամասերը, որոնք իրանց հինգ ամսվա տիրապետության ընթացքում իրան կորստյան դուռը հասցրին:

Սովետական Ռուսաստանն ու Ադրբեջանը չբավականանալով այս ամենից՝ ցանկացան գլխատել և խաբառ ոչնչացնել հայ ժողովուրդը, ներս հրավիրեցին տաճկական հորդաներին, Քեմալի գլխավորությամբ Հայաստան և Ալեքսանդրապոլի պատերի տակ ստիպեցին Հայաստանին ընդունելու այսպես կոչված «խորհրդային» իրավակարգը, մի ռեժիմ և ծրագիր, որոնց չէ կարող այլևս հանդուրժել բովանդակ հայ ժողովուրդը: Ի նկատի առնելով վերոհիշյալները և այն, որ զանգեզուրը երեք տարուց ի վեր ապրել է իր ներքին ուրույն կյանքով և շարունակելու է մնալ նույնը՝ համազանգեզուրյան համագումարը իր սույն օրվա նիստում որոշեց.

2. Ձանգեզուրը հայտարարել ժամանակավորապես ինքնավար մտցնելով հանրապետական իրավակարգ, մնալով անկախ, մինչև քաղաքական հնարավորություն կունենա միանալու իր մայր երկրի՝ Հայաստանի հետ:

Ինքնավար Սյունիքի սահմաններն են Ջանգեզուրի նախկին սահմանները:

3. Համագումարը լսում է շրջանային խորհուրդների համառոտ զեկուցումները և դիտողությունները իրենց գործունեության մասին և առնում է ի գիտություն:

4. Համագումարը միաձայն ընդունում ու հաստատում է Ինքնավար Սյունիքի կառավարության ձևի հետևյալ գլխավոր գծերը:

Սույն համագումարը ճանաչել Ինքնավար Սյունիքի բարձր օրենսդրական մարմին-պարլամենտ և վերապահել նրան Սյունիքի ռախտի լիակատար տնօրինությունը:

Ա Պառլամենտը հրավիրվում է տարեկան առնվազ երկու անգամ, իր պրեզիդիումի¹ կողմից, իսկ բացառիկ պայմաններում՝ իր անդամների կիսի կամ պրեզիդիումի պահանջմամբ:

Բ. Պարլամենտի անդամները ընտրվում են երկրի ազգաբնակչության կողմից հետևյալ ձևով: Մինչև 100 ծուխ ունեցող գյուղական համայնքը տալիս է մեկ, 100-ից մինչև 200 ծուխ ունեցողները՝ երկու, և 200-ից ավելի ծուխ ունեցողները՝ երեք ներկայացուցիչ: Ընտրությունները կատարվում են ընդհանուր ընտրողական քառանդամ սխտեմով:

Գ. Պարլամենտը ընտրում է 6 ամիս ժամանակով 9 հոգուց բաղկացած կառավարություն և ցրվում: Մինչև պարլամենտի նոր նստաշրջանը կառավարությանն է անցնում այդ երկրի զինվորական և քաղաքացիական բոլոր գործերի ղեկավարությունը, որը և կիրառում է կյանքի մեջ Պարլամենտից բխած բոլոր օրենքներն ու որոշումները:

Ծանոթություն. Պարլամենտը կառավարության անդամ կարող է ընտրել նաև ոչ պարլամենտի անդամներից:

Դ Կառավարությանն է վերապահվում զինվորական ընդհանուր հրամանատարի-սպարապետի հրավիրումը և արձակումը:

Ե Կառավարությանն է վերապահվում պատերազմ հայտարարելու և հաշտության բանակցություններ վարելու իրավունքը իսկ արտակարգ դեպքում՝ այդ վերապահվում է նաև սպարապետին:

Զ. Երկրի թե քաղաքացիական և թե զինվորական կառավարչական ձևերի հաստատումը և օրենսդրությունը:

է Կառավարությունն ունենում է հետևյալ վարչությունները 1. Ներքին գործերի, 2. Արտաքին գործերի 3. Պարենավորման 4. Արդարադատության, 5. Ֆինանսական, 6. Լուսավորության, 7. Առևտրա-Սրբյունաբերության 8. Հողային, 9. Ծանապարհների հաղորդակցության (փոստ, հեռագիր, հեռախոս և խճուղի), 10. Խնամատարության:

Ը. Բոլոր խոշոր և կարևոր խնդիրները, մասնավորապես ներքին ու արտաքին քաղաքականությանը վերաբերվող, իրենց լուծումն

ստանում են ոչ թե այս կամ այն վարիչի այլ կառավարության ամբողջ կազմի կողմից:

Թ Բոլոր պատասխանատու պաշտոնյաները հաստատվում են կառավարության կողմից, վարիչների առաջարկությամբ:

Ժ Զինվորական բոլոր տեսակի գործերը տարվում են սպարապետի ղեկավարությամբ որը այդ մասին իրազեկ է դարձնում կառավարությանը

ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՍԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱԶՄԸ, ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՍԱՐՄԱՆՆԵՐԸ

Ա. Սյունիքը բաժանվում է 8 շրջանների Բուն Զանգեզուր, Տաթևի ձոր, Ղափան, Դարբասի ձոր, Սիսիան և Գեմվազ: Յուրաքանչյուր շրջանում կազմվում է շրջանային գործադիր մարմին՝ բաղկացած մեծ շրջաններում հինգ, իսկ փոքր շրջաններում՝ 3 հոգուց, որի անդամները ընտրվում են պարլամենտի, նույն շրջանից ուղարկված անդամների կողմից: Շրջանային գործադիր մարմնի կազմը ընտրվում է 6 ամսով

Բ Շրջանային գործադիր մարմինները իրենց գործունեության մասին միշտ զեկուցում են կառավարության ներկայացնելով իրենց հաշվետվությունը ի հաստատություն:

Գ. Շրջանային գործադիր մարմիններին է վերապահվում իրենց շրջանի ներքին այս կամ այն հարցի լուծումն, որոնք համապետական բնույթ չեն կրում:

Դ Շրջանային գործադիր մարմինները ունենում են իրենց հետևյալ մասնաճյուղերը: 1. Ներքին գործերի, 2. Պարենավորման, 3 Զինվորական: Շրջանային մարմիններին կից բացվում է նաև ազիտացիոն բյուրո:

Ծանոթություն. Շրջանային գործադիր մարմինները իրենց շրջանի գյուղերում կազմակերպում են գյուղական զինվորական վաշտեր և գյուղական ինքնապաշտպանության կոմիտեներ:

Ե. Շրջաններին վերաբերվող բոլոր խոշոր ու կարևոր հարցերը վճռվում են կառավարության կողմից

ԳՎԱՍՈՎԿԱՊԵՏՆԵՐ ԵՎ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐ

Յուրաքանչյուր շրջան կամ գավառակ ունենում է իր գավառակապետը և շրջանային կոմիսարները, որոնց ընտրում է շրջանային գործադիր մարմինը իր միջից և հաստատվում կառավարության կողմից:

Ա Դափանի շրջանն ունենում է 1 գավառակապետ և 3 շրջանային կոմիսարներ

Բ Սիսիանի շրջան 1 գավառակապետ և 1 շրջանային
սոմխար

Գ Բուն Ձանգեզուրի շրջան 1 գավառակապետ և 1 շրջանային
սոմխար

Դ. Տաթևի ձորի շրջան 1 գավառակապետ և 1 շրջանային
սոմխար

Ե Դարաբասի ձորի շրջան 1 գավառակապետ և 1 շրջանային
սոմխար

Զ Գենվազի շրջան 1 գավառակապետ և 1 շրջանային
սոմխար

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿՈՄԻՍՈՐՆԵՐ

Յուրաքանչյուր գյուղ կամ համայնք ունենում է իր գյուղական
սոմխարը: 100-ից ավելի ծովա ունեցող գյուղերը ունենում են նաև
կոմխարի օգնական, թե առաջինը և թե վերջինը ընտրվում են գյու-
ղական հասարակության և համայնքի կողմից, ընդհանուր սկզբունք
ներով և հաստատվում են նույն գյուղի շրջանային գործադիր մարմնի
կողմից

ԻՆՔՆԱՎԱՐ ԱՅՈՒՆԻՔԻ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՄԱՐՄԻՆ

Սյունյաց ինքնավարության վերահսկիչ մարմինը լիազոր է
սոմտրոլի՝ ենթարկել պետական բոլոր հիմնարկությունների, որոնց
քվում՝ նաև բոլոր վարիչների հաշվետվություններն ու գործողություն
ները

5 Ա. Համագումարը միաձայն որոշում է հրավիրել իր ազատա-
ար, հերոս և ժողիին, որպես Սյունյաց սպարապետ և բուռն ծափա-
րարություններով իր կատարյալ վստահության քվեն տալով իր
ճախտը հանձնում է նրան:

Բ. Ինքնավար Սյունիքի կառավարության համար առաջարկված
15 թեկնածուներից ծայների մեծամասնությամբ գաղտնի քվեարկու-
թյամբ ընտրվում են հետևյալ 8 անձնավորությունները Գեղեոն Տեր
Սինասյան, Նիկոլայ Դորունց, Իսրայել Մելիք-Փարսադանյան Գևորգ
Գրիգորյան, Եգոր Հարությունյան, Սկրտիչ Տեր-Սկրտչյան, Տիգրան
Վելիք-Հուսեյնյան և Աամվել Մաշուրյան և նրանց անձնավորությանորդ
մինաս Սինասյան: Գենվազի շրջանին իրավունք է տրվում ընտրել մի
ներկայացուցիչ և ուղարկել կառավարության կազմը լրացնելու
համար

Գ Ինքնավար Սյունիքի վերահսկիչ մարմնի անդամները ընտր-
վում են հետևյալ 3 անձնավորությունները Գասպար Խաչատրյան

Մուշեղ Ոսկանյան և Գևորգ Գրիգորյան իսկ դրանց անձնափոխանորդներ՝ Տիգրան Սազանդարյան և Շիրին Շիրինյան:

6 Մտքերի երկար փոխանակություններից հետո որոշվում է իշխանության կենտրոնատեղին ընտրել Գորիսը:

7 Պարլամենտը մտքերի երկար փոխանակությունից հետո մի ածայն ընդունում է հետևյալ բանաձևերը մեզ վերաբերմունքի մասին դեպի հարևան պետությունները:

Ա Ձանգեզուրը միշտ ձգտել է և ձգտում է լինել մայր երկրի Հայաստանի Հանրապետության անբաժան մասը, բայց նկատի առնելով Հայաստանի վերջին քաղաքական փոփոխությունները, որ նա ստիպված մի շարք քաղաքական անբարեհաջող հանգամանքներից հայտարարել է իրեն խորհրդային, մի իրավակարգ, որի հետ երբեք չէ կարող հաշտվել մեզ ժողովուրդը պարլամենտը որոշեց մինչև նրա այդ իրավակարգից բաժանվելը գործել սեպագատ և ապրել ուրույն կյանքով:

Բ Ձանգեզուրի վերաբերմունքը դեպի Ադրբեջանի կառավարությունը լինելու է բարեկամական, բայց նա առայժմ չէ կարող սերտ հարաբերությունների և երթևեկության մեջ մտնել Ադրբեջանի հետ մինչև երկու հարևան ժողովուրդների փոխադարձ վստահությունը կատարյալ չլինի:

Գ. Ձանգեզուրի փոխհարաբերությունը Պարսկաստանի հետ եղել է միանգամայն սերտ և բարեկամական ու կմնա: Նա Պարսկաստանում ունենալու է իր ներկայացուցիչը որը ավելի քան սերտ հարաբերությունների մեջ պետք է մտնի այդ կառավարության հետ առևտրական և հաղորդակցության տեսակետներից:

Դ Ձանգեզուրի փոխհարաբերությունները իր հարևան թուրքերի հետ 3 տարուց ի վեր շնորհիվ արտաքին պրովոկացիաների և քաղաքական միջամտությունների եղել է թշնամական, այսօրվանից համագումարը լիափույս է որ այդ անտեղի թշնամանքը կդադարի երկու դարևոր հարևանների միջև տեղի տալով սերտ բարեկամության

8 Պարլամենտը միաձայն որոշում է ինքնապաշտպանության հարցի վերաբերմամբ բոլոր միջոցների ձեռնարկումը և գործադրությունը թողնել սպարապետին:

9 Մի շարք թեր ու դեմ կարծիքներից հետո պարլամենտը ծայրերի մեծամասնությամբ ընդունում է Գ. Գրիգորյանի հետևյալ բանաձևը: Երջաններում կամավոր հանգանակություն կատարել և մթերքը կենտրոնացնել շրջանային պետական շտեմարաններում: Կռիվների ընթացքում շրջանները կմատակարարեն իրենց ուժերի պարենը: Պետական հիմնարկությունների համար շրջանների պահեստներից բաժին հանել համեմատական քանակությամբ ռասկլադկայի¹ ձևով

¹ Բաշխում – ռուսերեն «Հայրենիք» Ակումբ

յ մեծամասնականներից մնացած իրեղը և պետական գույքերը ֆոխանակելով հացահատիկների հետ

10 Պառլամենտը ռոճիկների նորմաների ոչոչման հարցը թող ճում է սպարապետին:

11 Պարլամենտը ընդունում է մասնավոր խոշոր սեփականու շյունների պետականացումը, ինչպես վանքապատկան-եկեղեցական յ բեգական, նույնպես և ուրիշ խոշոր կալվածատերերի:

12 Պարլամենտը օրակարգի ընթացիկ հարցերում զետեղված 4 հարցերի որոշումները թողնում է կառավարության:

Օրակարգի հարցերը վերջացնելուց հետո կադդացվում է Արևիքի շրջանից ստացված հետևյալ հեռագիրը

«Տաթև, Ձանգեգուրի սպարապետ պ. Նժդեհին

Ձեր կարգադրությունը՝ ուղարկել ներկայացուցիչներ Տաթևի համագումարը, Արևիքի Փրկության Կոմիտեն ստացավ ամսի 24-ին երեկոյան: Ձգալով, որ կուշանանք հրավիրեցինք ամսի 22-ին շրջանային համագումար, որտեղ ներկա էին Արևիքի 12 գյուղերի ներկայացուցիչներ, թվով 68 հոգի, բացակայում էին Կարճևանի և Ապկեզի ներկայացուցիչները: Արևիքի գյուղացիական պատգամավորների ժողովի օրակարգի հարցերն էին.

Ա. Հայաստանում տեղի ունեցած հեղաշրջումը և Արևիքի ժողովրդի բռնելիք դիրքը:

Բ. Համազանգեգուրյան համագումար ներկայացուցիչներ ուղարկելու հարցը:

Կարգադրված էր բոլոր գյուղերում հասարակական ժողով գումարել, քննել այդ հարցերը և ուղարկել ներկայացուցիչներ ման դատով:

Գյուղացիական պատգամավորների ժողովը որոշեց Տաթևի համագումարին շրջանի կողմից ներկայացուցիչներ ուղարկել Դավիթ Դավթյանին և Խաչատուր Դանիելյանին: Պատգամավորները դուրս եկան Սեղրիից ամսի 22-ին, Լիճք-Տաշտոնի սարը կապ լինելու պատ ճառով, հետ դառան, անցան հանքերը: Առաջին հաիցին ժողովը պա տասխանեց հետևյալ բանաձևով, որը անբողջովին հեռախոսագրում ենք Ձեզ. «Արևիքի տասներկու գյուղերի ներկայացուցիչներս, թվով վաթսուև և ութ հոգի, դեկտեմբերի 22-ի ժողովում քննության առնելով ներկա քաղաքական դրությունը Հայաստանում՝ հետևյալ որոշումը արձակեց: Բոլշևիկյան իշխանությունը բռնի կերպով է փաթաթված ոայ ժողովրդի վզին, Հայաստանը սովետական է հայտարարված տաճկական և ռուսական զորքի բռունցքի ճնշման տակ: Նորմալ պայ մաններում երբեք նման քաղաքական հեղաշրջում չէր կարող կա տարվել Հայաստանում ընդհակառակը շատ անգամ հայ ժողովուրդը ցայտուն կերպով արտահայտվել է, որ *ԻՆՔԸ ԱՉՍԵ ԵՎ ԱՆԿԱՍԻ ՀԱՅՐԵՆԻՔ Է ՑԱՆԿԱՆՈՒՄ* և որովհետև բռնակալական ստոր միջոց ներով մի ժողովրդի վզին փաթաթված իշխանությունը տևական լինել

չէ կարող, ինչպես նաև այդ իշխանությունը վայելել չի կարող ժողովրդի մեծամասնության հավատն ու վստահությունը: Արևիքի ժողովրդի ներկայացուցիչներս այն ամուր համոզումն ունենք, որ շուտով Հայ աստանի հայությունը ոտքի կկանգնի և զգվանքով դեն կշարտի այն լուծը, որը այսօր ակամայից ընդունել է իր վրա: Ոտքի կկանգնի նոր ցասունով ջարդ ու փշուր կանի այն երկաթե կապանքները, որոնցով սովետական իշխանությունը կապկպել է իրեն և նորից Արարատյան սրբազան դաշտերում կծածանեցնի ազատ և անկախ կյանքի կարմիր դրոշակը: Արևիքի ժողովրդական ներկայացուցիչներս համոզված ենք, որ այս ապստամբությունը ավելի արագ կկատարվի, եթե Ձանգեզուրը կանգուն մնա իր սահմաններում, իսկ ժողովրդի հոգին և կամքը անընկճելի իր հերոսական որոշման մեջ, այն է՝ ապրել ազատ և այդ իսկ նկատառումներով Արևիքի ժողովրդական ներկայացուցիչներս դեկտեմբերի 21-ի ժողովում գտանք, ոչ մեր հորիզոնների վրա դեռ փրկության ճառագայթները ընդմիշտ չեն մարել, որ կա փրկության ճանապարհ, ուստի որոշեցինք պաշտպանվել մինչև վերջին հնարավորությունը: Որոշվեց թույլ չտալ ոչ մի օտառ գորքի և օտար մարդկանց ներս խուժելու մեր երկրի սահմանները և խառնվելու մեր ներքին գործերի մեջ:

Ներկայացուցիչներ 1 Ռավիթ Ռավթյան, 2 Խաչատուր Ռանի ելյան: 26.XII. 1920թ., երեկոյան ժամը 8-ին, Հանքերից»:

Համագումարը բուռն ծափահարություններով լսում է Արևիքի ներկայացուցիչների հեռախոսագիրը և առնում է ի գիտություն: Համագումարի նիստերը երեք օր տևելուց հետո փակվում է դեկտեմբերի 27-ին երեկոյան ժամը 3-ին:

Համագումարի նախագահ Գեղեոն Տեր-Սինասյան
Փոխնախագահներ 1. Եգոր Հարությունյան
2 Տիգրան Մելիք-Հուսեյնյան
Քարտուղարներ 1 Սամվել Մաշուրյան
2 Նիկալա Ղորունց

Ստոճագրած են արձանագրության մեկ հայուր վեց 106 ներկայացուցիչներ

Ինքնավար Սյունիքի խորհրդարանի Ռիվան

3-ին հունվարի 1921թ



Լեոնա-Յայաստանի Առաջնորդ Գարեգին Նժդեհ



Լեռնա-Քայաստանի Զինանշանը



Անդրանիկը Ջանգեզուրում



Գ. Նժդեհի զինվորներից



Պողոս Տեր-Դավթյան



Թևան Ստեփանյան



Ղազար Քոչարյան



Գրիասիժ Բալայան



Զաքար Յոլյան



Կուլո



Մովսես Գյուկնազարյան



Վանո Խանգաղյան



Գերասիմ Աբաջանյան



Գ. Նժդեհի և Ռուբեն Նարինյան



Յապոն
(Բակոր Պարոնյան)



Նիկոլա Բարայան
(Ղապիթբեկյան կապիտան)



Վահան Խորենի



Արշակ Շիրինյան



Զաքար Տեր-Ղափ



Ազոտ Մելիք-Մուսյան



Սերգեյ Մելիք-Յուլյան



Դրո



Գեղեն Տեր-Սինյան

ԱՐՆՈՏ ԳԻՐՔ

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ
«ՍԽՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ» ԶԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ, ՄԻՍԻԱՆՈՒՄ ԵՎ
ՂԱՓԱՆՈՒՄ ԱՊՍՏԱՍԲԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

ՆԱԽԱԲԱՆ

Լեռնա Չայաստանի կառավարությունը ձեռնարկելով սույն «Արճուտ գրքի» հրատարակության՝ ի նկատի է ունեցել իր ձեռքի տակ եղած բազմաթիվ փաստաթղթերից քաղվածորեն առաջ բերել այն բոլոր նյութերը, որոնք վերաբերում են տխրահռչակ բուլշևիկների արգահատելի գործունեությանը Չանգեզուրում, Ղափանում, Ախսիանում և Գենվազում: Կառավարությունը տպագրության տալով վերոհիշյալը մի գլխավոր նպատակ է ունեցել՝ ցույց տալ կուլտուրական աշխարհին այն ավերիչ, սոսկումնեղով լի և քստմնելի գործելակերպը, որ հանդես բերին բուլշևիկները հինգ ամսվա ընթացքում մեր երկրում ուր մտան նոքա որպես աշխատավոր գյուղացիության շահերի պաշտպան փքուն ու գրավիչ լոզունգներով, հազար ու մի խոստումներով և խաբեբայությամբ և որտեղից ճողոպրեցին նրանք թողնելով իրենց ետևն ավերակների և մոխիրների կույտ, սով, ավերածություն, գյուղացու տնտեսության վերջնական քայքայում, անհամար հոշոտ ված դիակներ և ծով ատելություն հենց սույն աշխատավոր գյուղացիության կողմից՝ դեպի բուլշևիկ կոչված մարդ բորենիները:

Համաեվրոպական պատերազմը վերջանալուց հետո ահա ամ բողջ երեք տարի է, որ շարունակվում են մեր կռիվներն արտաքին և ներքին թշնամիների դեմ հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը պահպանելու: Եվ այդքան ժամանակվա ընթացքում խախտվեց հայ գյուղացու տնտեսությունը, ընդհատվեցին շատ անգամ հաղորդակ ցության ճանապարհներն և նա մեն մենակ մնաց հանդեպ մի նոր թշնամու, որ բուլշևիզմի անվան տակ գալիս էր իբր թե բարիք սփռելու աշխատավոր գյուղացիության, բայց որտեղով անցնում էր՝ թողնում էր ետևն ավերակներ, ծխի և մրի մեջ կորած գյուղեր, ժողովրդի խոր ատելություն և ծով անեծք: Երբ բուլշևիկներն իրենց սևաթույր թևերն են տարածում նաև Անդրկովկասում՝ մեր գյուղացիությունն այն սխալ համոզմանն է հանգում, թե բուլշևիզմի անվան նակ նախկին ռուսն է գալիս, որը պետք է իր հետ բերի վաղուց ի վեր ցանկալի խաղաղությունը, տնտեսական կյանքը պիտի բարվոքվի և ճանապարհները պիտի բացվեն: Եվ բոլշևիկներն անթիվ ու անհամար պրոպագանդիստների և սևահոգի լրտեսների միջոցով իրագեկ լինելով իրերի դրության դեռ ոտք չդրած մեր երկրում, իրանց գաղտնի գործակալների ձեռքով խաբեցին միամիտ գյուղացիությանը խոստանալով և՛ խաղաղ կյանք, և՛ հացի ամբարներ, և հազուստեղեն և՛ շաքար և նավթ և երթևեկության կատարյալ ազատություն:

Ահա՛, մեր գյուղացիության այդ սխալ ըմբռման շնորհիվ է, որ բուլշևիկները համարյա առանց կռվի ներս մտան նաև Այուրնյաց երկիր: Ակզբի օրերում նրանք անվերջ ճամբերով, մեծամեծ խոստումներով միայն կերակրեցին խաբված ժողովրդին, իսկ հետո սկսվեց կատարյալ թալան, ավազակություն տաճկական ասկյարների արշավանք

դեպի հայկական գյուղերը, անհամար սպանություն և քաղաքական ազատության կատարյալ բացակայություն. գյուղերն ու քաղաքները բանտեր դարձան խեղճ գյուղացիության համար: Չկար ոչ մի դասակարգ, որ գոհ լիներ բուլշևիկների գործելակերպից, մինչև իսկ ամենա աղքատ մարդն անգամ անիծում էր նրանց գալուստը, բոլորն էլ դարձել էին մի տեսակ ստրուկ և հլու կամակատար այդ հրեշներին, ոչ ոք բողոքելու կամ դժգոհելու իրավունք չուներ: Սոտ հինգ ամիս տևեց ժողովրդի այդ տաժանելի վիճակը. նա հյուժվեց տնտեսապես իսպառ քայքայվեց, բուլշևիկների և ոչ մի խոստումն իրականացած չտեսավ՝ նոր հասկացավ գյուղացիությունը, որ ինքը չարաչար խաբված է, ըմբռնեց որ բուլշևիկ թափփուկներն եկել են իրա վզին նստել և իր հաշվով են ապրում, որ դրախտի փոխարեն դժոխք են դարձրել մեր երկիրը, ուստի նա սկսեց խոր ատելություն տածել դեպի այդ մարդ գազանները և փրկության ճանապարհներ որոնել:

Ազատության արշալույսը հեռու չէր. նա պիտի ծագեր Գենվա գոլմ, որը չէր հանձնվել և համառությամբ մաքառում էր: Խուստուլա լեռան կատարին էր գտնվում ժողովրդական հերոս Նժդեհն իր մի քանի հավատարիմ ընկերների հետ և արթուն ու շրջահայաց դիտում էր իր սիրած երկրի անհուն վիշտն ու կրած տանջանքը, և Սյունյաց երկրի ժողովուրդն իր փրկության դեկը, իր բախտի տնօրինությունն ամբողջապես հանձնում է այդ հերոսին՝ լավ ըմբռնելով, որ Սպարապետ Նժդեհը հանդիսանում է հայ ժողովրդի վշտերի, տառապանքների և նրա ազատության վատ օրերի միակ մարմնացումը, որ նա վրիժառու ոգու միակ թարգմանն է և նա չի սխալվում իր ընտրության մեջ:

Օգտվելով ժողովրդի անհուն ատելությունից դեպի բուլշևիկները նա իր կազմակերպչական տաղանդով ժողովրդական վաշտեր է ստեղծում և կարճ ժամանակվա ընթացքում Սյունիքը մաքրում բռնամիներից և հանգստություն ու խաղաղ կյանք պարգևում իր սիրեցյալ ժողովրդին:

Փաստաթղթերից հանած բուլշևիկների տմարդի գործելակերպի և ազատատենչ հայի անհավասար մաքառման այդ պատկերն է, որ Լեռնա-Հայաստանի կառավարությունն անհրաժեշտ է համարում տալ «Արևոտ գրքի» էջերում:

ԳԼՈՒԽ Ա

ԲՈՒՆԵՎԻԿՆԵՐԻ ԳԻՆԳ ԱՄՍՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
ՁԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ ՄԻՄԻԱՆՈՒՄ ԵՎ ՂԱՓԱՆՈՒՄ

Ռուսական 11 ղո գորաբանակը բուլշևիզմի անվան տակ իբրև դասակարգային պայքարի ավանգարդ, 1920թ. մայիս ամսի սկզբին համարյա առանց կռվի ներս խուժեց Բաքու: Ադրբեջանի հանրապետությունը փաստորեն կորցրեց իր անկախությունը: Քաղաքական որոշ նկատառումներով ռուս բուլշևիկներին անհրաժեշտ էր արևելքի հոծ մահմեդականության հմայքը գրավելու համար նոր տապալված հանրապետությանն այնպիսի ծև տալ, որ միամիտ ազգաբնակչությունը կարծե, թե իրոք նա շարունակում է իր անկախությունը: Ուստի հայտարարվեց Ադրբեջանի խորհրդային հանրապետություն, որն ոչ այլ ինչ էր, եթե ոչ էտնագրաֆիկական¹ մի տերմին, քան տերիտորիալ հասկացողություն, որովհետև ով մոտ ծանոթ է բուլշևիկների գործելակերպին և նրանց ծրագրին՝ նա կարող է միանգամայն համոզված լինել, որ նախկին ռուսական սահմաններում վերջերս կազմված հանրապետություններից որը սովետականի է վերածվում՝ լինի դա գեներուժով թե կամովին, նա կորցնում է իր անկախությունն ոչ միայն արտաքուստ, այլև ներքուստ և դառնում է խորհրդային Ռուսաստանի անբաժան մի մասը, որի բոլոր դիրեկտիվները² թելադրվում են Սոսկվայից:

Բուլշևիկներին անհրաժեշտ էր արևելքի պարզամիտ ժողովրդի բուլլ ինստինքտները ժամանակավորապես շոյել, հարկավոր էր արտաքուստ ցույց տալ, թե բուլշևիկը ստեղծելով Ադրբեջանի խորհրդային հանրապետություն՝ միաժամանակ և նրա վաղուց ի վեր փայփայած քաղաքական իդեալների պաշտպան է հանդիսանում, և քանի որ մուսավաթիստ Ադրբեջանի հանրապետությունը տարիներից ի վեր անհաջող փորձ էր անում խլելու Վրաստանից Ջաքաթալայի շրջանը իսկ Հայաստանի Հանրապետությունից՝ Ղարաբաղն ու Ջանգեզուրը ուստի բուլշևիկները ձեռնամուխ եղան Ադրբեջանի և նրա մահմեդական ժողովրդի այդ իրձն իրագործել: Կարմիր ռուսները միացած կարմիր գոյն ստացած մահմեդականների հետ, մայիս ամսում գրավեցին Ջաքաթալայի շրջանը, չնայելով որ մի քանի օր առաջ Սոսկվայի սովետական հանրապետությունը համաձայնության էր եկել Վրաստանի հետ, գծել նրա հանրապետության սահմանները իսկ Ջաքաթալայի շրջանը համարել չեզոք, ուր երկու կողմերից ոչ մեկն իրավունք չուներ գործ մտցնելու, բայց բուլշևիկներն՝ ըստ սովորու-

¹ Ազգագրական – ռուսերեն: «Հայրենիք» Ակումբ

² Ցուցումներ – ռուսերեն: «Հայրենիք» Ակումբ:

թյան, ուրի տակ տվին իրենց ձեռքով ստորագրած պայմանը: Ի՞նչ արժեք կարող էր ունենալ բուլշևիկի համար թղթե պայմանը, երբ նրա քաղաքական շահը պահանջում էր ոտնահարել ամեն սրբություն: Մայիս ամսի վերջին նույն վիճակին ենթարկվեց նաև Հայկական Ղարաբաղը, ուր ամիսներ առաջ մեծաքանակ գումարներ ստանալով բուլշևիկներից՝ սկսել էին գործել տեղացի բուլշևիզմով տարված, արծաթասեր վրիժառության թույնով լցված և դավաճան գործակալները: Առանց որևէ դատի և քննության կացնահարվում և տմարդի եղանակով սպանվում են Թարթառում Ղարաբաղի հայ գյուղացիության շահերին երկար տարիներ նվիրված գործիչները, հարյուրավոր ինտելիգենտ ուժեր տարվում են Բաքու, Գանձակ և Շուշի ու փակվում բանտերում:

Ադրբեջանի մահմեդականությունը բուլշևիկի գործ դրած միջոցով հասնում է իր նպատակին՝ դատարկվում է Ղարաբաղն իր առաջ նորոգներից, իր ինտելիգենտ ուժերից: Այդ է պատճառը, որ Գանձակի անհաջող ապստամբությունից հետո Ադրբեջանի մահմեդականությունը՝ չնայելով որ տնտեսապես քայքայվում էր, բայց և այնպես ոչ մի փորձ չի անում օտարի լուծը թոթափելու, քանի որ այդ օտարն իբր թե իր քաղաքական ձգտումն է իրագործում:

Քայլ առ քայլ հետևելով իր նենգամիտ ծրագրին՝ սովետական իշխանությունն որոշում է նաև գրավել Ջանգեզուրը Միսիանը, Ղափանն և Գենվլազը, ուր տաճիկ զորքերն ու մուսավաթ Ադրբեջանը չհամարձակվեցին իրանց ոտքը դնել: Դիմելով իրենց նվիրագործած միջոցին՝ բուլշևիկները նախ մեծ քանակությամբ գործակալներ են ուղարկում վերոհիշյալ վայրերը, ուր վերջիններս եզվիտական¹ անենաստոր միջոցները գործադրելով՝ մոլորեցնում են պարզամիտ գյուղացիությանը, թե բուլշևիկ ոուսը բերում է իր հետ խաղաղություն, կյանքի բարիքներ, քաղաքական ազատություն և աշխատավոր գյուղացիության իշխանություն: Նոքա մինչև իսկ կեղծ համախոսականներ են պատրաստում, իբր թե հայ գյուղացիությունն իր մոտ է հրավիրում սովետական զորքերն ու նրա իշխանությունը:

Այս բոլորի նպատակն էր ներսից սկսել ապստամբությունը, որն և առիթ կծառայեր բուլշևիկ զորքերին Ղարաբաղից առաջ շարժվել դեպի Ջանգեզուր: Եվ երբ սևահոգի պրոպագանդիստներն իրենց ստանձնած միսիան իրագործում են, այն ժամանակ սովետական իշխանությունը հունիսի 29-ին 15 հոգուց բաղկացած մի դելեգացիա² է ուղարկում Ջանգեզուրի Տեղ գյուղը՝ բանակցություն վարելու հայ գյուղացիության ներկայացուցիչների հետ³ բայց իրոք դա ոչ թե

¹ Եիզվիտական. «Հայրենիք» Ակունք

² Պատվիրակություն – ռուսերեն: «Հայրենիք» Ակունք

³ Ջաբուղի ռազմաճակատի հրամանատար Յապոնի հեռախոսագիրը 15 հոգի դելեգացիայից մեկը պարսկախառակ հայ էր՝ մեկը՝ լեհացի իսկ 13 հոգի՝ թուրքեր:

դելեգացիա էր այլ լրտեսության համար ուղարկված հակա հետախուզականների մի խումբ:

Նույն օրը Տեղ են ժամանում և Ձանգեզուրի քաղաքացիական իշխանության կողմից երկու ներկայացուցիչներ: Սովետական դելեգացիան հայտնում է որ ինքը լիազորված է 11-րդ բանակի և սովետական իշխանության կողմից հայտարարելու, որ սովետական իշխանությունը պիտի տարածվի նաև Ձանգեզուրում: Ձանգեզուրի ներկայացուցիչները բացատրում են որ հայ գյուղացիությունը չէ ցանկանում սովետական կարգեր և նա զենքի ուժով կապաշտպանի իր ինքնուրույնությունն ու ազատությունը

Բանակցությունները դեռ չվերջացած բուլշևիկ կեղծ դելեգատները գաղտնի թողնում են Տեղ գյուղը և հեռանում իրանց գործասերի մոտ: Հուլիսի 5-ին՝ գիշերվա ժամի 11-ին, բուլշևիկներն իրանց գործակալներից տեղեկանալով իրերի դրության մասին և որ հայկական գործասեր համարյա թե չկան Ձանգեզուրում, առաջ են շարժվում Ձաքուղից, հանկարծակիի բերելով՝ ձերբակալում ռազմաճակատի մի քանի հայ սպաների շրջապատում են ճակատի իբր թե հակահեղափոխականների վայր Կոռընձոր գյուղը հետիոտն և ծիավոր գործաստով ու 11 գնդացիներով և սկսում կոտորածը ոմանք փախչում են և թալանվում, իսկ ոմանք էլ սպանվում:¹

Գյուղը թալանի և կոտորուտի է ենթարկվում: Հայկական փոքրաթիվ գործասեր հրաման է ստանում դիմադրելու բուլշևիկներին բայց Զարաշենի մոտ կարճատև կռվից հետո նա ստիպված է լինում տեղի տալ թշնամիների մեծաքանակ ուժի առաջ և քաշվել Դարալագյազ, երբ մանավանդ նկատում է որ այդ կողմի հայ գյուղացիությունն անտարբեր է վերաբերվում ռուս բուլշևիկի դեմ վարած կռվին:

Հուլիսի 5-ին Գորիս է մտնում 11-րդ կարմիր զորաբանակի 28-րդ հրացանաձիգ դիվիզիայի 84-րդ բրիգադան՝ համապատասխան թվով հեծելազորով, թնդանոթներով և հարյուրավոր գնդացիներով: Մի քանի ժամանակ հետո Ձանգեզուր են ժամանում և 83-րդ բրիգադայի 247-րդ, 248-րդ, 249-րդ գնդերը: Ձանգեզուրը գրաված համարելով՝ բուլշևիկներն հետևում են դեպի Դարալագյազ նահանջող հայկական գործասին և գրավում Սիսիանը՝ մինչև Բազարչայի արևմտյան լեռնաշղթան, որտեղից կապ են հաստատում Նախիջևանի թրքության և Տաճկաստանի հետ: Նախիջևանի թրքությունն երկյուղ կրելով Հայաստանի Հանրապետության զորքերի դեպի Շարուր ձեռնարկած հուլիսյան արշավանքից և լսելով բուլշևիկների Ձանգեզուր ու Սիսիան մտնելն՝ իսկույն պատգամավոր են ուղարկում նրանց մոտ ու խզնդորում Նախիջևանն ևս գրավել բացատրելով որ այնտեղի թրքությունը

¹ «Ազատ Սյունիք» Գորիս, 1921, էջ 19: 1921թ Կոռընձորի կոմիսարի և ժողովրդական ներկայացուցիչների համախոսականը (Լեռնա Հայաստանի կառավարության դիվան, N 51):

գրկարաց սպասում է մեծամասնականներին ազատելու իրանց դաշնակցական Հայաստանի Հանրապետությունից: Նախիջևանի մահմեդականությունը, որ ավելի քաղաքական պատճառից ստիպված էր քան իրոք բուլշևիկ դարձած, հասնում է իր նպատակին: Ռուս բուլշևիկների 252-րդ գունդը կովկասյան բրիգադայի 100 ձիավորով անցնում է Նախիջևան և առանց որևէ միջնադեպի քաղաք մտնում:

Ժամանակավորապես ապահովելով իրենց աջ թևն և կապ հաստատելով Նախիջևանի վրայով Քեմալ փաշայի հետ՝ բուլշևիկներն առանձին ուշ են դարձնում իրանց ձախ թևին և կամենում գրավել Ղափանն, Գենվազն ու Գողթանն, և այդպիսով մաքրել ամբողջ Այունյաց աշխարհը դիմադիր ուժերից:

Այդ նպատակով նոքա բավական սովադ մի գործառնա հուլիսի 8 ից սկսած շարժում են դեպի Ղափան, ուր այդ ժամանակ գտնվում էր գնդապետ Նժդեհը, որը Հայաստանի Հանրապետության հրամանատարության կողմից 1919թ. հոկտեմբեր ամսից նշանակված էր Կապարգողթի հրամանատար: Խորապես գիտակցելով իր պարտականությունը հանդեպ հայրենի ժողովրդի, ում մեջ նա երկու տարի անդուլ աշխատանք է թափել և որի հոգու ամբողջ էությունը քաջապես ըմբռնել էր նա կատարելապես համոզված լինելով, որ այդ նույն ժողովրդի հետ նա կարող կլինի երկիրն ազատել վերահաս վտանգից՝ գնդապետ Նժդեհը չէ ընկճվում ստեղծված կրիտիկական դրությունից և որոշում է մնալ իր սիրելի ժողովրդի մեջ և նրա դառնություններին մասնակից լինել: Բուլշևիկներն առաջ անցնելով՝ հասնում են Ղափանի վերին խոտանան գյուղը, ուր հանդիպում են գյուղացիության ուժեղ դիմադրության և ստիպված են լինում այդտեղ կանգ առնել:

Կարծելով թե անհատներն են, որոնք իբր թե մոլորեցնում են ժողովրդին կռվելու իր դեմ և որ պատասխանատու մարդիկ իրագեկ չեն դարձնում ժողովրդին բուլշևիկների գալու նպատակի և Ղարաբաղն ու Ջանգեզուրը գրավելու մասին՝ սովետական զորքերի զինվորական կոմիսար Իվանովը փորձ է անում ինքն իր կողմից պաշտոնական գրությամբ հայտնելու գնդապետ Նժդեհին և նրա միջոցով Ղափանի հայ ժողովրդին Ղարաբաղն ու Ջանգեզուրը գրավելու և ամենուրեք ռևկոմներ կազմակերպելու մասին, միաժամանակ շեշտում է նաև բուլշևիկների նպատակը՝ գրավել Օրդուբաթ-Ջուլֆան, որը կարող է հայ ազգաբնակչության սրտին շատ մոտ լինել և այսպիսով մոլորեցնելով պարզամիտ գյուղացիությանը կարմիրները կարող կլինեն առանց արյունահեղության իրանց հեռավոր նպատակին հասնել:

Ահա այդ գրության պատճենը

ԳՆՂԱՊԵՏ ՆԺՂԵԴԻՆ

«Արդեն Ղարաբաղ Ձանգեզուր է մտել կարմիր բանակը բոլոր տեղերում կազմակերպված են ռևկոմներ: Հրամայում են այդ առթիվ հայտարարել ժողովրդին և ճանապարհ տալ Վերին Խոտանանում գտնվող մեր զորամասին անցնելու Սեղրիի վրայով Օրդուբաթ Ձուլֆա

Ձորամասի զինվորական կոմիսար *Իվանով*¹

10 հուլիսի 1920թ Վ Խոտանան»

Չափազանց մոտ ծանոթ լինելով բուլշևիկների գործելակերպին և նոցա խաբեբա ու ստոր արարքներին, լավ ըմբռնելով, որ բուլշևիկն ամենից շատ պրուպագանդայով ու ներսն ապստամբություն առաջացնելով է եժանագին հաղթություն տանում, քան պատերազմի դաշտում, գնդապետ Նժդեհը հենվելով հայ գյուղացիության ազատ կամքի արտահայտության վրա, ի պատասխան այդ գրության հետևյալ վերջնագիր-ուլտիմատումն է ներկայացնում կարմիրների զինվորական պետին.

«Խոտանանում գտնվող Կարմիրների զորամասի Պետին

Կապագողթի² գյուղացիական ներկայացուցչական Խորհուրդը հրամայել է ինձ ուղարկելու Ձեզ վերջնագիր՝ վաղն ամսի 13-ին մինչև ժամը 7-ը թողնել Ղափանի սահմանները. հակառակ դեպքում ստիպված կլինեն անցնելու հարձակողականի և զինու ուժով վանելու Ձեզ

Կապագողթի ռազմական ուժերի հրամանատար *Նժդեհ*

12 ին հուլիսի ժամը 9-ին երեկոյան
Ղափանի հանքեր»

Այս վերջնագիրը միանգամայն անսպասելի էր բուլշևիկների համար, ուստի մինչև նշանակված ժամանակի լրանալը՝ նույն օրը ժամի 5-ին նոքա թողնում են Խոտանանը Բալդուրդանի ձորով և Ինջաբելլի բարձունքներով հետ են փախչում Ձանգեզուր: Նոքա խաբեբայությամբ և ստոր միջոցով տանում են իրանց հետ իբրև պատանդ և գնդապետ Նժդեհի վերջնագրի հետ ուղարկած դելեգատ Սմբատ բեկ Սելիք-Ստեփանյանին, որին քցսորում են Բաքու:

¹ Լեռնահայաստանի Ձինվորական Գլխավոր շտաբի արխիվ, N 135

² «Կապագողթ» կազմված է Կապան (Ղափան), Արևիք (Գենվազ) և Գողթան երկրամասերի անունների առաջին վանկից:

Ղարաբաղն ու Ջանգեզուրը բուլշևիկների ձեռքով գրավելը, և Դափանի դեմ սկսած կռիվները հաջարելով քաղաքական մի հեռավոր նպատակի սկիզբն և Հայաստանի Հանրապետության արևելյան սահմանների վտանգվելը առանձին զորամասի հրամանատար Դրոն որոշում է հետ գրավել Ջանգեզուրը: Այդ նպատակով վերցնելով իր հետ մի փոքրաթիվ զորամաս և Ջանգեզուրից ու Սիսիանից գաղթած մարտիկներին, առանց նախնական պատրաստության և գյուղացիության հայտնելու, նա օգոստոսի 1-ին առաջ է շարժվում Ղարաբաղից դեպի Սիսիան և օգոստոսի 3-ին քեթն հաջողությամբ գրավում Ջանգեզուրը, բանտից ազատում բուլղոքաղաքական բանտարկյալներին և հետ շարտում բուլշևիկներին դեպի Ջաբուլ: Բայց լրտես հայ դավաճաններից տեղեկանալով Դրոյի գործի քանակի մասին՝ բուլշևիկները թարմ ուժեր ստանալով Շուշուց՝ ռակահարձակման են դիմում և օգոստոսի 7-ին նորից գրավում Գորիսն ու Սիսիանը:

Ջանգեզուրի և Սիսիանի գյուղացիությունը մեծամասամբ հնառավորություն չէ ունենում Դրոյի արշավանքին մասնակցելու նախ այն պատճառով, որ բուլշևիկների ձեռքով նա զինաթափված էր, դաշտային աշխատանքների ամենատեղում ժամանակն էր, և որ ամենազլխավորն էր՝ նա նախորոք տեղյակ չէր այդ ձեռնարկության ուստի այդ արշավանքը վերջնական հաջողությամբ չպսակվեց: Հետ նահանջելու ժամանակ Դրոն՝ Գորիս քաղաքի արևմտյան բարձրունքներում պատահելով գնդապետ Նժդեհին, որը հուլիսի 4-ին Դափանից շտապել էր Գորիս, հուլիսի 6-ին վիրավորվել, և կամենում է համոզել նրան իր հետ միասին երևան գնալ: Գնդապետ Նժդեհը մերժելով նրա առաջարկը պատասխանում է. «Ես գնում եմ իմ ժողովրդի հետ մեռնելու»: Այդ գիտակցությամբ ու համոզմունքով նա անցնում է Դափան՝ չկամենալով մեծ մեծակ թողնել իր տառապյալ ժողովրդին նրան վիճակված ծանր թուպին՝

Ապստամբական այդ փորձը խիստ ծանր հետևանքներ ունեցավ հայ ժողովրդի համար, ինչպես կտեսնենք քիչ հետո՝ բուլշևիկները վճռականապես որոշեցին անողոր լինել դեպի Սյունիքի՝ հայ ապստամբ գյուղացիությունն և այնպիսի տաժանելի միջոցների դիմել, որ երբեք հնարավոր չլինի ապստամբության մասին անգամ մտածել:

Այդ նպատակին հասնելու համար նախ և առաջ հարկավոր էր գրավել Դափանն ու Գենվազը և մեջտեղից վերացնել գնդապետ Նժդեհին, որ իր խիզախ գործելակերպով հանգիստ չէր տալիս բուլշևիկներին: Թշնամուն հանկարծակիի բերելու համար բուլշևիկ հայերն ու ռուսներն այստեղ ևս դիմում են իրանց եզվիտական միջոցին՝ նախ մեծամեծ գումարներով գաղտնի գործակալներ և լրտեսներ են մտց

¹ Պատմական Սյունյաց նահանգի մեջ են մտնում բուն Ջանգեզուրը Սիսյանը Դափանը, Գենվազն ու Գողթան շրջանները

նում Ղափան և Գենվազ և ապա օգոստոսի վերջին 248-րդ, 249-րդ 250-րդ, 251-րդ և 252-րդ ռուսական զնդերից կազմելով մի զորամաս առաջ են շարժվում դեպի Ղափան-Գենվազն ամեն կողմից օղակելու որպեսզի փրկության ո՛չ մի հույս, ո՛չ մի ճանապարհ չմնա բաց Ուստի, բոլշևիկների կարգադրությամբ Նախիջևանի և Օրդուբաթի կողմից մի զորամաս բաղկացած ռուսներից, թուրքերից և տաճիկ ասկյարներից, շարժվում է դեպի Գենվազի կարճևան գյուղը

Մյուս կողմից, ռուսներն ու թուրքերը Ջիբրայելից առաջ գալով հարձակվում են Շիվանիծորի վրա, իսկ երրորդ կողմից՝ ռուսներն և հայ դավաճանները շրջապատում են Կալեր գյուղի ուղղությամբ ընկած տարածությունը: Կռիվն ընդհատումներով տևում է մի քանի շաբաթ թշնամիները հարձակման են դիմում ուրբաթ օրերն առավոտյան վաղ և երեք օր անընդհատ շարունակում, իսկ կռիվները տեղի են տալիս և հետ նահանջում: Անհավասար էր այդ կռիվն և ճակատագրական երբ մեկը կռվում էր հարյուրի դեմ, երբ մի քանի հայկական փոքրիկ գյուղեր՝ շրջապատված երեք կողմից թշնամիներով, հաղորդակցության ճանապարհ չունեին և անողոք թշնամու դեմ ամբողջ ուժերն էին լարել: Ջարդված թշնամին անհամար դիակներ է փռում Ղափանի և Գենվազի սարերում ու ծորերում, բայց նորանոր և թարմ ուժեր ստանալով՝ կրկին առաջ է անցնում: Ջգացվում է ռազմամթերքի սուր կարիք՝ թշնամին համառությամբ իր զինվորի դիակների վրայով անցնելով առաջ է շարժվում:

Մի կողմից ժողովրդական վաշտերը գնդապետ Նժդեհի առաջնորդությամբ՝ լի հայրենասիրական ոգով և ազատության գաղափարով, մյուս կողմից՝ ռուսական կանոնավոր հեծելազոր, հետևակ զնդեր հարյուրավոր զնդացիներով և հայ ու թուրք դավաճանների խմբերով անխնա բախվում են միմյանց: Երկարատև կռիվը լքում է առաջ բերում ժողովրդական զինված ուժերի մեջ Դրոյից օգնության ոչ մի հույս չկար: Ղափանի գյուղացիությունը պարպելով վերջին փամփուշտը ստիպված է լինում զենքը վայր դնել և թույլ տալ ռուսական զորքերին իր արյամբ ողողած շրջանը մտնել: Միայն մեկն է մնում անընկճելի և անվիատ որ վերջին րոպեին իր հավատարիժ ընկերների և Ղափանի զինված փոքրաթիվ ուժերի հետ քաշվում է Խուստուլա լեռը՝¹ հավատալով իր սուրբ գործի հաջողության և վերջնական հաղթանակին. դա գնդապետ Նժդեհն էր.

Բոլշևիկները խաբեբայությամբ, դավադրությամբ և զենքի ուժով տիրելով Ջանգեզուրին, Սիսիանին և Ղափանին², որից զերծ էր մնա-

¹ Խուստուլա լեռը գտնվում է Ղափանի և Գենվազի սահմանագլխին, ծովի մակերևույթից մոտ ինն հազար ոտ բարձրություն ունի դեպի Ղափանի կողմը անտառածածկ է, իսկ գագաթը՝ լեռկ:

² Բուն Ջանգեզուրի շրջանն են մտնում հետևյալ հայկական գյուղերն և քաղաքը Կոռընձոր Տեղ Արավուս Խանածախ Բայանդուր Խոզ

քել միայն Շիշկերտ գյուղը, առաջ բերին բավական մեծ թվով հասարակություններ, ուր նշանակեցին իրանց տեսակետից ամենավատացի մարդկանց, արհամարհելով ընտրական սկզբունքը՝ իբրև բուրժուական կարգ: Գործսում կազմեցին Չանգեզուրի գավառական հեղափոխության կոմիտեի անդամներով արտակարգ հանձնաժողով (չեկա)¹ որ իր տեսանելի և անտեսանելի բազմաթիվ գործակալների միջոցով ամենախիստ հսկողության տակ է առնում բոլոր մարդկանց կամ հասակարգերին, որոնք կոմունիստ կուսակցության չեն պատկանում՝ քաղաքական բաժանմունք², հատուկ բաժանմունք³ պարենավորման, լուսավորության, սոցիալական ապահովության, արհեստակցական միության բյուրո, գյուղական ռեկոմներ, բջիջներ, ենթաբջիջներ և այլն և այլն, որոնց անունները թվելու համար հարկավոր կլինի գրքի մի քանի էջ նվիրել: Քաղաքում ապրող բոլոր անհատները (կասկածելիներն արդեն գնդակահարված կամ բանտարկված էին) պարտավոր էին ծառայության մատնել՝ անբարեհույս էր նա ով պաշտոն կամ գործ չուներ: Գործսում բռնագրավեցին տպարանը, էլեկտրական լուսավորության կայանը, բազմաթիվ մասնավոր տներ իրենց կահկարասիներով, ուր գետեղեցին իրանց անհամար հաստատություններն ու զինվորական մասերը, բաց արին բանվորա-գյուղացիական ակումբ քատրոն մշտական բեմով, որն և ծառայում էր իբրև միտինգի վայր: Դայ, թուրք և ռուս բուլչեիկներն իրանց գործունեությունն սկսեցին միտինգներով որ պարբերաբար կրկնվում էր Գորիս քաղաքում և շրջակա գյուղերում, ուր ոյուրաթեք և նենգ լաբախադաց ճառախոսներն անվերջ շողշողուն ֆրագներով դրախտ էին խոստանում իրանց ճանկերի մեջ ամուր սեղմած գյուղացիությանը համերաշխություն բոլոր ազգերի և ժողովուրդների ազատություն և տնտեսական ապա

նավար Քարաչեն, Բռուն, Դին Գորիս (Վերին Շեն), Գորիս գյուղ, Գորիս քաղաք, Քարահունջ, Մաղանջուղ, Գերու, Ալղուլի շեն, Խնձորեսկ, Դայաք: *Տարբեր շրջան*. Խոտ Շինուհայր, Դալիձոր, Տանձատափ, Երիցաթունք, Ավարանց, Տաթև, Եայջի: *Պարաբասի շրջան*. Լժեն, Պարաբաս, Լոր, Գետաթաղ Շնաթաղ: *Միսիանի շրջան*. Ուզ, Պարաբիլիսա Ախլաթյան, Տուլոթս Բնունիս Աղբյանդ, Ալիլլու, Բռնակոթ, Թագազեղ, Բալաք, Մազրա Շաղաթ, Անգեղակոթ, Սուխուրթուլյան, Ղալաջուղ, Բարիսովկա և Բազարչայ ռուս գյուղերը: *Պափանի շրջան* Վերին Խոտանան, Ներքին Խոտանան, Շրվենանց, Նորաչենիկ, Առաջաձոր Խլաթաղ, Կավարտ, Բեխ, Բաղաբուրջ, Վաչագան, Բարաբաթում, Արժվանիկ, Զափնի, Ըրկենանց, Սևաքար, Զեյվա Մողես, Կժենես, Եղավարդ, Ազարակ, Խդրանց, Գյուտկում, Ճակատեն Շիկահող, Ներքին Դանդ, Սրաչեն, Ծավ, Կենանց Շիշկերտ

¹ Чека - Черезвычайный комитет

² Политотдел - политический отдел

³ Особый отдел

հով և բարվոք կյանք նախկին Ռուսաստանի մթերքների առատության երազով տոչորվող հայ աշխատավոր գյուղացիության՝ ինչեր ասեք չէին խոստանում բերել տայու Ռուսաստանից և Բաքվից որանց հայ բենակիցների համար Ղարաբյոզյանի և նման դավաճան ու խաբեբա տիպերը. մթագնելով խեղճ ժողովրդի միտքը՝ նրանք Ռուսաստանի և Ադրբեջանի ներկա դրությունը վառ գույներով էին նկարագրում խոստանում էին հազարավոր փութ ալյուր, շաքար, ցորեն, չիթ մավթ մի խոսքով ամեն բան ինչ որ ժողովուրդն է ցանկանում: ¹

¹ Քաղվածորեն առաջ բերենք այստեղ Ձանգեզուրի ռեկոմի սովորական կոչերից մեկը, որը հրատարակվել է 1920թ. հոկտեմբեր ամսին ուր ռեկոմի նախագահը խոստանում է ամեն տեսակի մթերք բաժանել՝ մինչև իսկ ձրի գյուղացիներից առանց վճարի բռնագրաված ցորենի փոխարեն, բայց խաբելով գյուղացիությանն և նրա ցորենը խլելուց հետո՝ փոխարենը կարմիր ստախոսներն ոչինչ չեն տալիս:

Ձանգեզուրի չքավոր գյուղացիներին

ԿՈՉ

Շնկեր գյուղացիներ

Կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցությունը միակ կուսակցությունն է որ պաշտպանում է ձեր շահերը, խորհրդային իշխանությունն է որ կռվում է ձեզ կեղեքողների, հարստահարողների, ձեր արյունը ծծողների դեմ բանվորությունը ձեր միակ զինակիցն է ու բարեկամը:

Շնկերներ բանվորությունը նրա առաջնորդ կոմունիստական կուսակցությունը շատ լավ գիտի, որ վատ դրության մեջ եք, գիտի, որ դուք մերկ եք, չոր չունեք, նավթ չունեք, աղ չունեք մի խոսքով ձեր տնտեսությունը քանի գնում քայքայվում է ձեր դրությունը քանի գնում վատանում է ..

Հաստափորներից կաշառված ագենտները ձեր մեջ խռովություն են սերմանում մեր դեմ՝ թույլ չտալով բանվորության, որ նա ձեզ համար անհրաժեշտ գործիքներ ու մթերքներ պատրաստի:

Շնկեր գյուղացիներ, դուք էլ լավ պիտի ճանաչեք ձեր իսկական թշնամիներին, պիտի կռվեք հարուստների նրանցից կաշառված գանազան մութ անձնավորությունների դեմ, որպեսզի բանվորությունը հանգիստ կարողանա ձեզ օգնել իր ունեցած մթերքներով, իսկ դուք ձեր ունեցած հացով բանվորներին: Միայն բանվորների և չքավոր գյուղացիների միության մեջ է մեր փրկությունը: Հակառակ դեպքում կստացվի այն ինչ հիմա մեր գավառում է՝ մենք կմնանք սոված ու մերկ:

Շնկեր գյուղացիներ, կազմակերպվում է «գյուղացու շաբաթ» Մի ամբողջ շաբաթվա ընթացքում բանվորությունն ամենայն կերպ

Գյուղացիների տնտեսական կյանքը խոսքով ապահովելուց հետո բուլշևիկներն ազգերի համերաշխության գաղափարն ևս իրա գործեցին Գորիս հրավիրելով նախկին լքյալ գյուղերի թուրք ազգա բնակությանը, որոնք սկսեցին երթևեկել՝ թեև կարճատև եղավ այդ համերաշխությունն և ապարդյուն: Նախիջևանի վրայով Գորիս ժամա նեցին նաև տաճիկ մի քանի գործիչներ, որոնք մասնակցեցին Բաքվի բուլշևիկյան ընդհանուր ժողովին, բացի դրանից տխրահոջակ խալիլ բեյը՝ Մոսկվայից վերցրած 6 փութ արծաթ և ոսկի, Գորիսի և Նախիջևանի վրայով անցավ Տաճկաստան, իբրև թե ոռոսական դրամով կարմրացնելու նաև Քեմալ-փաշայի հայրենիքը: ¹

Կետք է օգնի գյուղացիներին: Այդ շաբաթվա ընթացքում գյուղացի ները ծրի՝ առանց որևէ վճարի, կստանան աղ նավթ, շոր, լուցկի, հնարավորության սահմանում՝ կշինվեն ճանապարհները կվերաշին վեն ձեր երկրագործական գործիքները ..

Զանգեզուրի ռեկոմի նախագահ Եր. Բակունց
Զանգեզուրում «գյուղացու շաբաթը» կազմակերպող կոմիսիայի
նախագահ Ա Շահգելյան

Դետաքրքիր է քաղվածորեն առաջ բերել 11-րդ բանակի զինվորա հեղափոխական խորհրդի լիագոր և Ղարաբաղի և Զանգեզուրի ար տակարգ կոմիսար սինջլոր Ա. Ղարազյոզյանի գրավոր դիմումը հայ գյուղացիությանը՝ Զանգեզուրի վրայով մշտական ճանապարհ ունե նալու վերաբերյալ դեպի կարմիր Տաճկաստան: Զանգեզուրն անշուշտ կարող է մի արահետ տալ այդ նպատակի համար, որը մշտա կան և տնական լինել չէր կարող, բայց ո՞ւմ համար է բացվում այդ ճանապարհն և ո՞ւմ շահերին պիտի ծառայեր. հասկանալի է, որ միմի այն Ադրբեջանի, որին անհաջողությամբ ձգտում էր մի քանի տարի շարունակ դեռ Տաճկաստանն ու մուսավաթիստ Ադրբեջանը, որովհե տև խորհրդային Ռուսաստանը Տաճկաստանի հետ կապվելու համար կարիք չունեի Զանգեզուրի արահետներին, և Ա. Ղարազյոզյանի պես դավաճանը կուրացած Ադրբեջանի սիրաշահությամբ՝ կամենում է Զանգեզուրը դարձնել քավության նոխազ և այդ նպատակին հասնե լու համար նա սպառնում է չխնայել մինչև իսկ հայ գյուղացու կնոջն ու երեխաներին:

«Լեհաստանի հետ խորհրդային Ռուսաստանը հաշտություն է վնքել: Ռուսական հակահեղափոխության պատվար վրանգելը քարոյված է: Ներկայումս կոմունիստների ուշադրությունը դարձած է դեպի արևելք, մասնավորապես Տաճկաստանի վրա, ուր ժողովուրդը քեմա լականների առաջնորդությամբ ապստամբվել է Անգլիայի, Իտալիայի, Վենրիկայի և այլ կապիտալիստների ոտնձգության դեմ, որոնք կամե նում են բաժան բաժան անել Տաճկաստանն այն նպատակով որ թալանեն այդ երկրի բնակչությունը: խորհրդային Ռուսաստանն իբրև

Մի քանի վաճառականներ միամտությամբ հավատացած բուլշևիկների ճառերին՝ Գորիսից ճանապարհվեցին դեպի Բաքու և Ռուսաստան մթերք և այլ ապրանք բերելու, բայց ձեռնունայն և կորիզուխ հետ դարձան, երբ տեսան, որ սովետական իշխանության և ոչ մի քաղաքում արտահանելու մթերք չկա և ինքը Ռուսաստանը դեռևս մեծ կարիք ունի մթերքների ներմուծման՝ ուր մնաց արտահանելու: Ձանգեզուր եկած կարմիր գորամասերը հինգ ամսվա ընթացքում ոչ մի մթերք չստացան դրսից, մինչև իսկ նավթը գրավում էին տեղական ազգաբնակչությունից: Մեծ մասամբ մերկ և բոկոտն ցնցոտիներով ծածկված ռուս զինվորները շատ անգամ հրաժարվում էին կռվի գնալու՝ պատճառաբանելով եղանակի վատությունն և իրանց մերկությունը, և հազար ու մի բարիք խոստացած բուլշևիկ գործիչները 1920թ նոյեմբերի սկզբին ապստամբությունը ճնշելու համար դեպի ճակատ ուղարկած իրանց զինվորներին հազցնում էին Գորիսի փողոցներում քաղաքացիներից խլած կոշիկը վերարկուն շալվարը զլխարկը

պաշտպան բոլոր ճնշված ազգերի պետք է նեցուկ հանդիսանա տաճիկ ժողովրդի այդ շարժումներին իրանց հարստահարողների դեմ Դորա համար էլ խորհրդային իշխանությունը պետք է մշտական անմիջական կապ ունենա կարմիր Տաճկաստանի հետ: Կարմիր գորաբանակը բավական ուժեղ է և նրան չեն կարող արգելք հանդիսանալ, ազատ կապ ունենալ և հաղորդակցության մեջ մտնել Նախիջևանի հետ: Բոլոր արգելքները, որ հանդես է բերում դորա դեմ Դաշնակցական կուսակցությունը՝ կխորտակվեն: Հայ գյուղացիությունը պետք է այժմ ևեթ այդ խնդրի մասին մտածի որովհետև այդ խնդիրը սերտ կապված է այն գյուղացիների կյանքի և մահու խնդրի հետ, որ ոնք դաշնակների ճնշման տակ հետևում են նրանց: Կարմիր բանակը թարմ ուժերի անսպառ աղբյուր ունի, որոնք անվերջ նրա շարքերը կխտացնեն: Դաշնակների ուժերը չնչին են: Վաղ թե ուշ, չնայելով անձրևային և ձյունախառն եղանակին և ճանապարհների անհարմարությանը, բայց և այնպես թշնամու ուժերը պիտի ջարդվեն և այն ժամանակ մեր ցասումն ու բարկությունը պիտի թափվի այն գյուղերի վրա որոնք պաշտպան են հանդիսացել նրանց: Ժամանակն է, որ հայ աշխատավոր գյուղացիությունը խելքի գա խղճա իր կնոջն ու երեխաներին, և թող նա իր զենքը բարձրացնի ոչ թե կարմիր բանակի դեմ, որ եկել է հեռավոր Ռուսաստանից ազատագրելու բոլոր աշխատավորներին՝ ինչ ազգից էլ որ նրանք լինեն այլ ավանտյուրիստ դաշնակների խմբերի դեմ, որոնք իրանց կաշին փրկելու համար կամենում են հայ աշխատավոր ժողովրդին կործանել:

11 որ բանակի զինվորա հեղափոխական խորհրդի լիազոր
 Ա Դարագյոզով»
 (Լեռնա Հայաստանի Գլխավոր շտաբի արխիվ N 209)

գուլպան և այլն, բացի դրանից կարմիր զինվորները շատ գյուղերում զբաղված էին կողոպուտով:¹

Կենսամթերքների խոստումներով կերակրող կարմիրները Ձան գեզուր, Սիսիան և Ղափան մտցրին 28-րդ հրացանաձիգ դիվիզիայի 84-րդ հրացանաձիգ բրիգադան ամբողջովին, 83-րդ բրիգադայի 247 րդ, 248-րդ և 249-րդ գնդերն և այլ զորամասեր, թվով՝ մոտ 12.000 մարդ և զանազան հաստատությունների մեջ ժառանգորդ ծրիակերների մի ահագին ոհմակ, բայց դոցա կերակրելու և հագցնելու համար թե Ռուսաստանից և թե Բաքվից մթերք և հագուստեղեն չստացվեց դոքա բոլորը ծանրացած էին տեղական ազգաբնակչության վրա: Գորիսի գավառական հեղկոմի որոշմամբ յուրաքանչյուր գյուղ պետք է պահանջված մթերքն ուղարկեր Գորիս առանց որևէ պատճառաբանության՝ հակառակողների ամբողջ ունեցածը գրավում և իրան էլ ժողովրդական դատի էին հանձնում կամ գնդակահարում: Գյուղական ռեկոմները գործի են անցնում՝ սկսվում է գյուղացու կանոնավորված տնտեսության կատարյալ քայքայում. յուրաքանչյուր ծխատեր, լինի նա ունևոր, թե աղքատ՝ պարտավոր էր իրան վիճակված մթերք տալ, եթե նա չի էլ ունենում պարտավոր էր ուրիշ տեղից գտնել և պահանջը կատարել:²

¹ 84-րդ բրիգադայի շտաբում բռնված է կողոպուտի վերաբերյալ Ա Ղարազյոզյանի հետևյալ պաշտոնական դիմումը

«Գորիս քաղաքի կայազորի կոմիսար ընկ. Ֆեդորովսկուն

Հաճախ կարմիր զորամասերն և այլ անձինք կողոպուտով են զբաղվում, որի պատճառով գյուղացիությունը ջղայնանում և խորհրդային իշխանության հակառակ է տրամադրվում:

Խորհրդային իշխանության հեղինակությունը վարկաբեկող այդ չարիքն արժատախիլ անելու համար անհրաժեշտ է զինվորական կոմիսարների և զորամասերի հրամանատարների խորհրդակցություն հրավիրել: Խնդրում եմ ձեզ նախաձեռնություն հանձն առնել և հրավիրել խորհրդակցություն: Տեղի և ժամանակի մասին հայտնել ինձ:

11-րդ բանակի զինվորա-հեղափոխական խորհրդի լիազոր և

Ղարաբաղի ու Ձանգեզուրի արտակարգ կոմիսար Ա Ղարազյոզով»:

(Լեռնա-Հայաստանի Գլխավոր շտաբի արխիվ, N 207)

² Մթերքներ ժողովելու ձևի նկատմամբ բավական է նոցա հրամաններից մի նմուշ բերել. Ձանգեզուրի գավառական ռեկոմը Սիսիանի միլիցիապետի՞ 10 սեպտեմբերի 1920թ. N 179 գրում է հետևյալը «Հրամայում եմ 24 ժամվա ընթացքում Սիսիանից հավաքել և փոխարել Գորիս 18.000 փութ ցորեն, նույն չափ գարի 800 ոչխար և 70 հատ գրաստ: Ընդիմացողներին զնդակահարել և հաղորդագրել Ձանգեզուրի գավառական ռեկոմ»: Նման հրամաններ ստացվել են նաև Բուն Ձանգեզուրում, Ղափանում և Բաղաբերդում (բուշևիկներից

Դժոխային պայմաններ ստեղծելուց հետո երբ բնակչության թե ֆիզիկական և թե մտավոր գոյության ամբողջ իրավունքն իրանց ձեռքն էին առել բուլշևիկները, իրանց գրաված երկրի ժողովրդին միանգամից կտրեցին դրսի աշխարհից ավելի ևս իրանց հարազատ մայր երկրից՝ Հայաստանից:¹

Բնակչության մեծ մասը զինաթափել ու գրավել էին նոցա բոլոր ռազմամթերքը, որոնցով զինել էին օրթոդոքս կոմունիստներին: Նրանց հաջողվում է միմիայն հուլիս և օգոստոս ամիսներում Բուն Ջանգեզուրի շրջանից գիշերները գաղտնի ծածկված սայլերով Բաքու տեղափոխել 20.000 փուս ցորեն և ալյուր,² այդ էլ այն ժամանակ երբ նա մի քանի ամիս հետո պիտի սովի ճիրաններում գալարվեր, բայց ո՞վ էր մտածում այդ մասին՝ կոմունիստներն իրանք կուշտ էին, գյուղացիներից թալանած հացահատիկներով և այլ մթերքներով իրանց ապահովել էին: Միայն Գորիս քաղաքից տարել են 2000 գորգ 1000 կարպետ, 500 անկողին, մոտ 100 կարի մեքենա, հարյուրավոր աթոռներ նստարաններ, սեղաններ ճրագներ և այլն:³

Որպեսզի պարզ գաղափար կարելի լինի կազմել բուլշևիկների ձեռքով կատարած թալանի և բռնագրավման մասին՝ բավական կլինի այստեղ բերել Բուն Ջանգեզուրի միմիայն 15 հայկական գյուղերի կրած վնասը, որը նրանցից յուրաքանչյուրն առանձին համախոսա կանով և կոմիսարի ու պատվավոր մարդկանց ստորագրությամբ ներ կայացրել է Ինքնավար Սյունիքի Դիվանին՝ բուլշևիկների հեռանալուց հետո:⁴

Այս ցուցակը, որը կազմված է միմիայն Ջանգեզուրի 15 գյուղերի պաշտոնական թղթերի տվյալների հիման վրա, ուր տեղի սղության պատճառով չեն հիշված գրաված կամ թալանած հազարավոր հրացաններ պղնձեղեն ինքնանո պայտ կարի մեքենա հագուստե

գրաված փաստաթղթեր. տես Լեռնա Հայաստանի Գլխավոր շտաբի արխիվ, NN 215, 216, 217 և այլն):

¹ Կանենալով Հայաստանի Հանրապետության հիշատակն էլ իսպառ ջնջել Ջանգեզուրից՝ ի վնաս մինչև իսկ աշխատավոր գյուղացիության շահերի, արտակարգ կոմիսար Ա Ղարաբյոզյանը չի վարանում հեռագրել նույնիսկ հոկտեմբեր 27 ին.

«Բաքու, Ֆինանսների նախարարին պատճեն Ադրբեջանի ռեկոմին: Ջանգեզուրի գավառի շուկայում գործ են ածում երևանի չեկեր: Խնդրում են թույլ տաք հայտարարել, որ ոչ մի արժեք չունեն այդ չեկերը (անհավսոթան), որովհետև դաշնակները կարող են դրանցով օգտվել իրանց պրոպագանդայի համար: Արտակարգ կոմիսար Ղարաբյոզով»

² «Ազատ Սյունիք» Գորիս, 1921, էջ 19.

³ «Ազատ Սյունիք», Գորիս, 1921, էջ 18:

⁴ Տես հաջորդ երեսի վնասների աղյուսակը

ղեն, կոշիկ, թանձր, սապոն, նավթ, լուցկի, թեյ, չիթ, հարյուրավոր փուփ
չոր թուփ, դոշաք, գինի, օղի, ընկույզ, լոբի, ձավար, աղ, միս և այլն, մի
պերճախոս ապացույց է այն ավերումների և թալանի, որ կատարել են
բուլշևիկներն ամբողջ Ջանգեզուրում, Սիսիանում և Ղափանում: Այն
գյուղերը, որոնք բուլշևիկների երթևեկության ճանապարհների վրա
էին ընկել իրանց խիզախ բռնկումներով՝ ամենամեծ վնասներ են կրել
և իսպառ ավերվել:¹ Այսպես Ղափանի Ձեյվա գյուղը հարձակման է
ենթարկվում բուլշևիկների և թուրքերի կողմից. հուլիսի 29-ին համառ
կռվից հետո, երբ գյուղի երիտասարդները տեսնում են իրանց անհու-
սալի վիճակը՝ զենքերը վերցրած հեռանում են գյուղից, իսկ ծերունի
ները, որպեսզի գյուղն ազատեն կոտորածից, աղ ու հացով գնում են
կարմիր զորքի առաջ. բուլշևիկների հրամանատարն ուտքի տակ է տա-
լիս և պղծում աղ ու հացը, իսկ ծերունի պատգամավորներին տմար
դորեն սպանելուց հետո նույնիսկ քստմնելի կոտորածի է տալիս
մնացած ազգաբնակչությանը գյուղն իսպառ կողոպուտի ենթարկում
և հրդեհի մատնում: Նույնպիսի թալանի և ավերվածության է ենթարկ
վում 1920թ. նոյեմբեր ամսին մաև եայջի գյուղը միայն այն տարբե-
րությամբ, որ այս անգամ ռուսների հետ միասին զործում են կարմիր
անվան տակ Գորիս եկած տաճիկ ասկյարների 8-րդ գունդը թվով
1200 հոգի, որոնք կանանց գլխի և օրիորդների կրծքի ոսկե և արծա-
թե զարդերով պճնում էին իրանց ծիծերի կուրծքը:² Թե օգոստոսի 3 ին
և թե նոյեմբերի 21-ին Գորիսից նահանջելու ճանապարհին խորա-
մանկությամբ թալանում են և իրանց հետ տանում են թե 3-ին Գորիսից
և թե Տեղից հարյուրավոր եզ կով ձի, էշ և ջորի, իբր թե Շուշուց ապ-
րանք տեղափոխելու, բայց ոչ տարած ապրանքն է վերադարձվում և
ոչ էլ՝ տները հետ գալիս:

¹ Ջանգեզուրի, Սիսիանի և Ղափանի շրջանները 76 գյուղ որոնցից
յուրաքանչյուրը նույնպիսի բռնագրավումների և թալանի է ենթարկ-
վել: (Ինքնավար Այուրիքի Դիվանի արխիվ՝ բռնագրավման փաստա-
թղթեր):

² Տաճիկ կարմիր ասկյարների վերաբերմունքը դեպի հայերը բոլոր
գյուղերում եղել են նույնը ինչ որ իրանց սնած մայր երկրում բուն
Տաճկաստանում. ծերունի ականատեսների վկայությամբ Զարահունջ
և եայջի նոցա գործ ածած սովորական խոսքերն էին «զեաւուր»,
մունդար էրճամի», «վեր-դիմմա, բարասընը», «նա գիւզել բու գըզ»,
«կոմսար, բգդան օթուրի փիլով» «Օսման օղըզը գեօրդըմը օ
բէնըմ օլաջայ», և այլն:

³ Իրանց զորամասերի և հազարավոր ծրիակեր բուլշևիկ պաշտոնյա-
ների համար մթերք տեղափոխելու սեփական տրանսպորտ չունենա-
ով՝ Ջանգեզուրի, Ղափանի, Սիսիանի, մինչև իսկ Շուշու շրջանում թե
զավառական և թե այլ հեղափոխական կոմիտեների միջոցով գյուղա-
ցիներից բռնությամբ վերցնում էին նրա գրաստն և հեռավոր տեղեր

Տեղ գյուղը սոսկալի բռնագրավումների և թալանի ենթարկվելուց ազատվելու համար գրավոր դիմում է «բանվորա-գյուղացիական տեսչության», Ձանգեզուրի գավառական ռեկոմին և Գորիսի կայազորի պետին ¹ և խնդրում իրանց տեղափոխել մի այլ շրջան և ազատել

ուղարկում, որոնցից շատ քչերն էին վերադարձնում, իսկ մյուսները կամ ծախսում կամ յուրացնում էին: Այդ առթիվ հարյուրավոր բողոքներ են եղել, որոնցից և ոչ մեկը չէ բավարարվել: Իբրև օրինակ բերենք այստեղ Ձանգեզուրի խոտ գյուղի ռեկոմի ռուսերեն լեզվով գրած բողոքի հայերեն թարգմանության պատճենը:

«Խոտ գյուղի ռեկոմ N 181, 20 նոյեմբերի 1921 խոտ գյուղ
Շնհեր գյուղի գավառակային ռեկոմին

Հայտնում եմ ձեզ, որ տաճկական կարմիր զորամասերը մեր գյուղից վերցրել են 7 ջորի, 2 ձի, 5 էշ և 7 եզ 5 էշից վերադարձրել են մեկը, իսկ մնացած ամբողջ տրամսպորտը նրանց մոտ է: Նոյեմբերի 12-ին 251-րդ գնդին ուղարկել ենք 10 էշ, որոնցից վերադարձրել են 4-ը, իսկ մնացածները թողնված են իրանց մոտ: Նոյեմբերի 10-ին գավառակային ռեկոմին ուղարկված է 4 էշ, որոնցից վերադարձված է 2-ը: Նոյեմբերի 10-ին 249-րդ գնդի հրամանատարին ուղարկված է 10 էշ, որոնցից վերադարձված է 2-ը: Գորիս քաղաքի տրամսպորտի կառավարչին ուղարկված է 9 էշ, որոնցից 1 ն է վերադարձրած, իսկ մնացած 8 էշն ուղարկել են Ձանգեզան 252-րդ գնդի համար: 252-րդ գնդից մենք ստացել ենք 3 էշ, իսկ 5 էշը մնում է 252-րդ գնդի մոտ. Գրաստների տիրոջ անուններն են 1 Ծատուր Գրիգորյան, 2 Հարություն Համբարձումյան, 3 Մինաս Կարապետյան, 4 Աբրահամ Մարգարյան, 5 Ավետ Սելբումյան: Հոկտեմբեր ամսին Գորիս 253-րդ գնդին ցորեն ուղարկելու ժամանակ զորամասերը ճանապարհին այդ էշերից 2-ը վերցրել են, որոնք պատկանում են Սսակ Օսիփովին և Վանի Ավագիմովին և մինչև այժմ տեղը չի իմացվում: Հոկտեմբերի 28-ին նահանջից հետո դաշնականների մոտ գերի են մնացել 5 ջորի:

Ավանես Կապելյանին բռնել են Երիցաթումբում, Սարգիս Աուսայելյանի 1 ջորին կորել է Տաթևում, Գրիգոր Փարսյանի 1 ջորին Եայջիում, Աթա Բոզյանի 1 ջորին, Գրիգոր Մանուչարյանի 1 էշը անհայտ կորել է, Աատթեոս Բարսամյանի 1 ջորին նմանապես ծանր վիրավորված է Եայջի գյուղում, Հայրապետ Սարգիսյանից ջորին և Մատթեոս Տեղ Ձախարովի 1 ջորին վիրավորված է 251-րդ գնդում: Թախանձանոթ խնդրում եմ միջնորդեք տրամսպորտը վերադարձնելու:

Ռեկոմի նախագահ (ստորագրություն)
Քարտուղար Լ. Օսիպով»

¹ Իբրև ապացույց կարող է ծառայել տիսրահոջակ Ա. Ղարագոզովի միջնորդության իր հայրենի գյուղացիների բուլշևիկ հեծելազորի ձեռքով թալանած անասունները հետդարձնելու գրավոր փաստաթուղթը:

«84-րդ բրիգադայի պետին (Գորիսում),

անելանելի վիճակից բայց նոցա խնդիրն անհետևանք է մնում, զինվորները թալանում են մինչև իսկ իրանց շարքերում կռվող հայ գյուղացիների անասունները և ամբողջ գյուղի նախիրը:

Խուզարկության պատրվակի տակ կես գիշերին բուլշևիկ պատասխանատու գործիչները քաղաքի ազգաբնակչության տներն են մտնում, որոնց դռները քաղաքապետի կարգադրությամբ չէին փակում զիշերները և սենյակների բուր անկյունները, սնդուկները, տեղաշորերը մանրագնեհն քննելուց հետո հավաքում և տանում են ոսկի, արծաթ, ժամացույց, գդալ, մետաքսի կտորներ, մատամի, գուլպա, սպիտակեղեն, մինչև իսկ ասեղ, ծրար և նման ուրիշ ամեն տեսակի իր, ասելով՝ թե մինչև այժմ դուք եք վայելել, այժմ՝ հերթը մերն է, մենք պիտի վայելենք: Այդ կողմից ամենից ավելի աչքի էր ընկնում Գորիսի պարետը որը սկզբում մի ոռու կին էր և որն ամեն անգամ խուզարկությունից պիտի վերադառնար մեծամեծ կապոցներով կամ գորգերով: Ավելի անխիղճ էին վարվում բուլշևիկ գործիչներն այն անհատների թողած շարժական թե անշարժ գույքի հետ, որոնք իբրև էմիգրանտ հեռացել էին Այունիքի սահմանից՝ բուլշևիկները գրավում են այդպիսի մարդու տան ամբողջ շարժական ինչքը, իսկ իրանց հաստատությունները կամ զինվորական որևէ մաս փոխադրում էին նրա տունը և սկսում աստիճանաբար ավերել. նախ վառարանի զոհ են գնում պատշգամբի տախտակները լուսամուտները և ի վերջո դռները: Այս ձևով ավերված է Գորիս քաղաքի տների համարյա կեսը որոնք և ներկայումս անմարդաբնակ են:

Հայ ժողովրդի կրոնա-բարոյական զգացումները բթացնելու ուսմար միտինգներում հայտարարում էին, թե կրոնը շշմեցնում է մարդուն, թե եկեղեցին անգործների և ծրիակերների հաստատություն է ուստի վերացնում են եկեղեցական ամուսնությունն և ընդունում քաղաքացիականը, որը ոչ այլ ինչ է եթե ոչ մի մատյան ուր վարիչի ծեռքով մուծվում են միմյանցից բաժանվողների և կամ միմյանց հետ ապրող մարդու և կնոջ անունները:

Խնձորեսկ գյուղի ժողովուրդը գանգատվեց ինձ, որ մեր զորքեր Գորիսի վրա հարձակվելու ժամանակ մեր հեծելազորը լեռներից քշել-տարել է խնձորեսկցիների անասունները: Խնձորեսկ գյուղը միշտ ծառայել է իբրև նեցուկ խորհրդային իշխանության և դաշնակցների դեմ է գնացել. Տեղ գյուղի վրա հարձակվելու ժամանակ քիչ խնձորեսկցիներ չեն օգնել: Խնդրում են կարգադրել վերադարձնելու անասունները խնձորեսկցիներին այլ և մեր հեծելազորի այդպիսի վարվեցողությունը կարող է մեզանից հեռացնել խնձորեսկցիներին:

11-րդ Բանակի զինվորա-հեղափոխական խորհրդի լիազոր և Ղարաբաղի ու Ձանգեզուրի արտակարգ կոմիսար Ա. Ղարապետով»
7 օգոստոսի 1920թ »

Գյուղացիության կրոնական զգացումն արհամարհելով բուշևիկ գինվորները Յիմ Գորիսի, Եայջի Չափնի և Ջեյվա գյուղերի եկեղեցիներում ձիաներ էին կապում և ապականում, թե քաղաքում և թե գյուղերում քաղաքացիական անուսնության անվան տակ բարքի և վարքի կատարյալ ապականություն էին տարածում:

Պրովոկացիան բուշևիկ գործիչների գլխավոր զենքերից մեկն էր Ղափանին տիրելուց հետո նկատելով, որ այդ ժողովուրդն երկար չէ կարող հաշտվել նոր հասարակարգի հետ և որ նա վաղ թե ուշ պետք է թոթափե իրանց լուծը՝ ձեռք մեկնելով լքյալ հրամանատարին, բուշևիկները դեռևս սեպտեմբեր ամսին խաբեբայությամբ Ղափանի գյուղացիության հայտարարում են, որ իրանք կռվում են ոչ թե Չայաստանի Հանրապետության դեմ, որը վաղուց է ձեռք վերցրել Ձանգեզուրից և որն, իբր թե հայտնել է Լեգրանին, որ այդ շրջաններում Հանրապետությունն ոչ կանոնավոր զորք ունի, ոչ էլ ներկայացուցիչներ, այլ կռվում է Նժդեհի դեմ, որը գեներ է վերցրել սովետական իշխանության և նրա զորքերի դեմ. «Մեզ Նժդեհն է հարկավոր, ոչ թե ձեր երկիրն, և եթե նրան մեզ չհանձնեք՝ ձեր գյուղերը կրակի կմատնվին և կարմիր բանակը կշարունակե մնալ ձեր շրջաններում և ապրել ձեր հաշվով»:

Ձանգեզուրն և Նախիջևանը պատկանում են Խորհրդային Չայաստանին, թե Խորհրդային Ադրբեջանն արդեն իր համաձայնությունն է հայտնել և այլն, և այլն: Այդ խաղերը պարզ կլինեն մեզ համար, եթե հիշենք, որ 1920թ. դեկտեմբերի ամսի 16-ին Չայաստանի գինվորական կոմիսար Ավիս Նուրիջանյանը նույն իմաստով հեռագրեր է ուղարկում թե Ձանգեզուրի գյուղացիության, թե հրամանատարության և թե Խորհրդային Չայաստանի ծայրագավառները, որ Ղարաբաղը Ձանգեզուրն և Նախիջևանն որոշված է կցել Խորհրդային Չայաստանին:

Այս բոլոր խաբեբայությունները միմիայն ժամանակավոր մշանակություն կարող էին ունենալ և զրավել ժողովրդի միտքը: Շուտ թե ուշ նա պիտի հասկանար, որ Ռուսաստանի ծայրամասերում կազմված հանրապետության համար լինի դա Ադրբեջան, Չայաստան, թե Վրաստան անվան տակ, որևէ սահման գոյություն ունենալ չէ կարող:

Նույնպիսի և ավելի տմարդի վերաբերմունք ցույց տվին նրանք և իրանց քաղաքական հակառակորդների նկատմամբ, բացե ի բաց մերժելով որևէ կուսակցության թեև սոցիալիստական, գոյություն բուշևիկների տիրապետության սահմաններում: Առաջնորդվելով այդ սկզբունքով նոքա ամբողջ Լեռնա-Չայաստանի ինտելիգենցիան շատ չնչին բացառությամբ, համարեցին հակահեղափոխական և հալածանքի ենթակա բոլոր միտինգներում հայտարարեցին և թուլցիկ

¹ Տես փաստաթղթերի բաժին. «Կոչ ուղիղ հեռագրով երևան Քեչիշքենդ Ձանգեզուր գյուղացիության եւ հրամանատարության»

սերով ցրեցին թե հայ ժողովրդի թշնամին Դաշնակցությունն է, թե ազգամիջյան կռիվների հայ աշխատավոր գյուղացիության տնտեսական քայքայման սկզբնապատճառը Դաշնակցությունն է մահ Դաշնակցականներին

Ավելի խիստ վերաբերմունք ցույց տվին նրանք Լեռնա-Չայաստանի սպայությանը՝ համարելով այդ տարրը վտանգավոր և վնասակար: Յուլիսի 10-ին ձերբակալում են բոլոր սպաներին և Ռուսաստան գինվորական դպրոց ուղարկելու պատրվակի տակ, աքսորում են Քաբու և Ռուսաստանի ներքին նահանգները, ուր նրանցից շատերը անտարկվում են մյուսները՝ տաժանակիր աշխատանքի դատապարտվում: Նույն հուլիսի 10-ի գիշերը սպաներից երեք հոգու առանց որևէ քննության տանում են դեպի Քարահունջ, ձորի ափին կանգնեցնում, շորերը հանում և ապա գնդակահարում տեղակալ Օհանյանին և Երիս-գլխապետ Տեր-Սարգսյանին, իսկ երրորդը փախչելով՝ հազիվ վարողանում է ազատվել: Անձնական վրեժի թույնով լցված բուլշևիկական 11-րդ բանակի գինվորա-հեղափոխական խորհրդի լիազոր Ա. Կարազոզյանը, որն իր իսկ հայրենի երկրի հայ գյուղացիության գլխատման և ավերվածության չար ոգին է հանդիսանում, առաջին անգամ ոտք է դնում Գորիս և իր այդ գալուստը շնորհավորում կարմիր տեռորով, առանց քննության և դատի օգոստոսի 2-ի գիշերը երեքնց նահանջի նախօրյակին սպանել տալով Չայաստանի Չանրապետության պարլամենտի անդամներ Վահան Խորենուն և Արշակ Շիրինյանին,² դրանց հետ նաև սիսիանցի Ջ. Տեր-Ղազարյանին և Մ. Աղամյանին:

Աքսորվել են ավելի քան 1500 հայ սպաներ: «Չայրենիք» Ակունք.

Օգոստոսի 2-ին, գիշերը, Գորիսից նահանջելուց առաջ Ջանգեզուրի տխրահռչակ չեկան (արտակարգ հանձնաժողով) քաղաքի պատերին է կացնում հետևյալ թռուցիկը, կամենալով վարագուրել անձնական հաշիվն և արդարացնել պարլամենտի անդամների անխիղճ և գազախային սպանությունը

«Չայտարարություն

Դաշնակների կառավարության կարմիր Ջանգեզուրի վրա նենգությամբ հարձակվելու պատճառով գիշերը՝ լույս 2-ին օգոստոսի գնդակահարված են դաշնակներ՝ Արշակ Շիրինյան Վահան Խորենի Չախար Տեր-Ղազարյան և Մ. Աղամյան: Չեկա»

(Լեռնա-Չայաստանի Գլխավոր շտաբի արխիվ, N 241)

Գորիսի կենտրոնական բանտի ընդունելության գրքի մեջ N 177 տակ նշանակված է. «Արշակ Շիրինյանն և Վահան Խորենին ձերբակալվել և բանտն են ուղարկվել հուլիսի 30-ին չեկայի նախագահի կարգադրության համաձայն, իսկ օգոստոսի 1 ին 1920թ. նույն չեկայի բողոքման համաձայն ազատված են»: Բայց այդ ազատվելը բանտի

Եթե կա որևէ տմարդի արարք, որն երբևիցե տեղի է ունեցել քաղաքացիական կռվի ընթացքում, որն ոչ մի կերպ արդարացնել հնարավոր չէ, ապա դոցանից առաջին տեղն է բռնում այդ սպանությունը թե խորենին և թե Շիրինյանն իրանց ամբողջ էությամբ նվիրված էին գյուղացի ժողովրդի շահերին: Միմիայն անձնական կրքով կուրացած մարդը կարող է մեռցնել իր խիղճն և սրերի ու կացնի հարվածների անխնա տարափի տակ լռեցնել այն հուժկու ծայնը, որ բանտից արձագանք էր տալիս ամբողջ քաղաքի վրա և սարսուռ ազդում ամենքին:

Կրիժառության գոհեր են հանդիսանում օգոստոսի 3-ին Գորի սից նահանջելիս բուլշևիկների հետ տարած և 17 բանտարկյալները՝ Զ Տեր-Ղավթյան Գ. Մալինցյան Պ Փարսյան Դ. և Գ. Տեր-Մկրտչյան եղբայրներ Ա Ղաղայան և այլք որոնց շոթայած քշում են դեպի Շուշի, բայց ճանապարհին առանց որևէ հարցաքննության ծակեր կոչված տեղը (Ղարաղշլաղի դիմաց) գնդացիի առաջ կանգնեցնում և բուլորին անխնա կոտորում են ազատվում է միմիայն Կոռընձոր գյուղի Գրիգոր քահանան 11 վերջ ստանալուց հետո, որին բուլշևիկները մեռած են կարծում:

Հոկտեմբերի 16-ին, երբ Ղափանի և Միսիանի շրջաններում նկատվում են ապստամբական փորձեր, այդ շարժումները ճնշելու ու ժողովրդին սարսափի տակ պահելու համար բուլշևիկները Գորիսի բանտում սվիններով սպանում են 10 տարի շարունակ նիկոլյան¹ բանտերում շոթաներ կրած հեղափոխական մարտիկ Սարգսյին (Համբարձում Սարգսյանին) և 12 ուրիշ ընկերների որոնց մեջ էին՝ Յ. Մալինցյան Ա Միրաքյան, Ա. Տեր-Մկրտչյան, Փ Մելիք Փարսաղանյան Բ Սարգսյան Սահակ-Բեկով և ուրիշները:²

Գրքի լեզվով նշանակում է թե դատարկել են սենյակն և բանտարկյալին հեռացրել այդտեղից՝ սպանության վայր տանելու համար

¹ Նկատի ունի Նիկոլայ 2-րդին: «Հայրենիք» Ակունք:

² Գորիսի կենտրոնական բանտի ընդունելության 1920թ. գրքի մեջ նշված են միայն հոկտեմբեր ամսից սկսած բուլշևիկների ձեռքով տեղի ունեցած գնդակահարությանց մասին հետևյալ կարգով

«N 261 6-ին հոկտեմբերի 1920թ. - Համբարձում Սարգսյան բանտարկված է քաղաքական բյուրոյի քննչի ձեռքով գնդակահարված է 28-րդ հրացանաձիգ դիվիզիայի առանձին բաժանմունքի որոշ մամբ 16 հոկտեմբերի 1920թ

N 263, Ավանես Մալինցյան N 106 (հաղորդ.)

N 264, Ալեքսանդր Միրաքյան N 486,

N 265, Համբարձում Եալունց փախել է գնդակահարության ժամին

N 272, 6-ին հոկտեմբերի Բեկով Սահակ, բանտարկված է Գորիսի պարետի կարգադրությամբ գնդակահարված է 26 թղ հրա

Ապանությունները սովորական են դառնում նաև գյուղերում, ուր չկար ոչ դատարան, ոչ քննիչ և ոչ կյանքի ապահովություն: Վրիժառությունն այնպիսի սոսկալի չափերի էր հասել, որ մինչև իսկ 252-րդ գնդի զինվորական կոմիսար Իվանովը հրամայում է Արծվանիկը վերցնելուց ծանուկներից մինչև 80-90 տարեկան ծերունիներին անզամ չխնայել: Այդ հրամանը կատարվում է առանց հապաղման, որն և առիթ է տալիս տխրահոջակ Ղարագոյազանին գրելու իր զեկուցման մեջ Բաքու, Նարիմանովին, թե «մեան դեպքերը նսեմացնում և վարկարեկում են սովետական կառավարությանը»:

Ամեն տեղ բանտերը լցվում են անմեղ զոհերով միայն Գորիսի բանտում մշտապես պահվում են քաղաքացիներից 100 բանտարկյալ պատանդ անվան տակ, որոնց շաբաթը մի անգամ փոխարինում էին ուրիշներով որևէ ապստամբության դեպքում գնդակահարելու: ²

ցանաձիգ դիվիզիայի առանձին բաժանմունքի որոշմամբ 16-ին հոկտեմբերի 1920թ.,

..... Մարգիսով Բախշի ..

..... Մելիք-Փարսադանյան

N 281 Տեր Մկրտչյան Ալեքսանդր

N 290 16-ին հոկտեմբերի Ավանես Պողոսյան

..... Ալեքսանդր Հասրաթով

..... Աիմոն Պողոսով ...

..... Հակոբ Վանեսով

..... Շամիր Կարապետյան

..... Ահարոն Կարապետյան (Ղահրամանյան)

1920թ. հոկտեմբերի 16-ից NN 320, 324, 331, 332, 333 340 բանտի մեջ գնդակահարված են նաև 19 ռուս կարմիր զինվոր և 1 հայ որոնք հրաժարվել են Ղափան գնալու և ապստամբ հայերի դեմ կռվելու: 1920թ. հոկտեմբերի 17-ին Գորիսի պատերին կապրած ռուսերեն և հայերեն լեզվով հրամանի մեջ հիշված են սպանված հայերի անուններն և պատճառաբանությունը (տես՝ փաստաթղթերի բաժին)

¹ «Ազատ Սյունիք», Գորիս, 1921, էջ 17-18:

² Սկսած 1920թ. հուլիսի 6-ից մինչև նույն թվի նոյեմբերի 19-ը Չանգե գուրի թուլչևիկ պաշտոնյաների ձեռքով միմիայն Գորիսի կենտրոնական բանտն են տարել քաղաքական հողի վրա հետևյալ քանակությամբ անձինք (բանտի ընդունելության գիրք NN 137, 352)

1 Գորիս քաղաքի պարետի կարգադրությամբ բանտարկվել է 379 հոգի

2 Միլիցիապետի ... 79

3 Հատուկ բաժանմունքի (особый отдел) 45

4 Քաղաքական բյուրո (политбюро) ... 58

5 Առանձին գորամասի N 2 կայազորի պետի 28

6 Չանգեգուրի չեկայի նախագահի ... 32

Պարզ է, որ երեք տարի քաղաքական կյանքով ազատ ապրած մարդու համար միանգամայն անտանելի պիտի լինի նոր ստեղծված ռեժիմը: Գյուղացին լսեց բազմաթիվ խոստումներ, բայց ոչ մի բան իրականացած չտեսավ՝ երկիրը տնտեսապես միանգամայն քայքայվեց, զենքի ուժով խլեցին և Բաքու տարան տասնյակ հազար փութ ռուլ հացահատիկ և այլ մթերքներ, գյուղացու վերջին լծկանն անգամ չխնայեցին սայլին լծելու և քշելու դեպի Շուշի, մի ահագին թիվ կոմի սարների և զինվորների բուլչևիկ անվան տակ թե Գորիսում և թե գյուղերում անխիղճ կերպով վայելում էին գյուղացու բարիքը՝ թողնելով նրան քաղցած: Առանց դատի, գիշերները, գաղտնի կերպով բանտերում կոտորում էին երկրի ինտելիգենցիային, չկար ոչ կյանքի և ոչ գույքի ապահովություն: Այդ դեռ բավական չէ՝ տաճիկ ասկյարների մի գունդ ևս բերել են տալիս բուլչևիկները, որոնք հայի ռիսերիմ թշնամին լինելով, որ գյուղ որ մտնում էին՝ սկսում էին իրանց զազանու թյունները, առևանգումը ալան-թալանն ու ծեծը: Այս բոլորը մի վերջին անգամ ևս համոզում է Լեոնա-Հայաստանի գյուղացուն, թե բուլչևիզմը բերում է իր հետ ստրկություն կապանք, կոտորած և կատարյալ աղքատություն, ուստի հարկավոր է թոթափել այդ լուծն և նոր ազատ կյանք ստեղծել իր համար

- 7 Չանգեզուրի ռևկոմի ... 16
 6 Չանգեզուրի չեկայի քննիչի ... 16
 9 Գորիս քաղաքի կայազորի պետի 63
 10 Չինվորական քննիչի ... 5,
 11 Ներքին հանձնաժողովի վարիչի 2
 12 Գորիս քաղաքի միլիցիայի պետի ... 7,
 13 Ժողովրդական դատարանի նախագահի 10
 14 Կովկասյան գնդի պետի ... 4
 15 Քաղաքացիական քննիչի ... 9
 16 1 ին Կովկասյան գնդի զինվորական կոմիսարի 1
 17 Կովկասյան բրիգադայի շտաբի պարետի .. 1
 16 Գավառական ռևկոմի ... 1
 19 Տրամսպորտի ենթաբաժնի պետի .. 2
 20 28-րդ դիվիզիայի շտաբի պարետի 1
 21 Արտակարգ հանձնաժողովի 1
 22 Չինվորական կոմիսարի 1

Ընդամենը 763 հոգի

ԳԼՈՒԽ Բ

ԱՊՍՏԱՄԲԱԿԱՆ ՇԱՐՇՈՒՄ

Բուլշևիկները սեպտեմբեր ամսի սկզբին Ղափանին տիրելուց հետո մի քանի անգամ ուժեղ հարձակման դիմեցին և երեք կողմից գրոհ տվին Գենվազն¹ ևս գրավելու: Հայ և ռուս կոմունիստները չէին վարանում մինչև իսկ Նախիջևանի Օրդուբաթի և Ջիբրայիլի կողմից որավիրելու թուրք և տաճիկ ասկյարներին հայերի՝ իբրև հակահեղափոխական տարրի, դեմ կռվելու, բայց այդ բոլոր փորձերն ոչ մի հաջողություն չունեցան: Թողնելով Գենվազը գրավելու ձգտումը, որ եթե զենքով չի հաջողվում, գուցե պրոպագանդայով կամ փողի ուժով կառելի լինի տիրապետել, բուլշևիկներն իրանց ուշադրությունը դարձրին Ջանգեզուրի, Սիսիանի և Ղափանի վրա կամենալով այդ շրջանները խիստ ամրացնել և իբրև թե իրանց հետ կապել զանազան սին խոստումներով, բայց խաբեբայությամբ ներս սողալով հայկական գյուղերը՝ ամենակարճ ժամանակամիջոցում քամեցին նրա ամբողջ տնտեսությունն և սայլերը բարձած ամեն բարիքով դեպի Բաքու ուղարկեցին՝ թողնելով թշվառ գյուղացիությունը մերկ ու քաղցած, զրկեցին նրան քաղաքացիական ազատությունից այնչափ, որ մի գյուղից հանձնան գյուղը գնալու համար պետք էր բուլշևիկյան անցագիր ունենալ: Գյուղերը բանտեր դարձան իսկ գյուղացիությունն՝ անպաշտպան ոչխարի հոտ:

Այս վիճակն երկար շարունակվել չէր կարող չնայելով որ արտաքին քաղաքական հանգամանքները բուլտրովին նպաստավոր չէին որևէ ապստամբություն բարձրացնելու, որովհետև Հայաստանի Հանրապետությունն ստիպված լինելով տաճիկների դեմ կռվելու՝ ոչ ձիջոց և ոչ էլ ժամանակ ուներ իր ուշը դարձնելու Լեռնահայաստանում կատարվող դեպքերին:

Լեռնահայաստանի հայ գյուղացիության միակ հույսը մնացել էր գնդապետ Նժդեհը, որը չնայելով քաղաքական տարբերություններին, մի կողմից թողնելով անդորր ու փափուկ վայրերը՝ նետվել էր տառապանքի աշխարհն և իր իսկ արյան գնով հայ ժողովրդի փրկությունն էր կամենում ձեռք բերել: Ո՞րն էր այն ուժեղ ազդակը, այն վեհ գաղափարը, որին այնքան անձնվիրությամբ և այնպիսի ինքնամոռացությամբ նվիրված էր այդ հերոսը: 1919թ. նոյեմբերին Հայաստանի Հանրապետության զինվորական հրամանատարության կողմից նշանակվելով Ղափան-Գենվազ-Գողթան զինված ուժերի և Այունյաց երկրի հարավ արևելյան ռազմաճակատի հրամանատար գնդապետ

¹ Գենվազի շրջանն են մտնում հայկական հետևյալ գյուղերը՝ Մազրա Կալեր, Լիճք, Ղաշտան Վանք Գուտեմիս Վահրավար Ագարակ Սեղրի Կարճևան Եվանածոր

Նժդեհին ամբողջ երկու տարի գործել էր այդ շրջանների հայ գյուղացիության մեջ առանց դադարի, առանց հանգստյան ի մոտո ուսումնասիրելով իր ժողովրդի՝ մանավանդ նրա երիտասարդ գինական ուժի թե հոգեկան և թե ֆիզիկական աշխարհը:

Խորապես գիտակցելով ժամանակի անհրաժեշտ պահանջները նա այն համոզման էր եկել, որ ինչպիսի արհավիրքներ էլ տեղադրվին են այնուամենայնիվ այդ ժողովուրդը կարող է իր սեպացած շերտերի, անդնդախոր ծորերի և կուսական անտառների վրա հենված՝ արյան գնով պաշտպանել իր ազատությունը, իր անկախությունը եթե ազգային գիտակցությունն և ազատության ոգին պահե իր մեջ:

Գնդապետ Նժդեհը գինվորականի հմտությամբ միացնելով իր կազմակերպչական տաղանդի հետ պատասխանատու ռազմաճակատի հրամանատարի պաշտոն ստանալու օրից ձեռնարկեց եռուն գործունեության: Ձգալով որ տեղական ազգաբնակչության համար տնտեսապես խիստ ծանր և քայքայիչ կլինի երիտասարդ ուժերի մշտական զենքի տակ ունենալ զորանոցներում նա գյուղերը բաժանեց զորաշրջանների՝ գինված ուժերի թվի համեմատ նշանակելով վաշտապետներ հենց նույն գինվորների միջից ավելի համարձակ խիզախ և քաջարի անձանց:

Յուր ազդու գրավիչ և վառվռուն ճառերով ներշնչեց նրանց անձնագոհության գաղափարը սիրուն հայրենիքի փրկության հ սմար և այդ միջոցով կազմակերպեց ժողովրդական մի կուռ բանակ, որը պատրաստ էր իր հրամանատարի ձեռքի մի շարժումով կրակի մեջն անգամ նետվել: Այդ վաշտերից ամենաքաջարին նա մկրտեց Սյունյաց երկրի 18-րդ դարու հայտնի պատմական հերոս Ղափիթ Բեկի անունով,՝ բացի դրանից նա պատրաստում է նաև Գայլավաշտեր յուրաքանչյուրը 20-50 հոգուց բաղկացած, որոնք գինված ուժանակներով և ռումբերով գիշերային հարձակման ժամանակ իրանց համարձակ գործողությամբ սարսափ էին տարածում թշնամու վրա՝ վաշտերը կազմակերպելուց հետո նա անդադար պատում էր գյուղից գյուղ, դիրքից դիրք, և ամենուրեք ուր հասնում էր, իր կրակոտ և հայրենասիրական ճառերով ոգի ու եռանդ էր ներշնչում երիտասարդության և ամեն ոք իր բարի հրեշտակին էր տեսնում իր մոտ:

Այսպիսի անձնավիրությամբ գնդապետ Նժդեհը կարողացավ հարյուրավոր թուրք գյուղերով շրջապատված Ղափանի Գենվազի և Գողթանի մի քանի տասնյակ հայաբնակ գյուղերը 1919 և 1920թ արյունահեղ կռիվների ժամանակ ոչ միայն զերծ պահել ավերածու

¹ Ղափիթեկյան վաշտերն ունեն իրանց առանձին դրոշակը պատշաճ մակագրությամբ գինվորները հագնում են որոշ ձևի միատեսակ հագուստ և կապում են կարմիր կտորից գոտի՝ նույն տարազն է կրում և Սպարապետ Նժդեհը

թումից, այլ և ամբողջ այդ շրջանները մաքրել թշնամիներից և միան չամայն ապահովել հայ գյուղացու ֆիզիկական գոյությունը՝¹

Շատ ծանր էր Սյունիքի հայ գյուղացիության վիճակը 1919թ. ընթացքում, շրջապատված ամեն կողմից թուրքական գյուղերի բազմութամբ՝ ամբողջ տարիներով Ջանգեզուրը, Ղափանը, Գենվազն (Արևի ջը) և Գողթանը կտրված էին մնում միմյանցից:

Մուսավաթ Ադրբեջանի կառավարությունն ամեն կերպ խոչընդոտ հանդիսանալով Սյունիքի հայ ժողովրդի միության իր գործակալներով և մեծամեծ դրամներով Նախիջևանն է ապստամբեցնում Հայաստանի Հանրապետության դեմ և Ջիրբայիլի ու Ջանգելանի կողմերում մեծաքանակ թուփուկ խմբեր կազմելով՝ միշտ սպառնում էր Ղափանին և Գենվազին, որպեսզի այդ շրջաններն ևս մաքրելով *ռայությունից՝ հնարավորություն ունենա Օրդուբաթի վրայով միանալ Նախիջևանին*։ Փոքր էին հայկական գյուղերն և մեծամասամբ ցրված թուրքական շրջաններում: Ադրբեջանի հանրապետությունը միշտ ռնարավորություն էր ձեռք բերում գրգռելու տեղական թուրք ազգաբնակչությունը հայերի դեմ և պարբերական կոտորած կազմակերպել կամ գյուղերն ավերել: Հայ գյուղացիությունն ամեն ղուպե ոչնչացման էր դատապարտված, եթե ձեռք չառնեին անհրաժեշտ միջոցներ: Ահա հենց այդ ժամանակ էր (1919թ. հոկտեմբեր ամսին), երբ գնդապետ Նժդեհն ստանձնում է Կապարգողթի ռազմաճակատի հրամանատարությունը. չկային ոչ կանոնավոր զորամասեր, ոչ թնդանոթներ և ոչ էլ կազմակերպչական աշխատանք էր կատարված՝ զինված գյուղացիությունն էր միակ ուժը:

Մի քանի անգամ շրջելով իր հրամանատարության տակ առած շրջանները՝ գնդապետ Նժդեհն այն համոզման է գալիս, որ այն ժողովուրդը, որի ֆիզիկական գոյության խնդիրն ու բախտն իրան է հանձնված՝ դատապարտված կլինի Նախիջևանի հայության պես բնաջնջման, եթե ժամանակին անհրաժեշտ միջոցները ձեռք չառնեն, որովհետև անհնարին է մի բուռն հայ գյուղացիության հարյուրավոր թշնամու գյուղերով շրջապատված կենդանի մնալ, երբ դավադիր Ադրբեջանը միշտ չարիք էր նյութում: Ուստի, անհրաժեշտ է շրջանները մաքրել օտար թշնամի տարրից և հայ գյուղացիությունը միացնելով փոքր ի շատե մի ուժեղ զանգված կազմել:

Այդ նպատակին հասնելու համար գնդապետ Նժդեհը նախ հետամուտ եղավ զինված գյուղացիությունից գիտակից ուժեղ և անձնվեր վաշտեր կազմակերպել և ապա ձեռնարկել խիստ դժվարին, բայց անհրաժեշտ զինվորական գործողությունների՝ սկսած Բարգուշատի ավերից մինչև Օրդուբաթի շրջանը: Ամենավտանգված վայրերից մեկը համարվում է Օխչի ձորը (Գեղվա ձորի արևմտյան կողմը), ուր կային 5 հայկական գյուղեր, որոնք միշտ սարսափի և կոտորածի երկուղի տակ էին: Այդ շրջանի թուրքությունն անհրաժեշտ էր հեռացնել

նաև այն պատճառով, որ այդտեղով միայն հնարավոր էր հայերի համար կապվել Գողթանի կենդանի մնացած գյուղերի հետ: Ուստի, 1919թ. նոյեմբերի 25-ին Սպարապետ Նժդեհն սկսելով ռազմական գործողությունները՝ կարճ ժամանակվա ընթացքում գրավում է Օխչի ձորի՝ Շաբաղին, Օխչի, Փիրոզովդան Արալբխ և այլ գյուղերը որոնց ազգաբնակչությունը գաղթում է դեպի Նախիջևան:

Մյուս հերթական գործողությունը պիտի սկսվեր Գեղվա ձորի ավազակաբարո և թշնամի տարրի դեմ, որ իր կատարած գազանություններով ու թալանով միանգամայն հուսահատության դուռն էր հասցրել Գեմվազի գյուղացիությանը: Գեղվա ձորի թուրք մասսան սերտ կապեր էր պահպանում մի կողմից Նախիջևանի, մյուս կողմից Չանգելանի և Ջիբրայիլի, իսկ երրորդ կողմից՝ Շխլարի վրայով նաև Հաջիսամլուի թրքության հետ և հայկական գյուղերն օղակելով չորս կողմից՝ ամեն չարիք նյութում նրանց բնակիչներին: Բացի դորանից՝ Գեղվա ձորի ամեն մի գյուղում կային հայկական հին եկեղեցիներ գերեզմանատներ և այլ հնություններ, որոնցից պարզ երևում էր, որ դա հայկական մի շրջան է եղել պատմական հարուստ անցյալով որ հետագայում հայ ժողովուրդը լքել է շնորհիվ թշնամի ցեղերի արշավանքի: 1919թ. դեկտեմբերի 1-ին Սպարապետ Նժդեհն իր վաշտերով հարձակման է դիմում Գեղվա ձորի վրա: Թեև թշնամու դիրքերը բարձր սարերի վրա էին և ցուրտ ձմեռն ամեն կերպ արգելք էր հանդիսանում այդ խելահեղ ձեռնարկության, բայց շնորհիվ հրամանատարի փորձառության և արևելյան ժողովուրդների հոգեբանության ըմբռնման՝ այդ գործողությունն ևս պսակվում է մեծ հաջողությամբ. զինվորներն ուժանակով և երկաթե կտորներով լցրած տակառները բարձրացնում են լեռների ծերպերն և ապա՝ գլորում դեպի թշնամու գյուղերը: Դոցա պայթյունները սոսկում էին առաջ բերում և թշնամուն փախուստի մատնում:

Հայ գյուղացի զինվորության ցուցադրած անձնագոհությունը վեր է ամեն մի գովեստից: Անառիկ դիրքերից թշնամուն հանելու համար կարիք է զգացվում մի թնդանոթ բարձրացնել Կոմբախ լեռան կատարը՝ ոչ ձիաները և ոչ ջրփիները չեն կարողանում թնդանոթը վեր բարձրացնել և ահա առաջ է անցնում հայ գյուղացի զինվորն ու շալակելով 6-7 փուլ ծանրություն ունեցող թնդանոթը՝ տանում է լեռան բարձրունքն ու հաղթություն ապահովում: Ավերվում են Գեղվա ձորի մոտ 33 գյուղերը՝ Շահարջիկ, Աչաղլու, Ղաշբաշ, Զիրիշ, Սանջիրախլի Փեյզան, Քիրս, Գեղի, Աջեվաջ և այլն: Ամբողջ շրջանը մաքրվում է մարդասպաններից և ավազակներից՝ թշնամին գաղթում է դեպի Նախիջևան: Այնուհետև, պատերազմական գործողությունների ասպարեզը փոխադրվում է Բարգուշատի և Հաքյարուի շրջանը, ուր տեղական թրքությունը Ջիբրայիլի կողմից թիկունք ունենալով Ադրբեջանի հան

րապետությունը անընդհատ հարձակումներով միշտ վրդովում էր Ղափանի հայության խաղաղությունը:

1920թ. հունվարի 19-ին Սպարապետ Նժդեհի առաջնորդությամբ Ղափանի զինվորությունը հարձակման դիմելով Բարգուշատի անթիվ բուրքական գյուղերի վրա գրավում է թշնամիների հետևյալ գյուղերը՝ Չարալու, Սալդաշ, Փարիջան, Գեոյալ, Դաշբաշ, Հարթիզ Միհրալու, Խոջամսախալու, Այադի, Ջոր, Մագըտտի Թարավլու, Չարդախալու, Քյոռքալանլու, Կարաղաջ, Քուրդ-Խալաջ, Ային Դուրդ-ղալա Չիբիկլու, Սևաքար, Միսիթան Դարաղաջ-Բուլադի, Կարի-Ղչլաղ Խանլավա Մահմուտտու և Հաջիլու: Իսկ Ջանգեզուրի հայկական գործառնալը նույն ժամանակ մաքրում է իր սահմանին ճեղքակա Հաջարուի ավերին ընկած բուրքական մյուս գյուղերը: Որպեսզի պարզ լինի, թե որքան ոգևորված էր տեղական հայ գյուղացիությունը Բարգուշատի ռազմական գործողությամբ բավական է ասել, որ նա արհամարհելով թշնամու քանակն և դիրքերի ամրությունը, նվազածությամբ էր անցնում դիրքից դիրք և համեմատ առանց զոհերի թշնամուն վանում իր ամրություններից: Իսկ թե որչափ սարսափ էր ազդում թշնամուն հրամանատար Նժդեհի ներկայությունն և թե ինչպիսի հմայք ուներ նա իր զինվորների աչքում՝ բավական է հիշել, որ այդ կռվի ընթացքում Խալաջ գյուղի անառիկ դիրքերը երբ հայ զինվորները հնարավորություն չունեցան գրոհ տալով գրավել ու մուրը վրա հասնելուն պատճառով կամենում էին դիրքերը թողնել հրամանատար Նժդեհին ինքն անձամբ, անվեհերության ու անձնագոհության օրինակ հանդիսանալով, միայն 10 հեծյալ զինվորներով հարձակման է դիմում՝ թշնամուն կորիզուխ փախստյան մատնում և դիրքը գրավում: Այդ ժամանակ տեղի է ունենում և Գողթանի մեծ մասի հայ ժողովրդի տրագեդիան. Նախիջևանի, Օրդուբաթի և շրջակայքի ամբողջ թրքությունը նենգամտորեն խաբելով թե տեղական և թե իրանց տեղերը նոր վերադարձած հայ գյուղացիությանը, նախ զինաթափ են անում և ապա շրջապատելով գյուղերը՝ կրակի են մատնում և սրի ճարակ դարձնում տղամարդկանց, կանանց և երեխաներին:

Այդ հետամնաց շրջանների օազիս Ազուլիսներն ևս զոհ են գնում թշնամու վայրագության: Այդ լուրը կայծակի արագությամբ տարածվում է ամենուրեք, ինչպես նաև՝ Ղափան: Սոսկալի բոթի ազդեցությունն այնքան ուժեղ է լինում, որ Սպարապետ Նժդեհը վճռում է մի բուռն քաջերով արյան վրեժ լուծել տմարդի թշնամուց և այդ բոթը հայտնում է զինվորության 1920թ. փետրվարի 12-ին N 21 հրամանով

«Ձինակիցներ, հասել է օրը՝ անօրինակ հերոսությամբ ավելի քան երկու տարի ամենադժնդակ պայմաններում Ջանգեզուրի նախադուռը պաշտպանող այն մի բուռն ժողովրդի փրկության օրը, այն քաջանուն ժողովրդի որն ամիսներ առաջ խորապես գիտակցելով իր

շրջանի ռազմագիտական խոշոր նշանակությունը բաց ճակատ հայտնեց մեզ իր որոշումը. «Գողթանը կմեռնի, բայց չի հաղթի»:

Հասել է ժամը, երբ երկու մեծ ու ընտիր Հայորդիների՝ Աստվածաշունչ Քրիստափորի և Ռոստոմի արյունաներկ ու սրբապղծված ծննդավայրը, երբեմնի չքնադ Ագուլիսները պիտ վերագրավվեն, պիտ վերականգնվեն իրենց շենությամբ ու բարոյական մեծությամբ:

Լսե՞ք, հնչել է ժամը զինակիցներ երբ վախկոտ Էդիֆների տմարդի սրից զարնված հազարավոր անթաղ մեռելներ ձեզնից արդար ու արյունոտ հատուցումն են պահանջում

Լսե՞ք և հարյուրավոր գերված ու լլկված հայ կանանց որոնք ձեր գոռ արշավի և ուռաների սպասումով ձեր արյան և ավերվածության են կանչում»...

Չինվորությունը հավատում է իր հրամանատարին գիտե նրա վճռականությունը և համոզված է որ նրա հետ միշտ հաղթանակով կվերադառնա և նա խորը գիտակցությամբ հետևում է Նժդեհին իր արդար ցասման վրեժը լուծելու: 1920թ. մարտի 15-ին N 22 հրամանով դիմելով Ղափան-Գենվազ-Գողթանի ռազմական ուժերին՝ Սպարապետ Նժդեհին իմիջիայլոց գրում է. «Երկրորդ տարին է՝ ինչ որ թշնամին անվերջ կրկնում է իր հարձակումները Չանգեզուրի նախադուռը պաշտպանող Գողթանի մի բուռն ժողովրդի վրա՝ այդ շրջանին տեր դառնալու ու այդպիսով միացնելու երկու մուսուլման երկիրները

Աղբբեջանն ու Տաճկաստանը: Տանակերտը տեղահանելուց հետո թշնամին աննախընթաց բարբարոսությամբ սրի ու հրի մատնեց Գողթանի կուլտուրական փառքը կազմող Ագուլիսների լույս ազգաբնակչությանը: Գողթանը ցայսօր ամենադժնդակ պայմաններում իր վրա է քաշել, զբաղեցրել, դիմագրավել Նախիջևանի և Օրդուբաթի շրջանների բովանդակ մուսուլման ուժերին և այսպիսով ապահովել Չանգեզուրը թիկունքից: Այժմ նա թշնամու համառորեն կրկնվող հարձակումներից տնտեսապես ու հասարակականապես ծայր աստիճան քայքայված իր վերջին համագումարում որոշել է՝ «կամ կռիվ կամ գաղթ»...

1920թ. մարտի 20-ին սկսվում է վրիժառության արշավանքը դեպի Օրդուբաթ, որ հրամանատարն ինքն անվանել էր «պատանեկրաց» արշավանք՝ ներշնչելով զինվորության այն գաղափարը, թե իրանք գնում են մեռնելու իրանց հարազատների լլկանքների համար՝ Ուստի, ամեն զինվոր պիտի գիտակցե, որ ինքը տանում է իր հետ իր պատանը, որ ինքը պիտի գոհվի: Սպարապետ Նժդեհի զորամասը պիտի անցներ Սյունյաց երկրի ամենաբարձր լեռան՝ Ղափուջուղի կատարով, որ 12.653 ոտնաչափ բարձր է ծովի մակերևույթից և ամբողջովին ձյունով ծածկված Ղժվար էր վերելքը՝ փոթորիկ խոր ձյուն և ոչ մի արահետ

Չնայելով այդ դժվարության աննկարագրելի հերոսությամբ հայ զինվորությունն անցնում է Ղափաջուղի գագաթով և հարձակվում Օրդուբաթի շրջանի թալանով և սպանությամբ հղփացած թուրքերի գյուղերի վրա: 1920թ. հունիսի 13-ին N 23 հրամանով Ապարապետ Նժդեհը կամենալով ոգևորել ղափանցիներին և վառ պահել նրանց մեջ քաջության և արիության ոգին՝ այդ գործողության առթիվ իմիջի այլոց գրում է «Ղափանցիներ ենք մենք և դա նշանակում է որ են մենք էինք որ մահաշունչ ծմեռվա կեսին, երբ քաղցած և թափառ գայլն անգամ սարսափով էր մոտենում Ղափուջուղին՝ Ղափանի այդ փոքր Մասսին, մենք մեր հոգու կրակով հալեցրինք ծյունները, մեղմացրինք բնության արհավիրքը և Գողթան իջանք՝ հանում Քրիստափորի սրտից զարնված նվիրական ծննդավայրի թշնամու գյուղերի սև ու թանձր ծուխը բարձրացնելու»:

Մի անօրինակ ոգևորությամբ և վրեժի թույնով լցված՝ թշնամու 14 գյուղերն ավերում են և հողի հետ հավասարեցնում: Նախիջևանի թուրքերը չորս ժանր թնդանոթներով օգնության են գալիս, բայց հենց առաջին ընդհարման ջարդվում և հետ են նահանջում: Նժդեհն իր հերոսներով առաջ է շարժվում Օրդուբաթի վրա: Բայց այդ ժամանակ նա տեղեկություն է ստանում, որ Պրինց Ղաջարն ադրբեջանյան զորքերով և թնդանոթներով Կարյազինի և Ջիբրայիլի կողմից գալով շրջապատել է Ղափանի Ձեյվա գյուղը. հրամանատարի արևելյան ճակատը վտանգվում է: Օրդուբաթի գործողությունները դադարեցնելով՝ Ապարապետ Նժդեհը շտապում է Ղափանին օգնության. մարտի 22-ին նա հասնում է կռվի վայրը: Ղափանին օգնության է հասնում և Ջանգեզուրի զորամասը, որն անցնելով թշնամու թիկունքն՝ երեկոյան դեմ սկսում է թշնամու դիրքերի ոմբակոծումն և առավոտյան ընդհանուր հարձակման դիմելով՝ սոսկալի ջարդ են տալիս ադրբեջանյան զորամասերին և հետ փախցնում դեպի Ջիբրայիլ: Բայց անընդհատ կռիվները դորանով չեն վերջանում. 1920թ. մարտի 23-ին սկսվում են նոր կռիվներ Ղարաբաղում: Ադրբեջանի իշխանությունը կամենում էր զինաթափ անել ժողովրդին, կլանել Ղարաբաղն և ապա Ջանգեզուրի անընկճելի կամքը խորտակել:

Թե Ղարաբաղում և թե Ջանգեզուրում միաժամանակ սկսվում են երկարատև կռիվները: Այդ կռիվներից էր կախված հայության վերոհիշյալ երկու հատվածի լինել չլինելու խնդիրը: Ձենքի ուժով վճռվում էր Ղարաբաղի և Ջանգեզուրի հարցը: Ադրբեջանի կառավարությունն իր բոլոր կանոնավոր ուժերը և կամավորական խմբերն ուղղել էր Ղարաբաղի դեմ, միաժամանակ ուղքի բարձրացրել նաև Բարգուշատի և Հաքյարուի շրջանի թրքությունը Ջանգեզուրի դեմ իսկ հայկական զորքը կազմում էր միայն զինված գյուղացիությունը Գնդապետ Նժդեհին վերապահված էր իր ծրագրի վերջին, բայց և խիստ դժվարին խնդրի լուծումը, ուր նա ցույց տվեց իր ռազմական

Նա հայակեր Գեղվա և Օխշու ձորերը արյունամերկ Բարզո շատն ու Հաքյարուն միանգամայն մաքրեց ավազակաբարո և նեճ թշնամիներից, արինց Ղաջարի և բազմաթիվ տաճիկ փաշաների գորքերը ջարդեց Ղափանի և Գենվազի դռների մոտ և կորիզուկս հետ փախցրեց:¹ Հայրենի երկրին ցույց տված այս մեծ և անզնեատելի ծառայության համար Ղափանի, Գենվազի և Գողթանի հայ գյուղացի-ուսյունն երախտագիտական ջերմ զգացմունքով կապվեց իր հերոսի հետ, սիրեց նրան և բարձր գնահատելով նրա մի քանի տարվա չար քաշ ծառայությունը՝ 1920թ. օգոստոսի 25-ին, երբ այդ շրջաններն իսպառ կտրվել էին դոսի աշխարհից և բուլշևիկյան բանդաները բուն էին դրել Ջանգեզուրում ու Միսիանում, ամբողջ ժողովուրդն և զինվորությունը հավաքվեցին Ղափանի Կավարտ գյուղի եկեղեցին, ուր տեղի ունեցավ եկեղեցական հանդես և ուր ամբողջ զինվորությունը ժողովրդական ներկայացուցիչների հետ ուխտեցին պատմական մեծ հերոս Ղավիթ Բեկի և Մխիթար Սպարապետի անունով հավատարիմ մնալ հայրենի երկրի ազատության իրանց հրամանատար Նժդեհին և կռվել մինչև վերջին շունչը: Այդ պատմական ընթացքն ընդհատելու Նժդեհի մեջքը կապեցին նաև կարմիր գոտի և բուլշևիկյան հանդիսականների ցնծության տարափի տակ կոչեցին նրան իրանց Սպարապետ Այդ պատմական խորհրդավոր ուխտին զնդապետ Նժդեհն իրեն հատուկ կրակոտ ճառով մի քանի պատվերներ տվավ իր զինվորներին որոնք իբրև սկզբունք պիտի ծառայեին հայրենի երկրի ազատության համար վարած կռիվների ընթացքում.

«1. Քաջերին, միայն քաջերին է լսում և զորավիգում պատե ռազմների քմահաճ Աստվածը...

2. Նա է միշտ հաղթում, որն արդեն հաղթել է իրեն այսինքն որն իր մեջ մեռցնելու չափ թուլացրել է մահվան երկյուղը:

3. Նրանք, որոնք ծառայում են բարձր հայրենասիրությունից դրդված միայն նրանք են ավելացնում իրանց զենքի և ցեղի փառքը:

տաղանդը, իր հեռատեսությունն և կազմակերպչական բարձր ոգին: Նա որոշեց մաքրել Բարզուշատի շրջանը և մարտի 23-ից դիմելով հարձակման ամենայն հաջողությամբ իրագործեց իր ծրագիրը. գրավեց թուրքական մոտ 80-100 գյուղեր և միանգամից մաքրեց Բարզուշատի և Արաքսի խառնարանից մինչև Օրդուբաթի շրջանը:

Սյապիտով, ապահովելով Ղափանի, Գենվազի և Գողթանի հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը ստեղծեց նորա համար խաղաղ և հանգիստ կյանք: Ահա՛, այսքան մեծ ջանքերի և անձնագոհության շնորհիվ է, որ ժողովուրդն սկսեց ազատ շնչել և պաշտել իր հերոսին: Հենց այդ պատճառով է, որ Սպարապետ Նժդեհն իրան իրավունք է համարում Ղափանցիներին հանդիմանելու և նրանց ապերախտ ու երախտամոռ անվանելու:

¹ Խուստուպյան կանչեր Գողթու 1921 էջ 18 19

4 Քեզ վրա նայիր որպես դատապարտվածի որը հանուն իր երկրի ու ժողովրդի պաշտպանության պիտ միշտ պատրաստ լինի ընդունելու մահը:

5. Եղիր խիզախ, խստաբարո ու չարքաշ...»¹

Այս պատվիրաններն իրան Ապարապետի կենդանի օրինակը մինչև իսկ դաստիարակչական ոգով կազմած գինվորական հրամաններն ու կոչերը խոր տպավորություն են թողնում ժողովրդի վրա Շնորհիվ այդ ուղղությամբ առաջ տարած գերմարդկային գործունեության՝ Ապարապետ Նժդեհը, իրոք փրկում է երկիրը վերահաս վտանգից: Բայց հարկավոր էր, որ Ղափանը ևս ճաշակե դառնության բաժակը, չէ՞ որ ամբողջ երեք տարի է նա ռուսի երես չէ տեսել, չէ՞ որ նա ստիպված է եղել մեն մենակ չորս կողմից շրջապատված թշնամիներով միշտ զենքը ձեռքին պատրաստ լինել դիրքերում և այդ կյանքը նրան հոգնեցրել է, իսկ եկող ռուսը խոստանում է նրան խաղաղություն, տալիս է նրան ամեն բարիք և ազգերի համերաշխություն, չէ՞ որ, ըստ հայ գյուղացու հասկացողության՝ մախկին ռուսն է գալիս:

Ապարապետ Նժդեհը հեռատեսությամբ գիտեր, որ Չանգեզուրն ու Սիսիանն ընկնելուց հետո, անշուշտ, Ղափանի մի բուռն հայ գյուղացիությունը չէ կարող ուժեղ կերպով մինչև վերջին շունչը պաշտպանել իր անկախությունն երեք թշնամու միացյալ ուժերի դեմ: Ուստի դեռ 1920թ. օգոստոսի 23-ին, 25-ին և 30-ին NN 24, 25, 26 իր պաշտոնական զեկուցումների մեջ՝ ուղղած Հայաստանի Հանրապետության գինվորական մախարարին (պատճենը ներքին և արտաքին գործոց մախարարության) խնդրելով հայ կանոնավոր զորքերի շուտափույթ օգնությունը, նա իմիջիայլոց գրում է «Բաքվի մի քանի տասնյակ հայերով կաշառված Ադրբեջանը տեր դարձավ Ղարաբաղին: Սովետական Ղարաբաղը վարակեց Բուև Չանգեզուրի որոշ գյուղերն և թշնամու թալանի տենչով խելագարված սրիկայախմբերը գրեթե առանց կռվի մտան Գորիս: Վերջինս իր հերթին արագացրեց Սիսիանի անկումը: Ու այսօր այդ բոլորը՝ և Ադրբեջան, և՛ Ղարաբաղ, և բուն Չանգեզուր ոտքի հանած իր բովանդակ ուժերը՝ և՛ զորք, և՛ տեղոր և թղթադրամների դեզեր, կաշվից դուրս են գալիս ընկնելու իրենց դեմ ծառացած Ղափանը, Գենվազը, Բաղաբերդն և Գողթանը: Այդ շրջանների ապստամբ ժողովուրդը որ Ադրբեջանի հետ մեկից ավելի անգամ է չափվել և միշտ էլ հաղթել՝ ջերմ հավատով սպասում է Հայաստանի զորքերի շուտափույթ երևալուն իր երկրի սահմաններում

Ուշացնել օգնությունը՝ նշանակում է թուլացնել սպասող ազգաբնակչության մարտական կորովն ու հավատն և հեշտացնել թշնամու գործը, որն աննախընթաց արագությամբ առաջ է տանում բռնությամբ սովետականացած հայ տարրի գինաթափումը, գլխատումն ու տնտեսական քայքայումը

Մեն մենակ մնալով անհավասար կռվի մեջ իր վերջին փամփուշտը կրակելուց հետո տեղի տվավ բուլշևիկներին: Միմիայն գիտակից զինվորության մի մասը Սպարապետի հետ քաշվեց դեպի Խուստուպ լեռը, ուր նա սպասեց հայրենի երկրի կանչին:

Այդ հերոսական պայքարի և կռվի առթիվ 1920թ. սեպտեմբերի 11-ին N 35 պաշտոնական գեկուցումն ուղղելով Հայաստանի Հանրապետության զինվորական նախարարին և Սպարապետ Նազարբեկյանին՝ նա գրում է.

«Աշխարհից կտրված հերոսական Ղափանն իր 70 օրվա կռիվներում՝ վառելով իր վերջին փամփուշտը, ռազմական ուժերի մի մասով քաշվեց լեռները: Թշնամին ինձ վրա հարձակվեց միաժամանակ և՛ Չեյվայից, և՛ Ինջաբեյլից, և՛ Գեղվա ձորից, և՛ Գյազբեյլից՝

Մեծամասնականներն ուղքի էին հանել Բարգուշատի Հաքյաբուսի Այրիջայի և Գեղվա ձորի բովանդակ ուժերը Օգնական ուժեր էին բերել և Ջիբրայիլից: Առաջնորդի դեր էր կատարում Ջանգեզուրի ժողովրդի տականքը՝ հայ դավաճանների մի ամբողջ լեգեոն:

Չեյվայի կատաղի կռիվներում, որտեղ ղափանցի ռազմիկը դուրս բերեց իր անընկճելի հոգու ամբողջ թափը, թշնամին կրեց մեծ կորուստ: Սեպտեմբերի 3-ի կռվում Ջալին-գյուլի մոտ ոչնչացրել ենք մեծամասնականների մի ամբողջ դիվիզիոն: Թշնամին առաջանում է թղթադրամների դեզեր ցրելով, կաշառելով բոլոր տեսակի թափ քփուկներին: Թշնամու գորքերի շարքերը խտացնում են պրոֆեսիոնալ դավաճանները, շանտաժիստները, գրայանահատները, լրտեսները, գողերն, ավազակները, սեղմ ասած՝ հայ ցեղի բոլոր տեսակի տականքներն ու քրեական տիպերը:

Թշնամին չի ճանաչում ո՛չ սրբությունն ոչ սկզբունք: Կնոջը ձերբակալում են, որպեսզի մատնի ամուսնուն, որդուն ահաբեկում, որ հոր տեղն ասի: Գյուղերը կտրված են իրարից: Չերեզվիչայկաները որոնց առաջ նսեմանում են ցարական և սուլթանական ժանդարմական տիրապետչակ վարչությունները, մութ սպանությունները թալանն ու կողոպուտը դարձել են սովորական երևույթ»...

Ղափանի ժողովրդի այդ անսպասելի քայլը խորը խոցեց Սպարապետի հայրենասիրությունը, որին պարտական էին ղափանցիք իրենց կյանքի և գույքի գոյությամբ և որին անվանում էին «Աժդահա փաշա», «Երկրորդ Ղափիթ Բեկ», «Ամեն կռվում Փաղիշահ»:

Որ ժողովուրդը խաբված էր բուլշևիկների պրոպագանդայի և խարդախ գործունեության շնորհիվ, այդ շատ լավ էր ըմբռնում Սպարապետ Նժդեհը, բայց որ նա հլու հպատակ մնալով կարմիրների ստրուկ լուծին կարող է վերջնականապես կործանվել և ավերվել, ահա այդ միտքն էր, որ տանջում էր նրան. չէ՞ որ նա իր կյանքն էր մաշել այդ ժողովրդի համար, ամենանեղ օրերին նա է օգնության հասել, ինչու է այժմ իր երեսը թեքել դեպի բուլշևիզմը: Ժողովրդի այդ ապերախտ վարմունքը ստիպում է Սպարապետին նրանց երեսով տալ

իրանց տմարդի արաքը, 1920թ. սեպտեմբերի 12-ին ուղղելով նրանց իր առաջին գրությունը,¹ իմիջիայլոց ասում է. «Քո մի մասի վախկոտության և դավաճանության շնորհիվ թշնամին մտավ Ղափան և քո ռազմական ուժերի ամենաքաջանուն և խիզախ մասը կրակելով իր վերջին փամփուշտը, քաշվեց լեռները... Ձգույշ, Ղափան, մեռցնելով իմ հավատը դեպ քո հավատարմությունը, դու քեզ ես մեռցնում. Ա՛հ ո՛ւր եք, ուր, իմ երեկվա ուխտած զինվորներ Գեղվաձորյան հպարտ փառակիցներ: Ձորերում, վա՛յ ձեզ, սիրտս արյունոտվում է Ձեզ համար, տեսնելով թե ինչպես թշնամին անփառունակ գերեզման է փորում»... Հիշեցնելով նրանց Դավիթբեկյան ուխտը նույն թվի սեպտեմբերի 15-ին գրում է. «Ես Դավիթբեկյան ուխտին հավատարիմ շարունակում եմ մնալ լեռներում անպերի տակ, մենակ վիրավոր ու ավելի հպարտ, քան էի՝

Այժմ, ե՛ս լիզում եմ քո և թշնամու ինձ հասցրած վերքերը և սպասում քեզնից խնդրածս վարպետին որ գա, շուտ գա կոպիտ գործիքներով հանելու իմ աչքերը,² կուրացնելու ինձ որ չտեսնեմ քո գլխին գալիք գուլումները, քո խայտառակությունը, քո բարոյական անկումը: Դու ուզեցիր այն, ինչ ուզում էր թշնամին: Դու քո վիրավոր սրտից զարնված հրամանատարին ես դավաճանել, մենակ թողել»³... Վշտի անհուն կսկծից խայթված, ժողովրդի ապերախտության սև ուրվականը միշտ աչքի առաջ, դառնացած հոգով նա բացականցում է (1920թ. սեպտեմբերի 17-ին). «Ժողովուրդ, քեզ հետ խոսողը քո հրամանատարն է քո վիրավոր, սրտից զարնված հրամանատարը, որի սուրը վաղուց է ինչ հանուն քո ինքնապաշտպանության չի հանգստացել պատյանում...

Ժողովուրդ, այսօր, երբ ադրբեջանյան չեկերով կաշառված բռլչևիկ» կոչված սրիկաները, քո գերեզմանափորները կեղծ ու պատիր խոստումներով քո դուռն են բախում և քո ձեռքով պղծած աղ ու հացիդ սպասում՝ դու դավաճանաբար լքում ես մենակ թողնում քո վիրավոր հրամանատարին...

Ապերախտ ժողովուրդ: Քանի քանի անգամ քո կինն ու երեխան կռիվներից վերադառնալիս փաթաթվել են ձիանս վզով, համբուրել ձեռներս «փաշա ջան» կանչել: Քանի՜ քանի՜ անգամ փրկել եմ քեզ վերահաս վտանգից կոտորածից՝ Ներում եմ թեև պատմությունը չի ների քեզ»⁴...

¹ Խուստուպյան կանչեր, Գորիս, 1921, էջ 17:

² Ադրբեջանի կառավարությունը գաղտնի գործակալների միջոցով ձգտում էր դավաճանությամբ սպանել տալ Սպարապետ Նժդեհին որի սպանության համար խոստացել էր տալ երեք միլիոն ռուբլի

³ Խուստուպյան կանչեր, Գորիս, 1921, էջ 17-18:

⁴ Խուստուպյան կանչեր, Գորիս, 1921, էջ 18-19

Թշնամին Ղափանին տիրելուց հետո ամբողջ սեպտեմբեր ամսվա ընթացքում շարունակում է իր հարձակումները Քենվազի վրա բայց այստեղ նա հանդիպում է գրանիտե սրտերի և պողպատե կամքի: Քենվազը, որ բովանդակում է ընդամենը 11 հայ գյուղ, մի անօրի նակ վճռականությամբ և սրտի անհուն կորովով որոշում է չար օրի նակ չհանդիսանալ և պատմության անողոր րատավճռի առաջ իրազուխը չթեքել, թեև՝ անօգնական մնացած անհավասար կռվի դաշտում և ամեն կողմից պարփակված կարմիր գինվորներով՝ հայ դավաճաններով և թշնամի այլ տարրերով, բայց և այնպես՝ նա միացավ խտացրեց իր շարքերն և խիզախ քաջությամբ դուրս եկավ թշնամու դեմ՝ իր հայրենի օջախը, իր արյան գնով ձեռք բերած ազատությունը պաշտպանելու: Քենվազն իր քաջերի երիտասարդության անձնագր հույան շնորհիվ ազատ մնաց կարմիր բաշիբոզուկներից, նա մահացու հարված տվավ թշնամուն, հետ վանեց նրան իր սահմաններից և նոր ազատության օրրան հանդիսանալով՝ ուռճացավ, ծափալվեց և ապագա ազատ Լեռնա-Ղայաստանի փարոսն հանդիսացավ Բուլշևիկները կոր ի գլուխ հետ դարձան անմոռանալի Քենվազի սահմաններից, այլևս այնտեղ ուր չդնելու հուսահատությամբ: Այդ առթիվ հրամանատար Լժդեի հոկտեմբերի 5-ին գրում է Ղափանցիներին՝ կամե նալով նրանց ևս գիտակցության բերել.

«Այն օրը քո անկման այն սև օրին Ղափան քուն ու դադար կորցրած, քար ու սար ընկած, մի քանի հարյուր ինձ հավատարիմ մնացած զենվազցիներով կուրծք եմ տալիս թշնամու գերադաս ուժերին ու քո կորցրած փառքի փոխարեն նորն ստեղծում քո երկրի, քո անունի համար:

Ղափան գղջո՞ւմ ես արարքիդ համար. ի՞նչ եղավ Ադրբեջանին ծախված հայ սրիկաների քեզ խոստացած արքայությունը:

Խեղճ ժողովուրդ, ասում են արդեն զինաթափել գլխատել տնտեսապես քայքայել են քեզ...

Ուտքի՛, խաբված ժողովուրդ, ուտքի՛ ել փրկությունդ մոտ է ուտքի զենքը ձեռքիդ, կազմ ու սպարաստ ինձ սպասիր Խուստուպից»¹

Բուլշևիկների առաջ բերած տնտեսական կատարյալ քայքայումը, անվերջ բռնազրավումները, ժողովրդի իրավագուրկ ու ստրուկ փիճակը, խոստացած արքայության փոխարեն երկիրը դժոխքի փոխակերպելը տաճիկ ասկյարների մի գունդ կարմիր անվան տակ Ձանգեզուր ժամանելն և հայկական գյուղերում կատարած առևանգումները, բարբարոսություններն ու թալանը միանգամայն համոզում են Ղափանի ժողովրդին, որ իրանք չարաչար խաբված են:

Փոխանակ դրսից որևէ մթերք մտցնելու՝ ռուս, հայ և թուրք զինվորներն ու գործիչները ընդհակառակն, իրանք էին ծանրացել ժողովրդի վրա կերակրվում և հազնվում էին նրա հաշվին, և եթե որևէ մեկը

¹ Խուստուպյան կանչեր Գորիս 1921 էջ 20

համարձակվեր բողոքել այդ բուրդի դեմ նա կնկատվեր որպես հա կահեղափոխական և գնդակահար կլիներ, լրտեսների թիվն այնքան շատ էր, որ քաղաքացիներից և գյուղացիներից ոչ մեկը կարժեք իրավունք էլ չուներ հակաբուլշևիկյան որևէ միտք որոնելու։¹

Ղափանի ազգաբնակչությունը նոր է զգում, որ ինքը կորստյան անդունդի ծայրին է, բայց ազատության հույսը չէ կորցնում: Պենվազը կուրծքը դեմ տված՝ իր հրամանատար Նժդեհի առաջնորդությամբ կռվեց մինչև վերջին բուպեն և պահպանեց իր հայրենի երկիրը, իր անկախությունն և կործանումից ազատվեց: Բավական է մի ուժեղ ժողովրդական պոռթկում և Ղափանը ևս կազատվի անկոչ ու ծրիակներ բուլշևիկներից: Այդ հույսն և ազատության գաղափարը ներշնչում էր նրան իր սիրելի հերոս Նժդեհը, որը տարիների ընթացքում պաշտպա նել էր Ղափանի կյանքը, գույքը ու պատիվը, որը չէ խնայել մինչև իսկ իր անձը զոհաբերելու նրա երջանկության համար: Ղափանի ամբողջ ազգաբնակչությունն իր հայացքը դարձրեց դեպի խուստուպ, ազա տության ու անկախության գաղափարը մարմնացնող այդ լեռան և հրամանատար Նժդեհը մոռացության տալով այդ նույն ժողովրդի ապերախտ քայլը, բավական համարելով նրա քամած դառնության բաժակը՝ եկավ խուստուպից դեպի Ղափան ազատության համար վարած կռվին մեն մենակ ջթողնելով ժողովրդին. նրան հետևեցին իր հավատարիմ զինակիցները, որոնք նույն ժողովրդի ազատության սի րով վառված, մոռացության տալով անձնական ամեն վայելք, նետվել էին քաղաքացիական կռվի ասպարեզը, կամենալով հայ գյուղացիու թյան փրկության համար նվեր բերել ինչ որ անկապտելի, ինչ որ անգնահատելի էր մնացել իրանց համար՝ իրանց կյանքը:

Խուստուպում և Պենվազում պատսպարված Ղափանի փորձ ված և ժողովրդասեր վաշտապետներն ու զինվորներն անցան հայրե նի գյուղերը, հրամանատար Նժդեհը մտավ հանքերի շրջանը: Բուլշև իկները Ղափանի զանազան ռազմական կետերն ամրացրել էին 251 ռդ, 252-րդ հրացանաձիգ և կռվկասյան երկրորդ գնդերով, որոնցից միայն 400 հոգի գտնվում էին Յանքերի շրջակա գյուղերում: Նրանք նախորոք իմանում էին այդ ապստամբության մասին, թե իրանց գոր ծակալների միջոցով և թե իրանց գործելակերպից եզրակացնելով, որ գյուղացիությունն այլևս չի կարող իրանց ռեժիմը տանել, ուստի չբա վականանալով գաղտնի հրաման տալու իրանց զորամասերին ապս տամբությունն ամենադաժան կերպով ծնշելու, միևնույն ժամանակ դիմում են իրանց սիրած միջոցին՝ հրամաններ թուցիկներ և կոչեր

¹ Տես փաստաթղթերի բաժին. «Ձանգեզուրի, Նախիջևանի և Ղարա քաղի շրջաններին: Չրաման դիվիզիայի պետի», ուր բառացի հիշված է 8 մարդկանց անուններ, որոնք 1920թ. հոկտեմբերի 16-ին գնդակա հարվել են Գորիսի բանտում՝ «կոմունիստների ծնողներին ծաղրելու համար»

տպագրելով ցրում են գյուղացիության մեջ, ուր կա թե՛ կոտորածի սպառնալիք, թե՛ խաբեբայություն և թե՛ անվերջ խոստումներ: ¹

Ապստամբությունը բռնկվում է հոկտեմբերի 19-ին 1920թ միաժամանակ Ղափանի հինգ գյուղերում՝ Գյուտկում, Վաչագան, Ճակատեն, Կափարտ և Բարաբաթում: Թեև բոլշևիկները թե ռազմական ուժով և թե զենքի տեսակով առավելապես զերազանցում էին ապստամբներից, բայց ամենուրեք շրջապատվելով՝ մեծամասամբ գերի են ընկնում կամ դիաթավալ փռվում շատ քչերին է հաջողվում փախչել դեպի Ջանգեզուր: Ղափանն ազատվում է բոլշևիկների բանդաներից ամենուրեք ուրախություն է, ժողովուրդը ցնծում է և խուռն բազմությամբ ու ցույցերով ընդունում իր ազատարար հերոս Նժդեհին:

Ազատատենց Գենվազի ու Գողթանի Ղափթեկյան խմբերի և գայլաձաշտերի պանծալի գործերն արծագանք են տալիս Լեոնա Դայաստանի բոլոր շրջաններում: Քաջանուն և խիզախ Սիսիանն, որը մեն մենակ մնացած մի քանի դավաճան և վատահոգի հայերի շնորհիվ ակամայից իր գլուխն էր թեքել բոլշևիկ խաբեբաների լծի տակ, ուշքի եկավ սարսափելի կոշմարից: Նա էլ տնտեսապես քայքայվել և կեղեքվել էր, ուստի իր հայացքն է դարձնում դեպի Ղափանի հերոսը, կապ հաստատելով նրա հետ՝ սպասում է ապստամբության օրվա պայքարին: Սիսիանի ժողովրդի ճնշված սրտի խոր հեծկլտանքը հասնում է նաև Ղարալագյազում պատասյարված բնիկ սիսիանցի քաջ սպա և բոլորին սիրելի Պողոս Տեր-Ղավթյանին և նրա շուրջը հավաքված հարազատ զինվորության՝ որոնք հոկտեմբերի 5-ին ի մի խմբվելով Ջուլում՝ որոշում են կապ հաստատելով հրամանատար Նժդեհի, Սիսիանի և Ջանգեզուրի բնակչության հետ՝ ապստամբության դրոշմ բարձրացնել: Դեպքերն արագացնում են այդ ապստամբությունն ևս որովհետև սիսիանցիք իրազեկ են լինում, որ Գորիսի ռևկոմի (հեղափոխական կոմիտեի) կարգադրությամբ շուտով պետք է պատանդներ վերցնեին Սիսիանի գյուղերից և ապա սկսեին նոր բռնագրավումներ որից հետո զինակոչի պիտի ենթարկեին ամբողջ երիտասարդությունը: ²

Այդ տեղեկությունները ստանալուց հետո Պողոս Տեր-Ղավթյանը մի քանի վստահելի մարդկանց թուզիկներով ուղարկում է Սիսիանի գյուղերը՝ ժողովրդի տրամադրության հետ մոտ ծանոթանալու և զինվորությունը կազմակերպելու: Տեղեկություն ստանալով, որ Սպարապետ Նժդեհի առաջնորդությամբ Ղափանն ազատագրված է և որ

¹ Տես փաստաթղթերի բաժին N Դիվիզիայի պետի հրաման 1920թ հոկտեմբերի 16 և 17-ին, Ջանգեզուրի ռևկոմի կոչ հոկտեմբերի 21-ին և N Դիվիզիայի կարմիր զինվորների կոչ հոկտեմբերի 26-ին:

² Այդ տեղեկությունները քաղված են Ղարաքիլիսայում սպանված պաշտոնյա կոմունիստ Քրիստափոր Ակրտչյանի մոտ գտնված գաղտնի գրությունից

Միսիանի գինվորությունը կազմ պատրաստ է Տեր-Պավթյանն հոկտեմբերի 12-ին 200 գինվորի հետ անցնում է Միսիանի գյուղերը, ուր նրան միանում է տեղական ամբողջ գինվորությունը: Սկսվում է ասլստամբությունը՝ ամենուրեք, ուր բուլշևիկ գինվորներ կամ հեղափոխական կոմիտեներ կային՝ կամ ձերբակալվում են կամ խուճապի մատնված՝ փախչում Գորիս: Մինչև հոկտեմբերի 14-ը մաքրված է ամբողջ Միսիանը

Այդ ապստամբությունները հանկարծակի են բերում Գորիս և Շուշի գտնվող բուլշևիկ հրամանատարությանը և կոմիսարներին: 28-րդ դիվիզիայի հրամանատար Նեստերովսկին իր նույն թվի հոկտեմբերի 14-ին N 29 Շուշուց գրած հրամանով խիստ պատվիրում է ոչ մի ապստամբի չխնայել, հողի հետ հավասարեցնել գյուղերը և տղամարդկանց, կանանց ու երեխաներին անգամ կոտորել և արյան ծով դարձնել երկիրը: Կարգադրում է 83-րդ բրիգադայի հրամանատարին 248-րդ և 249-րդ գնդերի գինվորներից, որոնք հազուստ ունին,¹ կազմել միացյալ գունդ և 247-րդ հրացանաձիգ գնդի հետ պատրաստել հարվածող բռունցք և հոկտեմբերի 15-ին 16 ժամին կենտրոնանալով Տեղ գյուղում՝ 16-ին վաղ առավոտյան հարձակվել Ձեյվա, Արծվանիկ և Բարաբաթում գյուղերի վրա և գրավել Ղափանը արևելյան կողմից: Թիկունքն ապահովելու համար Տեղ գյուղում ազդեցիկ մարդկանցից՝ կուլակներից, վերցնել 100 պատանդ, և եթե թիկունքից որևէ մեկը գնդակ արձակե՝ բոլորին կոտորել: Վերցնել նաև 84-րդ բրիգադայից լեռնային մարտկոցի մի դասակ (վզվող) և եթե հնարավոր չի լինի օգտագործել հրետանին՝ ուժբակոծել Տեղ գյուղը եթե կարիք զգացվի: Հրամայում է 84-րդ բրիգադայի հրամանատար Սեմենովին 250-րդ և 251-րդ հրացանաձիգ գնդերը ռազմունակ դարձնել և Ղարաքիլիսայի և Բազարչայի կողմից պահակ դնելուց հետո՝ հոկտեմբերի 15-ին Զյոչբեկի լեռնանցքով մտնել Խալաջ գետի և Օխչի ձորի շրջանի գյուղերը՝ բռնելով Ղափանի շրջանի արևմտյան կողմից: Ամենադաժան կերպով խեղդելով ապստամբությունը՝ բաց չթողնել ոչ մի ապստամբ գինվորի գինաթափել ամբողջ ազգաբնակչությունը. Գորիսում՝ վերցնել 100 պատանդ և եթե որևէ մեկը գնդակ արձակե թիկունքից՝ բոլորին էլ հրապարակորեն գնդակահարել, 3-րդ մարտկոցի 1-ին հրետանու մի դասակ դնել Գորիսի դիմաց և ապստամբության դեպքում ուժբակոծել քաղաքը

¹ Հագնելիքի կողմից շատ խղճալի վիճակի մեջ էին բուլշևիկ գինվորները, ոտաբոբիկ, ցնցոտիներով ծածկված կամ կիսամերկ, շատ անգամ անկոչ հյուրի պես նրանք քաղաքացիների տներն էին մտնում և մինչև իսկ հաց մուրում: Գյուղացիներին կանգնեցնում էին փողոցներում՝ կոշիկները և վերարկուները հանում ու հագցնում իրանց գինվորներին:

Այդ զորամասերը մթերքի կողմից ապահովելու համար կարգադրում է Շուշու հեղափոխական կոմիտեի միջոցով գյուղացիներից 200 սայլ հանել և մթերքն ամբարել Ավդալարում: Ձիմվորները սովա մահ չլինելու համար հրամայում է օր ու գիշեր 24 ժամ աշխատել, ի նկատի ունենալով, որ ապստամբված շրջաններում հնարավոր չէ մթերք ձեռք բերել: 28-րդ դիվիզիայի հրամանատարը կրկին անգամ հիշեցնում է 83-րդ և 84-րդ բրիգադաների պետերին, որ նոքա մեկ կողմ թողնելով մարդասիրական զգացմունք ամենադաժան միջոցներով խեղդեն ամեն մի տեսակ ապստամբական շարժում, որպեսզի զգամ բանվորական ուժի թափը: Կռվողներից ոչ մեկին գերի չվերցնել, այլ կոտորել՝ միմիայն ապստամբներին կոտորելով և նրանց ամբողջ ունեցվածքը գրավելով կարելի է «խաղաղությունը վերականգնել»: Եթե հանգամանքները կստիպեն ամբողջ գյուղերը ավերել և հողի հետ հավասարեցնել ապա կանգ չառնել և դորա առաջ՝ հիշելով որ անխնա և դաժան վարմունքը նամանավանդ Կովկասում կտա ցանկալի արդյունք: Ձորքերին կերակրել ապստամբ ժողովրդի հաշվով:¹

Միաժամանակ Ձանգեզուր է ժամանում և հեծյալ զորախմբի հրամանատար հայտնի Կուրոչկինը որ 11-րդ բանակի հերոսն էր հռչակված Ռուսաստանում գործած իր սխրագործության համար՝ մոտ 1400 ձիավորներով:² Գորիսում բոլշևիկները կազմ պատրաստ պահում էին նաև տաճկական մի գունդ հետևակազոր՝ թվով 1200 հոգի՝³ տաճկական նախկին զերիներից կազմած, որ իբր թե ուղարկված է եղել Բաքվից և Գորիսի և Նախիջևանի վրայով Տաճկաստան Քեմա փաշայի մոտ ուղարկելու, բայց հայ և ռուս բոլշևիկները տաճկական այդ մի գունդ ասկյարներին ևս ուղարկում են Ձանգեզուրի և Սիսիանի գյուղերը հայ գյուղացիությանը սարսափեցնելու և ստրկական վիճակի մեջ պահելու: Եվ տաճիկ ասկյարները չեն դավաճանում իրանց պատմական դերին նրանք պղծում են հայի ընտանեկան պատիվը վիրավորում հայի ազգային արժանապատվությունը, ոտի տակ տալիս ամեն սրբություն և թալանում գյուղերը:

Այսպիսով, 28-րդ դիվիզիայի 83-րդ և 84-րդ բրիգադաները միացած Կուրոչկինի հեծելազորի, տաճկական զնդի, հայ դավաճանների և թուրք ավազակախմբերի հետ հոկտեմբերի 15-ին սկսեցին իրանց ռազմական գործողությունները Ղափանի և Սիսիանի դեմ միաժամանակ՝ նպատակ ունենալով մի հարվածով գրավել Սիսիանն և ապա՝ ամեն կողմից շրջապատել Ղափանն և արյան մեջ խեղդել եր

¹ Այս տեղեկությունները քաղված են 84-րդ բրիգադայի շտաբի Ղափանում բռնված 1920թ. հոկտեմբերի 14 N 29 և 35 գաղտնի հրամաններից:

² Ազատ Սյունիք Գորիս, 1921, էջ 41

³ Ազատ Սյունիք, Գորիս, 1921, էջ 41

կու տասնյակ գյուղերից բաղկացած ազգաբնակչությունը. Ուազմական ուժի բազմությամբ, թնդանոթներով ու հարյուրավոր գնդացիներով բուլշևիկները խիստ գերազանցում էին մի բուռն ապստամբների մեկը պիտի կռվեր հիսուսի, հարյուրի դեմ: Պարզ էր, որ կռիվը պիտի լիներ անողոք ու ճակատագրական: Ապստամբները թեև թնդանոթներ և գնդացիներ չունեին, բայց մի առավելություն ունեին, որից զուրկ էին բուլշևիկ հազարավոր բանդաները՝ ապստամբներին ռզևորում էր ազատ հայրենիքի, ազատ ժողովրդի սերը, օժանդակում հայ կինը¹ և 12 տարեկանից սկսած հայ պատանիները: Նրանց առաջնորդում էր տարիներով իրանց հետ տանջված իրանց վշտերին և ուրախության մասնակից անկաշառ և անձնագրի հրամանատար Նժդեհը, իսկ դաշնակից էին Ղափանի սեպաձև ժայռերը, անդնդախոր ձորերն ու մութ գիշերները, որից սարսափում էին անկոչ հյուրերը

Սկսվում են համառ և դաժան կռիվները, որոնք տևում են մինչև նոյեմբերի 15-ը: Բուլշևիկներն արևելյան կողմից արշավելով դեպի Ղափան՝ մի քանի տաք ճակատամարտից հետո նոյեմբերի 17-ին դավաճանությամբ զրավում են Արծվանիկ գյուղը, ուր մնացած բնակչությանն ամբողջովին կոտորում և գյուղն ավերակ են դարձնում, բայց այդ հաջողությունը նրանց շատ թանկ է ստուում: Չրամանատար Նժդեհը կամենալով ծուղակի մեջ ձգել բուլշևիկներին՝ առաջ է քաշում նրանց դեպի Ղափանի հանքերը, ուր գիշերային խիզախ հարձակման դիմելով իր քաջարի Ղավիթբեկյան զորքով և Գայլավաշտերով՝ շրջապատում և փառավոր ջարդ է տալիս նրանց՝ գերի վերցնելով հարյուրավոր գնդացիներ, մեծ ռազմամթերք և մոտ հինգ հարյուր գերի: Ռուսները հետ են նահանջում Բալդուրդանով դեպի Խոտանան: Թե բարոյապես որքան բարձր էր ապստամբների իսկական հեղափոխական Նժդեհն իրանց հեղափոխական հորջորջող բուլշևիկ դիվիզիաների և բրիգադաների արյունարբու հրամանատար Նեստերովներից և Սեմենովներից երևում է նրանից, որ նա խիստ հրաման է արձակում իր զինվորներին ոչ մի ռուս գերու ձեռք չտալ և նրանց կերակրել ու պահպանել իբրև ռազմագերիներ:²

Նա անողոք էր միայն դեպի հայ վարձկան բուլշևիկները, որոնց հետ վարվում էր իբրև հայրենիքի դավաճանների: Բուլշևիկյան գլխավոր ուժերը ջարդելուց հետո հրամանատար Նժդեհն առանց դադար առնելու հետևում է նրանց մնացորդներին: Սարսափի ենթարկված բանդաները, որոնք այս ու այն լեռան փեշին, խոր ձորերում, անտառների մեջ մոլորված իրանց համար փրկության ճանապարհ էին որոնում՝ ոչնչացվում են կամ գերի ընկնում: Ղափանի հանքերն իսպառ

¹ Սպարապետ Նժդեհի նամակը կարմիրների զորամասի պետին (Տես փաստաթղթերի բաժին):

² Լեռնա-Չայաստանի Գլխավոր շտաբի արխիվ, Սպարապետ Նժդեհի իր զորքին ուղղված հրաման N 52 1920թ հոկտեմբերի 23-ին

մաքրվում են կարծիքներից ժողովուրդն ազատվում է սարսափելի կոշմարից¹ և իսկույն հետամուտ լինում ամեն տեղ գյուղերն ամրացնելու որպեսզի թշնամին այլևս չհամարձակվի ներս մտնել:

Ղափանի հերոսական կռիվներն և Սպարապետ Նժդեհի քաջա նուն գործերի արձագանքը տարածվում է ամենուրեք ճնշված գյուղացիությունն իր փրկության միակ հույսը դնում է այդ անձնագործ հայրենասերի անխորտակելի և անհողողող կամքի վրա: Ղափանի շրջանի մոտ գտնվող Ջանգեզուրի գյուղերը մեկ մեկ գլուխ են բարձրացնում. առաջին օրինակը տալիս է Տաթևը, որն ապստամբության դրոշակ է բարձրացնում առաջնորդ ունենալով Սպարապետի նրանց ուղարկած սպաներից մեկին:

Ղեպի Միսիան օգնության գնացած կարմիր նոր զորամասերը հոկտեմբերի 20-21-ին անցնում են Եայջի և Անգեղակոթ, ուր նոքա վերջնագիր են ներկայացնում ապստամբներին անմիջապես զինաթափ լինելու՝ հակառակ դեպքում սպառնում են հիմնահատակ կործանել գյուղերն և բոլորին սրի քաշել: Ապստամբները Պողոս Տեր-Ղավթյանի առաջնորդությամբ այդ վերջնագրին պատասխանում են մի ուժեղ հարձակմամբ Անգեղակոթի վրա ուր ջարդում են նոցա և մինչև Ղարաքիլիսա դուրս վճռում: Միաժամանակ փորձառու և հմուտ սպա Տեր-Ղավթյանը թշնամիներին հանկարծակիի բերելու համար առանձին ճանապարհով առաջ անցնելով՝ տաք ճակատամարտից հետո գրավում է Եայջին, որտեղից անցնում է Տաթև՝ կամենալով միանալ Սպարապետ Նժդեհին: Մալդաշում նա պատահում է բուլչևիկներից որոնց փախստի մատնելուց և բավական ռազմամթերք գրավելուց հետո՝ անցնում է Ղափանի խոտանան գյուղը ուր և միանում է իր Սպարապետին:

Չինվորական նոր գործողության համար ստանալով որոշ հրահանգներ՝ այդ անխոնջ, միշտ համեստ և կատարելապես ժողովրդասեր սպա Տեր-Ղավթյանը մի քանի օրից հետո վերադառնում է Միսիանի Ղարաքիլիսա գյուղը, ուր տեղեկություն է ստանում, որ մի գունդ տաճկական ասկյարներ՝ միացած ռուս և հայ բուլչևիկների հետ, առաջ են շարժվում դեպի Ուզ և Ղարաքիլիսա, իբր թե դեպի Նախիջևան անցնելու, բայց լավ հասկանալով նոցա զինվորական խորամանկությունն և Ջանգեզուրում կատարած չարիքները, ապստամբներն առանց ուշ դարձնելու թշնամու գերազանց ուժերին և օգուտ քաղելով մառախլապատ եղանակից՝ նոյեմբերի 5-ին անցնում են հարձակման. տաք ճակատամարտից հետո տաճիկները թողնելով հարյուրավոր դիակ հետ են նահանջում դեպի Եայջի: Այդ օրվա կռիվը խլում է քաջասիրտ սրսիանցիներից մի անփոխարինելի գոհ, ծանր կերպով վիրավորվում է Միսիանի ապստամբների պարագլուխ և ժողովրդի պաշտելի սպա Պողոս Տեր Ղավթյանը, որն առանց ուշ դարձնելու իր

¹ Մղծավանջ – ռուսերեն «Դայրենիք» Ակունք

հավատարիմ գինվորների թախանձանքին խիզախությամբ առաջ է անցնում կռվի ամենատաք վայրը և գլխից վիրավորվում:¹

Առաջախուզի և իրանց հրամանատարի վիրավորվելու պատճառով ապստամբները հնարավորություն չեն ունենում վերջնականապես ջարդելու փախուստի դիմող թշնամուն, որը հետ նահանջելուց մտնում է անպաշտպան էայջի ու տաճկին հատուկ սոսկալի ավերածության, կոտորածի և կատարյալ թալանի մատնում ամբողջ գյուղը կամենալով Ղարաքիլիսայի վրեժը հանել այդ թշվառ և անզեն գյուղից: Ապստամբներն երկու ուղղությամբ առաջ են շարժվում դեպի Ջանգեզուրի կենտրոնը՝ Սիսիանի Ղարաքիլիսայից արշավում են դեպի էայջի, իսկ Տաթևի կողմից դեպի Հալիձոր:

Չկամենալով բուշակիների օրինակին հետևել և իզուր արյունահեղության պատճառ դառնալ Սպարապետ Նժդեհը կարմիրներին շրջափակելով Ղափանի և Սիսիանի կողմից, 1920թ. նոյեմբերի 14-ին Ջանգեզուրի կորմիրներին ուղղում է հետևյալ վերջնագիրը

«Բուշակիների հրամանատարության, Գորիս

Ղարաբաղի և Ջանգեզուրի հայությունն արդեն գլխատված է տնտեսապես ու հասարակականապես քայքայված է կարմիր բանակի ձեռքով: Ձեր զորքերի ներկայությունը Սյունիքի սահմաններում այլևս անհանդուրժելի է: Հրամայում են, եթե չեք ուզում 11-րդ բանակի մնացորդներն էլ կոտորածի և գերության մատնել՝ անմիջապես դատարկել Ջանգեզուրը, հակառակ դեպքում՝ ստիպված կլինեն տիրելու Ձեր ձեռքին գտնված երկրամասին

Կապարզողթի հրամանատար *Նժդեհ*

14 ին նոյեմբերի 1920թ
Ղափանի հանքեր»²

Կարմիրների հրամանատարությունը համաձայն իր ուղղության և 28-րդ դիվիզիայի շտաբից ստացած գաղտնի հրահանգի, կամենալով արյան ծովի մեջ խեղդել ապստամբ գյուղերը՝ խուսափում է վերջնագրի հրամանը կատարելուց և խելակոտույս կրկին անգամ դիմում է ամենաաններելի և հենց իր համար կորստաբեր քայլի տաճկական

¹ Դեկտեմբերի սկզբին ստացած ծանր վերքից և անխնամ մնալուց վախճանվեց սպա Պողոս Տեր-Ղավթյանը՝ Սիսիանի ապստամբության այդ անձնավեր հերոսը, որն իր անշահասիրությամբ, համեստությամբ և անձնական քաջությամբ պաշտամունքի առարկա էր գյուղացիության ընդարձակ շրջաններում: Ժողովուրդն ի դեմս Տեր-Ղավթյանի՝ զրկվեց մի աննման և անփոխարինելի գործչից: Նա թաղվեց դեկտեմբերի 4-ին իր ծննդավայր խոտանան գյուղում՝ տանելով իր հետ սիրած գյուղացիության դառն կսկիծն ու անհուն վիշտը:

² Լեռնա-Հայաստանի Գլխավոր շտաբի արխիվ N 138

ասկյարների գունդը Կուրոչկինի¹ Գորիս մնացած ծիավորների և այլ ռուսական զորամասերի հետ կրկին անգամ ուղարկում է Ջանգեզուրի արևմտյան կողմն ընկած գյուղերի դեմ: Ապստամբվում է նաև Գալիձորը՝ առաջնորդ ունենալով Սպարապետի կողմից ուղարկված մի այլ վաշտապետի: Ռուս, հայ և տաճիկ բուլշևիկները նոյեմբերի 1-ին ամեն կողմից թափվում են այդ գյուղի վրա: Փոքր ժամանակ հետո Գալիձորին օգնության է գալիս Տաթևի զորամասը. կռիվը տևում է երեք օր և թեև զգուշության համար ազգաբնակչությունը գյուղից վաղորոք հեռացված էր, բայց և այնպես շնորհիվ գյուղացիության տոկունության և վաշտապետների անձնագրի վերաբերմունքի՝ թշնամին ջարդվում է և դեպի Շինուհայր և Ուչթափալար նահանջում: Նոյեմբերի 20-ին՝ համարյա նույն ժամանակ, Սիսիանի ապստամբ զինվորությունն արշավում է դեպի Եայջի և չնայելով այնտեղ պատասպարված ռուսներին և տաճիկներին՝ գյուղն ազատում է թշնամիներից թեև այդ օրը Գորիսից բուլշևիկները 200 հոգուց բաղկացած նոր զորամաս են ուղարկում Եայջի օգնության, բայց արդեն ուշ է լինում և կարմիրները քաշվում են դեպի Զարահունջ:

Ապստամբների խիզախ գործողությունները և Ջանգեզուրի շրջան մտնելը թե ու թիկունք է հանդիսանում բուն Գորիս քաղաքի և շրջապատի ազգաբնակչության որը բուլշևիկների ձեռքով ավելի խիստ թալանվել, տնտեսապես քայքայվել, հագուստեղենից, տնային կահ-կարասիներից զրկվել և դառնության բաժակը մինչև վերջը քամել էր, ուստի օր առաջ գաղտնի կերպով պատրաստվել էին ապստամբության կապ հաստատելով մի կողմից Սպարապետ Նժդեհի և մյուս կողմից Սիսիանի ապստամբների ղեկավարի հետ՝ Գորիսում և Վերին Շենուն որոշում են նոյեմբերի 21-ին գիշերն ապստամբվել փախուստի բոլոր ճանապարհները փակել ու մնացած բուլշևիկ ռուսներին, տաճիկներին և հայերին գերի վերցնել. պայմանավորված օրը ապստամբ Սիսիանի զորամասը Գորիս քաղաքը պիտի հասներ:

Բայց բուլշևիկներն իրանց գործելակերպով այդ ապստամբությունն ևս արագացնում են: Եայջու և Գալիձորի ջարդից հետո գլուխները միանգամայն կորցրած՝ նոքա իրանց երեք կողմից շրջապատված տեսնելով, Ուչթափալարի կողմից և Գորիսի ձորակով ամեն ջանք գործ են դնում դուրս գալ օղակից: Քաղաքի բուլշևիկներն իրանց փրկելու համար այս ու այն կողմն ընկած սուտ լուրեր են տարածում ժողովրդի մեջ թե ապստամբները ջարդվել և նրանց պարագլուխները բռնված են միևնույն ժամանակ թնդանոթները բարձրաց

¹ Կուրոչկինը Ղափանի մի քանի կռիվներին մասնակցելուց և խայտառակությամբ ջարդվելուց հետո՝ բարվոք է համարում թողնել իր հեծելազորի մի մասը Ջանգեզուրում, իսկ ինքը հետ է գնում Բաքու հաստատ համոզված լինելով որ կարմիրները Ջանգեզուրում և Ղափանում դատապարտված են ոչնչանալու:

նում են քաղաքից վերև դեպի հյուսիսային կողմն ընկած լեռնաշղթա յի լանջերով անցնող խճուղին ապահովելու թե իրանց նահանջող զորամասերը և թե կարիքի դեպքում Գորիս քաղաքը ռմբակոծելու: Միաժամանակ լրտեսների միջոցով տեղեկություն ստանալով, որ Սիսիանից Վերին Շեն ու Բուռուն են եկել 8 հոգի, որոնք կազմակերպում են գյուղացիությունն ապստամբելու՝ Գորիսի բուլշևիկները նոյեմբերի 20-ին մի զորամաս են ուղարկում Վերին Շեն, որ քաղաքից 3 վերստ դեպի հյուսիս է ընկած, թե դրսից եկած անձանց ձերբակալելու և թե գյուղացիներին պատժելու, որովհետև նոքա լավ գիտեին, որ եթե այդ գյուղի մոտով անցնող խճուղին վտանգվի, իրանց համար կստեղծվի անելանելի դրություն: Վերին Շենի գյուղացիք իրազեկ լինելով կարմիր զորամասերի իրանց գյուղի վրա հարձակվելու մտադրությանը՝ իսկույն դիրքերն են գրավում գյուղից ցած: Կարճ միջոցից հետո երևում են բուլշևիկները, սկսվում է կռիվը, կարմիրները չեն կարողանում մինչև իսկ գյուղին մոտենալ, բավականաչափ սպանված տալուց հետո քաշվում են դեպի քաղաք: Նույն ժամանակ և Շինուհայրի վերին կողմն և Ուչթափալարում թափառող կարմիր զորամասերի և տաճիկների մնացորդները տեղեկանալով Վերին Շենում կատարված դեպքերի մասին, իսկույն հետ են քաշվում. երեկոյան դեմ քաղաքում ըսկսվում է իրարանցում, բուլշևիկ գործիչները և զորամասերը շտապ կերպով իրանց իրերն են կապում և սայլերը քարծում՝ իսկույն կարգադրվում է բնակիչներին երեկոյան ժամի 4-ից հետո քաղաքի փողոցներում չերևալ:

Քաղաքացիները պատուհաններից և պատշգամբներից տեսնում են որ կարմիրները խուճապի մատնված փախչելու պատրաստություն են տեսնում՝ այլևս չեն սպասում նոյեմբերի 21-ի պայծառափորված ժամանակին և թեև ապստամբության հակված բոլոր զինվորությունը չէր կարելի իսկույն ևեթ համախմբել և համապատասխան միջոցներ ձեռք առնել, բայց և այնպես ինքնաբերաբար հավաքվում են մի քանի երիտասարդներ և Դին Գորիսի ճանապարհին դիրքեր բռնում: Նույն ժամանակ Վերին Շենացիք խճուղու կամուրջի մուտքն են փակում: 20 ին գիշերը՝ ժամը 12-ին, սկսվում է բուլշևիկների փախուստը Գորիս քաղաքից երկու գծով՝ դեպի Դին Գորիսի միջով անցնող արահետով և խճուղով, բայց այդ երկու գծերն էլ բռնված լինելով ապստամբներով՝ սկսվում է կռիվը: Այլևս հնարավորություն չունենալով որոշված ճանապարհներով անցնելու՝ բուլշևիկ հրամանատարությունը և կոմիսարները կարգադրում են փախչել և ազատվել՝ ով ինչպես կարող է: Սկսվում է իրարանցում, մութ գիշեր, անձանոթ վայրեր մի կողմից գետը, մյուս կողմից՝ ապառաժ ժայռեր, հրացանների համազարկեր: Փախուստի ճանապարհը խիստ երկար էր, ուստի կարմիրները ստիպված են լինում թողնել իրանց քարծած հարյուրավոր սայլերը, խոհանոցները, ձիաները ռազմամթերքն ու բավականաչափ սպանված և վիրավոր զինվորներ և լուսաբացին հազիվ հազ մոցա

թշվառ մնացորդները կարողանում են Գորիսի ծորից դուրս ճողոպրել դեպի Տեղ:

Եայջի և Գալիժոր անրացած Ձանգեզուրի և Սիսիանի ապստամբներն իրազեկ չլինելով Գորիսի, Վերին Շենի և Բուռունի շրջանում կատարված դեպքերին և ապստամբության բռնկվելուն՝ հետամուտ են լինում Շինուհայրի վերևը և Ուշթափալարում անրացած կարմիրներին, և նրանց հաջողվում է նոյեմբերի 21-ին՝ առավոտյան ժամի 10-ին, միացած ուժերով հետ վանելով թշնամուն՝ մտնել Գորիս, ուր քաղաքացիները մեծ խանդավառությամբ ընդունում են նրանց, ապա տեղեկանալով կատարված դեպքերին՝ առանց կանգ առնելու առաջ են շարժվում դեպի Քարաշեն: Բուլշևիկ բանդաների մնացորդները փախուստի ժամանակ իրանց պարտության վրեժն են հանում Տեղ գյուղի ազգաբնակչությունից՝ այրելով նոցա դպրոցական շինությունը, փոստի իջևանն և տանելով իրանց հետ հարյուրավոր եգ, ծի, ջորի և այլ թալան:¹

Ապստամբները հետապնդում են նոցա և հալածում մինչև Ձաբուղի և Ավդալարի ծորերը: Ամբողջ Ձանգեզուրն ևս մաքրվում է կոմունիստներից և նրանց զորամասերից. Բուլշևիկներն իրանց գործելակերպով իրանց գերեզմանն են փորում տանելով միմիայն խոր ատելություն ժողովուրդն ազատվում է կեղեքումից, ստրկությունից և ազատ տնօրինում իր վիճակը. թեև բուլշևիկների կարճատև տիրապետության շնորհիվ նա կատարելապես քանվում, ծայր աստիճան քայքայվում և սովի ու քաղցածության է մատնվում, բայց զոհե նա ուրախ է որ այլևս չի տեսնի նոցա սոսկումները, բանտերը, անխիղճ սպանությունները, բռնագրավումներն ու անհիճալ չեկաները, նա քաղցած մնաց, բայց՝ ազատ:

Նոյեմբերի 22-ին Գորիս է ժամանում և անբողջ Սյունիքի ազատագրման մեծ առաջնորդ Սպարապետ Նժդեհը. քաղաքում տոնական պատրաստություն են տեսնում քաջարի հերոսին արժանավայել դիմավորելու:

Նժդեհը դարձել էր գյուղացի ժողովրդի փրկության և ազատ կյանքի սիմվոլը: Շրջակայքի ամբողջ ազգաբնակչությունը խուռն քաղնությամբ թափվել էր Գորիս քաղաքն իր երախտագիտական զգացմունքը իր ուրախությունն արտահայտելու անձնագրի ազատարարին՝ բոլորի դեմքին բերկրանքի ցուլք և խորը հավատ էր կար դացվում: Ժողովրդական խորն ու անկեղծ զգացմունքի արտահայտության տպավորության տակ Սպարապետն իրեն հատուկ կրակոտ ճառով շնորհակալություն հայտնելով այդ ընդունելության համար ավելացրեց. «Դու, ժողովուրդ, քո ազատությունը ձեռք բերիր այդքան թանկ գնով, դու էլ հենված քո անընկճելի կամքի վրա՝ պիտի ամուր պահպանես քանի կենդանի ես ես կռվել եմ և պիտի կռվեմ ամեն

¹ Ազատ Սյունիք Գորիս 1921 էջ 19

տեսակ բռնության դեմ լինի դա թեկուզ կարմիր բուլշևիզմի անվան տակ, միայն թե դու ժողովուրդ ազատ շնչես և ինքդ լինես քո վիճակի տնօրինողը»¹:

Ազատագրված Այունիքի ազգաբնակչությունն իսկույն համագումար է հրավիրում և 7 հոգուց բաղկացած գյուղացիական ժամանակավոր խորհուրդ ընտրում, որ դեկտեմբերի 25-ին Տաթևի համագումարում, վստահության քվե ստանալով հաստատվում է չորս նոր անդամի հավելումով և կառավարության ղեկն իր ձեռքն է առնում Ինքնավար Այունիքի Դիվանը:

Դեպքերն արագությամբ հաջորդում են միմյանց Այունիքի ազատագրության ժամանակից մի քանի օր հետո 1920 թվի դեկտեմբերի 2-ին, Հայաստանի Հանրապետական կառավարությունն արտաքին և ներքին աննպաստ հանգամանքների ազդեցության տակ իշխանության ղեկը հանձնում է բուլշևիկներին: Այունիքի ժողովրդի համար ստեղծվում է մի ծանր և անելանելի դրություն. արևելքից Ղարաբաղի հայ ժողովրդին և Ադրբեջանի իոծ մահմեդականությանը բուլշևիզմը կլանել էր, արևմուտքից մի ամբողջ Հանրապետություն հանգամանքից ստիպված հայտարարում է խորհրդային իշխանություն: Ի՞նչ դիրք պիտի բռներ Այունիքի մի բուռն ժողովուրդը որն իր արյան գնով հենց նոր էր տապալել բուլշևիկների ծանր լուծը:

Նա չվարանեց, հուսահատությունը չէր, որ այս դեպքում կարող էր նրա թափը իջեցնել խորը հավատ տածելով դեպի իր ազատարար և անձնազոհ հրամանատար Նժդեհը նա ավելի անձնազոհությամբ դիմեց ինքնապաշտպանության և հաստատ համոզված լինելով, որ Հայաստանի Հանրապետական կառավարության այդ որոշումը ժամանակավոր բնույթ ունի՝ հետամուտ եղավ, իր վրա հենված՝ ազատել նաև Հայաստանի ժողովրդին ակամայից, իր վզին փաթաթած այդ ծանր լծից որի դառնությունը նա չէր տեսել:

Առանց տատանման՝ կուռ կազմակերպությամբ, ազատ և ինքնավար Այունիքի ժողովուրդն իր հրամանատարի ղեկավարությամբ առաջ ընթանալով՝ 1921թ. փետրվարի 17-ից սկսած մի քանի օրվա ընթացքում գրավում է Ղարալազյազը և Նոր Բայազիդի շրջանները և հայտարարում Լեռնա-Հայաստանի Ինքնավար կառավարություն

¹ Ազատ Այունիքի Գորիս 1921 էջ 42-43

ԳԼՈՒԽ Գ

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Բուլշևիկներն իրանց կռիվների ընթացքում Ղափանում, Ջանգեզուրում և Սիսիանում ապստամբների ձեռքն են բռնել մի շարք թե գաղտնի և թե պաշտոնական այլ փաստաթղթեր, որոնք ծառայում են իբրև կենդանի վկա այն տմարդի գործելակերպի և դավադրության որ ցուցահանեցին Առջա հայ գյուղացիության վերաբերմամբ: Արտաքուստ իրանց ցույց էին տալիս պաշտպան աշխատավոր գյուղացիության շահերին, հեղափոխական գործչի ազնիվ խոսքով հավատացնում էին, որ իրանք հավասարություն են բերել բոլոր դասակարգերին, ամբիոններից բարձրակոչ աղաղակում էին բանվորներին ազատել շահագործությունից, խաղաղ և անդորր կյանք ստեղծել, իսկ ներքուստ գաղտնի իրանց զորամասերին հրամայում էին կործանել ամբողջ գյուղեր, գրավել ապստամբ ժողովրդի բոլոր ինչքը, անխնա կոտորել բոլոր ապստամբներին և հուր ու սարսափ տարածել ամենուրեք, որովհետև Կովկասյան ժողովրդին միմիայն դաժան վարվեցողությամբ կարելի է հպատակեցնել: 1920թ հոկտեմբեր ամսին, երբ Ղափանի Ջանգեզուրի և Սիսիանի աշխատավոր գյուղացիությունն իրան խաբված տեսնելով բուլշևիկների քաղցրահնչյուն խոսքերից ապստամբության դրոշմ բարձրացրեց, կարմիր զորամասերի հրամանատարությունն որոշեց ադյան և կրակի մեջ խեղդել այդ շրջանների ամբողջ բնակչությունը: Բավական է բազմաթիվ հրամաններից մեկը միայն բերել այստեղ, որպեսզի պարզ լինի բոլորի համար, թե գաղտնի ինչ գործելակերպի և վատշվեր մեքենայության ընդունակ է բուլշևիկյան հրամանատարությունն և նրա գործիչները: 11-րդ բանակի 28-րդ դիվիզիայի հրամանատար Նեստերովսկին այդ առթիվ հետևյալ գաղտնի զինվորական հրահանգն է տալիս 83-րդ և 84-րդ բրիգադաների հրամանատարներին

Գաղտնի - ռազմական գործողություն

ՀՐԱՄԱՆ

11-րդ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ 28-ՐԴ ՀՐԱՅԱՆԱԶԻԳ ԴԻՎԻԶԻԱՅԻ

ԶՈՐԱՄԱՍԻՆ

№ 29

Ք Շուշի
Դիվիզիայի շտաբ

14-ին հոկտեմբերի 1920թ
1 ժամին

Համարյա ամբողջ Ջանգեզուրում բռնկվել է ապստամբություն Ապստամբված հայերը գրավել են Անգեղակոթ-Ղարաքիլիսան, ամբողջ Ղափանի շրջանը և Օխչի չայի ու Մեղրի չայի ավազանները

Նյութադի գյուղի շրջանում գործող 252-րդ հրացանաձիգ և Կովկասյան 2-րդ գնդի հետ ունեցած կապը խզված է:

Ղափանի աննշան զորամասը շրջապատված է նորա վիճակն անհայտ է: 251-րդ հրացանաձիգ գունդը կռվում է թշնամու հետ Տանձավերից 4 վերստ դեպի հարավ գտնվող Ինջաբելլի բարձունքներում: 20-րդ դիվիզիայի Կովկասյան բրիգադային հրամայված է Արաքսի ափով առաջ անցնել և հոկտեմբերի 16-ին լինել Նյութադիի շրջանում, ուր իրան ենթարկելով 252-րդ հրացանաձիգ և Կովկասյան 2-րդ գնդերը վճռականությամբ և դաժանությամբ ջարդել Նժդեհի բանդաները: Այդ գործողությունից հետո հարվածելով Ղափանի շրջանը վերջ տալ ապստամբությանը: Մեր դիվիզիային հրամայված է պատրաստել հարվածող բռունցք և ուժեղ թափով ջնջել ապստամբությունը՝ կենդանի բաց չթողնելով ոչ մի բանդիտի, կանգ չառնելով ամբողջ գյուղերն ավերի ենթարկելու առաջ:

Հրամայում են

- 1 83-րդ բրիգադայի հրամանատար ընկ. Լիտվինենկոյին
247 ռդ գունդ և 248 249-րդ հրացանաձիգ միացյալ գունդ

248 ռդ և 249-րդ հրացանաձիգ գնդերի հագուստ ունեցող բոլոր զինվորներից կազմել միացյալ գունդ և 247-րդ հրացանաձիգ գնդի հետ միացնելով՝ պատրաստել հարվածող բռունցք և հոկտեմբերի 15-ին ժամի 16-ին կենտրոնացնելով Տեղ գյուղում՝ հոկտեմբերի 16-ին լուսաբացին վճռական հարձակման անցնելով Ձեյվայի, Արծվանիկի և Բարաբաթունի վրա՝ օղակել Ղափանի շրջանն արևելյան կողմից և ճնշելով՝ դաժանությամբ վարվել ապստամբների հետ ոչ մի բանդիտի կենդանի բաց չթողնելով:

Ղեպի աջ կապ պահպանել 84-րդ բրիգադայի իսկ Ղափանը գրավելուց հետո կապակցվել նաև 20-րդ հրացանաձիգ դիվիզիայի Կովկասյան բրիգադայի հետ: Թիկունքն ապահովելու համար վերցնել Տեղ գյուղում կուլակներից 100 պատանդ և կարմիր զորքի թիկունքից մինչև իսկ մի գնդակ արծակելու դեպքում բոլորին գնդակահարել: Ստանալ 84-րդ բրիգադայի հրամանատարից մի դասակ հեծյալ լեռնային հրետանի և եթե հնարավոր չլինի հարձակման դեպքում օգտա գործել, այն ժամանակ գետեղել Տեղի դիմացի դիրքերում՝ գյուղը ոմբակոծելու եթե կարիք զգացվի:

Հրամայում են

- 2 84-րդ բրիգադայի հրամանատար ընկ Սեմյոնովին
250-րդ և 251-րդ հրացանաձիգ գնդեր

Ձորամասերը ռազմունակ դարձնելով Ղարաքիլիսայի և Բազարչայի ուղղությամբ պահակ դնել և ապահովել այդ կողմից հոկ

տեմբերի 15 ին վճռական հարձակման անցնել և Քյանթիլ լեռնանց ջրով մտնել խալաջ և Օխչի գետերի շրջանում գտնվող գյուղերը օղակելով Ղափանի շրջանն արևմտյան կողմից:

Ամենադաժան և անխնա ճնշելով ապստամբությունը ոչ մի բանդիտի բաց չթողնել: Ղափանի ապստամբ ազգաբնակչությունը հպատակեցնելով՝ զինաթափ անել և Մազրայի կողմից ապահովել թիկունքն ապահովելու համար Գորիսում վերցնել կուլակներից 100 պատանդ և թիկունքի կողմից մինչև իսկ մի գնդակ արձակելու դեպքում անմիջապես բոլոր պատանդներին հրապարակորեն գնդակա հարել: 3-րդ դիվիզիոնի 1-ին հրետանու մի դասակը դնել Գորիսի արևելյան կողմն ընկած դիրքում և ապստամբության դեպքում հրետանու կրակով օժանդակել այդպիսին ճնշելու: Կապ պահպանել 83 ռոբրիգադայի հետ

3. 28-րդ կապի պետի ժամանակավոր պաշտոնակատար ընկ Գրոսմանին

Ձեռք առնել բոլոր միջոցները Կարաբուլաղի (Կարյազինո) վրայով վերստին կապ պահպանել Կովկասյան 20-րդ բրիգադայի հետ Մշտական կապի համար թողուցիկ փոստի կայաններ հիմնել Կարաբուլաղից սկսած խճուղու գծով մինչև Ջիբրայիլ և նույնիսկ մինչև Չաքյարու գետը:

4. 28-րդ դիվիզիայի մարտկոցի հրամանատար ընկ Գուսակովին

Ի նկատի ունենալով, որ ամբողջ հրետանին հնարավոր չէ գործադրել և որպեսզի պարենավորման գործը չժամրաբեռնվի՝ թողնելով դաշտային հրետանու մի դասակ Գորիսում, 3-րդ դիվիզիոնի հրետանու մյուս մասը տեղափոխել Շուշի, շտաբի կենտրոնն իսկ Երկրորդ հրետանու դիվիզիոնը՝ Կարաբուլաղ (Կարյազինո):

5. 28-րդ դիվիզիայի պարենավորման պետին

Բոլոր փոխադրական միջոցները կենտրոնացնել ձեռքի տակ և Շուշու ռեկոմի միջոցով գյուղացիներից հավաքելով 200 սալ՝ Ավդալ լարում հիմնել մթերքների տեղափոխման կայան, որպեսզի զորամասերն իր ժամանակին ստանան ուտելիքն և ռազմամթերքը: Չպետք է թույլ տալ զորամասերին քաղցած մնալ, որի համար անհրաժեշտ է ամեն բան շարժողության մեջ դնել և օր ու գիշեր 24 ժամ աշխատել հիշելով, որ ապստամբված շրջաններում դիվիզիայի պարենավորման պետի գործունեությունը թույլ է:

6. 28-րդ դիվիզիայի առողջապահական մասի պետին

Կազմակերպել վիրավոր և հիվանդ կառմիր զինվորների էվակուացիան՝ մթերք տեղափոխելու համար Գորիսից վերադարձող սայլերի վրա: Տեղափոխման կայան հիմնել Ավդալ լարում:

Նախորդը Շուշում տեղ պատրաստել և վիրակապման համար բավականաչափ նյութ մատակարարել

Կրկին անգամ հիշեցնում և հրամայում եմ 83-րդ և 84-րդ բրիգադաների հրամանատարներին խուսափել ամեն տեսակ մարդասիրական միջոցներից և դաժան լինել ապստամբ բնակչության հետ որպեսզի նա զգա բանվորական բռունցքի թափը: Դիմադրողներին գերի չվերցնել և կենդանի բաց չթողնել ոչ մի բանդիտի:

Միմիայն ապստամբված կուլակներին ոչնչացնելով և նրանց ամբողջ կայքը գրավելով կհասնենք խաղաղության: Եթե հանգամանքները կստիպեն՝ կանգ չառնել ամբողջ գյուղերն ավերելու առաջ, հիշելով այն, որ աններողամտությունն և դաժանությունը, նամա նավանդ, Կովկասում, կհասցնի լավ հետևանքի: Գրաված գյուղերում ապահովել սովից զորամասերին ապստամբների հաշվով: Ես կլինեմ Շուլչի դիվիզիայի շտաբում, երբ մեկնեն 84-րդ և 83-րդ բրիգադաների շտաբը, այնտեղ ինձ ուղարկեցեք ռազմական գործողության մասին զեկուցումներն յուրաքանչյուր երկու ժամը մի անգամ:

7. Իմ փոխանորդները՝ 83-րդ բրիգադայի հրամանատար ընկ Լիտվինենկո և 84-րդ բրիգադայի հրամանատար ընկ Սեմյոնով:

8 Գրությունն ստանալու և արած կարգադրության մասին տեղեկացնել ինձ:

28-րդ դիվիզիայի պետ *Նեստերովսկի*
Ձիմվորական կոմիսարի փոխանորդ՝ *Սարան*
28-րդ դիվիզիայի շտաբի պետ՝ *Ֆրոլով*

Ճիշտ է դիվիզիայի ռազմական գործողության մասի պետի օգնական (ստորագրություն)

Հրամանը տպագրել 11 օրինակ և ուղարկել 14 հոկտեմբերի 2 ժամ 5 րոպեին 83-րդ բրիգադայի հրամանատարին՝ 1 օրինակ, 84-րդ բրիգադայի հրամանատարին՝ 1 օրինակ, 28-րդ Կովկասյան բրիգադային՝ 1 օրինակ 28-րդ դիվիզիայի հրետանու պետին՝ 1 օրինակ 28-րդ դիվիզիայի պետին՝ 1 օրինակ, 28-րդ դիվիզիայի պարենավորման պետին՝ 1 օրինակ, 28-րդ դիվիզիայի կապի պետին՝ 1 օրինակ, հատուկ N 2 զորամասի պետին՝ 1 օրինակ, 28-րդ դիվիզիայի սանիտարական մասի պետին՝ 1 օրինակ, 11-րդ զորաբանակին՝ 1 օրինակ Իսկականը՝ 1 օրինակ, բոլորը՝ 11 օրինակ:

Ճիշտ է դիվիզիայի շտաբի ռազմական գործողության մասի օգնական (ստորագրություն):¹

Համաձայն 28-րդ դիվիզիայի պետի այդ հրամանի 84 րդ բրիգադայի հրամանատար Սեմյոնովը հետևյալ ռազմական գործողության հրահանգ է տալիս իր զորաբաժնի մասերին

¹ Թարգմանությունն ուսերեմից

ՀՐԱՍԱՆ
28-ՐԴ ՀՐԱՑԱՆԱԶԻԳ ԴԻՎԻԶԻԱՅԻ 84-ՐԴ ՀՐԱՑԱՆԱԶԻԳ
ԲՐԻԳԱԴԱՅԻ ԶԻՆՎՈՐՈՒԹՅԱՆ
N 35 գործող

84 թղ բրիգադայի շտաբ
Գորիս քաղաք

14 հոկտեմբերի 1920թ
ժամին-րուպեին

Քարտեզ 10 վերստը մի դույնում

Բռնկվել է ապստամբություն համարյա ամբողջ Զանգեզուրում Ապստամբ հայերը գրավել են Անգեղակոթ-Ղարաքիլիսայի, ամբողջ Ղափանի շրջանները, Օխչի և Մեղրի գետերի ավազանները:

252-րդ և Կովկասյան 2-րդ գնդերը սույն հոկտեմբերի 12 ին գտնվում էին Աստաղուր: Ղափանի աննշան զորամասը շրջապատ ված է և նրա վիճակն անորոշ է:

251-րդ և 250-րդ գնդերը պահպանում են Ձեյվայի բարձունք ներք. 20-րդ դիվիզիայի բրիգադայի հրամանատարին հրահանգված է Արաքսի ափով առաջ շարժվել և հոկտեմբերի 16-ին հասնել Նյուվա դիի շրջանը իր վրա վերցնելով 252-րդ հրաճանաձիգ և Կովկասյան 2-րդ գնդերի հրամանատարությունը, վճռականորեն և անխնա ոչնչացնել Նժդեհի բանդաները: Այդ ապստամբությունը ճնշելուց հետո հարվածելով Ղափանի շրջանը՝ ճնշել և այնտեղի ապստամբությունը. 28-րդ դիվիզիային հրամայված է կազմել հարվածող բռունցք և ուժեղ թափով հարվածելով՝ վերջ տալ ապստամբությանը ոչ մի բանդիտի կենդանի բաց չթողնել և կանգ չառնել նույնիսկ ամբողջ գյուղերն ավերելու առաջ:

83-րդ բրիգադայի 247-րդ և ուրիշ զորամասերից վերակազմ ված գնդերից պատրաստել հարվածող բռունցք և հոկտեմբերի 15-ին ժամը 16-ին կենտրոնացնել Տեղ գյուղում՝ առաջապահ զորամաս ու նենալով Գուլջիկի շրջանի դեպի Ձեյվա տանող խճուղու ուղղությամբ:

Հոկտեմբերի 16-ին վաղ առավոտյան անցնել վճռական հարձակման դեպի Ձեյվա-Արծվանիկ-Բարաբաթում գյուղերն և բռնելով Ղափանի շրջանն արևելյան կողմից՝ ամենադաժան կերպով վարվել ապստամբների հետ:

Ինձ վստահացած բրիգադային հրամայված է

Հոկտեմբերի 15 ին անցնել Քյամբիլ լեռնանցքով և մտնել այն գյուղերի շրջանը, որոնք տարածված են Խալաջ-Օխչի գետերի ավազաններում և շրջապատել Ղափանն արևմտյան կողմից

Ի կատարումն սորին հրամայում են

Առաջին 250-251-րդ հրացանաձիգ գնդերի պետերին

Կանգ առնելով ներկայումս գրաված դիրքերում 24 ժամվա ընթացքում զորամասերը կատարելապես ռազմական վիճակի մեջ դնել և կարգի բերել: 251-րդ գնդի պետը պիտի վերածի իր զորամասը միացյալ գումարտակի՝ նշանակելով ավելի վճռական և գործունյա հրամանատարների: Գործողության ընթացքում նա ժամանակավորապես ենթարկվում է 250-րդ գնդի պետին:

250-րդ գնդի պետը՝ վերցնելով 250-րդ գունդն և 251-րդ գնդից կազմված գումարտակն և հայ կոմունիստների զորամասը, կթողնե մի մասը Ձեյվայի բարձունքներում՝ մինչև 83-րդ բրիգադայի զորամասերի ժամանումը: Հոկտեմբերի 15-ին ժամի 12-ին զորամասերը կենտրոնացնել Տանձավեր և ապա՝ վճռական հարձակման դիմել և Քյամբիլ լեռնանցքով մտնել այն գյուղերի շրջանը, որոնք տարածված են Խալաջ-Օխչի գետերի հովիտներում: Այսպիսով պարփակել Ղափանի շրջանն արևմտյան կողմից՝ ամենադաժան և անխնա կերպով ճնշելով ապստամբությունը, բաց չթողնել ոչ մի բանդիտի և թույլ չտալ նրանց թիկունքում մնալ, գերի չվերցնել, այլ տեղն ու տեղը գնդակահարել և զինաթափելով Ղափանի շրջանի ճնշված ազգաբնակչությունը՝ Մազրայի կողմից ապահովել թիկունքը:

251-րդ գումարտակի պետին

Քո հրամանատարության տակ կենտրոնացրու Կովկասյան բրիգադայի 250-րդ, 251-րդ, 252-րդ զորամասերից բոլոր առողջ և զենքի ընդունակ կարմիր զինվորներին և տեղական կոմունիստների զորամասերը: Ձիավոր միլիցիան օգտագործել որպես ուղեցույց-առաջնորդներ: Ամենադաժան միջոցով արմատի մեջ խեղդեցեք ամեն տեսակ ապստամբական շարժում որ կարող է երևան գալ՝ տեղն ու տեղը հրացանազարկ անելով:

Աչալուրջ պահպանեցեք դեպի քաղաք տանող Գորիսի գլխավոր ճանապարհների բոլոր անցքերը, թողնելով պահակներ, որպեսզի հնարավոր լինի իսկույն ևեթ երևան հանել բանդիտների հարձակման ամեն մի կարելիություն: Առանձին ուշադրություն դարձնել Անգեղակոթի կողմը, դեպի ուր տանող ճանապարհին թողնել ուժեղ պահակ գնդացիով և անընդհատ հետախուզներ ուղարկել այդ ուղղությամբ պարզելու այդ կողմերի դրությունը:

3-րդ բեթև մարտկոցի հրամանատարին

83-րդ բրիգադայի հրամանատարի տրամադրության տակ դնել լեռնային հրետանու մի դասակ՝ քնդանոթները բեռներով տեղափոխելու համար ամեն անհրաժեշտ պատրաստությունը տեսնել Իմ

տրամադրության տակ թողնված մի դասակ ձիավոր հրետանին զետեղել Գորիս քաղաքի արևելյան կողմի անմիջական դիրքերի վրա լինել կատարելապես կռվի համար պատրաստ և քաղաքի ապստամբության կամ դրսից հարձակման դեպքում թնդանոթի կրակով անխնա ոչնչացնել բանդիտներին, իսկ եթե կարիք կլինի՝ ավերել նաև շինությունները, եթե այնտեղ պահված կլինեն վերջիններս

84/28 կապի պետին

Գործադրել բոլոր ուժերը, օգտագործել ամեն միջոց կապ պահպանելու բրիգադայի և հարձակման դիմող այլ մասերի հետ

84/28 բրիգադայի պարենավորման պետին

Ձեռ առնել վճռական միջոցներ իր ժամանակին և կանոնավոր հայթայթելու զորամասերի ռազմամթերքն և ինչ որ անհրաժեշտ է

84-րդ բրիգադայի շտաբը կլինի Գորիսում
 Ես կլինեմ 250-րդ գնդի մոտ, կռվի ընթացքում յուրաքանչյուր երկու ժամը մի անգամ ուղարկել զեկուցումներ:
 Իմ փոխանորդները կլինեն 250-րդ և 251-րդ գնդերի պետերը
 Հրամանս ստանալու և իրագործելու մասին հայտնել 84 րդ բրիգադայի շտաբին

Իսկականը ստորագրել են

84 րդ բրիգադայի ժամանակավոր պետ՝ *Սենյոնով*
 Բրիգադայի ժամանակավոր գինվորական կոմիսար՝ *Գորկովենկո*
 84 րդ բրիգադայի շտաբի պետ՝ *Կրուպեննիկով*

Իսկականի հետ ճիշտ է 84 րդ բրիգադայի շտաբի պետի ռազմական գործողության մասի օգնական:

Հրամանը տպագրված է 14.10.20թ ժամի 12 ին 40 րոպեին և ուղարկված է 28-րդ դիվիզիայի պետին՝ 1 օրինակ, Կովկասյան բրիգադային՝ 1 օրինակ, 83-րդ բրիգադայի հրամանատարին՝ 1 օրինակ, 250-րդ գնդի պետին՝ 1 օրինակ, 251-րդ գնդի պետին՝ 1 օրինակ, 252-րդ գնդի պետին՝ 1 օրինակ, 3-րդ թեթև հրետանու պետին՝ 1 օրինակ, 2-րդ Կովկասյան գնդի պետին՝ 1 օրինակ, 84-րդ բրիգադայի կապի պետին՝ 1 օրինակ, 84-րդ բրիգադայի պարենավորման մասի պետին՝ 1 օրինակ, 84-րդ բրիգադայի սանիտարական մասի պետին՝ 1 օրինակ, հատուկ կայանի պետին՝ 1 օրինակ: Իսկականը գտնվում է բրիգադայի շտաբում՝ 1 օրինակ, բոլորը միասին՝ 13 օրինակ

84-րդ բրիգադայի շտաբի պետի ռազմական գործողության մասի օգնական:¹

Բացի ռազմական գործողություններն սկսելու այդ գաղտնի հրամաններից 28-րդ դիվիզիայի պետ Նեստերովսկին նույն թվի հոկտեմբերի 16-ին անհրաժեշտ է համարում իր ձեռնարկած գործի հաջողության համար դիմել բուլշևիկական տակտիկայի և Զանգեզուրի Նախիջևանի ու Շուշու շրջանների ժողովրդին դիմել մի առանձին հրամանով, որի մեջ, անվանելով Սպարապետ Նժդեհին և՛ բանդիտ, և՛ թալանով ապրող, և՛ հարևաններին կոտորող ի վերջո սպառնում է ապստամբներին բուլդոզերներով կոտորել և նոցա գյուղերն երկրի երեսից ջնջել եթե համարձակվեն դիմադրել իրանց կամ գնդակ արձակել:

ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԵՎ ՇՈՒՇՈՒ ԵՐԶԱՆՆԵՐԻՆ ՀՐԱՄԱՆ

Հոկտեմբերի 18-ին 1920թ

Ազգաբնակչությունը մոլորված է բանդիտ Նժդեհի և նրա արքանյակների կողմից, որոնց համար չքավոր բնակչության աղքատացումը, քայքայումը և ոչնչացումը անհրաժեշտ պայման է իրենց գոյությունը պահպանելու համար: Բանդիտ Նժդեհը շատ լավ գիտե, որ կարմիր բանակի գալատյամբ վերանում է հայերի և մուսուլման աշխատավորների ազգամիջյան հակամարտությունը և քաղաքացիները անցնում են իրենց խաղաղ աշխատանքին և իրար չեն ոչնչացնում: Դա ձեռնտու չէ բանդիտ Նժդեհին և նրա արքանյակներին, որոնք սովորել են թալանով ուրիշի աշխատանքի արդյունքով ապրել:

Բանդիտ Նժդեհի պրովոկացիայից ազդվելով՝ ազգաբնակչությունը ապստամբվել է և իր զենքն է ուղղել կարմիր բանակի դեմ մոռանալով, որ կարմիր բանակն աշխատավորներին ազատել է ձրի ակերների, պարագիտների, գեներալների հողատերերի բուրժուազիայի և կուլակների ծանր լծից:

Թող իմանա Զանգեզուրի ամբողջ ազգաբնակչությունը, որ կարմիր բանակն ինչքան որ բարյացակամ է դեպի աշխատավորությունը ինչքան որ իր կյանքն է զոհում աշխատավորության բախտավորության համար այնքան էլ նա խիստ է ու անխնա դեպի իր թշնամիները: Բանդաների և ապստամբների ձեռքով սպանված ամեն մի մարդու լիոխարեն կոչնչացվեն հարյուրավոր ապստամբներ ու իրենց ձեռքը կարմիր բանակի վրա բարձրացնողներ: Քանի ուշ չէ՝ վերադարձեք ձեր խաղաղ աշխատանքին, հանձնեցեք ձեր զենքերը հակառակ

¹ Թարգմանությունն ռուսերենից

դեպքում կարմիր բանակի հեղափոխական անխնա դատավճռին կարժանանանք: Ապստամբ գունդերում մնացած հիվանդ ու վիրավոր կարմիր զինվորները և տեղական կազմակերպությունների կոմունիստները պետք է պահպանվեն բոլոր բռնություններից և վերադարձվեն կարմիր բանակի կանգնած տեղերը: Եթե որևէ գյուղի բնակչություն բռնանա կամ սպանի մի կարմիր զինվորի՝ այդ գյուղը հողին կհավասարեցվի և կվերացվի երկրի երեսից: Թողեք զենքերը ու գնացեք ձեր տները: Վռնդեցեք Նժդեհին և նրա արբանյակներին որոնք աղքատություն և քայքայում են բերում իրենց հետ:

Կարմիր բանակը բերում է ձեզ ազատություն բախտավոր ու խաղաղ կյանք

N դիվիզիայի պետ *Նեստերովսկի*
N դիվիզիայի քաղաքական մասի կառավարիչ՝ *Սարակ*

Կարմիր զորամասերի մեծագույն մասն ուղարկելով Ղաչիանի և Սիսիանի կողմերն ապստամբությունը ճնշելու համար և կասկածելով որ կարող է թիկունքում՝ Ջանգեզուրում, ևս սկսվել ապստամբություն, որը ճնշելու համար բավարար և ազատ ուժ նոքա այլևս չունեն, 28-րդ դիվիզիայի պետը հոկտեմբերի 17 ին 1-ին հրամանով հայտարարում է Ջանգեզուրի, Նախիջևանի և Ղարաբաղի շրջանների ազգաբնակչությանը հոկտեմբերի 16-ին գնդակահարված 13 հայ բանտարկյալների անունները սաբսափեցնելու ժողովրդին և երկյուղի տակ պահելու համար. ըստ հանցանքի բաժանելով նոքա հինգ կատեգորիայի, որոնցից ամենից տմարդին և միաժամանակ ուշագրավը՝ 5-րդ կատեգորիան է

«5 Ջանգեզուրի գավառի Կոռնձոր գյուղի բնակիչներ Ավագիմ Պողոսյան Սիմոն Պողոսյան Շամիր Կարապետյան, Ալեքսանդր Հասրաթով Հակոբ Վանեսով և Արուն Ղահրամանովը (գնդակահարված են) հակահեղափոխության և կոմունիստների ծնողներին ծաղրելու համար»:¹

Երկրորդ հրամանով դիմելով նույն Ղարաբաղի, Ջանգեզուրի և Նախիջևանի պրովետար և աղքատ գյուղացիներին՝ 26-րդ դիվիզիայի պետը սպառնալիքով հայտնում է

«Վերոհիշյալ անձնավորությունները գնդակահարված են ինչ պես իսկական հակահեղափոխական և ակնհայտ թշնամիներ բանվորա-գյուղացիական իշխանության: Նրանք վարում էին պրովոկացիոն աշխատանք, որպեսզի ձեզ բարձրացնեին կարմիր բանակի դեմ, այնպիսի բանվորների և գյուղացիների դեմ՝ ինչպիսին դուք եք: Նույն վիճակին կարժանանան այն բոլորը, որոնք ձեռք կբարձրացնեն բանվորական իշխանության վրա: Նույն վիճակին կարժանանան ոչ միայն

¹ Լեռնա Հայաստանի Գլխավոր շտաբի արխիվ N 229

առանձին անձնավորությունները, այլև խորհրդային իշխանությունը կանգ չի առնի ամբողջ գյուղերի ոչնչացման առջև, այն գյուղերի, որ ոնք ապստամբության դրոշը կբարձրացնեն: Բանվորա-գյուղացիական իշխանության թշնամիներ, զգուշացեք դողացեք որովհետև հեղափոխությունն իր հաղթական ընթացքի ժամանակ կանգ չի առնի զոհերի առաջ:

Հայաստանի պրոլետարներ լավ հասկացեք որ կարմիր բանակը եկել է Ձանգեզուր ոչ թե ձեզ տիրելու, ձեզ շահագործելու ու կեղեքելու համար, ինչպես այդ անում էր հին ցարական կառավարությունը և ինչպես հիմա անում են հայ դաշնակները, կարմիր բանակը եկել է ձեզ ազատելու ձեր հարուստների, կուլակների, գազան մաուզերիստների, բանդիտ Նժդեհի, Դրոյի և մյուսների բռնություններից, որոնք ուզում են ձեզ բարձրացնել խորհրդային Ռուսաստանի և Ադրբեջանի պրոլետարիատի դեմ:

Ղարաբաղի Ձանգեզուրի և Նախիջևանի պրոլետարներ և չքավոր գյուղացիներ լավ հիշեցեք որ հիմա ահագին աշխատանք է տարվում ստեղծելու նոր հասարակարգ, որտեղ չի լինի ֆաբրիկանտների, հողատերերի և կուլակների իշխանությունը, այլ կլինի՝ ազատության, հավասարության եղբայրության և խաղաղ հանգիստ կյանքի թագավորությունը:

խորհրդային իշխանությունը վերջին անգամ դիմում է ձեզ կանգնեցեք խաղաղ կյանքի ուղիղ ճանապարհի վրա մի լսեք ձեր թշնամի դաշնակցականներին, հեղափոխության և ժողովրդի թշնամիներին, կուռ միացեք կարմիր բանակին ոչնչացնելու մեր թշնամիներին, որոնք ձեզ ուզում են ապստամբեցնել: Թող անհիծված լինեն Ղարաբաղի, Ձանգեզուրի և Նախիջևանի բանվորների և գյուղացիների թշնամիները՝ դաշնակները, հակահեղափոխականները:

Կեցցե կարմիր բանակը որը պատժում է ժողովրդի թշնամիներին

Կեցցե խորհրդային իշխանությունը Հայաստանում

Կեցցե համաշխարհային պրոլետարական հեղափոխությունը

Իսկականը ստորագրեցին

Ն դիվիզիայի պետ

Ն դիվիզիայի քաղաքական մասի կառավարիչ

Ն դիվիզիայի հատուկ մասի կառավարիչ

Գորիսի գավառական ռեկոմն ևս հետ չէ մնում զինվորական հրամանատարությունից և նույն ժամանակ սկսում է թռուցիկներ և կոչեր տպագրել Ձանգեզուրի, Սիսիանի և Ղափանի գյուղացիության անունով, ուր բազմաթիվ անգամ հոլովելով Նժդեհի անունն ու դժբախտության բոլոր պատճառը նրան համարելով նույն ձևով սպառ

նում է մեծամեծ գորքերով լցնել հայի գյուղերն ու ավերի ենթարկել,¹ բայց այդ բոլոր փորձերն անհաջող են անցնում և բուլշևիկյան կողմ պոստով տարված գորքը շարունակ ջարդ է կրում Ղափանի հայ գյուղացիության զինված ուժերից: Ի վերջո, 28-րդ դիվիզիայի կարմիր զինվորների ստորագրությամբ հոկտեմբերի 26-ին կոմունիստներն նոր կոչեր են ուղղում Ջանգեզուրի գյուղացիության ավելի մեղմ տոնով:² Այդ կոչերն ևս մնում են անարձագանք:

Բուլշևիկյան գաղտնի փաստաթղթերը, հրամաններն ու կոչերն իրենք են վկայում իրենց տմարդի գործելակերպի մասին: Աբդուլ-Ֆամիդյան և էմվեր-Թաալաթյան արյունարբու ռեժիմը մինչև իսկ չէր կարող ավելի գագրելի և ռճրագործ մի ծրագիր որոճալ, քան կարմիր բուլշևիկներն էին հղացել: Եվ նոքա գնացին խեղճ, անօգնական աշխատավոր գյուղացիության մեջ, ուր չկար ոչ կուլակ, ոչ կապիտալիստ և ոչ նույնիսկ մեծ քաղաքի բնակչություն՝ իրագործելու իրանց դիվային ռազմական գործողության ծրագիրը: Նոքա կամեցան ուսական հեղափոխության մասշտաբով կատարել այն, ինչ որ գուցե տանելի է եղել հարյուր հիսուն միլիոն բնակչություն ունեցող մի երկրում, որը հարևան է Եվրոպային, ուր կար և՛ գործարան, և՛ կապիտալ և՛ հողատեր, բայց այնքան կույր գտնվեցին և անհեռատես ռուս կարմիր հրամանատարությունն ու աշակերտական սեղանից նոր ելած հայ կոմունիստները, որ չկարողացան ըմբռնել մի փոքր ազգության ինչպիսին հայն է, հոգեբանություն, դարավոր ձգտումները և միջավայրը: Այդ պատճառով էլ հայ գյուղացիության կուռ շարքերի թափի տակ 11-րդ բանակի երկու բրիգադաներն էլ ջարդվելով հազիվ հազ կարողացան սովալլուկ կարմիրների մնացորդները փախչելով Ջաբուղի ձորերումն իրանց խղճուկ կյանքը պատսպարել:

Չենքի ուժով, դաժան գործելակերպով խաբեբայությամբ և նույնիսկ Կուրուչկինի հեծելազորով ու տաճիկ ասկյարների օգնությամբ բուլշևիկներին չհաջողվեց իրանց ծեռքին պահել Սյունիքը: Սևաթույր պրոպագանդիստ հայ կոմունիստների դիմակը պատռվեց, այլևս նոքա չեն կարող ժողովրդի մեջ մտնել՝ հարկավոր է այլ մեքենայության միմիայն բուլշևիկներին հատուկ այլ խաբեբայության դիմել, որոնց այնքան ընդունակ են նոքա: Եվ ահա սկսվում է Ջաբուղում և Ավդալլարում պարփակված կարմիրների հրամանատարության, 28-րդ դիվիզիայի ներկայացուցիչների և այլ սովետական բարձրաստիճան անձանց կողմից Ջանգեզուրի ապստամբների Սպարապետ Նժդեհի և ապստամբ գյուղացիության անունով թռուցիկներ, պաշտոնական գրություններ տեղալ մինչև իսկ նրանց մոտ պատգամավոր

¹ «Ջանգեզուրի բոլոր աշխատավոր գյուղացիներին» 1920թ հոկտեմբերի 21-ին Լեռնա-Ֆայաստանի Գլխավոր շտաբի արխիվ, N 231:

² «Կոչ Ջանգեզուրի գյուղացիներին», 1920թ հոկտեմբերի 26-ին Լեռնա-Ֆայաստանի Գլխավոր շտաբի արխիվ, N 232

ներ են ուղարկում, որոնց միջոցով այժմ էլ գրչի և խոսքի դիմելով ամեն ջանք գործ են դնում ցույց տալու հայ աշխատավոր գյուղացիության, որ իրանց նպատակը չէ եղել նոր երկրամասեր գրավել կամ Հայաստանի Հանրապետության դեմ կռվել՝ մոռանալով այն սոսկալի ավերն ու կոտորածը, որ մի քանի օր առաջ հենց նոքա են կատարել նույն գյուղացիության շրջանում:

Անհրաժեշտ է այդ տեսակետից այստեղ զետեղել այն բոլոր պաշտոնական գրությունները, որ կարմիրների թե զինվորական և թե քաղաքացիական մասի պատասխանատու գործիչներն են ուղղել Ձանգեզուրի հայ աշխատավորության և Սպարապետ Նժդեհին ու վերջիններիս պատասխանը նոքա դիմումներին, որպեսզի մի կողմից պարզվի բուլշևիկների գործի խոսքի և գրածի հակասությունն ու խաբեբայությունը, իսկ մյուս կողմից երևան հանվի ապստամբների պարագլուխ Սպարապետ Նժդեհի և նրա միջոցով Սյունիքի հայ գյուղացիության գործելակերպը կանքի տոկունությունն ու խոսքի ազնվությունը:

Առաջին գրությունը Ձանգեզուրի ապստամբության հրամանատարության անունով ուղղում է դժբախտ 28-րդ դիվիզիայի զինվորական կոմիսարը, որի Ղեկնիկին, Կուլչակի և բարոն Վրանգելի գվարդիաները ջարդող 83-րդ և 84-րդ բրիգադաների հերոս զինվորությունը կոտորվել կամ գերի է ընկել խորխոս Սյունիքում մի բուռն հայերի ձեռքը, որով նա ցույց է տալիս ռուս կարմիր զորքի կռվի նպատակն և կատարած շահատակությունը Ձանգեզուրում, և ապա պահանջում է իրանց վերադարձնել գերի և հիվանդ զինվորներին ու թողած ռազմա մթերքը, հակառակ դեպքում սպառնում է, որ ռուսական սովետական իշխանությունը կիրառարվի միջնորդելու Հայաստանի և հեղափոխական Տաճկաստանի մեջ կնքվելիք հաշտության պայմանին:

Քաղաքական խեղկատակության դերն է ստանձնում ռուս բուլշևիկը, նա իր կարճամտությամբ Քեմալ տաշաթի՝ այդ իսկական տաճիկ շովինիստի զորքերը համարում է կարմիր հեղափոխական և անշուշտ, իրեն դաշնակից: Գաղտնի դավադրությամբ և խալիլ բեյի միջոցով նրան ուղարկած ոսկու բեռներով խրախուսելով նրան առաջ արշավել դեպի Ղարս և Ալեքսանդրապոլ՝ ցանկացել է տաճիկների ձեռքով կարմիր ներկած Հայաստանը ծուղակի մեջ ձգել և խորհրդային դարձնել, այժմ էլ եզվիտ միջնորդի դերն է կամենում ստանձնել և իբր թե բարիք անել ծվատված Հայաստանին:

Ահա՛, ինչ եղանակով է կամենում խաբել Ձանգեզուրի գյուղացիությանը նրան բարեկամ ձևացող բուլշևիկ ռուսն ու հայը:

**ՁԱՆԳԵԶՈՒՐԻ ԳԱՎԱՌԻ ԱՊՍՏԱՍԲ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ
ՀՐԱՄԱՆԱՏԱՐՈՒԹՅԱՆԸ**

Ռուսական կարմիր բանակը գտնվելով Ձանգեզուրում երբեք հետամուտ չէ եղել նվաճման դիմելու կամ բռնագրավումներ կատարելու, նամանավանդ նա երբեք իրեն չի համարել Հայաստանի հետ պատերազմական դրության մեջ: Կարմիր բանակին քաջ հայտնի է, որ Ձանգեզուրի ժողովրդի ապստամբությունն իր դեմ հետևանք է ձեր հերյուրված ու ոճրագործ պրոպագանդայի, որ իբր թե դա կարմիր բանակը չէ, այլ Ադրբեջանի վարձկաններն են և այդպիսի ուրիշ շատ տեսակ հերյուրանքներ: Կարմիր բանակին նույնպես հայտնի չէ, որ Ձանգեզուրի ժողովրդի մեծամասնությունն ապստամբվել է իր դեմ ինքնաբերաբար, այլ ի դեմս Հայաստանից եկած կանոնավոր զորամասերի, ձեր զանազան տեսակի սպառնալիքների ազդեցության տակ¹:

Այդ հիման վրա առաջարկում են

48 ժամվա ընթացքում վերադարձնել Գորիսում մնացած մեր հիվանդ ու վիրավոր և հոկտեմբերի 15-ից կռիվներում գերված զինվորներին, Գորիսում մնացած բոլոր գույքն ու ռազմամթերքը, նաև հիշյալ ժամանակամիջոցում հեռացնել Ձանգեզուրից կանոնավոր զորամասերը, իսկ ապստամբ ժողովրդին տեղավորել իրանց բնակավայրերում: Միաժամանակ հայտարարում են, որ ապստամբների կայքի ու գույքի ապահովությունը, անձի անձեռնմխելիությունն երաշխավորվում է այն պայմանով միայն, եթե նրանք կհանձնեն իրենց ունեցած զենքերն ու զինամթերքը: Հակառակ պարագայում ռուսական սովետական կառավարությունը կիրառարվի Հայաստանի և տաճկա կան հեղափոխական զորքերի միջև կնքվող հաշտության միջնորդությունից:

Սպասում են պատասխանի մինչև 24 ժամ

23-ին նոյեմբերի 1920թ., ժամը 11-ին, N 21, 28-րդ հրացանաձիգ դիվիզիայի զինվորական կոմիսար (ստորագրություն):²

28-րդ դիվիզիայի զինվորական կոմիսարը կամ իրագեկ չէ իրողության և կամ գիտությամբ թաքցնում է ճշմարտությունն և հոխորտալով ու մեղքը բարդելով Հայաստանից եկած կանոնավոր զորամա

¹ 28-րդ հրացանաձիգ դիվիզիայի զինվորական կոմիսարը միանգամայն վարագուրում է ճշմարտությունը և մոռացության տալիս հոկտեմբերի 14-ին N 29 իր գաղտնի հրամանը 83-րդ և 84-րդ բրիգադաների անունով ապստամբված գյուղացիությունը ճնշելու համար, ուր ոչ մի խոսք չկա հայկական կանոնավոր զորամասերի մասին: Երեւի նա ենթադրում է թե ռուս կարմիր բրիգադաները կարող են ջարդվել կանոնավոր զորքի ձեռքով, և ոչ ապստամբ հայ գյուղացիների:

² Թարգմանությունն ռուսերենից

յերի վրա, որ երբեք էլ չի եղել, 48 ժամվա վերջնագրի ծևով հետ է պահանջում գերիներին ու զինվորական ավարը: Բայց դառն իրականությունը շուտով երևան է գալիս և ցուցադրում 28-րդ դիվիզիայի հրամանատարության խաղալիք կոմերիան: 83-րդ և 84-րդ բրիգադաների մի քանի հարյուր կարմիր զինվորները, որ հազիվ հազ փախչելով դեպի Ջաբուլ՝ իրանց կյանքն էին փրկել, կրիտիկական վիճակի մեջ էին: Երբա չէին կարողանում առաջ անցնել, որովհետև Յաջի Սամուրի թրջությունը լսելով ռուսների Ձանգեզուրում ջարդվելն և նահանջը Թթու-ջրի կողմից փակել էին նրանց ճանապարհը դեպի Սուշի՝ թալանելու նպատակով, իսկ հայ ապստամբները Ջաբուլի շրջանում կազմ պատրաստ հրամանի էին սպասում առաջ շարժվելու: Բուլշևիկ զինվորները մինչև իսկ մի քանի օրվա պաշար չունեին սովամահ չլինելու համար և ոչ էլ հնարավորություն ունեին իրանց վիրավորներին խնամելու: Այդ կրիտիկական վիճակից ելնելու համար 84-րդ բրիգադայի հրամանատարը նոյեմբերի 24-ին երեք հոգուց բաղկացած մի պատգամավորություն է ուղարկում Սպարապետ Նժդեհի մոտ, որոնց միջոցով հայտնելով իրանց դրությունը, թուրքերի անընդհատ հարձակումները, հացի և այլ պարենի պակասությունը, ճանապարհների փակ լինելը՝ խնդրում է նրան օգնել իրանց ճանապարհ բանալու կամ դեպի եվլախ գնալու և կամ թե իրանց զենքերն ու այլ ռազմամթերքը ստանալ և իրանց էլ ճանապարհել երևան: Այդ երեք ռուսներին պահում են Կոռընձոր գյուղում մինչև Սպարապետ Նժդեհի վերադարձը, որ այդ ժամանակ գործով անցել էր Սիսիանի կողմը:

Պատվիրակների վերադարձը մի քանի օր ուշանալու պատճառով առիթից օգտվելով և կանենալով պրովոկացիոն հայտարարությամբ ապստամբ ժողովրդի և նրա հրամանատարության մեջ տարածայնություն առաջ բերել նույն դիվիզիայի քաղաքական բաժանմունքն իսկույն ևեթ հետևյալ ստահող հայտարարությունն է տարածում Ձանգեզուրի գյուղացիության մեջ

ՍՄԵՆ ՄԻ ԱՊՍՏԱՍԲԻ ՌԷՆԴՐՈՒԹՅԱՆԸ

Հայտնի է՝ արդյոք քեզ, որ ՌՍՖՍՀ կարմիր բանակի հրամանատարության կողմից ուղարկված է քո հրամանատարների մոտ երեք հոգուց բաղկացած խաղաղարար մի պատգամավորություն ապստամբների հետ նախնական հաշտություն կնքելու համար:

Արդյոք դու իրագեկ ես, որ սովետական Ադրբեջանի կենտրոնական իշխանությունը և ՌՍՖՍՀ կարմիր բանակի բարձրագույն հրամանատարությունը ձգտում է խաղաղ ճանապարհով լուծել մի կողմից ապստամբների և մյուս կողմից սովետական իշխանության ու կարմիր զորքի մեջ ծագած վեճը: Հայտնե՛լ են արդյոք քեզ քո ղեկավարները, որ կարմիր բանակի հրամանատարությունն և Ադրբեջանի սովետական իշխանությունը կարող կլինեն հրաման տալ կարմիր

բանակի զորամասերին մաքրել Ձանգեզուրն ու Ղարաբաղը եթե ապստամբները կհրաժարվեն (?) ազգայնական ավերումներից և բուրջական կոտորածից

Եթե այդ բոլորը հայտնի չէ քեզ, ապա ուրեմն այդ ամենը թաքցրել են քեզանից ապստամբության ղեկավարներն ու պարագլուխները:

Երևում է որ մեր խաղաղարար պատգամավորները կամ սպանված են քո սպաների ձեռքով կամ բանտարկված:

Եթե այդ այդպես է, ուրեմն պարզ է, որ քեզ խաբել են

Իսկ եթե դու կատարյալ գիտակցությամբ սուրը ձեռքիդ դեմ ես գնում քո աշխատավոր եղբայրներին, եթե դու ինքդ սպանել կամ բանտարկել ես մեր խաղաղարար պատգամավորներին, ապա իմացած լինես, որ այն ժամանակ չնայած մեր բոլոր ցանկության հաշտվելու քեզ հետ մենք ստիպված պիտի լինենք վարվել քեզ հետ անողորմ կերպով

Ռուսական կարմիր բանակը որը ջարդել է բարոն Վրանգելի տասնյակ հազարավոր սպիտակ գվարդիայի բանդաները կարող կլինի պաշտպանել նաև սովետական Ադրբեջանը

N դիվիզիայի քաղաքական բաժանմունք ¹

28-րդ դիվիզիայի զինվորական կոմիսարի Շուշուց ուղարկած առաջարկությունն և սպառնալիքն և 84-րդ բրիգադայի հրամանատարության կողմից եկած պատգամավորների առաջարկը և ապստամբներին ուղղած հայտարարությունը Ձանգեզուրի հրամանատարության կողմից մնում է անպատասխան: Եվ ահա Ավդալլաբի և Ջաբուդի կիրճերում 84-րդ բրիգադայի մնացորդ զինվորների հրամանատար Սեմյոնովը գնդապետ Նժդեհի անունով սույն թվի նոյեմբերի 26-ին պաշտոնական գրություն է ուղղում՝ ուր դարձյալ հին երգն երգելով և բուլշևիկների ծրագրի որոշ տողերն անվերջ կրկնելով՝ խաղաղ բնակչության առաջարկն է անում: Այդ գրության մեջ ուշագրավ է կրկին անգամ այն քաղաքականությունը, որ դասի պես սերտել են բուլշևիկ գործիչներն և Սպարապետ Նժդեհին ուղղած հրանց գրության լեյտմոտիվն է կազմում: Այդ այն է, որ խորհրդային Ռուսաստանը միջնորդի դեր է ստանձնել հայերի և տաճիկների մեջ կնքվելիք հաշտության և որ Նժդեհին՝ իր կարմիրների դեմ ունեցած գործողությամբ, խանգարում է այդ բանակցության խաղաղ ընթացքը:

Բայց ամենից ուշագրավը 84-րդ բրիգադայի հրամանատարի այդ գրության մեջ խաղաղության բանակցության համար առաջադրված պայմաններից առաջին կետն է, որ հիշված է, թե հայ աշխատավոր ժողովուրդը Հայաստանում արդեն ապստամբության դրոշն է

¹ Թարգմանություն ռուսերենից

բարձրացրել սովետական իշխանություն հիմնելու համար Որտեղի՞ց կարող է Ավդալարի ծորերում պարփակված 84-րդ բրիգադայի հրամանատարին դեռևս նոյեմբերի 26-ին հայտնի լինել, թե Հայաստանում հեղափոխություն է բռնկվել, երբ իրոք այդպիսի հանգամանք տեղի չէր ունեցել և ոչ ոք էլ այդ ժամանակ չէր մտածում Հայաստանը սովետականի փոխելու: Ո՞ր շրջանի կամ քաղաքի բնակչությունն էր ապստամբվել իր հարազատ կառավարության դեմ: Իրականության մեջ այդպիսի ապստամբության դեպք տեղի չէ ունեցել նոյեմբեր ամսին, բայց այդ անամա հայտարարությունից մի բան է պարզվում մեզ համար որ 11-րդ կարմիր բանակի Բաքվի շտաբում վաղուց ի վեր գաղտնի ծրագրված է եղել օգտվել հայ-տաճկական այդ դժբախտ պատերազմից և նախորոք զորամաս մտցնել Հայաստանի տերիտորիան Աղստաֆայի գծով դեպի Ղազախ ու գրավել ժվատված Հայաստանը:

Ահա՛ այդ գաղտնիքն է, որ երևան է հանում Սեմյոնովը նախքան դեպքերի կատարվելը: Եվ այս բոլորից հետո լինել այնքան անպատկառ, այնքան խաբեբա, որ պաշտոնական գրության մեջ անգամ չվարանել ստախոսությամբ վարագուրելու իրանց սև նպատակը՝ արտաքուստ իրանց բարեկամ ցույց տալ աշխատավոր հայ ժողովրդին, իսկ գաղտնի տաճիկների հետ դավեր լարել այդ նույն տանջված ժողովրդի դեմ և տասնյակ հազարավոր բնակչության կոտորածի, գերության ու գաղթի մատնել՝ մի՞թե կարող է ավելի տմարդի արարք լինել ավելի խորամանկ ու ստոր միջոց, քան գործադրում է բուլշևիկ հրամանատարությունն արևելյան «սակավ գիտակից» մասսային գրավելու և խաբելով՝ նրան անդունդը գլորելու: Ահա՛ թե ինչ է ասում այդ կարևոր փաստաթուղթը

ՁԱՆԳԵԳՈՒՐԻ ԱՊՍՏԱՍԲ ԶՈՐԱՍԱՍԵՐԻ ԳՐԱՍԱՆՎՏԱՐ ԳՆՂԱՊԵՏ ՆԺԴԵՅԻՆ

Ձանգեգուրի հայ ժողովրդի և Ղարաբաղի մի մասի ու ՌՍՖՍՀ կարմիր բանակի մեջ տեղի ունեցող փոխադարձ կռիվների հիմնական պատճառներից մեկն է ժողովրդական մասայի մեջ սովետական իշխանության իսկական հիմնունքների մասին առաջ բերած թյուր կարծիքը՝ նանանավանդ ազգայնական հարցը. այլև արդյունք է դա հայկական ապստամբ զորամասերի հրամանատարության ազգային թշնամական պրոպագանդայի, որն առաջ է բերում հայ և թուրք բնակչության փոխադարձ մասսայական կոտորած:

Հեղափոխական Ադրբեջանի Խորհրդային Հանրապետության սովետական իշխանությունն և ՌՍՖՍՀ Հանրապետության կարմիր բանակի հրամանատարությունը հեռու են ազգայնական անջատ քաղաքականությունից և Ձանգեգուրի ու ամբողջ Անդրկովկասի աշխատավոր ժողովրդի ճնշումից

Բովանդակ աշխարհի կապիտալիստների դեմ ուղղված հեղափոխական անողոք կռիվով ՌՍՖՍՀ. կարմիր բանակն և Ռուսաստանի ու Ադրբեջանի խորհրդային հանրապետական կառավարությունները կիրառում են իրենց դասակարգային հեղափոխական ծրագիրն աշխարհիս աշխատավորության վրայից իրենց ճնշողներից ամեն տեսակի գրկանքները վերջնականապես ոչնչացնելու նպատակով:

Ամբողջ աշխարհի աշխատավորության մեջ եղբայրական հարաբերություններ ստեղծելու համար առաջ եկած այդ հեղափոխական ձգտումները՝ մասնավորապես Անդրկովկասի ազգերի հանդեպ մի ավելորդ անգամ ևս ընդգծում է այն հանգամանքը, որ ՌՍՖՍՀ արդեն փաստորեն ճանաչել է Դադստանի ինքնավարությունը:

Ոչնչացնելով արևմուտքի և հարավի իր թշնամիներին՝ սովետական իշխանությունը վճռել է ամենակտրուկ միջոցներով, խաղաղ ճանապարհով վերջ դնելու ռազմական գործողություններին նաև Անդրկովկասում (Ձանգեզուրում և Ղարաբաղում): Ռուսի, Ձանգեզուրի և Ղարաբաղի մի մասի բնակչության ազգայնական խմբակցության եղբայրական հարաբերություններն ամուր հիմքերի վրա դնելու նպատակով Ձանգեզուրում և Ղարաբաղի մի մասում գտնվող ՌՍՖՍՀ կարմիր բանակի զորամասերի զինվորական հրամանատարությունն առաջարկում է Ձեզ նախնական համաձայնության հետևյալ կետերը.

1. Չցանկանալով հայ աշխատավոր ժողովրդի հետագա արյունահեղությունն, որն արդեն ապստամբվել է Հայաստանում սովետական իշխանություն հաստատելու նպատակով, անմիջապես դադարեցնել ռազմական գործողությունները այդպիսին վերջացնելու համար դիմել բանակցության:

2 Ռազմական գործողություններին վերջ դնելու նպատակով բանակցություններ վարելու համար ուղարկել ներկայացուցիչներ Ձաբուղ գյուղը, ուր Ձեր համաձայնությունը ստանալուց հետո կգան ՌՍՖՍՀ կարմիր բանակի հրամանատարության ներկայացուցիչները:

Ձանգեզուրում ռազմական գործողություններին վերջ դնելու համար մեր առաջարկած պայմաններն են.

Ա Անմիջապես արձակել իրանց հայրենի գյուղերը հայ բնակչության ապստամբ զորամասերը՝ իրանց խաղաղ աշխատանքին անցնելու:

Բ. Վերջ դնել մուսուլման ժողովրդի վերաբերյալ թշնամական ամեն տեսակի ագիտացիայի, որպեսզի առիթ չլինի միմյանց բնաջնջող հետագա կռիվների գործողության:

Գ Բացի ժողովրդի մոտ գտնված թրերից և սրերից հանձնել ՌՍՖՍՀ կարմիր բանակի օրգաններին թե առձեռն գտնված և թե պահեստներում ունեցած բոլոր տեսակի զենքերը, որովհետև ազգայնական հողի վրա տեղի ունեցած նորանոր կոտորածներին վերջ կդրվի միմիայն այն ժամանակ երբ հայ և մուսուլման ժողովրդներն ամբողջովին կզինաթափվեն:

Դ վերադարձնել ՌԱՖՍԳ կարմիր բանակի զորամասերից խլած բոլոր զույքը, բոլոր հիվանդներին վիրավորներին և գերի ընկած կարմիր զինվորներին:

ՌԱՖՍԳ կարմիր բանակի զինվորական հրամանատարությունն ու Ադրբեջանի սովետական իշխանությունն երաշխավորվում են կատարյալ ապահովություն հայ ժողովրդի խաղաղ աշխատանքի և ապստամբների անարգել վերադարձն իրենց բնակավայրերը:

ՌԱՖՍԳ կարմիր բանակի զինվորական հրամանատարությունն առաջարկում է Ձեզ աջակցել սովետական իշխանության օրգաններին և կարմիր բանակի զորամասերին Ձանգեզուրի և Ղարաբաղի հայ և թուրք ժողովրդների մեջ կյանքի կայուն ու խաղաղ պայմաններ ստեղծելու գործում:

ՌԱՖՍԳ կարմիր բանակն եկել է Ձանգեզուր և Ղարաբաղ ոչ թե կատեռազմելու նպատակով, այլ այդ շրջանների երկու իրար թշնամի և իրարու ոչնչացնող խմբերի միջև եղբայրական հարաբերություն հաստատելու և բարձրացնելու նրանց կուլտուրան և բարգավաճումը:

Ներկա րոպեին Ռուսաստանի սովետական կառավարությունը միջնորդի դեր է կատարում՝ բանակցություններ վարելով Հայաստանի և տաճիկ հեղափոխական զորքերի մեջ հաշտություն կնքելու համար:

Մի խանգարեք այդ հաշտության գործին մի հրեք սակավ գիտակից հայ ժողովրդին դեպի իզուր կռիվներ, որովհետև Ձեր հաջողությունները չեն կարող պայմաններ թելադրողի հաջողություններ լինել:

Հաշտության պայմաններ կթելադրե Հայաստանի ապստամբ ժողովուրդն և հայկական կարմիր բանակն ինչպես ՌԱՖՍԳ կարմիր բանակի նոր օղակը:

Սարտական զորաճակատի հրամանատար *Սեմյոնով*
Ձինվորական կոմիսար (ստորագրություն)

26 ին նոյեմբերի 1920թ

Հաստատ համոզված լինելով որ կարմիր զորաբանակի հրամանատարության պաշտոնական գրության մեջ բազմիցս հիշված սպառնալիքները լույ խոսքեր են միայն, որոնք ցույց են տալիս իրանց անզորությունը՝ Սպարապետ Նժդեհը չէ վերադարձնում նրանց ոչ գերի և ոչ էլ գրաված ռազմամթերքը, բայց և դեմ չլինելով հաշտության բանակցություններին, թեև խորապես գիտակցում է, որ բուլշևիկյան հաշտությունը վաղանցուն է, նա որոշում է նրանց պաշտոնական գրություններին և ուղարկած պատգամավորներին պատասխանել մի

¹ Թարգմանություն ռուսերենից

ընդարձակ գրությամբ, ուր առիթից օգտվելով և մի առ մի թվելով նրանց բոլոր տմարդի արարքները Ջանգեզուրի, Ղափանի և Սիսիանի հայ աշխատավորության շրջաններում, նրանց ձեռքով կատարած արյունահեղությունը, բռնաբարությունները և ավերը՝ նշավակության սյունին է գամում հեղափոխականի անվան տակ գործող բուշկիկներին և նրանց բարբարոսության ամբողջ պատկերն է տալիս հետևյալ պաշտոնական գրության մեջ

ԿՈՐՄԻՐ ՋՈՐԱՍՍՍԻ ՊԵՏԻՆ ԵՎ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍՍՐԻՆ

«Ջանգեզուրի ապստամբական հրամանատարությունն» ընդունում է Ձեր առաջարկությունը՝ հաշտության բանակցություններ սկսելու համար, բայց ոչ Ջաբուղ գյուղում, այլ Գորիսում, որտեղ և առաջարկում է ուղարկել Ձեր լիազոր ներկայացուցիչներին:

Օգտվելով առիթից ավելացնում են՝

Դուք Ձեր անթիվ ու անհամար թերթերում, թռուցիկներում, ինչպես և Ձեր ուղարկած վերջին երկու գրությունների մեջ Ջանգեզուրի աշխատավոր մասսաների ապստամբության և Ձեր անհաջողության պատճառը համարում եք Ջանգեզուրի ապստամբական հրամանատարությունը:

Ինչպիսի՞ ինքնախաբեություն

Արյան ու երկաթի սիստեմը, որով Դուք կառավարել եք ու շարունակում եք կառավարել ժողովուրդը, հեղափոխական դեմոկրատիայի ու պատմության կողմից վաղուց ի վեր թքված ու դատապարտված այդ սիստեմը Ձեզ շատ հեռուն բնական է տանել չէր կարող

Խոսեն կոնկրետաբար

Ղափանին տիրելու համար Դուք ավանգարդ ունենալով դարեր շարունակ հայի արյուն քրտինքով ապրող ռեակցիոն թրքությունը՝ հրի ու սրի եք մատնում շրջանիս գյուղերից ամենաբարեկեցիկը - Ջեյվան, և Ձեր այդ վանդալական ակտը համարում հեղափոխական:

Դուք կրկնում եք Ձեր հարձակումները Արծվանիկի վրա և Ձեր սանձարձակ արարքներով, կին ու երեխաների կոտորածով ու բռնաբարումներով մեզ հիշեցնել եք տալիս տխրահռչակ ենիչերիների ձեռքով կատարված բարբարոսությունները:

Դուք քառասուն օր շարունակ ոմբակոծում եք Շիվանիձորը և երբ երկու հայ դավաճանների դավադրությամբ Ձեզ հաջողվում է մտնել այդ չարաբախտ գյուղը Դուք այնտեղ քարը-քարի վրա չեք թողնում: Տեղի են ունենում սովորական սպանություններ, կին ու աղջիկների բռնաբարումն, ալան-թալան և մահն ենիչերական ակտեր:

Ես հրամայել եմ հավաքել Ձեր բնդանոթներից, ոմբածիզներից ու գնդացիրներից այս գյուղի գլխին թափած ամբողջ երկաթն ու

արճիճը և նրանից Արաքսի ալիին, մի բարձր սարի վրա, կանգնեցնել մի տխուր կոթող այս սեղմ արձանագրությամբ. «Նրանց անունը կարմիր էր գործերը՝ սև: Թող հավերժ անիծված լինեն նրանք».

Դուք տաճիկ ասկյարներով պաշարում եք Եայջին, տեղահա նում ժողովրդին և թալանում: Պանիկայի մատնված ժողովրդի մի մասը կոտորվում է գյուղի պատերի տակ, մի մասը՝ թափվում գետը խեղդվում, իսկ ազատվածները գյուղի վերագրավումից հետո անիծե լով իրենց օրն ու արևը, մերկ ու քաղցած գալիս ու ծվարվում են իրենց ավերված տներում:

Եվ այդ բոլորից հետո դուք միամտորեն զայրանում ու զարմա նում եք և առանց խղճի խայթի շարունակում եք ճառել աշխատավո ռության շահերից:

Ահա՛, ինչով և ինչպես աշխատավոր գյուղացիության զգվանքն ու թշնամանքը շահեցիք և ստիպեցիք նրան անպատիվ կյանքին գերադասել պատվավոր մահը

Այլևս գաղտնիք չէ աշխարհի համար որ Ձեր դրոշակի տակ գործում են արևելքի անեծքն ու ամոթը կազմող օսմանյան քարդա- րար ու հայակեր փաշաները:

Տաճկա-Հայաստանի վեց վիլայեթներում մահվան թագավորու թյուն ստեղծող (ու՞թ հարյուր հազար անթաղ մեռելներ!) հուչակավոր էնվեր ու խալիլ մարդակերներն այսօր Ձեր քաղաքական և զինվո ռական խորհրդատուներն են հանդիսանում:

Դուք հանում Ձեր ուտոպիստական ցնորքների չվարանեցիք Բենալի հայաջինջ հորդաները Հայաստան քաշելու և նրանց սրին ու սվինին մատնելու հայ աշխատավորության ֆիզիկական գոյությունն ու նրա դարավոր քրտինքի արգասիքը

Ու այդ բոլորից հետո դեռ Ձեզ զարմացնում է հայ մասսաների ապստամբությունը:

Օսմանյան ռեակցիոն փաշաներն ու սոցիալիզմը!

Արևելքի բորենիներն ու հեղափոխական աշխատավորությունը! Ի՞նչ արսուրդ, ի՞նչ պղծանք ու հայիոյանք սոցիալիզմի ու հեղափոխության հասցեին

Պատմությունը, անկաշառ պատմությունն իր խոսքը, իր անեծ- քի խոսքն ունի ասելու նրանց, որոնք հանում իրենց քաղաքական ու ռազմագիտական նպատակների պրոֆանացիայի ենթարկեցին մարդ կության տառապող մասի կրոնը հանդիսացող սրբազան սոցիա լիզմը:

Դուք գիտեք, որ Ղարաբաղի գյուղացիության ամեն մի շունչն ամբողջ տարվա համար ունի մի փթից մի քիչ ավելի հացահատիկ իսկ զանգեզուրցին՝ մոտ մեկ ու կես փութ: Դուք գիտեիք այդ կա ստատիստիկա: Գիտեք և այն, որ երկու ամսից հետո սովն ու տիճն այդ դժբախտ գյուղացիության մեջ կունենան առատ հունձ: Այդ գիտե նալով հանդերձ Դուք շարունակում էիք նոր ուժեր քաշել Չանգեզուր

Ձեր տրանսպորտն ուժեղացնելու նպատակով Դուք վերջին գրաստը խլեցիք հայ աշխատավորներից: Գորիսի պատերի տակ ու ճանապարհների վրա թափափված հազարավոր բեռնակիր անասունների լեշերը շատ բան են ասում Ձեր դաժան անմարդասիրության մասին:

Սակայն միայն տնտեսական քայքայումով չեք բավականացել Դուք

Սոցիալապես քայքայել եք ու գլխատել Ձանգեզուրի բոլոր հասարակությունները:

Ով Ձեր շարքերում չի եղել դուք նրան Ձեր թշնամին եք համարել ու ոչնչացրել:

Ձաբուղի սպանդանոցն ու Գորիսի բարդուղիմեոսյան գիշերները դեռ չեն մոռացվել:

Ես տեսա Ձեր ստեղծած կատակոմբերը և Ձեր զոհերից շատ Ձեզ համար ցավացի:

Եվ հենց Ձեր այդ խելագար ու մասսայական տեռորը, Ձեր տեռորի հունձը մեծապես արագացրեց Ձեր պարտությունը: Դա ճշմարտություն է, ընդունեցեք:

Դուք վաղուց եք թքել բոլոր տեսակի բարոյական սկզբունքների ու հասկացողությունների վրա:

Ձեզ համար չկա սրբություն:

Ձեր չեկերի դեզերը, Ձեր բոսիզմը կաշառման սիստեմը Ձեր առանձին պոստերը, որոնց առաջ նսեմանում են ցարական բոլոր տեսակի ժանդարմական վարչություններն ու օխրանկաները,¹ Ձեր հարուցած կատաղի հալածանքն ազատ խոսքի ու մտքի դեմ, Ձեր արճի և սվինի լեզուն, որ ժողովուրդը չուզեց հասկանալ, Ձեր շափոնաժը,² Ձեր չրեզվիչայկաները, Ձեր խորհրդավոր սպանություններն ու հարյուրներով պատանդ վերցնելու խայտառակ սիստեմը, Ձեր քաղաքական անհամբերությունն ու աղանդավորությունը՝ ահա Ձեր պարտության պատճառները: Ընդունեցեք դա էլ է ճշմարտություն:

Ձեր նվաճած վայրերում դուք զինեցիք հասարակության տակաճքերը և նրանցով՝ նախկին ժանդարմներով, չրտեսներով գրպանահատներով, գողերով ավազակներով, շանտաժիստներով ու նման քրեական տիպերով, խտացրիք Ձեր շարքերը:

Ո՞վ է Արմենակ Ղարազյոզյանը:

Քաղաքական մի ողորմելի ավանտյուրիստ, մի հոգեկան հի վանդ, մի սադիստ, որն իր անմեղ ու անզեն զոհերին բարբարոսաբար մորթել է տալիս և հրճվում:

¹ Ցարական պահնորդական ծառայություն – ռուսերեն «Չայրենիք» Ակումբ:

² Լրտեսություն – ռուսերեն «Չայրենիք» Ակումբ

Այդ «կարմիր» ստահակը, որի փոշտոցով նստում ու կանգնում էք Դուք (իր խոսքերով), իր հոր վրեժը լուծելու համար պատրաստ է կարմիր բանակն և Ջանգեզուրի աշխատավոր գյուղացիությունն ոչնչացնել:

Ո՞վ է Երեմա Բակունցը¹ Սուշեղ Ջաքարյանը

Մեկը մյուսին արժող երկու կուսակցական դասալիքներ իրենց կատարած կեղծումների համար թե կուսակցությունից և թե Ջանգեզուրի կենտրոնական խորհրդից դուրս քշված:

Ո՞վ է Տիգրան Մելիք-Շահնազարյանը:

Թողենք, որ ինքն որակե իրան:

«Ընկերներ,- անձնասպանությունից առաջ գրում է վերջինս խաբված ենք, խաբված բոլորս:

Ադրբեջանում՝ սկսած Նարինանովից չի եղել և չկա մի հատիկ բուլշևիկ:

Մուսավաթը, հին մուսավաթն է գույնը փոխել և մեզ խաբել. Դարձի եկեք, ընկերներ, դարձի, քանի դեռ ուշ չէ: Ես գիտակցորեն չեմ դավաճանել հայ աշխատավորությանը, բայց անգիտակցորեն ծառայել եմ ռեակցիոն Ադրբեջանին: Ես խոստովանում եմ իմ մեղքը թող Աստված ու պատմությունը ներեն ինձ: Մեռնում եմ»

Ահա՛, ճշմարտություններից ամենատարրականը ընդունեք

Դուք անվերջ խոսում եք գրում հայ և թուրք աշխատավորության համերաշխության ու եղբայրության մասին և միաժամանակ շատ տեղերում թուրք աշխատավորությունը հանում հայերի դեմ նրանց ձեռքով թափում հայի արյունը, ավերում հայ գյուղերն և այսպիսով՝ ավելի խորացնում ազգային անտագոնիզմը:

Դուք հաշտություն եք առաջարկում ինձ իսկ Ադրբեջանի 7 ինժինեռներն ու տեխնիկները հոկտեմբերի 5-ից սկսած աշխատում են Ջիբրայիլի գավառում, որպեսզի Ջանգեզուրի լեռնային մասերը քնդանոթներ տեղափոխելու հնարավորություն ստեղծեն:

Դուք զինաթափել եք հայ աշխատավորությանն և շարունակում եք այդ տխուր գործը, երբ մինչև ատամները զինված մուսավաթական Ադրբեջանը հարմար առիթի է սպասում Ջանգեզուրն առանց հայի թողնելու:

Ձեզ խաբվածներիդ համար Ադրբեջանը սովետական է իսկ հայ աշխատավորության համար դա մնում է նույն ռեակցիոն հայահալած մուսավաթական «հանրապետությունը», որի դիվիզիաները դեռ տարին չէ լրացել, ինչ փորձեցին Ջանգեզուրը հրի ու սրի մատնել բայց ջարդվելով Ջաբուղում՝ հետ քաշվեցին:

¹ Երեմիա Սայադի Բակունցը ծնվել է 1892թ. Գորիսում. եղել է Ջանգեզուրի հեղկոմի նախագահ, ԴԽՍՀ Գերագույն հեղափոխական տրիբունալի նախագահ, ԴԿԿ Կենտկոմի քարտուղար Գնդակահարվել է 1938թ.: «Դայրմմրք»՝ Ալունք

Լսեք և այս ճշմարտությունը

Մեր ձեռքն են ընկած մի շարք դոկումենտներ որոնք այլ բան են ասում Ադրբեջանի մասին

Թվում է, որ այժմ քիչ բան չէ պարզված և Ձեր լիազոր ներկայացուցչի Լեգրանի համար

Մոսկվան և Դուք, բոլորդ խաբված եք քեմալիստներից Այդ բանը, ըստ իմ ունեցած տեղեկությունների արդեն պարզված է և Մոսկվայի և Լեգրանի համար:

Հեղափոխական լոզունգներով Քեմալը և ընկերությունը քողարկել են իրենց պանիսլամական անենառեակցիոն նպատակները:

Պանիսլամիստների, որոնք շատ են Ձեր դրոշակի տակ նպատակն է միանալ Ադրբեջանի հետ տիրել Բաքվին, կապվել Դադստանի հետ և քշել ռուսներին Գյումրիսային Կովկասից:

Եթե լայն և ստույգ ինֆորմացիա ունեք քաղաքական աշխարհից, ապա այդ բանը վերջին օրերս պետք է հայտնի լիներ և կարմիր հրամանատարությանը

Վերջացնելով երկար գրությունս երկու խոսք էլ ասեմ իմ մասին

Ես որին այնքան հայիոյում են Ձեր թերթերն ու թռուցիկները ավելի շեշտված ու հիմ սոցիալիստ են քան ձեզ մոլորեցնող մարիմանովներն ու կարակները:

Հանում իմ հեղափոխական հավատամքի եղել են բոլոր բան տերում, Արաքսի ափից մինչև Պետրոգրադ: Ավելի քան երեք տարի ես շղթաներ են մաշել բանտերում և արստրավայրերում: Կռվել են և կռվելու են բռնության դեմ, ինչ քողի տակ և ինչ գույնով էլ որ դա երևան գա՝ ճնշելու հեղափոխական աշխատավորությունը:

Կռվել են թուրք աշխատավորության ազատության համար Պարսկաստանում, Բալկաններում՝ Մակեդոն ժողովրդի փրկության համար: Կռվում են և այսօր:

Եթե իմ օգնության կարիքն երբևիցե զգացիք դիմեք կիսանձն

Նժդեհ

1920թ 30 նոյեմբերի Գորիս

Սպարապետ Նժդեհի այդ պատասխանը որ ամփոփում է իր մեջ դառն ճշմարտության ամբողջ շարան, մի առ ժամանակ լռեցնել է տալիս 28-րդ դիվիզիայի կարմիր հրամանատարության և քաղաքական նուրբ նկատառությամբ արգելք հանդիսանում նոր դիմումների:

Բայց մեր դժբախտ իրականության մեջ անակնկալ դեպքերն արագությամբ հաջորդում են միմյանց և շատ անգամ առիթ ծառայում քայքայելու այն ամենը, ինչ որ ազգի անենալավ զավակների գերմարդկային ջանքերով ստեղծագործվում է հայ ժողովրդի գոյության և նրա բարեկեցիկ կյանքի համար: Քեմալ փաշան խալիլ բեյի միջոցով

նյութական օժանդակություն և որոշ հրահանգներ ստանալով Սոսկ վայի սովետական իշխանությունից և առիթից օգտվելով՝ կամեցավ միանգամայն ուժասպառ անել հայերին և նրա Հանրապետության ամենակարևոր մասը գրավել: 1920թ. աշնանը, առանց պատերազմի հայտարարության, Էրզրումի և Ալաշկերտի կողմից առաջ է շարժում իր զորքերը Հայաստանի Հանրապետության սահմանները և գրավում նրա երկրամասերի համարյա երեք քառորդ մասը՝ մի կողմից մինչև Համանլու, մյուս կողմից մինչև Մարգարա գյուղի մոտ գտնվող Արաք սի կամուրջը, իսկ առիթից օգտվելով՝ նույն ժամանակ ռուս կարմիր զորքերը Նախիջևանի թուրքերի հետ միացած գրավում են մինչև Գայլի դրունքը: Այդ անսպասելի քաղաքական ակտն առիթ է ծառայում Հայաստանի Հանրապետության կաբինետի փոփոխության, իսկ նոր նախարարական խորհուրդը տաճիկների հետ ունեցած բանակցության ընթացքում նկատելով տաճիկ հրամանատարության նորանոր չափազանց մեծ պահանջներն և այդ առթիվ ստեղծված քաղաքական ներքին կյանքը, ի նկատի առնելով և այն ուշագրավ հանգամանքը, որ բոլշևիկներն օգուտ քաղելով Հայաստանի նեղ դրությունից՝ նույնքեր ամսին Աղստաֆայի կողմից իրանց զորամասերն են մտցրել Իջևան (Քարվանսարա) և Շարուր, որի առթիվ տեղի ունեցած բողոքին խոր հրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Լեգրանը՝ կամենալով վարա գուրել կարմիրների այդ քայլը, բացատրում է այդ դեպքը թյուրիմացությանը, և թե զորամասերը շուտով հետ կերթան, որն և չի կատարվում, Հայաստանի նախարարական խորհուրդն աչքի առաջ ունենալով միմիայն հայ ժողովրդի ֆիզիկական գոյության և նրա երկրի պահպանության խնդիրներն՝ որոշում է Հայաստանի Հանրապետությունը հայտարարել խորհրդային, կառավարության ղեկը հանձնել կոմունիստ կուսակցության, որը թիկունք ունենալով Մեծ Ռուսաստանի խորհրդային իշխանությունը՝ միշտ իր պաշտոնական գրության և խոսակցության մեջ հայ ժողովրդի իբր թե բարեկեցության և անկախության միակ պաշտպան և օգնական համարում էր Ռուսաստանի ներկա բանվորական կառավարությունը:

Իշխանության ղեկն Հայաստանում իրանց ձեռքն առնելով հայ, ռուս, թուրք և վրացի կոմունիստներին չէ հաջողվում ոչ միայն տաճիկներին մի քայլ անգամ հետ քշել գրաված վայրերից, այլև մնում են կարկամած նոր անակնկալների առաջ, որովհետև տաճիկ հրամանատարությունն իր գլխավոր նպատակին հասնելով և այլևս կարիք չգալով կարմիրների օգնության քայքայում են Ալեքսանդրապոլի ռևկոմը, համարյա փակում երկաթուղու ճանապարհը դեպի երևան այս ու այնտեղ կոտորում կոմունիստներին և ավելի ուժեղ թափով շարունակում հայկական գյուղերի ավերը, թալանն ու կոտորածը: Չկարողանալով այդ բոլորի առաջն առնել հայ կոմունիստները բարձիթողի անելով քաղաքական այդ ամենակարևոր խնդիրը, որի շնորհիվ կոտորվում. հյուճվում է հայ ժողովուրդը նորա մանկամտությամբ

իրանց հայացքն են դարձնում ինքնավար Սյունիքի կառավարության և ապստամբության պարագլուխ Սպարապետ Նժդեհի վրա, որոնք խաղաղ ու հանգիստ իրանց գյուղացիությունն էին կառավարում և կամենում են սպառնալիքով, Հայաստանը խորհրդային հայտարարելով՝ ջլատել և հուսահատեցնել այն ապստամբների ջանքերը, որ իրանց դիվիզիաներն անգամ չկարողացան խորտակել և 1920թ. դեկտեմբերի 16-ին խորհրդային Հայաստանի զինվորական կոմիսար Ավիսն ու հրամանատար Դրոն հեռագրով այս կոչն են ուղղում Ձանգեզուրի գյուղացիության և հրամանատարության

ԿՈՉ

**ՈՒՂԻՂ ՀԵՌԱԳՐԱԹԵԼՈՎ ԵՐԵՎԱՆ-ՔԵՇԻՇՔԵՆԴ-ՁԱՆԳԵԶՈՒՐ
ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՍԱՆԱՏԱՐՈՒԹՅԱՆԸ**

Թող հայունի լինի բովանդակ Ձանգեզուրին, որ Հայաստանը հայտարարված է սովետական հեղափոխական հանրապետություն: Հին կառավարությունը նետել էր երկիրը արյան ու արցունքի ան դունդը: Ձանգեզուրի բարձունքներում կռվելով կարմիր բանակի դեմ Դուք այդպիսով անգիտակցաբար խորացնում եք վիշտն ու դժբախտությունը Ձեր ժողովրդի որի միակ փրկությունը կախված է կարմիր բանակի և Սովետական Ռուսաստանի օգնությունից: Սովետական Ադրբեջանը զիջել է Սովետական Հայաստանին Ձանգեզուրը, Ղարաբաղն ու Նախիջևանը: Սովետական Ռուսաստանը միմիայն նա է ընդունակ կանխելու այն վտանգը, որը սպառնում է դրսի ուժերի կողմից և հաշտեցնելու Ձեր ժողովուրդն իր հարևանների հետ՝ վերականգնելով նրա իրավունքները: Հայաստանը քայքայված է մենք կարող ենք վերականգնել միայն այն օգնության միջոցով, որը ցույց կտա մեզ խորհրդային Ռուսաստանը և խորհրդային Ադրբեջանը. առաջինն իր ուժեղ բանակով, իսկ երկրորդն՝ իր նավթով: Սովետական Ադրբեջանը հրաժարվեց Ձանգեզուրից, էեռնային Ղարաբաղից և Նախիջևանից: Այսօր նա արդեն ուղարկում է մեզ համար նավթ՝ մանուֆակտուրա և մթերք:¹

Մեր ժողովուրդը սուր կարիք է զգում երկաթուղագծերի բացման և սովետական իշխանության ամրապնդման Անդրկովկասում: Ներկայումս ամբողջ Հայաստանում կազմակերպված է սովետական իշխանություն: Քաղաքական հակառակորդներից ոչ ոք չի հետապնդ

¹ Ձինվորական կոմիսար Ավիսի այդ հայտարարությունը բացարձակ խաբեբայություն է, ոչ միայն մինչև դեկտեմբերի 16-ը, այլև մինչև փետրվարի 17-ը Հայաստանը մրանց օրով չստացավ ոչ մի արշին չիթ, ոչ մի մթերք և ոչ նավթ ընդհակառակը՝ Հայաստանի պահեստները նրանք դատարկեցին:

վում բացի հին կառավարության անդամներից¹ որոնք հեղկոմի ձեռքով ձերբակալված և հանձնված են ժողովրդական դատի: Մենք հա մոզված ենք, որ մեր բոլորի հարազատ Ձանգեզուրն ևս կմտնի խոր հրդային Հայաստանի մեջ, որպեսզի վերջ տրվի ամեն մի թշնամական գործողության կարմիրների դեմ, որոնք բարեկամական և եղբայրական հարաբերության մեջ են գտնվում խորհրդային Հայաստանի կարմիր գորքի հետ խորհրդային Հայաստանի կառավարությունը դիմել է կարմիր գորքի հրամանատարությանը, որպեսզի իր գորքերը հետ քաշեն Ձանգեզուրի շրջաններից այն հավատով, որ Ձանգեզուրի գյուղացիությունը վերջ կտա կարմիրների դեմ թշնամական գործողության: խորհրդային Հայաստանի անունից մենք հայտնում ենք բոլոր կռիվների մասնակցողներին ամնիստիա՝ համարելով այդ կռիվը կոր ժանադար մեր ժողովրդի համար: Մենք կոչ ենք անում Ձանգեզուրին խորհրդային Հայաստանի իշխանության դրոշակի տակ կանգնել մերձենալ Ռուսաստանին և խորհրդային Ադրբեջանին: Մենք ազնվությամբ, բաց սրտով հայտարարում ենք մեր ժողովրդին, որ կարմիր գորքի դեմ հետագա կռիվները ձեռնտու են միայն հայ ժողովրդի թշնամիներին. խորհրդային Հայաստանի անունից մենք կոչ ենք անում Ձանգեզուրին դիմել խաղաղ աշխատանքի: Պահանջում ենք անմիջապես դադարեցնել ամեն տեսակի պատերազմական գործողություն և ենթարկվել Հայաստանի խորհրդային խշխանության: Սույն հրամանը խախտելը մեր կողմից կնկատվի իբրև թշնամական գործողություն՝ ուղղված խորհրդային Հայաստանի և նրա դաշնակից խորհրդային Ռուսաստանի և նրա կարմիր գորքի դեմ

Խորհրդային Հայաստանի Հանրապետության
Ձինվորական կոմիսար *Ավիս*
Խորհրդային Հայաստանի կարմիր գորքերի
Հրամանատար *Դրո*

16-ին դեկտեմբերի 1920թ

Դրոյին Հայաստանի խորհրդային իշխանության մեջ ժամանա կավորապես պահելն ու նրան հրամանատարության պատասխանատու պաշտոն հանձնելը ծագել է հայ բուլշևիկների տակտիկայից: Հարկավոր էր նախ վարագուրել Հայաստանում կատարելիք իրանց ապագա գործելակերպը և փակել միամիտների աչքերը, որ իբր թե Ղարաբաղի, Ձանգեզուրի Ղափանի և Սիսիանի կոմունիստների ձեռքով կատարած սարսափները տեղի չեն ունենալ Հայաստանում իսկ այդ նպատակի համար անհրաժեշտ էր ժամանակավորապես փայ

¹ Բ Իշխանյանը, որ կառավարության անդամ լեր հենց առաջին օրը ձերբակալվեց Լեզրանի կարգադրությամբ

փայել Դրոյին, որի հետ սերտ կապված էր Հայաստանի սպայությունը գործը, քաղաքական գործիչներից շատ շատերը և իրանց դիրքն անբացնել Հայաստանում, որից հետո միանգամայն ավելորդ կլինի և մինչև իսկ վնասակար Դրոյի ներկայությունը: Իսկ Դրոն, իբրև նախ կին հեղափոխական ի նկատի չունենալով նրանց հետին նպատակները՝ հավատում էր կոմունիստ գործիչներին և համոզված էր, թե նոցա միջոցով հնարավոր կլինի հայ ժողովրդի համար տանելի կյանք ստեղծել: Այդ է պատճառը, որ նա ևս ծագում էր Սպարապետ Նժդեհին և Ջանգեզուրի ապստամբ գյուղացիներին համոզել՝ վայր դնելու իր անց զենքերը: Բայց նա այդ կույր հավատի զոհը դարձավ, իսկ նորա շնորհիվ զոհվեց նաև Հայաստանի սպայությունն ամբողջովին և հայ գործիչների մեծագույն մասը:

Բայց շուտով Հայաստանի կոմունիստ կառավարության գործիչների դիմակը բացվում է: Բացի Ինքնավար Սյունիքից, ամենուրեք ռևոլյուցիոն եմ հաստատվում, խորհրդային իշխանությունն իրան ամուր է զգում Հայաստանում՝ Վրաստանի նկատմամբ էլ որոշ քայլեր արված են, ուստի հրկավոր է վտանգավոր տարրերը չեզոքացնել: Այդ վտանգավոր տարրերից ամենաառաջինը Դրոն էր նրանց համար ուստի այնուք է նրան որևէ պատրվակով Ռուսաստան արտորել: Եվ ահա Տրոցկին 1921թ. հունվարի սկզբին հեռագրով նրան Մոսկվա է հրավիրում խորհրդակցության: Եթե հազարավոր անմեղ մարդկանց կոտորել տվող ոտից մինչև գլուխ շովինիստ ամբողջ էությանը տաճիկ փաշա էմիրը կարող է փառքով ու պատվով գնալ Մոսկվա Ռուսաստանի խորհրդային իշխանության հետ գործելու և մինչև իսկ Բաքվի արևելյան ժողովուրդների կոմունիստների ժողովին մասնակցելու և ճառելու, ապա մի իսկական հեղափոխական և դեմոկրատ ծագումով Դրո ինչո՞ւ չպիտի նույն պատվին արժանանար: Այդ հավատով Դրոն վերցնելով իր հետ աչքի ընկնող հայ սպաներից մի քանի սին՝ ճանապարհվեց Բաքվի վրայով դեպի Մոսկվա:¹

Դրոյին Բաքվում հայ, ռուս և թուրք կոմունիստները վերջնակա նապես համոզում են որ Հայաստանի փրկությունը միմիայն խորհր

¹ Դրոյի Հայաստանից հեռանալուց մի քանի օր հետո (1921թ. հունվարի 22-ից) ցուցակագրելու պատրվակի տակ բուլշևիկները Հայաստանի նախկին պարլամենտի շենքն են հրավիրում հայկական զորա մասերի բոլոր սպաներին և զինաթափ անելուց հետո՝ շրջապատած ամեն կողմից զորքով, գնդացիներով, թնդանոթներով, հենց այդտեղից արքարում են դեպի Ռուսաստան: Նույն ձերբակալումները կատարվում են նաև շրջաններում, իսկ միաժամանակ Երևանի, Ղամարլուի, Վաղարշապատի Նոր Բայազիդի և շրջանների այլ վայրերի բանտերը լցվում են հայ գործիչներով: Սկսվում է սոսկալի հալածանք որն և առիթ է ծառայում փետրվարի 16-ի ժողովրդական մեծ ապստամբությանը:

դային Ռուսաստանի իշխանությունից է կախված, որ Մոսկվայի կոնֆերենցիան կարող է Քեմալի բանակը հետ դարձնել Հայաստանից, և ինպերիալիստների ախորժակը փակել, եթե միայն ապստամբ Ջանգեզուրը հայտարարե իրան խորհրդային և իր բռնած դիրքով չխանգարե Մոսկվայի կոնֆերենցիայի աշխատանքներին որից Դրոն ևս շատ բան էր սպասում:

Ուստի, վերջինս տարված լինելով այդ սին գաղափարով և չի մանալով թե ինչ սոսկալի վիճակի են հասցրել կոմունիստները մայր երկրին ու նրա գործիչներին, 1921թ. հունվարի 21-ին Բաքվից առանձին պատգամավորություն է ուղարկում Ջանգեզուրի գյուղացիության և Սպարապետ Նժդեհի մոտ ուղղելով վերջիններիս հետևյալ գրությունը.

ՁԱՆԳԵԶՈՒՐԻ ԳՅՈՒՂԱՑԻՎԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆ ՊԱՏՆԵՆ ՆԺԴԵԴԻՆ

Հայրենակիցներ երկու տարի ու կեսվա դառը փորձերը բավականին համոզեցուցիչ էր, որ իզուր էր հայ ժողովուրդը հույսերը դրել Եվրոպայի վրա, որն ամենակրիտիկական մոմենտում նամարդի նման թողեց ամբողջ ժողովուրդը թշնամու գրկում որովհետև իր շահերը այդ էին պահանջում:

Վերջին րոպեին պետության գլուխը անցած դաշնակցության կուսակցության պատասխանատու ընկերները 26-ին նոյեմբերի ժողովում խոշոր մեծամասնությամբ որոշեցին ընդունել Ռուսաստանի օրիննտացիան

Հայաստանը հայտարարվեց խորհրդային հիմնված այն հա մոզմունքի վրա որ միայն հեղափոխական Ռուսաստանը կգա ան կեղծ կերպով պաշտպանելու հայ աշխատավորության շահերը և հետ կշարտի մեր հայրենիքից քեմալական դժոխային ծրագիրներ կազմող բանակը: Ներկայումս Մոսկվայում հավաքվում է կոնֆերենցիա որ տեղ պետք է լուծվի Հայաստանի սահմանների խնդիրը Ռուսաստանի Տաճկաստանի և Հայաստանի մասնակցությամբ:

1 Ջանգեզուրի չճանաչելը խորհրդային Հայաստանը խանգարելու է մեզ լուծել Նախիջևանի, Շարուրի և Ղարաբաղի խնդիրները

2 Պատճառ է դառնում Ջանգեզուրի այդ բռնած դիրքը և «կոսսը»¹ է տալիս տաճիկների ձեռքը հեռացնել իրենց զորքերը մեր երկրից պատճառաբանելով, թե Հայաստանի խորհրդային իշխանությունը կեղծ է, որ մոտիկ ապագայում Հայաստանը նորից կլինի գործիք եվրոպական ինպերիալիզմի ձեռքը

¹ Հաղթաբուրդ – ռուսերեն «Հայրենիք» Ակունք

3 Քանի Ձանգեզուրը չի ճանաչել խորհրդային իշխանությունը դեռ պիտի կասկածով վերաբերվեն Հայաստանին, չի սկսվի խաղաղ և շինարար աշխատանք մեր արյունաքան եղած երկրում:

4 Դժվար է խոստովանել և հաշտվել այն մտքի հետ որ կատարված է մի շարք քաղաքական սխալների բայց դժբախտաբար դա դառն իրողություն է.

Ուստի, դիմելով Ձեզ ուզում եմ հավատալ, որ Ձանգեզուրը և նրա ղեկավարները վերջ կտան իրենց բռնած քաղաքականությանը և կմիանան իրենց Մայր երկրին՝ Հայաստանին, որ Մոսկվայի տաճիկների հետ բանակցությունը կգա ապացուցանելու, որ Սովետական Ռուսաստանը պաշտպանելու է հայ աշխատավորության շահերը.

Ա. Ուստի, Ձեզ պետք է անմիջապես հայտարարել խորհրդային և միանալ խորհրդային Հայաստանի հետ:

Բ եթե որևիցե բան ունեք պարզաբանելու առանց ուշացնելու պետք է ներկայացուցիչներ ուղարկեք հեղկոմ 11 ռդ բանակի և Հայաստանի կառավարության մոտ:

Դրո

21 ին հունվարի 1921թ Բաքու

Դրոյի այդ նամակը գրված է, անշուշտ որոշ ներշնչման ազդեցության տակ, իսկ ինքն անհատականապես մոտ ժամոթ չլինելով բոլշևիկների քաղաքական գործելակերպին և Ձանգեզուրում կատարված դեպքերի հետ՝ թյուրիմացության գոհ է դարձել:

Խորհրդային Հայաստանի գինվորական կոմիսար Ավիսի Ձանգեզուրի գյուղացիության անունով 1920թ. դեկտեմբերի 16-ին ուղարկած հեռագրից պարզ երևում է, որ Նախիջևանը, Ձանգեզուրը և Ղարաբաղը Ադրբեջանի համաձայնությամբ արդեն կցված են խորհրդային Հայաստանին, իսկ Դրոն 1921թ. հունվարի 21-ին (մոտ մի ամիս և 5 օր հետո) հայտնում է Բաքվից, որ «Ձանգեզուրի չճանաչելը խորհրդային Հայաստանը խանգարելու է մեզ լուծել Նախիջևանի, Շարուրի և Ղարաբաղի խնդիրները»: Այդ դեռ բավական չէ՝ N ռդ (28-րդ) դիվիզիայի քաղաքական բաժանմունքի «Ամեն մի ապստամբի ուշադրությանը» գրությունից ամեն ոք կարող է եզրակացնել, որ ավելի շուտ Ադրբեջանն է շահագրգռված Ձանգեզուրով, քան խորհրդային Հայաստանը: Ահա՛, քաղաքական այդ կոմեդիան, այդ ստոր վաճառքն է որ իրանց համար դեվիզ են դարձել Անդրկովկասի ռուս, հայ և թուրք կոմունիստ գործիչները

Օգտվելով հանգամանքից որ Հայաստանի Հանրապետությունը 1920թ. դեկտեմբերի 2-ից հայտարարված է խորհրդային և կամենալով օգտվել հանգամանքից ու ցույց տալ Սպարապետ Նժդեհի և Ձանգեզուրի ապստամբների անելանելի դրությունը և նոցա ունայն

հուլյսերը Շուշի քաղաքի կայազորի պետը լիազորված կարմիրների բարձր հրամանատարության կողմից, 1921թ հունվարի 22-ին հետևյալ պաշտոնական գրությունն է ուղղում Ինքնավար Ջանգեզուրի կառավարությանը.

ԻՆՔՆԱՎԱՐ ՋԱՆԳԵԶՈՒՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

22 հունվարի 1921թ

ք Շուշի

Ներկայումս հայերի և թուրքերի մեջ ծավալվում է ազգայնական ատելություն, որն անտարակույս, տանելու է ժողովրդին դեպի նոր թշվառություններ, դեպի նոր անտեղի զոհեր: Ղարաբաղի աղքատ ժողովուրդը զանազան տեսակի թյուրիմացությունների ազդեցության տակ առայժմ աննշան չափով առաջացնում է ապստամբություններ: Ակամայից հիշում են Ձեր խոսքերը. «Ես հին հեղափոխական եմ... կռվելու եմ ամեն տեսակի բռնությունների դեմ»... Բայց չէ որ այդ բոլոր ապստամբությունները պատճառ են դառնում նորանոր զոհերի արյունահեղության և բռնությունների: Չէ՞ որ Ձեզ համար գաղտնիք չէ, որ Հայաստանում վերականգնված է սովետական իշխանություն և այնտեղ են գտնվում ռուսական զորքերը: Սովետական իշխանությունը ձեռք կառնի բոլոր միջոցները, օգնության գալու Սովետական Հայաստանին, բայց ի՞նչ դրություն կստացվի Ջանգեզուրում և Ղափանում: Կարմիր բանակը ձեռք կառնե բոլոր միջոցները Սովետական Հայաստանին օգնելու համար բայց դրա հետ միասին մեր ուժերը մասամբ զբաղված կլինեն Ղարաբաղի դեպքերով:

Մի ելք կա միայն՝ անհրաժեշտ է վերջ դնել բոլոր ապստամբություններին և վերահաստատել կապ Ձեզ հետ: Եթե ցանկանում եք ունենալ բարեկամական հարաբերություն և կապ մեզ հետ՝ հայտնեցեք գրաբերովս: Շուշի-Գորիսյան հեռագրային կապը կարող են վերականգնել տալ:

Գերագույն զինվորական հրամանատարության կողմից լիազորված են Ձեզ հետ մտքերի փոխանակություն ունենալ

Շուշի քաղաքի և նրա շրջակայքի կայազորի պետ *Վայցեխովսկի*
Զինվորական կոմիսար *Ա. Պոտեշին*

Իսկականի հետ ճիշտ է զինվորական քննիչ (ստորագրություն) ¹

¹ Թարգմանություն ռուսերենից

Նույն ժամանակ 84 ողբերգադայի հրամանատար Սենյոնովը շտապում է Ջաբուղից Դրոյի հունվարի 21-ին և Շուշու կայազորի պետի հունվարի 22-ին գրության հետ միասին իր առանձին պաշտոնական թուղթն ուղղել Ջանգեզուրի կառավարության կամենալով ցույց տալ, որ ինքը պաշտպան է հանդիսանալու Խորհրդային Հայաստանի աշխատավորության, որ զուր են այլևս ապստամբների բոլոր ջանքները, և թե մի ելք է միայն մնում սեղմել այն ձեռքը որ մինչև այժմ պարզած է մնացել օդի մեջ:

ԻՆՔՆԱՎԱՐ ՋԱՆԳԵԶՈՒՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

22 ին հունվարի 1921թ

Ուղք դնելով Հայաստանի տերիտորիան կարմիր բանակն ունեցել է միմիայն մի նպատակ՝ Հայաստանի աշխատավորության ազատագրումը կապիտալիզմի չարանենգ ճնշումից արմատախիլ անել այն ազգայնական թշնամությունը, որը հիմք է ծառայել բազմիցս Հայաստանի գլխին եկած արհավիրքների:

Մենք միայն մի նպատակ ունենք՝ աշխարհի բոլոր բարիքները աշխատավորությանը այդ նպատակին է ձգտում մեր ամբողջ հեղափոխությունը:

Մեր անցած ուղին վկայում է որ կարմիր բանակը ոչ մի տեղ մի քայլ անգամ չի շեղվել իր դավանած սկզբունքներից: Կարմիր բանակը հիշելով իր սրբազան պարտականությունն ամբողջ աշխարհի աշխատավորության ազատագրման գործի վերաբերմամբ՝ մտնելով Հայաստան՝ պաշտպան է հանդիսանում Հայաստանի ճնշված ժողովրդին:

Սակայն համաշխարհային կապիտալիզմն այստեղ ևս ցուցադրել է իր հափշտակիչ դիտավորություններն և արգելք հանդիսացել այն ընթացքին, որ պատմականորեն պիտի կատարվի: Հայաստանի տարաբախտ ողորմ բարեկամաբար պարզած ձեռքը մնաց օդի մեջ կախված և նրա եղբայրական ողջույնն ազգայնական ատելությամբ կուրացած ու մութ տարրի դրդմամբ Ջանգեզուրի և Ղարաբաղի ժողովուրդը կատարեց ոճրագործություն՝ զենք բարձրացնելով իր աշխատավոր եղբոր դեմ և թափվեց նրանց արյունը, որոնք կարող կլինեին հանգիստ կերպով իրանց լուսավոր ապագան ստեղծել: Այն օրից, երբ Հայաստանում հաստատվեց սովետական իշխանություն՝ Ջանգեզուրում ու Ղարաբաղում գյուղացիության ու բանվորության արյունը թափելն ավելի քան ոճրագործություն է:

Հետևելով իմ դավանած գաղափարներին ես առաջարկում եմ Ձեզ դադարեցնել ամեն տեսակի ռազմական գործողություններ, կապ հաստատել մեզ հետ և փոխադարձաբար գտնել ընդհանուր լեզու:

Ես համոզված եմ որ մեր բարիդրացիական հարաբերությունները կամրապնդվեն, որ կղադարի ոչնչացումը նրանց, ովքեր ցանկանում են դիմել իրանց ապագա խաղաղ ու շինարարական կյանքին:

N ըդ բրիգադայի հրամանատար *Մեմյոնով*
N ըդ բրիգադայի գինվորական կոմիսար *Մ Իվանով*¹

Սպարապետ Նժդեհին ինչպես նաև Ջանգեզուրի գյուղացիությունը, միանգամայն իրազեկ էին Հայաստանի շուրջը կատարված դեպքերին գիտեին նաև, թե ի՞նչ դավերի, ի՞նչ մեքենայության զոհ է գնացել այդ դժբախտ երկիրը, որ ի վերջո ստիպված է եղել կառավարության ղեկը հանձնել կոմունիստ կուսակցության, բայց այդ բոլորը չէ կարողացել ընկճել Սպարապետի և ապստամբ գյուղացիության կամքը, չէ իջեցրել նրանց սրտի կորովը: Ի մոտո և ավելի արժանահավատ աղբյուրից տեղեկություն ստանալով, թե ինչպես խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Լեզրանը և հայ կոմունիստները դավաճանելով իրանց պաշտոնական հայտարարության՝ դժոխքի են վերածել այդ երկիրը, սոսկալի հալածանք բարձրացրել իրանց բաղաբական հակառակորդների դեմ և բանտերը լցրել անմեղ զոհերով որոնց մասին կամ իրազեկ չէ և կամ գիտությամբ լռում է կարմիր բանակի հրամանատարությունը, Սպարապետ Նժդեհին անհրաժեշտ է համարում 1921թ. հունվարի 25-ին առանձին գրությամբ հանուն 11 ըդ բանակի հրամանատարի նրանց բազմիցս առաջարկած հաշտության մասին իր վերջնական խոսքն ասել և ապա ցույց տալ խորհրդային Հայաստանի ներկա սոսկալի դրությունը և կշտամբանքով նրանց երեսովը տալ իրանց խոստումների և կատարածի կատարյալ հակասությունը

11 ըԴ ԲՍԼՆԱԿԻ ԳՐՍՄԱՆԱՏԱՐԻՆ

Ձեր նամակով Դուք խնդրում եք, որ մենք Ձեզ հետ հաստատենք բարեկամական հարաբերություններ: Ես սկզբունքով հակառակ չեմ այդ առաջարկին, սակայն ներկա հանգամանքներում հաստատել անկեղծ բարեկամական հարաբերություններ միանգամայն համարում եմ աննպատակահարմար՝ համոզված լինելով, որ այդ հանգամանքը դրական և ցանկալի հետևանքներ չպիտի ունենա: Դժբախտ Հայաստանում տեղի ունեցող այժմյան Ձեր բարձր հրամանատարության և Հայաստանի կոմունիստական կենտրոնական կոմիտեի գործունեությունը գալիս է ապացուցելու և խախտելու իմ հավատն ու վստահությունը դեպի Ձեր առաջարկն ու անկեղծությունը

¹ Թարգմանություն ռուսերենից

Ինչպես ինձ նույնպես և Ձեզ համար գաղտնիք չէ, որ շնորհիվ Ձեր բարձր հրամանատարության վարած քաղաքականության Չայաստանը դարձավ սոսկումների և արյան թատերաբեմ: Ձեր բարձր հրամանատարության թելադրանքով էր, որ քեմալիստները գրավեցին Սարիղամիշը, Կաղզվանը, Ղարսը, Ալեքսանդրապոլը և Իզդիրը, տըն տեսապես քայքայեցին և սոցիալապես մեռցրին այդ ծաղկած երկիրը և ժողովրդին բեռնակիր անասուններ դարձնելով մոցա իսկ մեջքով ռազմամթերքն ու հարստությունը փոխադրեցին Տաճկաստանի խորքերը:

Չայաստանը աշխարհագրական իր դիրքով գտնվելով այն մեծ ճանապարհի վրա, որով միանում է Եվրոպան Ասիայի հետ՝ շարունակ ենթակա է եղել բարբարոսների ապստամբության և դժբախտ աշխատավոր հայ ժողովուրդը հազարավոր զոհեր է տվել վանդալների այդ ասպատակության ժամանակ որոնք արշավել են Արևմուտքից և Արևելքից

Այժմ պատմությունը կրկնվում է նույնությամբ, միայն այն տարբերությամբ, որ այժմ հայությունը գլխատվում է սոցիալիզմի դիմակի տակ և ինչպես ինձ, նույնպես և Ձեզ համար գաղտնիք չէ, որ Չայաստանի այն մասերում, որոնք գրավված չեն տաճիկներով և գտնվում են խորհրդային իշխանության ներքո՝ ստեղծված է այնպիսի կացություն, որ սպառնում է հայ գյուղացիության ֆիզիկական գոյության և որ ամենագլխավորն է գլխատվում սպանվում է ժողովրդի կենդանի խոսքը:

Չարյուրներով հայ հեղափոխական դեմոկրատիայի ներկայացուցիչները բանտարկվում են, գնդակահարվում և աքսորվում են՝ ուր հայտնի չէ: Այդ բանում ես տեսնում եմ խորհրդային իշխանության ղեկավար շրջանների ակնհայտ մեմբամիտ միտումները՝ գլխատել Չայաստանի աշխատավոր գյուղացիությունը և մեռցնել նորաանկեղծ հեղափոխական-սոցիալիստական միտքը: Այն պայքարը, որ այժմ մղվում է Չայաստանում՝ նա դասակարգային բնույթ չէ կրում և բոլշևիկները մանավանդ հայ բոլշևիկները, միմիայն տիրապետելու տենչանքով բռնված՝ ձգտում են հեռացնել ասպարեզից մյուս սոցիալիստական կուսակցություններին, որպիսիք են՝ դաշնակցականները եսերները, մենշևիկները և այլն:

Միք մոռանա, որ այն բարձր գաղափարների սոցիալիզմի իրականացումը, որը դուք այժմ կեղծ ճանապարհով եք տանում, վերջի վերջո պիտի իր գաղափարական պայքարով իրականացնի այն հեղափոխական դեմոկրատիան որոնց այժմ դուք հետապնդում և գլխատում եք: Միք մոռանա, որ Ձեր կուսակցական հայ աշխատավորների մեծագույն մասն իրենց հեղափոխական դաստիարակությունն ու միտքը ստացել է մեզանից, մեր միջից, որ հեղափոխական մտքի այբուրենը ստացել են դաշնակցությունից, որը տասնյակ տարիների ընթացքում պաշտպանել է Արևելքի աշխատավոր գյուղացի

ուրջան շահերը և շնորհիվ այդ կուսակցությանն էր, որ առաջ եկավ հեղափոխությունն թե թուրքիայում և թե Պարսկաստանում:

Այժմ այդ կուսակցության լավագույն գործիչները, որոնք անհծ-յալ բռնակալության օրերում հյուժվում էին բանտերում և հեռավոր Սիբիրի տունդրաներում, կանդալները¹ մաշում այժմ նոքա բանտ արկվում են և հրացանազարկ են լինում Ձեր կողմից: Այսպիսի պայմաններում խոսել բարեկամական հարաբերությունների մասին՝ ավելի քան միամտություն է:

Անկեղծ բարեկամական հարաբերություն մեր մեջ կարող է ստեղծվել այն դեպքում, երբ հայ մտավորականությունը կազատվի բանտերից, երբ կդադարեք նրան հալածելուց, երբ Ձեր բարձր հրամանատարությունը իրական և կտրուկ միջոցներ ձեռք կառնի մաքրել այն հողամասերը, որոնք գրաված են քեմալականներից և վերջապես երբ կդադարեք Ջանգեզուր ուղարկել զանազան մութ անձնավորություններ «գաղտնի» և շտապ գործերով ինչպես այդ անում է 11 ող բանակի ռեզիստրացիայի բաժինը:²

Երբ ես կհամոզվեմ, որ Դուք կսկսեք իրականացնել Ջանգեզուրի աշխատավոր գյուղացիության ցանկությունները, որի հավաքական կամքը արտահայտում եմ ես, երբ ես կհամոզվեմ, որ Դուք հանձնինս հայ հեղափոխական դեմոկրատիայի տեսնում եք ոչ թե Ձեր թշնամուն այլ նրանց որոնք կոչված են շարունակել ընդհանուր հեղափոխական գործը այն ժամանակ միայն ես կարող եմ հավատալ Ձեր անկեղծությանը և Ձեր մեկնած ձեռքը չի կախվի օդում: Իմացեք և հիշեք, որ ես և Ջանգեզուրի ժողովուրդը որն ինձ է հանձնել իր բախտը, ներկայացնում է իրենից մի պատկառելի իրական ուժ որը ինչպես ես առաջ էլ գրել եմ՝ մի օր Ձեզ պետք պիտի գա:

Ջանգեզուրի կարմիր բանակի օգտակար գործունեության մասին թույլ տվեք կասկածել, որովհետև Դուք ևս լավ գիտեք, Ջանգեզուրի աշխատավոր գյուղացիության պաշտպանության և մարդասիրության անենատարրական օրենքներն անզամ ոտնահարված են տնտեսապես քայքայված Ջանգեզուրում գտնված՝ կարմիր բանակի կողմից: Կրկնում եմ, որ ինչպես մինչև բուլշևիկների գալը՝ նույնպես և այժմ, ես բացառապես զբաղված եմ հայ աշխատավոր ժողովրդի ֆիզիկական գոյության և նրա հեղափոխական սոցիալիստական գաղափարների պաշտպանության հոգսով:

Երբ գործով ապացուցեք որ Դուք միանգամայն թշնամի չեք դժբախտ հայ ժողովրդին՝ որն ապրում է Արևելքի և Արևմուտքի մեծ ճանապարհի վրա, այն ժամանակ միայն կարելի է բարեկամական փոխհարաբերություն ստեղծել մեր և Ձեր միջև:

¹ Շղթաներ – ռուսերեն «Հայրենիք» Ակունք.

² Սա հետախուզական բաժինն է «Հայրենիք» Ակունք

Ին կոնկրետ ցանկություններն են

1 Երբ Դուք ազատեք բանտերից Հայաստանի հեղափոխական սոցիալիստական կուսակցությունների անդամներին:

2. Մաքրեք քեմալականներից այն հողամասերը որոնք գրաված են նրանց կողմից:

3 Հրաժարվեք Ձանգեզուրում գաղտնի, ստորերկրյա աշխատանք կատարելուց, այն ժամանակ միայն կարելի է ստեղծել բարեկամական հարաբերություններ՝ Ինքնավար Սյունիքի և խորհրդային իշխանության միջև

Սպարապետ Սյունիքի և Գողթանի *Նժդեհ*

25-ին հունվարի 1921թ

Գորիս

Այս պաշտոնական գրությունն արձագանքն է հանդիսանում այն ուժեղ բողոքի, որ անդադար հնչվում էր մայր Հայաստանի բանտերում բռնկվածների ձեռքով կալանավորված հարյուրավոր ինտելիգենտ ուժերի, զինվորության և Ռուսաստան աքսորված հայրենիքի համար իրանց կյանքը չխնայող սպայության կողմից: Ազատ էր մնացել միայն Լեռնա-Հայաստանի գյուղացիությունն իր Սպարապետի հետ, որն իրան իրավունք է համարում ամենայն արժանապատվությամբ իր հայրենիքի և նրա տանջվող ժողովրդի դատը պաշտպանել՝ ընդդեմ սոցիալիզմի անվան տակ թաքնված նոր աշխարհակալների:

Ռուսաց 11-րդ կարմիր բանակի հրամանատարությունն իբր թե մի քանի թյուրիմացություններ պարզելու համար Սպարապետ Նժդեհի այդ գրությանն հետևյալ պատասխանն է գրում

ՔԱՂԱՔԱՏԻ ՆԺԴԵՅ ԵՎ ՔԱՂԱՔԱՏԻ ՍԻՆԱՍՅԱՆ՝

Բրիգադայի հրամանատարն ի պատասխան իր դիմումին (իր նախածեռնությամբ) Ձեզնից ստացած պատասխանն ինձ հանձնեց հաղորդելով ինձ Ձեր դեկլարացիայի բովանդակությունը: 11-րդ բանակի հեղափոխական զինվորական խորհրդի և սովետական գերագույն իշխանության կողմից ես լիազորված եմ պատասխանելու Ձեզ:

Ձեր նամակներից ես եզրակացնում եմ որ դուք մի քանի խնդիրների նկատմամբ թյուրիմացության մեջ եք ընկել: Եթե դուք մեղադրելով մեզ տաճիկների արշավանքին օժանդակելու (և մինչև իսկ նախածեռնության) և իրանց կողմից Ղարսն և Ալեքսանդրապոլը

¹ Տեր Մինասյանն այդ ժամանակ վարում էր Ինքնավար Սյունիքի կառավարության նախագահի պաշտոնը:

գրավելու խնդրում այդ հանգամանքը ծառայեցնում եք ոչ թե միայն պրոպագանդայի միջոց այլև դա Ձեր համոզմունքն է կազմում՝ այդ դեպքում ես պետք է պարզ ու որոշ ասեմ, որ Դուք թյուրիմացության մեջ եք: Այն օրվանից, երբ Անդրկովկաս են մտել Սովետական Ռուս աստանի զորքերը՝ մենք մեզ համար իբրև օրենք ենք ընդունել, որ ոչ մի քաղաքական և դասակարգային հանգամանք չպետք է մեզ մղե խորացնելու ազգայնական թշնամությունը: Այդ խնդրի մեջ մեր հետևողական լինելը Դուք կարող եք նկատել Գանձակի և Ջաքաթալայի ապստամբության վերաբերյալ գործում, Հայաստանի նախկին կառավարության զորքերի հետ ունեցած մեր կռիվներում, որտեղ մենք Անդրկովկասի աշխատավոր մասսաների ստրկացման կռվի անմիջական ծանրությունը վերցրինք մեզ վրա, ամեն կերպ խուսափելով կռվին ազգայնական բնույթ տալուց: Եամանավանդ հայերի վերաբերմամբ մենք զգույշ ենք եղել, դիտակցելով, թե որքան տառապանք է կրել այդ ժողովուրդը: Մինչև անգամ ամենապարզ հաշիվը պետք է մեզ ստիպեր զգուշությամբ վերաբերվելու հայ ժողովրդին, որովհետև մենք չենք մոռանում, թե որքան խորն է նրա համակրանքը դեպի սովետական հեղափոխությունը և որ ամեն տեսակ պարագաներ ստիպում են այդ ժողովրդին հակվելու դեպի ռուսական օրինատացիան: Մեր զորքերի մուտքը Հայաստան նպատակ է ունեցել Սովետական Հայաստանը պաշտպանել վերջնական անկումից և տաճիկների հետագա առաջխաղացման առաջն առնել և Դուք տեսնում եք, որ այդ գործում մենք հաջողություն ունեցանք. կարմիր զորամասերի ներկայությունը միայն ստիպեց տաճիկներին կանգ առնել ներկա սահմանագծի վրա՝ որ ավելի բարվոք է, քան այն, որը զօժել էին տեղի տվող դաշնակները:

Մենք շտապեցինք կրճատելու տաճիկների ազդեցության շրջանը և Սոսկվայի ռուս-տաճիկական կոնֆերենցիայի նախապայմաններինց մեկն ևս այն է, որ (տաճիկները) մաքրեն Ալեքսանդրապոլի շրջանը և բանակցության պայմաններից մեկն ևս Դարսի շրջանի մաքրումն է: Ի՞նձ հայտնի չէ, թե ինչով վերջացան այդ բանակցությունները, բայց մի բան մեզ համար կասկածից դուրս է, որ Ձեր շարժումը խորհրդային Հայաստանի դիրքը՝ իր տերիտորիան պաշտպանելու խնդրում խիստ կթուլացնե Ձեր նկարագրած տմարդի գործերը, որ թույլ են տվել իրանց (տաճիկները) գրաված վայրերում Ձեզ ինքներ իդ պիտի ստիպեր զորավիզ հանդիսանալու խորհրդային Հայաստանին և նրա բռնած դիրքին և ոչ թե հարված հասցնել նրա թիկունքին:

Ձեր նյուս մեղադրանքը՝ մեր զորամասերի Հայաստանի սահմաններում ցույց տված անբարեհույս վարքի ու բարքի մասին նմանապես պարզ չէ: Համոզված կարող եմ ասել, որ մեր կարմիր զորամասերի վրա անմիջապես այդ մեղադրանքը չի կարելի բարդել, որով հետևա մենք ունենք մի շարք փաստեր Անդրկովկասում և մասնավորապես այս ըրպեիս Հայաստանում նրանց ցույց տված անբասիր

վարք ու բարքի մասին: Ձանգեզուրում, հիրավի, տեղի է ունեցել մի ամոթալի դեպք որի նկատմամբ մենք մեզ չենք գովում, և որը մենք իր ժամանակին աշխատել ենք լիկվիդացիայի ենթարկել: Խոսքս տաճկական գնդի մասին է, որ մենք ուղարկել ենք Ձանգեզուրով Քեմալի մոտ: Այդ ժամանակ ուրիշ ճանապարհ չկար: Գնդին կարգադրված է եղել անցնել Նախիջևան. ամեն մեկի համար ակնբախ է, որ այդ գնդի ներկայությունը տաճկական զորամասերի մեջ անհրաժեշտ է եղել նրանց մինիմալ հեղափոխական լինելը հաստատելու համար: Ո՞վ կարող էր ենթադրել, որ տեղի կունենան դժբախտ դեպքեր կամ թյուրիմացություններ, որ թե ազգաբնակչությունը և թե այդ գունդը միմյանց դեմ գեներ կբարձրացնեն, այն էլ կարմիր զորքի անվան տակ: Որ մենք վճռականորեն լիկվիդացիայի ենթարկեցինք այդ դիպվածը՝ դրա ապացույցը կարող է ծառայել դիվիզիայի պետի հեռացումն իր պաշտոնից, որն այդ գործում ցույց է տվել դանդաղկոտություն: Ուրիշ որևէ գործում թերևս լուրջ մեղադրանք բարդել մեզ վրա չի կարելի: Դե լավ Դուք չեք կամենում մեզ հետ որևէ գործ ունենալ, իսկ ո՞վ կօգնե Ձեզ գյուղացիությանն ազատելու ֆիզիկական կործանումից (Դուք ինքներդ թույլ եք). Անտանտա՞ն, նրա զործակալ Վրաստա՞նը ես նոր միայն վերադարձա Լոռվա չեզոք գոտուց և եթե կամենում եք կուղարկեմ Ձեզ մոտ մի զույգ գյուղացիների, որոնք Ձեզ կպատմեն թե ինչ է կատարվում այնտեղ՝ տաճկական սարսափները կարող են շառագունվել այնտեղ կատարվածների մոտ

Ի վերջո դառնում եմ հալածանքի խնդրին. ճիշտն ասած, Դուք տգեղ կերպով չափազանցնում եք: Ինձ հայտնի չէ հրացանագարկության և ոչ մի դեպք ընդհակառակն, երեկ ուղիղ հեռագրաթելով Բաքվի հետ խոսելու ժամանակ ինձ հայտնեցին, որ Խորհրդային Ֆայաստանի կառավարությունը հայտարարել է կատարյալ քաղաքական աննիստիա ես կարող էի նաև հիշել Ձեզ մի շարք նախկին կառավարության առաջնորդների, որոնց Խորհրդային Ֆայաստանի կառավարության որոշմամբ մեր զորամասերի կողմից թույլ են տրվել անցնել արտասահման: Ի վերջո ինչ վերաբերում է Ձանգեզուրի շրջանի ներկա գործիչներին՝ ես լիազորված եմ հայտնելու Ձեզ, որ Ֆայաստանի Խորհրդային կառավարությունը և բարձր հրամանատարությունն երաշխավորում են Ձեզ կատարյալ և անպայման անձեռնմխելիություն եթե Դուք Ձեր հոժար կամքով կիրաժարվեք Խորհրդային Ֆայաստանի գոյության հիմքը խախտելուց:

Գրում եմ Ձեզ հավատացած լինելով, որ Դուք կիրաժարվեք աննպատակ և անհույս կռվից, որովհետև թե ինձ և թե Ձեզ բավականաչափ պարզ հայտնի է, որ ոչ թե միայն սոցիալիստները, այլև Ֆայաստանի բուրժուա-նացիոնալիստները, եթե նոքա առաջնորդվում են այն ցանկությամբ, թե պետք է պաշտպանել և ամրապնդել հայ ժողովուրդը պատմականորեն պիտի միանան Խորհրդային Ռուսաստանին և Խորհրդային Ադրբեջանին որովհետև միակ այդ շարկապումն է

(բլոկ), որը կարող է հիմնավոր ապահովել խաղաղությունն և տնտեսական առաջադիմությունն Անդրկովկասում: Եթե մենք համառորեն ամեն անգամ ձեռք ենք մեկնում Ձեզ՝ դա ապացուցում է միայն այն փաստը, որ մենք համոզված ենք, թե Ձեր շարժումները ոչ մի հիմք չունեն և միայն ցույց է տալիս մեր ազնիվ ցանկությունը վերջ տալու արյունահեղության, քանի որ Ձեզ ևս շատ պարզ հայտնի է, որ եթե կարմիր բանակը չունենար էլ 11-րդ գորաբանակը, Ադրբեջանի և Հայաստանի զորամասերը, բավական կլինի մի աննշան զորաճակատից մի դիվիզիայի շարտել՝ զենքի ուժով վճռելու խնդիրը և դա մեզ համար ոչ մի դժվարություն չէ ներկայացնում: Մենք ազնվաբար ցանկանում ենք առանց արյունահեղության վերջ դնել այդ պատմական ոչնչության: Եթե ես իմ սույն նամակով Ձեզ հետաքրքրող բոլոր հարցերը չեմ շոշափել, այլև Ձանգեզուրն խորհրդային Հայաստանի հետ միացնելու պայմաններն ճշմարտությանը գծելու համար խնդրում եմ Ձեզանից որևէ մեկին ուղարկել Շուշի, ուր ես կսպասեմ Ձեր գալստյան Ինքնստիճյան հասկանալի է, որ ես 11-րդ գորաբանակի պատվով երաշխավորում եմ եկող ընկերին կատարյալ անձեռնմխելիություն և հետ դարձնել Գորիս

11 ռդ գորաբանակի Ձինվորա-հեղափոխական խորհրդի անդամ
(ստորագրություն)

15 ին փետրվարի 1921թ
Կնիք

Հ Գ Ձեր ուշադրությունն եմ դարձնում այն անհանդուրժելի վերաբերմունքի վրա որ ցույց են տվել մեր պարլամենտորներին: Կարմիր զինվորներին հարցուփորձ են արել սպառնալիքի ազդեցության տակ Տեղի իջևանատեղում մեկից էլ վերցրել են նրա ոտի փաթաթանները

11 ռդ գորաբանակի զինվորա-հեղափոխական խորհրդի լիազորված անդամի այդ գրության նպատակն ակնհայտնի պարզ է. նա կամենում է ապացուցել այն, ինչ որ իրականության մեջ գոյություն չէ ունեցել՝ գրաված հողամասերից ոչ մի քայլ նոքա տաճիկներին հետ չդարձրին Ալեքսանդրապոլի և Ալազյազի շրջանի չեզոք գոտու հայ գյուղերն ենթակա մնացին ասկյարների և քրդերի ավերածության քաղանի ու կոտորածի, և այդ բոլորը կատարվում էր ռուսական կարմիր զորքերի աչքի առաջ:

Բաքվից կարմիրների լիազորված անդամի հեռագրով ստացած տեղեկությունը միանգամայն զուրկ է ճշմարտությունից, որովհետև մինչև փետրվարի 15-ն արդեն բանտարկված էին Հայաստանի բոլոր ականավոր գործիչներն ու աչքի ընկնող սպաները և գնդակահարված

կամ կացնով սպանված 22 հոգի, որոնց անուններն Երևանի կոնունիստները թուցիկով հայտարարեցին դեռ փետրվարի 14-ին, իսկ այդ բոլորին կատարելապես իրազեկ էր Սպարապետ Նժդեհը, որը հայ գյուղացիության համար ոչ մի դրական օգուտ չսպասելով ունայն գրագրություններից ու բուլչեիկների առաջարկած հաշտության պայմանից՝ 1921թ. փետրվարի 24-ին, ի պատասխան նոցա վերջին գրության հետևյալ խիստ ուժեղ պաշտոնական թուղթն է ուղղում

ԲԱՑ ԱՍՍԱԿ

11-ՐԴ ԿԱՐԱԻՐ ԲԱՆԱԿԻ ՁՈՐԱԳԱՐԱՍԱՆԱՏԱՐԻՆ ԲԱՔՎՈՒՄ

Սոռանանք մի վայրկյան մոռանանք որ մենք կովող կողմեր ենք

Սոռանանք որ այն Դուք էիք որ խաբելով ավարի ու ավերածության մատնեցիք ըմբոստ ու ազատասեր Ղարաբաղը, Սյունիքն ու Վայոց-Ձորը, սոցիալական քայքայումի հետ անաստվածորեն առաջ տարաք այդ լեռնաշխարհը լցնող ժողովրդի գլխատման տխուր գործը:

Սոռանանք և այն, որ Դուք էիք, Դուք որ արհամարհելով հեղափոխական էթիկայի ամենատարրական սպահանջները՝ զինակցելով արևելքի գերագանցորեն ռեակցիոն, կուլտուրավեր ու հայաջինջ ուժերի հետ՝ երեկվա Հանրապետական Հայաստանը Քեմալստան դարձրիք

Սոռանանք նաև այն, որ Ձեր հայ աշխատավորության հասցրած չարիքից ու հայահալած և հակահեղափոխական քաղաքականությունից խթանված Սյունյաց Արցախի ու Վայոց-Ձորի ռազմական ուժերը մի գիշեր իջան լեռներից ու մաքրեցին իրանց երկիրը աշխարհի չորս կամիներին տալով Ձեր քարքարոս զորամասերը:

Սոռանանք այդ բոլորը, չնայած՝ որ պատմությունն ու Ձեր ձեռքով խաչված հայ ժողովուրդն երբեք չի մոռանա մոռանանք կրկնում են, և խոսենք որպես երկու օբյեկտիվ կողմեր:

Սկսում են, լսե՛ք:

Ձեր վերջին նամակի մեջ Դուք առաջարկում եք ինձ բարեկամանալ Սովետական Հայաստանի կառավարության հետ և միամտորեն հարց եք տալիս՝ թե ում վրա են դրել հույսս:

Սովետական Հայաստան չկա: Կա քաղաքականապես բռնաբարված Երևան անունով մի քաղաք և մեկ ու կես տասնյակ գյուղեր՝ այսինքն տերիտորիալ մի արևուրդ:

Ձեր դավադրությամբ Հայաստան երկիրը դարձավ Քեմալստան Միամիտ չլինենք ենթադրելու, որ Սոսկվայի Ձեր վերջին կոնֆերանսը մուկ չի ծնելու: Ձեր ցանկությամբ տաճիկները մտան Հայաստան սակայն Ձեր հրամանով նրանք չպիտի հեռանան և խոստովանենք որ

եթե քեմալիստները քաղաքական հնարավորություն ունենան շարժվելու դեպ երևան, Ձեր՝ միայն թալանի մեջ մարզված և Ղարաբաղում կին ու երեխաներ կոտորելու գործում մասնագիտացած զորքերը չեն որ պիտ պաշտպանեն Ձեր ձեռքով գլխատված ու զինաթափ եղած հայ աշխատավորությունը: Չգիտեմ, նման պայմաններում արսուրդային Սովետական Հայաստանի հետ բարեկամանալը միտք կունենա թվում է որ իմ երևանի կառավարության հետ բարեկամանալուց կշահի միայն Ձեր երեկվա «բարեկամ», այսօրվա «թշնամի» Քեմալը որովհետև հայ զինվորն անմարտունակ, փալաս է դառնում, երբ անգամ ձեռքանորեն դառնում է կամ կոչվում կարմիր, բոլշևիկյան սովետական: Ձեր հարցին, թե ո՞ւմ վրա են դրել հույսս՝ Անտանտայի թե Վրաստանի, պատասխանում եմ՝ միայն իմ ազատասեր ժողովրդի հաղթական ռազմունակության իմ երկրի բարձր լեռների և իմ պաշտպանած Արդար Դատի վրա:

Ուժեղը նա չէ, որ ուտող բերաններ երկոտանի մեքենաներ թալանչիներ կամ թնդանոթներ ու արձիճ շատ ունի բայց սիրտ ու հոգի չունի և սրբություններ չէ ճանաչում:

Ուժեղը նա չէ, որն ոչնչով չէ տարբերվում կարմիր ցարերից սուլթաններից, որը խաբեբայությամբ դրախտ և հազար ու մի բարիքներ բերելու խոստումներով մտնում է մի երկիր, թալանում, սոցիալապես գլխատում ապստամբության մղում ժողովրդին և թողնում փախչում...

Ուժեղը նա չէ որ ամբողջ բրիգադաներով հարձակվում է Շիվանի-Չոր անունով մի գյուղի վրա և քառասուն օր անընդհատ թնդանոթներից և գնդացիներից արձիճ ու կրակ է թափում հարյուրի հասնող ապստամբների գլխին և նահանջելուց առաջ ապստամբություն չի ունենում ծունկի գալու ապստամբներ դիրքերի առաջ և ասելու «Փա՛ռք Ձեզ ապստամբներ որ այդպես կռվել և ձեր երկիրն ու մարդկային իրավունքները պաշտպանել գիտեք»:

Ուժեղը նա չէ, որի ուժերի ավանգարդը կազմում են կարմիր սուտը խաբեբայությունն ու պրովակացիան, որը չգիտե, որ գերմանական զրահապատ բոունցքը ջարդ ու փշուր դառավ, զինաթափ եղավ բելգիական տրագիկ և հերոսական հոգու առաջ:

Ուժեղը նա չէ, որ հանուն իր աննշան հաջողությունների իր Պյուռոսյան հաղթությունների դաշնակցում է անգամ սատանայի հետ որը լինելով և ապուլեոնի խեղանկարը՝ Մաքիավելին է իսկական:

Ուժեղը նա չէ, որը կազմակերպված մեծ թալանն ու մեծագույն ոճիրն անվանում է Ռուսական Անժեղափոխություն, որը խելագար հալածանք ու տեռոր է հարուցել անգամ սոցիալիստական ինտելիգենցիայի դեմ որն առանց ամոթի ու խղճի խայթի անենավուզար-

քրեական գործիչներին, ինչպիսիք են սադիստ Աթարբեկյանն ու kowkoda¹ Ավիսը՝ անվանում է ռուսական Սարաթ:²

Ուժեղը նա չէ, որը օրական յոթն անգամ վերև ու ներքև թքել գիտե, բայց կրծքի վրա, գրավանի խորքում ռուսական խաչն ու Տիրամոր պատկերն ունի:³

Ուժեղը նա չէ որի հաղթությունները ռազմական լինելով բարոյական չեն.

Դուք չգիտեք թե ո՞վ ինչպե՞ս և ինչո՞վ է հաղթում

Լսե՛ք, ասե՛մ:

Գիշեր է: Մի քանի գինվորներ Գորիսի մի այգում սուր խրամա տաշինական գործիքներով փոսեր են փորում: Գերեզմանները պատրաստ են: Ահա՛, բանտի դռներից դուրս նետեցին երկու ակամավոր սոցիալիստների: Դատապարտվածները գիտեն, որ իրենց տանում են հողին հանձնելու, բայց չգիտեին, որ պիտ մորթվեն: Մոտեցրին փոսերին: Մի քանի սրեր բարձրացան մթության մեջ ու իջան: Սոցիալիստներից մեկը գլխատված էր, իսկ մյուսի ձախ թևը կտրված:

Արիկաներ, սպանե՛ք, կտրե՛ք մյուս թևս էլ, բայց գիտցե՛ք, որ դուք ձեզ էք սպանում: Ցարն էլ ձեզ պես վարվեց ժողովրդի պաշտպանների հետ, ու մեռավ բռնաբար:

Արիկաներ, մարդասպաններ,- վերջին անգամ գոռաց Շիրինն ու սրերի ծանր հարվածներից գլորվեց փոսը

Արիկաներ՝ մարդասպաններ,- վախվիսելով ու կամացուկ կրկնեց խաբված ժողովուրդն ու սեղմեց բռունցքը:

* * *

Կռիվ էր. Ձերոնք միացած հալիլ փաշայի թաթուրներին, թնդանոթների ու գնդացիորների հետ կախվել էին Ալանգյազից Կարճևան գյուղի վրա: Երրորդ օրն էր, ինչ ապստամբները հեզնում էին թշնամու բուլոր ճիգերն ու փորձերը և առատ հունձ անում

Ջուր չկար, ծարավ էինք: Կարճևանցի հայ կինը կուժը լիքը սառը ջրով բարձրանում էր մեր դիրքերը: Թշնամին նկատելով՝ գնդացիային կրակ բացեց նրա վրա: Հարյուրավոր գնդացիներից մեկը փշրեց հայ կնոջ կուժը: Կինը նորից իջավ Արաքսի ափը, վերցրեց մի ուրիշ կուժ, լցրեց ջրով ու շարժվեց դեպ մեր դիրքերը: Էլի նա ընկավ կրակի տակ թեթև վիրավորվեց ու կորցրեց իր կուժը: Հավատացած

¹ Կատու խեղդող – ռուսերեն: «Հայրենիք» Ակունք.

² Մառատը 1789թ. ֆրանսիական հեղափոխության դաժանությամբ հայտնի առաջնորդներից էր: «Հայրենիք» Ակունք:

³ Ինձ մոտ գերի բռնված հազարավոր ռուս կարմիր գինվորներ ցույց են տվել ինձ իրենց վզից կախած խաչը և ծոցերում ունեցած Տիրամոր պատկերը (ծանոթություն Սպարապետ Լժոյեհի)

էինք, որ նա այլևս չի վերադառնա, բայց մի քիչ անց, նորից պաշտելի հերոսուհին՝ կուժն ուսին, բարձրացավ սարը:

Վիրավորված հայ կնոջ ներկայությունը կրակով ու վրեժով լցրեց ապստամբների հոգիները: Կես ժամ անց՝ թշնամին մեր սարերից կրկնակոխ փախչում էր:

Ահա՛, իմ ուժը:

* * *

Կուրոչկինը իր հեծելազորքով եկել, պաշարել էր Երիցվանիկ գյուղը: Հրամայված էր ցերեկը չպատասխանել թշնամուն: Ապստամբները սրտատրոփ սպասում էին խավարն իջնելուն՝ իրենց հարազատ տարերքին, երբ հպարտ դափանցին թշնամու քանակի մասին հարց տալու փոխարեն՝ հարցնում է - ո՞ւր է թշնամին:

Գիշեր է: Գայլավաշտերը սպասում են ազդանշանին՝ սկսելու իրենց ուժանակային գրոհը: Լռության մեջ բարձրացավ ապստամբներից մեկի մահն արհամարհող, վտանգն անգիտակցող երգը: Վաշտերը դուրս թռան իրենց խրամատներից, լսվեց գոռ ուռռան, որին հետևեցին դինամիտային պայթյունները:

-Сдаемса, сдаемса,¹ գրեթե ճչաց պանիկայի² մատնված թշնամին:

Լույսը բացվեց: Մեր ձեռքն էր մնացել թշնամու ուժերի կեսից ավելին, մի քանի հարյուր հրացան ու երկու տասնյակից ավելի զնդացիներ:

Մենք այսպես շատ անգա, ԵՐԳՈՎ ենք հաղթում:

* * *

Սյունիքի երկնքի տակ, բացօդյա, հավաքված են հազարավոր կանայք քաղաքից ու գյուղերից: Միտինգ է: Խոսում է մեկը: Դիմենք Սպարապետին, եթե նա այսօր մինչև երեկո չքշի թշնամուն Ջաբուղից էլ դեն՝ մենք կհարձակվենք դեղատների վրա, մեր մեջ կբաժանենք եղած թույնը և անձնասպանությամբ վերջ կտանք մեր կյանքին, որ մեկ էլ կարմիր գինվորի կամ սև ասկյարի երեսը չտեսնենք:

Հերոսական այդ որոշումը հայտնվեց գորքին:

Մուրը դեռ չէր ընկել, երբ մեր սուրհանդակն ավետեց, որ ջարդված թշնամին հետ է շարտված Ավդալլար:

Ահա՛, թե ինչով և ինչպես ենք հաղում մենք:

¹ Հանձնվում ենք, հանձնվում ենք – ուսերեն: «Հայրենիք» Ակումբ:

² Խուճապ– ուսերեն: «Հայրենիք» Ակումբ:

* * *

Այսպես եկաք, խաբեցիք, թալանեցիք ապստամբեցողից ժողովրդին ու քշվեցիք: Դուք պարտվեցիք որովհետև պետք է պարտվեիք որովհետև դա պատմության վճիռն է որովհետև մարդկությունն է այդպես ցանկանում:

Դուք պարտվեցիք որովհետև Դուք բարոյապես պարտված եք եղել իենց ձեր քանդված ու գլխատված բուն հայրենիքում՝ Ռուսաստանում, որովհետև ձեր ամեն մի քայլը, ամեն մի գործը բարոյական մի պարտություն է, էթիկական մի անձմասպանություն:

Այունիքը հաղթեց ձեզ, որովհետև նա պետք է հաղթեր, որովհետև վարձկան զինվորականների տեղ նա ունի երկու հարյուր չափ ժողովրդական ուխտված վաշտապետներ, նույնքան Դավիթ-բեկյան գայլավաշտեր, իրեն ապաստան բարձր լեռներ, որքան բարձունք այնքան զնդացիր (միայն ձեր գործերից խլված 200-ը), խոր ձորեր թշնամու համար գերեզման բնդանոթներ, առատ ռազմամթերք, հազարավոր փթերով ուժանակ ծով ատելություն դեպ իր թշնամին, ծով սեր դեպ հայրենի երկիրն ու արյունով ձեռք բերված ազատությունը բոլոր ճակատներում անհատակ մեշոկներ,¹ որոնք բերանբաց սպասում են մեր երկրի թշնամիներին ու գրանիտե հավատ որ ապստամբված ժողովրդին միայն Աստված կարող է հաղթել:

Խորամանկ Սաքիավելին էլ չի օգնի Ձեզ Ձեր լավագույն մոդեռն զենքերը կարմիր սուտն, չեղած դրախտն էլ չեն փրկի Ձեզ որովհետև այդ զենքերով միայն մի անգամ կարելի է հաջողել հաղթել:

Ձեր մեղրամիսն անցած համարեք խոստացած դրախտի տեղ դժոխք, հազար ու մի բարիքների փոխարեն սով, սիֆիլիս արյուն արցունք, կոտորած Քեմալ, Քեմալստան բեդիք հայ աշխատավորության համար:

Եզրելով նամակս ավելացնում եմ իզուր եք ենթադրում, որ ես ցանկություն ունեմ պայթեցնելու Երևանն ու մեկ ու կես տասնյակ գյուղերը, որոնց վզին գոռով է դրված սովետական լուծը, եթե Ձեր Ղարաբաղում սկսած բարբարոսություններով չստիպեք ինձ անելու այդ քայլը:

Ցգրություն

Ինքնավար Այունիքի Սպարապետ *Լժոյեհ*

Գորիս 24 ին փետրվարի 1921թ

¹ Պարկեր-ռուսերեն «Հայրենիք» Ակումբ

Դեպքերը գալիս են ապացուցելու, որ Սպարապետ Նժդեհը բուլշևիկների Սյունիքում ցուցադրած գործունեության վրա հիմնված ավելի պարզ գաղափար ունի Հայաստանի վիճակի մասին և ավելի իրազեկ է եղելության, քան կարմիրների հրամանատարությունն է կամենում ապացուցել՝ թաքցնելով ճշմարտությունը: Շնորհիվ բուլշևիկ հայ փառատենչ, ժողովրդի կյանքին միանգամայն անձանոթ և անձնական հաշիվներով առաջնորդվող գործիչների՝ 1921թ փետրվարի 16-ին և 17-ին Հայաստանի Հանրապետության զանազան շրջաններում միմյանցից բուլորովին անկախ սկսվում են ժողովրդական ապստամբություններ, որոնց առիթ է ծառայում բուլշևիկների երկու և կես ամսվա իշխանության ժամանակամիջոցում կատարած տնտեսական ավերը, քաղաքական կույր հալածանքը և կառավարական եղանակի տմարդի միջոցը: Նույն թվի փետրվարի 18 ին երևանն ընկնում է ապստամբների ձեռքը

Պատմական այդ նշանակալից դեպքը պատճառ է ծառայում Սպարապետ Նժդեհին ընդհատել ամեն մի գրագրություն կարմիրների հրամանատարության հետ որոնցից՝ բացի վնասից ոչ մի օգուտ չստացավ հայ աշխատավոր ժողովուրդը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջարան 3

ԱԶԱՏ ԱՅՈՒՆԻՔ

Երկու խոսք	14
Ինքնավար Այունիքի հիմնը	15
Բոլշևիկները Ձանգեզուրում	16
{Տվյալներ և փաստեր}	21
Փաստաթղթեր	23
Ապստամբություն և բոլշևիկների արտաքսումը Ձանգեզուրից	28
Համազանգեզուրյան համագումարի որոշումները	36

ԱՐՆՈՏ ԳԻՐՔ

Նախաբան	46
Գլուխ Ա	
Բոլշևիկների հինգ ամսվա գործունեությունը	
Ձանգեզուրում Սիսիանում և Ղափանում	48
Գլուխ Բ	
Ապստամբական շարժում	69
Գլուխ Գ	
Փաստաթղթեր	92

